

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

**ПЕТРОС
ДУРЯН**

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
В ДВУХ ТОМАХ

1

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1971

ՅՄԻ-54

Պ-33

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



Պ Ե Տ Ր Ո Ս Դ Ո Ւ Ի Յ Ա Ն

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ


1

Տեխոլը պատրաստեց և ծանոթագրեց՝
Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆԸ

Խմբագրությամբ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ

98110



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Պետրոս Գուրյանը ամենից շատ հրատարակված հայ գրողներից է: Բավական է ասել, որ սկսած 1872-ից աշխարհի այլևայլ ֆաղաֆներում տպագրված գրողի ժողովածուների թիվն անցնում է երկու տասնյակից: Քիչ ջանքեր չեն գործադրվել նրա ստեղծագործությունների հավաքման ու նըշգրտման ուղղությամբ: Պետք է հիշատակել ուսուցիչ Բարսեղ էֆենդյանին, որ 1893-ին Կ. Պոլսում հրատարակած «Տաղի, քատրերգությունի, նամականի, դամբանական» ժողովածուի բանաստեղծությունների տեխտում կատարեց բնագրային բազմաթիվ ուղղումներ, սկզբնապես շրջյա Անառյանին, որի կազմած և խմբագրած «Երկեր»-ը (Երևան, 1947) ցարդ լույս տեսած բոլոր հրատարակություններից ամենամաքողջականն է:

Ժամանակին Պ. Գուրյանի ստեղծագործությունները և առաջին հերթին տաղերը ազավաղվել են: Հայ մշակույթի մեծ երախտավոր Արշակ Չոպանյանը ֆանիցս հրապարակորեն դիմել է Երուսաղեմի Ս. Հակոբյան վանքի (1921-ից այստեղ են պահվում գրողի ինֆնագրերը) միաբաններին՝ Պ. Գուրյանի երկերի «ֆնեական խնամյալ» հրատարակությունն իրագործելու խնդրանքով: «Անհրաժեշտ է օր առաջ, այլևս վերջ դնելով բոլոր հապաղմանց, որ աններելի են, ի լույս ընծայել Պետրոս Գուրյանի գործերու ամբողջական հավաքածուն, որ տարիներն ի վեր իր երևմանը կսպասե»,—գրել է Ա. Չոպանյանը՝ այդպիսի հրապարակության բացակայությունը իրավացիորեն համարելով «աններելի նպերախտություն» պաշտելի հեղինակի «սուրբ հիշատակին հանդեպ»¹:

Սվ ահա 1967-ին և 1968-ին Երուսաղեմում Արա Գալայնյանը լույս ընծայեց Գուրյանի տաղերի և նամակների նոր ժողովածուները: Սրանի ֆնեական հրատարակություններ են: Կազմողը 1872-ի ժողովածուի տաղերի և

¹ «Անահիտ» Նանդես, Փարիզ, 1947, թիվ 2, էջ 58 և 59:

1893-ի ժողովածուի նամակների տեքստերին հանդիպադրել է Դուրյանի տաղերի ավարտուն (՝ տետրակ) և ինն նամակների ինքնագիր տեքստերը՝ միաժամանակ ցույց տալով Բ. էֆսեյանի բայլ տված սխալներն ու վրիպումները: Ա. Դալայեյանը ձեռքի տակ է ունեցել նաև լաոսատեղծությունների նախնական տեքստերը (Ա տետրակ), բայց հարկ չի համարել դիմել դրանց: Մինչդեռ այդպիսի աշխատանքը ցույց կտար, թե ինչպես է ստեղծագործել Դուրյանը: Քեև Ա. Դալայեյանի նշած տաղերի աղավաղումների զգալի մասը մտնենալված է Ա. Չոպանյանի 1967-ին Երևանում տպագրված «Պետրոս Դուրյանի կյանք և գործը» մենագրությունում, իսկ նամակների՝ էֆսեյանի հապաված հատվածները վերականգնված կ'են այլ ուսումնասիրությունում¹, բայց դրանցով հանդերձ երուսաղեմյան ժողովածուների արժևքը եզակի է. Բանի ու. րստ էուրյան, առաջին անգամ Դուրյանի տաղերը և նամակները մեծ մասը հրատարակվեցին անխարար տեսքով²:

* * *

Ներկա հրատարակությունը իր բնույթով զիտակա՞ն է և եղածներից՝ առավել ամբողջականը: Տեքստ պատրաստողը չի օգտվել գրողի ինքնագրերից: Նա հենվել է Պ. Դուրյանի 1872, 1893 և երուսաղեմյան ժողովածուների տեքստերի վրա՝ դրանք ստուգելով ու ճշգրտելով ըստ տարբեր ժամանակներում պարբերական մամուլում տպագրված առանձին ստեղծագործությունների տեքստերի և Ն. Չաբենցի անվան գրականության ու արվեստի լաոսագրանի Ա. Չոպանյանի արխիվում պահվող հարուստ նյութերի: Հաշվի են առնված Մ. Չերազի առաջարկած ուղղումները Պ. Դուրյանի տաղերի ֆրանսերեն արձակ թարգմանությունների առիթով, ինչպես նաև Բ. էֆսեյանի, Ա. Չոպանյանի, Մ. Հանաչյանի, Վ. Քերգիբաչյանի և այլոց բանասիրական դիտողությունները:

«Ներկերի ժողովածու»-ն կազմված է երկու հատորից և ամփոփում է հեղինակի ոչ միայն մինչև այժմ հայտնաբերված բոլոր գործերը, այլև մեզ հասած առանձին պատահիկներն ու գրողին վերագրվող նյութերը («Հավելված» բաժնում): Նյութերը բաշխված են.

¹ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 213—218:

² Այդ ժողովածուների գնահատականը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1969-ի № 2-ում տպագրված գրախոսականում:

Առաջին հատոր—տաղեր, հրապարակախոսություն. նամականի, դամբանական:

Երկրորդ հատոր — քատրերգություններ:

Տեխստ պատրաստողն առաջնորդվել է հետևյալ սկզբունքով.

ա) Նյութերը դասավորված են ժանրային-ժամանակագրական սկզբունքով: Պ. Գուրյանը տպագրության պատրաստելով իր լեռնավաճառների գրույկը. հաշվի է առել միայն դրանց ներքին-իմաստային առնչակցությունը, դուրս է բողբել 1867-ից առաջ գրված գործերը: Ներկա հրատարակությունում, որքան բույլ է տալիս ժամանակագրական սկզբունքը, պահպանված է հեղինակի ընտրած հաջորդականությունը, սակայն զետեղված է նաև 1864-ին գրված մի տաղ էս: Երկու բանաստեղծություն, որոնց գրության րվականը հնարավոր չի եղել պարզել, առանձնացվել են «Անբավկիր տաղեր» ենթաբաժնում: Առանձին են ներկայացված նաև տաղերի տարբերակները:

բ) Հեղինակային բացատրությունները նշված են աստղանիշով, իսկ տեխստ պատրաստողինը փակագիծ ունեցող արաբական րվանշաններով, օրինակ՝ 1): Առաջինները ցույց են տրվում տողատակում, մյուսները՝ ծանարագրություններում: Կրկնությունից խուսափելու նպատակով, հեղինակային տեխստում հիշվող անձնանունների և տեղանունների մասին տեղեկություններ են տրվում համապատասխան բառարաններում:

գ) Մանրագրություններում ներկայացված է Գուրյանի առաջին ժողովածուի աղավաղման պատմությունը, համառոտակի նկարագրված են մինչև այժմ լույս տեսած հրատարակությունները, արժարժված է ինքնագրերի խնդիրը: Այս յուրաքանչյուր գործի կապակցությամբ տեղեկություններ են հաղորդվում տպագրության ու գրության հանգամանքների (իսկ քատրերգությունների համար՝ նաև առաջին բեմադրության) մասին, ցույց են տրվում աղավաղումները, տեխստային տարբերությունները և հեղինակային սրբագրությունները:

Տաղերի աղավաղումներն ու տեխստային տարբերությունները ցույց են տրվում համապատասխան տողի ընդգծումով. իսկ նամակների և քատրերգությունների տեխստային տարբերությունները՝ արաբական րվանշաններով:

Հեղինակային սրբագրությունները նշվում են. նախնականը՝ ուղղանկյուն փակագծերով ([]), իսկ ավարտունը՝ ընդգծումով: Օրինակ.

17 Աչերու [կայծն] բոցն երբ մարի,

Սա նշանակում է, որ Դուրյանը 17-րդ տողը նախապես գրել է «Աչերու կայծն երբ մարի», ապա դարձրել՝ «Աչերու բոցն երբ մարի»:


դ) Հեղինակային տեքստում առանձին բառերի բացթողումները, ենթադրաբար վերակիսնված բառերը կամ լրացումները առնված են սուրանկյուն (< >), իսկ տեքստ պատրաստողին՝ ուղղանկյուն ([]) փակագծերի մեջ:

ե) Պահպանված են արևմտահայերենի ուղղագրության ճիմնական առանձնահատկությունները. կը եղանակիչի առանձին գրություն (կը սեղմիմ), որոշ հասարակ գոյականների գլխատառով գրություն (Հայ, Քուրդ Մայիս) և այլն: Հեղինակն օգտագործել է զբարբայան բառեր, որոնց արտասանությունը տարբերվում է գրությունից: Օրինակ, գրվում է «յալի» «յոր», «յերկին», բայց ընթերցվում է «հալի», «հոր», «հերկին»: Տեքստ սպատրաստողը հետևել է Հր. Անառյանի սկզբունքին՝ այդպիսի բառերում ընդգծելով նախդիրը (յալի, յոր, յերկին): Նույնը վերաբերում է նաև «ոյր» բառին, որը արտասանվում է «ույր», ուստի այդ բառը ևս ընդգծվում է: Միևնույն ստեղծագործությունում միևնույն բառի տարբեր գրություններից (հեզ-հեհ, ամբիծ-անբիծ, փնտոել-բնտոել և այլն) ընտրված է մեկը: Հատուրենրի վերջում գետեղված է դժվարհասկանալի բառերի և առանձին դարձվածների բառարան, որտեղ բացատրությունները տրված են. նկատի առնելով միայն դրանց կոնկրետ, տեքստային կիրառությունը: Կետագրությունը հարմարեցված է ժամանակակից ուղղագրությանը:

Տեքստ պատրաստողը անհրաժեշտ է համարել Պ. Դուրյանի վերջին համակր հրապարակել առանց որևէ ուղղագրական կամ կետագրական միջամտության. քանի որ նրա ֆերականական «մեղանշումները» արդյունք են գրողի հոգեկան ծանր վիճակի:

Ինստիտուար խորին շնորհակալություն է հայտնում Ֆրանսահայ մշակութային միության նախագահ պարոն Ա. Դարբինյանին, Փարիզի Նուպարյան մատենադարանի նախկին տնօրեն պարոն Ա. Սալմասյանին, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի տնօրեն Հ. Ռափայել Քյոսյանին, որոնց ջանքերով ստացվել են «Օրագիր ծիլն Ավարայրվո» քերթի 1869 և 1871 թվականների մի քանի համարների միկրոֆիլմերը կամ ընդօրինակությունները:

ՏԱԼԵՐ



1.

Գարնանային կենացս մեջ
Սիրո ծաղկունք մինչ փրթթեին՝
Սիրտըս վառված սիրուին անշեջ
Առարփինվույն ել գեղեցկին.

5 Մահագուշակ խորշակն անդեն
Հասավ տիրեց սրտիս բոլոր,
Թառամեցան ծաղկունք ամեն
Սըլած փթթած սրտիս մեջ նոր:

Այն, որ սրվավ երկրիս գարուն,
10 Մաղկունք, մարգերն ալ զարդ նորին
Ել մարդկային վեհ սրտերուն
Ուսույց սիրել գեղն ու բարին,

Ինչո՞ւ արդյոք խորշակահար
Կ'ընե ծաղկունք դեռափրթիթ,
15 Ինչո՞ւ արդյոք նա սիրահար
Սըրտերն զեղու արտասվոք միշտ:

Ահա կիջնեմ, ո՛հ, ես այժմեն
Առջև բացված գերեզման խոր,
Բայց սա տրխուր տեսարանեն
20 Ի՛նչ կա արդյոք հաճույք մ'Անոր:

<1864>

2. ԻՑի՜վ թե

Ո՛հ, ի՞նչ ես դու, սե՞ր, երկնի հուր կամ ժրպի՞տ...
 Չ՛ունի երկին աշացդ կայծերն ու կապուտ,
 Վարդը չ՛ունի քու լանջդ ամբիծ, լուսափթիթ,
 Չ՛ունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ:

5 Գիշերն երկնի կայծից, լուսնույն սիրուդեմ,
 Ցերեկն ալյաց, ծաղկանց ժպտիս... մեկո՞ւն գեթ...
 Իսկ քեզ համար ես արցունքով կ՛աղոթեմ,
 Դու չ՛ես շնորհեր նայվածք մ՛ինձ հուր աչերեդ:

Արդյոք էա՞կ մ՛ես թե երկնի զըվարթուն,
 10 Կը նախանձին փայլիդ վըրա վարդ, լուսնակ.
 Չայնիկդ ասչած լըսելով քաղցր ու թրթրուն՝
 Նոճերու մեջ կ՛սըպա լըռիկ լուսինյակ:

Մնեի իցի՜վ թ՛հեացող հով մ՛անուշիկ,
 Եվ գգվելով երազք ճակտիդ այդ անսուգ՝
 15 Տայի շունչըս շուրթերուդ մեջ ես հուշիկ,
 Լոկ սրբելով՝ եթե շողար աչքդ արտսուք:

Պարտեզդ իցի՛վ թե իթթեի վարդ լացող,
Եվ երբ գայիր այգուն շաղին ժպտով պերձ՝
Գունովս ներկել այսերդ, թափել գոգդ իմ ցող.

20 Թոռմեի գիրգ ձեռքըդ տայի կյանքիս վերջ:

Բխեի ես իցի՛վ թ՛առու մը վըճիտ,
Եվ երբ հուշիկ նստած մոտ իմ եզերքին,
Յոլանար իմ հայելվուն մեջ քու ժըպիտ՝
Պղտորելով կապույտ արիքս՝ ցամքեին:

25 Ա՛հ, իցի՛վ թե լինեի ես ճառագայթ,
Շողշողայի դեմքիդ վըրա վայրիկ մի,
Խաբեի քեզ թ՛ես ավելի գեղազարդ,
Ի՛անուշաբույր մազերուդ մեջ մարեի:

Այլ ո՛չ, անգո՛ւթ, եթե արվիր մեկուն սեր,
30 իցի՛վ թ՛անոր գերեզմանին քարն լինիմ,
Եվ դու թոշնած գաս շնչե՛լ շուրջս... արտասովե՛լ...
Քեդ հրպելու համար հարկ լոկ գոլ շիրիմ...

3. ՎԻՇՏՔ ՀԱՅՈՒՆ

Փոխանակ քաղցր օրոհներու, հայրենի՛ք,
 Օրրանիս քով մայրիկս ըզքեզ միշտ ողբայ,
 Համբույրին հետ շիթ մ'ըզգացի արտասովաց,
 Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք:

5 Ավերակաց ծաղկանցըդ սոսկ այցելու
 Զեփյուուն չ'եկավ նժղեհ՛հ ճակատս շոյելու.
 Փառաց դարեր ծընող՝ ընկնող հայրենի՛ք,
 Մամոռտ ավերք և դամբարան զորավիզ

Արարատյան հսկայից,
 10 Ուր ծոր ճակտով վիրալից
 Հեծե ոգին հայկական...
 Քայց ի զո՛ւր. ողբ, վայ, կական
 Եվ արտասուք ու հառաչ
 Քեզ ըսփոփել չ'են կարող,

15 Այլ վեհ ճակատ քրտնաշող
 Ի՛արյունաբուխ կող ու լանջ:

Մոխիր հագած, արյուն ծըծած սև հողե՛ր,
 Ուր կը տիրեն սոսկում, տըխուր հիշատակք,

Ալ ծոցեդ թոքեր են հուսո քաղցր հրեշտակք
20 Եվ արյունոտ դափնի մ'անգամ չ'են թողեր...
Սև շղթաներ եղան ինձի խանձարուր,
Մըթուլթյան մեջ սըրտիս վըրա հսկեց սուր,
Միթե Հա՞յ եմ՝ մինչդեռ չ'ես իմս, Հայաստա՛ն,
Եվ հոյակապ, վես կոթողներդ պատվանդան

25 Օտարաց, գահդ՝ հիշատակ,
Եվ ճակատըդ կրես պըսակ
Արդ փըշահյուս, սև նոճի...
Ալ չըկա՛ վառ թագդ առջի,
Որուն ականց տեղ անգին՝

30 Դառնաթախիժ մըտածմանց
Քրտունքներ սառ՝ քար կտրած՝
Կնճռոտ ճակատդ պճնեցին:

Երբոր տեսավ արյունլըվա վարդին ծոց՝
Վարդատարփիկ բուլբուլն դողով թռչեցավ,
35 Սուգին փափկիկ թևքն արցունքով թրջեցավ՝
Սիրատրոփ լանջք կուսից տեսավ երբ սրախոց...
Լըռեցին քնար, համբույր, գեղգեղ և մրմունջ,
Հրածե՛շտ տիրեց... և սիրակաթ շուրթեր մունջ
Համբուրեցին սև հողեր, ժայռ և ալիք,

40 Բույլ բույլ, բյուր բյուր ոգիք թըռան տրտմալիք-
Մասյաց մուսայք դողահար՝
Թողուցին պսակ և քընար.
Դաշտեր, ձորեր և սարեր,
Ալիք, ժայռեր և սառեր,

45 Հե՛գ հայրենիք Հայաստա՛ն,

Ըզքե՛զ, ըզքե՛զ ողբացին,
Որ ուրացողք քեզ բացին
Բյուր բյուր՝ սև սև գերեզման:

- Հայն էր, որ թագըդ գըլորեց փայլարձակ,
50 Եվ ալևոր ճակտիդ բարդեց սև ամպեր,
Հետո վայեց, երբ գերեզման կըշտապեր,
Այլ շնչասպառ էր՝ չ՛ուներ ձեռքը կայծակ,
Որ այն ամպերն փոթորկաբեր փարատեր,
Եվ հայրենիքն շղթաներե ազատեր.
- 55 Նոճյաց խորքը մահվան շունչը սոսափեց,
Սոսկմամբ ցնորած Հայն իր երկրեն խուսափեց-
Թողուց ավեր և արյուն,
Թաղեց հոն փառք և ավյուն.
Արդ կը տեսնե բոթաբեր
60 Ներկայն՝ ճիգ մը չը թափեր,
Հայաստա՛ն, քեզ փրկելու,
Անզգա դարձած դարե դար՝
Զը հիշեր քեզ, չը փութար
Քեզ անձկանոք գրկելու:

4. ԻՂՁՔ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Յրբոր ցողին փաղփուն շիթերն գիշերվան
 հոտի, թերթի, ծաղկի վերա կը շողան,
 Երկինքն երբոր աստղեր փալփլին գիշերը՝
 Ցայտեն արցունք, կայծ իմ ցաված աշերը.

5 Ի՛նչ, Հայաստան, քեզ մոռնա՛լ...
 Երբե՛ք, այլ սև նոճի մ'ըլլալ։ քեզ շո՛ւք տալ։

Զ՛իս աստղազարդ երկին սփոփել չ'է կարող,
 Մասյաց սարին արտասվալից է նա քող,
 Ձեր հիշատակն ինձի համար հեշտագին՝

10 Նըման կուսին սիրո առջի արցունքին.

Դամբա՛նք, ավե՛րք, Ձեզ մոռնա՛լ...
 Երբե՛ք, այլ ուղիս մ'արցունք ըլլալ, Ձեզ թա՛ց տալ։

Երկաթ, շղթա, զնդան, անդունդք ու վըհեր,
 Ամպրոպ ու շանթ, մահվան զանգակ ու ջահեր,

15 Զ'է, չ'են կարող պահ մը Ձեր վառ հիշատակ
 Ծածկել սևի ու սոսկումի՛ վեմի տակ.

Ազա՛տ օրե՛ր, Ձեզ մոռնա՛լ...
 Երբե՛ք, այլ հուր մ'ըլլալ և Ձեզ Հայո՛ւն տալ։

Զվարթ բնության այն կամարներն ծաղկահյուս,
20 Բույր, կայծ ու գեղ, նայվածք, ժրպիտ սիրունվույս
Անուշ հովեր, արծաթ ալիք վրտակին
Զեր հուրն սրտես պահ մը առնել չը կրցին.

Փառա՛ց օրեր, Զեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, պատրույգ մ'ըլլալ այլ Զեզ, ու լո՛ւյս տալ:

25 Արշալույսին տծգույն աստղեր երբ փալփիին,
Գողտըր գեղգեղ վարդակարոտ բուլբուլին,
Բնության դաշնակք, ո՛հ չ'են կրնար նվաճեր
Զեր հառաչներն որով մորնչեն նոճիներ.

Սե՛ սե՛ օրեր, Զեզ մոռնա՛լ...

30 Երբե՛ք, արյուն մ'ըլլալ և Զեզ կարմի՛ր տալ:

Թերևս ժպտին Մասյաց մըթին սարերը,
Կամ արտասվին Սիպերիո սառերը,
Բայց սե հոգիք ու սե ճանկեր չ'են կրնար
Խեղդել իմ ձայնս, փշրել փրշոտ իմ քնար.

35 Արդարությո՛ւն, քեզ մոռնա՛լ,
Երբե՛ք, այլ սուր մ'ըլլալ, սրտեր քեզ մուտ տալ:

Մինչ ց'ե՞րբ գոչեմ, ձայնըս մեկը չը լրսեր,
Հայն յուր ժանգոտ շղթան երբե՛ք չը սարսեր...
Վայրկյան մ'ինձ հետ դեռ իրավունք չ'թոթուլեց.

40 Հայն գ'իս ծաղրեց, և ձայն մը գ'իս չը թովեց.

...Դեռ կը գոչեմ Զեզ, Հայե՛ր,

Որ դամբանիս մեջ չը լրսեմ Զեր վայեր:

Հարուստն ու կղեր թե ազգ ըզգան ու վառին,
Թե «լույս և սեր» Հայ սրտերուն մեջ թառին,
45 Թե լուսո դարն երկնե «ազատ գավակներ»,
Թ'եղբայրության, սիրո վառին կըրակներ,
Թեև ըլլամ ես մեռել,
Դամբանես դուրս կ'նետվիմ ԱԶԱՏ Հայն տեսնել:

5. ՍԻՐԵՅՆՔ ԶՄԻՄՅԱՆՍ

Վարդակարմիր Գողգոթային վեհ գագաթ
Միշտ փալփրլող, սիրո անշե՛ջ ճառագայթ,
Դեռ կըսպասե՞ս թափել սրտից քու սըլաք.
Զո՞ւլ կը հըսկեսս, վիհ և անդո՞ւնդ, թե կըմախք.
5 Ո՞ր սև ժայռից մեջ մտրեցավ այն բեկքեկ —
Բարբառն վըսեմ, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»:

Մածկե ամպով կարմիր կողերդ, Գողգոթա՛,
Եվ թող խայտան ցավոտ ոսկերք սև Հուրա...:
Ժանգոտ ու գուլ թուրերն առին կարմիր փայլ,
10 Նոր կրոնին հետ արյան հեղեղն առավ քայլ...
Թնդանոթին առջի բոմբյունն խեղդեց սեգ
Զհագագրն քաղցր, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»:

Մարդազոհով Վատիկանի մըխացին
Մխնելույզքը, կամարքը «փա՛ռք» գոռացին,
15 Փոխ-Քրիստոսը խաշն ըրին դաստակ կայցինի՝
Սև դրոշ մը ատելության արյունի.
Դարուց մոխրեն կամ ամպերեն հուսա հեք
Զրկյալն լըսել, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»:

- Տնանկին դամբանը կ'անհետի ոտնակոխ,
 20 Տրնակին մեջ մարի առկայծ կանթեղն հող,
 Այն մութին մեջ նոթի տըղեկք կը հեծեն,
 Դղլակըն խրախ մինչև լույս ջահք կը հյուծեն,
 Հարուստին կառք ժխորով կ'անցնի սըրարչավ,
 Հեքին դագաղն իր գերեզմանն լուռ իջավ...:
- 25 Գեթսեմանին իջնող հրեշտակն դալկահար,
 Որ գեղ, ծաղիկ, արցում:ք ու փառք չը ճանչնար՝
 'նորս ցուրտ գոգն աղքատը սոսկ կ'ըսփոփի.
 Ծոխն ու տընանկ պատանին մեջ կ'ըլլան մի.
 Կայծակնաթև թե մըռընչեն մըրըրիկներ
- 30 Թե «սիրեցե՛ք զ'իրար», հեքն հոս շեն սիրեր:

6. ՊԵՏՔ Է ՄԵՌՆԻՒՂ

Դժգույն գիշեր մ'էր քաղցրաբույր աշնային,
Երկինքն աստղեր գերթ «սիրո վերքք» ցուլային.
Դեղնած ու շոր թերթից՝ լուսինն իր բեկբեկ
Շողքը ցողեր ամրան վարսիցն աղբբեկ.

5 Շամբերուն մեջ կը սողոսկեր ուղիւ մ'անհետ,
Կայծեր, աստղեր կը խաղային ալյաց հետ.

Սյուքը խաղար տերևներուն հետ թեթև,
Կը շոյեր գլուխս՝ այրած ճակատս վառե թև,
Նա իր շնչովն իս գոհ ընել կը կարծեր,

10 Բայց կ'արծարծեր, ո՛հ, իմ սիրույն բյուր կայծեր...
Ոգի մ'անցալ սրտես՝ թողուց հոն ըստվեր,
Աստեղց բույլ մը... միայն գիտեն զ'այս աստղեր...:
Համբույրի մը հիշատակն էր սյուքին շունչ,
Իր դողդոջ ձայնն՝ տերևներուն սա շըշունջ.

15 Գունատ ճակտին տխրիկ պատկերն այս լուսին...
— Ո՛հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տրվի թե կուսին:
Կը սիրե նե, նայվածքին մեջ կը թառմի.

Ո՛հ, ի՞նչ է նե— ձյունով շաղված մի անդրի,
Վրսեմ ճակտին վըրա զույգ մը աստղեր վառ՝

20 Եթե սիրե՝ հալի, թ'ատե՝ կտրի սառ...:

Լոկ հուր աշեր, ժրպիտ, արցունք տեսի նախ,

- Կուրծս ուռուցիկ լանջ մը ըզգաց սիրաբախ,
 Սիրո մրմունջ, հառաչ լսեցի բեկբեկ խոսք,
 Դողդոջ ու գիրգ՝ պաղ ձեռք մ'ըզգաց ձեռքըս սոսկ.
- 25 Թևերուս մեջ լույս մը, հով մը մարեցավ.
 էակ չ'էր նե, այլ սեր, հուր, շունչ, ժրպիտ, ցավ.
 Գոհար աչեր, վարդ այտ, այլ ինքն էր թախիծ.
 Այն գիսավոր աստղեն «քար մը» մընաց ինձ...
 Հիշատակ մը, դերեզման մը... սո՛ւրբ սափոր,
- 30 Ուր հեկեկով սիրտըս կ'ընե միշտ թափոր...:
 Երանի՜ թե ըլլամ ես շիթ մ'արտասուք
 Եվ անհետիմ դամբանիդ քով սիրասուզ.
 Իցի՜վ թե խոտ մ'ըլլամ ու ես ցամքիմ հող,
 Ծաղիկ կ'ըլլամ, բայց առանց քեզ չ'ունիմ հոտ.
- 35 Լույս թե մութ, քուն, շուքըդ պիտի չ'անհետի,
 Հառաչելով ուշ պիտ'ըլլամ ոսկր ու դի,
 Շիրմիդ վարդքը շը թոռմած քեզ գրկեմ ես...
 «Կյանք կուտաս՝ սիրտ թե տաս» ըսեն հտևես:

7. Ի ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ

Այն սգալի սև սև նոճյաց հտևեն
Արշալույսին շողք մեզի «Լո՛ւյս» կավետեն,
Խուսեց խավարն, փողփողե լույս արևուն
Հայոց կարմիր մարգաց սառուտ սարերուն.

5 Փրլատակաց մրթին խորքեն կուգա ձայն—
Հայե՛ր, Հայե՛ր, դեռ Հայաստան չ'է՛ կործան...

Ձայն տըվողը չ'է՛ ըստվեր,
Հուր ներշնչողք չ'են աստղեր,
Եղբայրության է հուր, ձայն,

10 Հայը սիրող Հա՛յն է այն:

Նա գիշերվան հետ ազգ խոկաց ու լացավ,
Եվ արևուն սըլաքաց հետ կրակ դարձավ,
Հողմոց թևով միշտ սըլացավ Հայկարան,
Տիգրիսի հետ թըրջեց ավերք տխրական.

15 Հայաստանի, եղբայրության սիրահար
«Հա՛յ» գոչելով շուրթերն եղան դալկահար:

Ավարայրի նա վարդին
Սոխակն եղավ տրտմագին,

«Վարդա՛ն» գոչեց նա, անդեն
20 Վասա՛կն ելավ դամբանեն:

Նա իրավո՛ւնք, ազատությո՛ւն գոչեց հար,
Փոշոտ ու խոնջ ոտքերն նետեց ուր Հայ կար,
Ուր որ Հայ կար ջերմ համբուրեց նա այն հողն,
Ուր Հայն շնչեց՝ հառաչ և հուր ղրկեց հոն.

25 Բոցաթրուիչ Հայե ի Հայ նա թրոակ,
Հարված, ցավ, դավ՝ սերն խեղդելու շնդան բավ:
Այս հայկազնը շ՛ուներ սուր,
Այլ կուրծն ուներ Հայ, խաչ, հուր.
Կր հագներ սեր և գրգլյակ,
30 Նա գո՛ւթ ուներ, ո՛չ քրսակ:

Ազա՛տ սիրեց, ազա՛տ գոչեց, չը թովեց.
Հայն գ՛այն ատեց, Հայ մը ձեռքը չը թոթվեց.
Բանտ, կախաղան, աքսոր, Միպիր և սուսեր
Զր կրցին ձայնն մարել, խեղդել իր հուլսեր.

35 Միշտ «Հա՛յ» կանչեց, բարձն էր գլխուն Մասյաց սար.
Նա սիրտն ըրավ հայրենահուշ գոռ քընար.
Արդ հայրենյաց մեր շնչիկ՝
Հով մը կուգա անուշիկ՝
Վառ ճակատուց այցելու,
40 Հայուն աչերն սրբելու:

Բա՛ց են թևեր, բա՛ց են սրտեր, բա՛ց ճակատ,
Եկո՛ օգնել տրկար Հայուն ապարախտ,
Հո՛ւր հայրենյաց, եղբայրության դու հագա՛գ,
Քընարահար Հայու մը իղձ քեզ հրեշտակ.

45 Վես Վոսփորին ալիք ըզքեղ բարեկեն.
Յրվե՛ սև ձեռք՝ սև ամպ Հայոց արեկեն.

Արտոսար ու քիրտոզ թող փալփլին՝
Զերթ աստղեր Հայ երկնքին,
Եվ սորվեցուր Հայուն դու

50 Սիրե՛լ, օգնե՛լ իրարու:

Արտասվաթոր՝ քե՛ղ կը նային Հայ աչեր,
Սև շղթաներ քեզ ցույց կուտան գոռ քաջեր,
Մըշո կտրիճք՝ աղջիկք ի քեզ ապաստան
Հայն ու դամբանն, տաճարն, հյուղակն՝ Հայաստան:

55 Թո՛ղ փլատակաց մոխրեն հառնեն հիշատակք,
Մութ՝ մենաստանք վերափայլե՛ն նախնի փառք...

Լո՛ւյս, լո՛ւյս տեղան ամեն տեղ,
Գիտությո՛ւն, լո՛ւյսն Հայ աստեղ,
Լո՛ւյս հյուղակին, լո՛ւյս վըհին,

60 Լո՛ւյս Հայ փառաց շեջ ջահին:

Ահա սրանա մեզ ապագա բոցագես,
Մեր հայրենի ավերակաց տալ լույս վես.
Հարկ չ՛են մեզի նիզակ և սուր ու վառող.
Իրավունքի, սիրո, լուսո ենք կարոտ.

65 Եղբայրությա՛ն Հայն կը հենու, ո՛չ թագի,
Բռնե ձեռքեն, որ շունչ առնե և հոգի.

Եվ ալ մոռնա հայկազն հեք
Հին հարվածներն ու խոր վերք.
Եվ սիրտք ի տրոփ որոտան

70 — Կյա՛ց միշտ, ՀԱՅՐԻ՛Կ ԽՂՐԻՄՅԱՆ»:

1869 <Սեպ. 27>

8. Ի ԴԻՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ

Ո՞վ է որ գա մեզ ճեղքած օդն, ալին,
Ճակտին վրա գոհարք, աստեղք կը փայլին.
Թագավո՞ր մ'է Հայ, որ ցատկեց շիրմեն,—
Ո՞չ, դեմքը վառողք արցունք՝ ըսպի են.
5 Նա կ'արհամարհե ծիրանի, փառքեր,
Նա սև է հագեր:

Նա մեր Հայ եղբարց արցունքն է քավեր,
Ցույց կուտա մեզի արյուն ու ալէր,
Դյուցա՞ղն մ'է, որ դո՞ւրս թրոսվ դամբանեն,
10 Ո՞չ, թուր չ'է՛ ձեռքն, այլ խաչ բռներ արդեն,
Չը ցայտեր աչքէն շանթեր, այլ սե՛ր, գո՛ւթ.
Դողա անկե Քուրդ:

Նա կուգա Հայոց կարմիր մարգերեն,
Աղատեց Քրդեն հեզ Հայ գերիներն,
15 Խաչափայտով մը պանծացավ հաղթող,
Հնչեցուց ի Հայս աղատության փող,
Տեսե՛ք, քուրձ հագեր, կարծես ինք դիակ,
Քայց սիրտն է կրրակ:

Գա Մասյաց սարեն, նա ձախն ու աջը
20 Մովսեսի քրնարն՝ Ղևոնդի խաչը,
Ասաղի մը նայվածք, քրնարի մը ձայն,
Աղյաց խորերեն կը սիրե նա Հայն.
Դեռ չը ճանչցա՞ք զ՛այն, ճակա՛տք վըշտակոծ,
Հրեշտակն է Հայոց:

25 Ահա կը հնչե նորա հեշտ սըրինգ,
Արձագանք կուտան Հայոց դաշտք, լերինք,
Երթանք իր շուրջը, Հայն՛ր արտալած,
Զր խաբեր, մատներ նա մեզ օտարաց,
Զը սիրեր ոսկի, փառք ու վատ մարդիկ,
30 Հայուն է Հայրիկ:

Գլխիկը դըրած սըգավոր սըքեմ,
Զը թափիր ճակտեն դեռ ալիք վըսեմ,
Բայց իր դիմաց վրա կանուխ են փթթած
Անցքի ու վշտի խորշոմներ միշտ թաց.
35 Միակ վարձք մ՛ունի՝ այն է կոչել զ՛ինք
«ԽԸՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ»:

9. ՀԱՅՐԻԿՆ ՆԱՅՈՅ

Փութա՛, հովվապե՛տ, սիրող հար ազատ՝
Հարազատ,

Փարատի՛ սև ամպ, փայլի՛ արդ արև
Արդարև,

5 Փողփողի՛ն դաշտեր, ազատ առնե՛նք քայլ,
Առ նենգ գայլ

Ցրցո՛ւր ցուպդ, Հայերն կանչե՛ յ'արոտ մի՝
Հար հոտ մի:

Ճանկեր արյունոտ կուրծ մեր թափ առինք,
10 Թափառի՛նք,

Եկո՛, հովվլև՛ մեզ, սիրածդ, ազգասե՛ր,
Ազգ ա՛ս էր:

Դու գրթոտ նըման երկնի հայրիկին՝
Յ'այր՝ ի կին՝

15 Յ'օրոց և յ'ալիս սփռե՛ լույս և սեր,
Լո՛ւյս եւ, է՞ր

Ցավի, չը զարթնու հրրճված յ'այգուն յ'այն
Յա՛յ, քուն Հայն:

Սոխակ մ'էիր մերթ ի նոճս, շերգերդ՝
20 Վերքերըդ

- Առած բյուրավոր՝ դեռ դու կանչեցիր,
 Կա՛ն, չ՛է՛ցիր
 Երգերդ միշտ մեր սիրտ, սիրո, հոգվո ձա՛յն,
 Յ՛ողվոց Հայն
- 25 Հանեց, վառեցավ ձայնեդ, իմացավ
 Հիմա ցավ.
 Քե՛զ խնդրե Հայն արդ, ամբոխ ամբոխ չ՛է՛,
 Ամբողջ է.
- Արդ ըսե՛ Հայուն, ըրե՛ ազդ անոր
 30 Աստանոր.
 — Ես կարոտ եմ վառ սրտից, ձեռքերի,
 Ձեր գերի
 Եղբարքն ազատե՛լ, լո՛ւյս տալ ՚ի Մասիս,
 Ի մաս յ՛իս
- 35 Առնել իմ նախնյաց արյուն արտասուքեն.
 Արդ սուգեն
 Ելնեն Հայք՝ օրհնեն սիրով հավետ իս՝
 Յ՛ավետիս.
- Ցանկամ որ Հայք ինձ ըսեն ա՛հ, յամայր
 40 «Ահա՛ մայր».
 Այս իմ վերջին տենչ, միշտ ճետք Հայկա կա՛ն
 Հայկական:

10. ԵՐԳ ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Արի՛ք, որդի՛ք Արարատյան,
նրսեմ նակատք ցայտե՛ն թող շանթ,
Դողդոջ ձեռաց մեջ սուր ցուա՛ն,
Արդար վրիժուց ժամն հասավ արդ,
5 Փշրի՛ Պարսկին անդուլ կացին,

Հայք բա՛վ լացին.

Մեռնի՛նք Մասյաց շուքերուն տակ,
Հավերժ կանգնե՛նք հաղթանակ.

Օ՛ն, ազա՛տ ըլլանք

10 Եվ Հայաստան մեր,
Թող տա՛ն արձագանք
Մասիք անվեհեր.

Մեռնի՛նք յ՛Արտազ՝ Տղմուտի մոտ,
Ուկից ծագի մեզ առավոտ:

15 Մեր սուսերց փայլեն
Սասանին Սասանք,
Մեր ամեն քայլեն
Ծագի հաղթանակ:

11. ՍԻՐԵՑԻ ՔԵԶ

Շաղի, շողի ժամք էին.
Վարդից հրդեհ կար յ'երկին՝
Փոխան ամպոց հուր հյուսքի.
Տեղա՛ր մարգրիտ և ոսկի:

5 Թավուտքի մր խոր ծաղկոտ
Ընկողմանած նըվաղկոտ՝
Կը հևայիր դու տժգույն,
Ամբուն սյուքի մը հանգույն:

Աչերդ սիրո Ատրուշա՛ն...

10 Եվ մատներովդ զերթ շուշան՝
Կը փետտեիր ծաղիկ մի,
Հառած շողից աչքդ երկնի:

Հիանայի թե ի՛նչպես

Փետտել թերթեր վարդին վես՝

15 Եվ թափթրփել քու գիրգ գիրկ
Կը զորեին մատներդ գիրգ:

Եվ նըվաղկոտ այդ աչեր

Նըշուլեին նո՛ր եթեր,

Եթեր մ'աստեղց ուր փոխան
20 Հրաշեկ սլաքք կը շողան:

Ըրիր աշացդ մեկ կայծին
Եվ մեկ վանկիդ զ'իս գերին,
Շղթայեցիր զ'իս, անգո՛ւթ,
Նշույլներովն վեհ հոգւույդ:

25 Թո՛ղ սիրտս, ինձմե գնա հեռի,
Չ'ուզեմ հոգւույս թագուհի
Քեզ, որուն կուրծն վարդի թերթ,
Այլ կրեանիտ սիրտն է գեթ:

Դու, որ գիտես լոկ բուրել,
30 Գիրգ սրտերու վերք փորել,
Եվ կը սիրես, երբ կարի՛
Քեզ պաշտող սիրտն արյունի:

Թաւուտքի մը շուք նըսեմ
Երբոր մենիկ արտասվեմ,
35 Հոն ես դու, կը գտնես զ'իս,
Տերևներե՛ն կը խոսիս:

Երբ աուլակին մեջ փաղփուն
Կ'ուզեմ մոռնալ դեմքըդ, դուն
Դարձյալ հոն կը գտնես զ'իս,
40 Ալիներե՛ն կը ժպտիս:

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Ջախջախել սիրտս և քրնար,
Հովին մեջեն միշտ մնչես՝
Թե դու բնավ զ'իս սիրած չ'ես:

- 45 Գրկեմ սրտովս արդ ցուրտ հող,
Ի՛նչ չը դիպիմ քեզի թող.
Կույս մ'է նաև դերեզման...
Կա՞ խորունկ սիրտ մ'անոր նման...:

12. ԿՈՒՅՍՆ ԼՔՅԱԼ

Հալեց սառեր գարնան արև,
 Ոսկի մատամբբ ծաղիկ, տերև
 Ցանեց, ցրվեց ամպ ու բալ փուլթ,
 Պարզեց աստեղց կամարն կապույտ.

5 Ո՛հ, ինչո՞ւ կույսին
 նայվածքն է մրթին:

Ոսկի սփռեց լերանցն արփի,
 Միծաղեցավ լուսինն չ'ալի,
 Կա՛յծ ու ծիծաղ, ծաղիկք համբուն,
 10 Թերթեր, ուր սեր կարգա զվարթուն.
 Ո՛հ, ինչո՞ւ գունատ
 է կույսին հակատ:

Բուլբուլն թառեր թավուտ թլիին՝
 Գեղգեղե գե՛լ աղիոք սրտին.
 15 Թռչունք մրթին անտառաց խոր
 Չայնակցին, հեշտ սիրո ժըխո՞ր...
 Ո՛հ, ինչո՞ւ լինի
 ինչ կույս լեզվանի:

Ալիք սիրո ցույց տան կայծ, նետ,
20 Մրմունջ, նայվածք տանելով հետ,
Ջրրել կերթան ծաղկոտ մարմանդ,
Թոթվե խոտեն հովն աղամանդ.

Ո՛հ, ինչո՞ւ արտասուք

Թափե կույսն ի սուգ:

25 Ի դրանց ոսկի արևելքին՝
Թռչտելով սյուփեր հեշտին՝
Մաղկանց, ալյաց, թերթից համբույր
Տալով՝ սահին թողլով համ, բույր.

Ո՛հ, ինչո՞ւ հառաչ

30 Հանե կույսին լանջ:

Ո՛, կույս, ինչո՞ւ այսպես տրտում
Սամույր հոպոպքդ արտասուլաթուրմ
Դեմքըդ սիրուն ծածկեն, վերցո՛ւր
Ճակատդ, շնչե սեր, լույս ու բույր.

35 Անկողինդ ծաղկունք,

Աստղեր քեզի շուք:

— Սիրեի ես աստղերն երկնի,

Ալին զ՛իս ցույց տար գեղանի,

Վալլեր ծաղիկ ճակտիս անսուգ,

40 Զեփյուռն ուներ հեշտ փրսփրսուք.

Մատնելու զկուսիկ

Հրապո՛ւյրք խաբուսիկ»:

13. Ն Վ Ա Գ
Է ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Պատուեր են Հայոց դաշտերն արյունոտ,
Հայկազն հրսկայից կրմախք կայթեն չ'ոտն,
Մոխրոտ ու մամոտ ավերակք խայտան,
Մասիս բարձեր է վեհ ճակտեն պատան.

5 Հիշատակն Հայն կը կանչե,
Հայն Հայաստան կը կանչի:

Զինվո՛ր Սիրո, դրոշդ ծալ ծալ ծըփացո՛ւր,
Սորվինք խաչովդ սեր, 'քան թե փայլել սուր,
Հեշտ արցունք թափեն սառք Մասյաց սարին՝

10 Երբ Հայեր աննենգ իրարու փարին.
Հայաստանը դեռ ողջ է՝
Թե Հայն միշտ Հայր կանչի:

Հայրենյաց տըխուր մեջ ավերակաց՝
Հուր հոգի մ'ըսկեր, կանթե՛ղ սիրակայծ,
15 Միշտ դեպ 'ի հեք Հայն տաներ քայլ հառաջ,
Նա աղյաց խորն Հայն՝ կուրծն էր գամած խաչ.
Ըսին թե Հայն զայն կանչե,
Սե՛ր է, նոճյաց լոկ ձայն շէ:

Մովե՛լր, որ սիրո նախ տվիր արձագանք,
20 Արյուն չը ծրծած հողդ, չը թաղած գանկ,
Բաժակք հնչեցին՝ ո՛չ սև թնդանոթ,
Հյուսեցան կամարք դափնյաց սիրահող.
Սև վետ յափունսդ թե հնչե,
Հեք Հայն եղբայրն կը կանչե:

25 Դառն են արցունքով մեր սիրո բաժակք,
Սիրո դրոշք՝ մեր քերց արցունքոտ լաշակք,
Թե չերգնումք, եղբա՛րք, հիշել զՀայաստան,
Արյամբ ևս պահել պատիվն Հայոց տան,
Կը տառապի՛ Հայրենիք,
30 Կամ Հա՛յ ըսվինք կամ մեռնինք:

1871

14. նծ

Վարդը շարնայնի
Թե կույսին տիպար
Այտերուն չ'ըլլար՝
Ո՞վ կ'հարգեր զ'անի:

5 Թե չը նմաներ
Կապույտն եթերաց
Կույսին աշերաց՝
Երկինք ո՞վ կ'նայեր:

Թե կույսը չ'ըլլար
10 Սիրուն ու ամբիծ,
Աստվածն այն երկնից
Մարդ ո՞ր կը կտրդար:

Կոկոն - Ճարտարապետ Կոյսիկ

Հիմնականում «...»
չորս Վ' արժանապատիվ էս ինչ
«...» կարգի մեջ
և քանակությամբ «...»

2) Ի՞նչ յուր-իր-ան ընդհանուր
չարտի չորս Վ' ճարտի թե
«...» ընդհանուր չարտ
չարտի քանակությամբ էս «...»

ու ի՞նչ անցում արե՞լ. Կոյսիկ
թիվային թիվ էս թիվ
Թե չի թե «...» Կոյսիկ
անցում «...» չարտ

Ինչ-ժամանակ «...»
անցում «...»

Երբ որ զայն յտես Գրեմ
-որչա՞ր առաջ զիմ կտայ
և իմ-բեզ կտայե Ես
ևս որչա զայն ետ ի Երանյ
Ետ զգուշութեան ի զրեկ.
Իմ խոստան տես յետ :

Գրեմ Եստան ու զուսու. Ես
յուսան յայնք այլ ահտե
առ իսան Եստան իմ զուսու
եղբայր Եստան և այլն զու.
Երբ որ զայն յտես Ես
Եստան Եստան յետ :

1891 Նոյն 6

Երանյ


Մի հատված «Հուշեր» տաղի նախնական տարբերակի ինքնագրից

15. ԱՌԻԿՈՒՅՍՆ

Ո՛հ, մինչև ց՛ե՞րբ, ըսե՛, ո՛ր կույս, հոգիս ըլլա գեղույդ գերի,
Եվ մինչև ց՛ե՞րբ թրթռան աղիք ցաված սրտին և քնարի,
Լոկ համբուրիկ մ՛ուզեցի քաղել այտեդ մեկ թարմ վարդ,
Ճառագայթ մը խնդրեցի աշերեդ երկնազվարթ,

5 Զրլացար դու, անգո՛ւթ, վարդ մը դժգույն ճակտիս,
Եվ ճառագայթ մ՛այն անդունդին խոր սրտիս.

Ո՛չ, ևս չ՛եմ կրնար ապրիլ զուրկ գրկեդ,
Միժառնիկն ապրի դուրս բույնեն գեթ.
Տրտմալար քնարս զարնեմ ջախջախ,

10 Գոցեմ սիրտըս սիրաբախ...

Մնայք բարով, կո՛ւյս և քնա՛ր,
Կույսին տեղ լա՛ց, քա՛ր,
Ճակատս նըսեմ

Հանգչեցնեմ

15 Մաշող

Հող:

16. ՆԱՅՎԱԾՔ ՄԸ

Ամրան տապեն ես խոնջած՝
Քավուտքի մը բյուր բյուր կայծ
Տերևներուն շուքն ինկած՝
Ո՛րչափ սիրեմ շունչն հովտաց՝
5 Մեղմիկ
Հողմիկ:

Արշալույսին կանուխեկեկ՝
Ո՛րչափ սիրեմ՝ ոտքյա մերկ
Կոխելով մարգ ծաղկանհրկ՝
10 Լըվացվելու գտնել մեկ
Հստակ
Վրտակ:

Երբ միայնակ ես գամ ման,
Ո՛րչափ սիրեմ կրակներս այն
15 Ներշնչելու սերս անձայն՝
Հոտոտելու կույսի նման՝
Քաղցրիկ
Ծաղիկ:

Երբ հովանի աստղազարդ
20 Ըլլա երկնից գմբեթարդ,
Որչափ սիրեմ ի սաղարթս
Երբ կը հյուսե երգ ի վարդ
Թրթրակ
Սոխակ:

25 Բայց ասոնք չ'եմ փոխեր բնավ
Մեկ նայվածքին հետ անբավ՝
Թե յուղարկե ինձ հեշտյալ
Իր աչերեն վառ ու սյավ՝
Լուսիկ
30 Կուսիկ:

17. ՀՄՄՅՈՒՆՔ

Երբոր վարդի փունջք հայեցի՝
Մըլան տժգույն ճակտիդ վերև,
Խոնարհեցիր աչերդ արև,
Քեզ այն օրեն ես սիրեցի:

5 Թերթեր հուզող սյուբի մը պես՝
Թըռար սրտիս ծալքերն թոթվել,
Քընարի մը կըրակե թել՝
Քեզ ձրգեցիր դու աղիքես:

Արդ կը փախչիս ինձմե սյուբի
10 Պես, շուքըդ տաս լոկ քընարիս,
Գիսաստղի պես հեռուն՝ կ'նազիս՝
Հովին տըված մազերդ ոսկի:

Երբ ասաղալույց գիշեր է վով,
Շրջագայիս Պաղլար-Պաշի,
15 Գիտե՞ս թե սիրտս ո՞րչափ մաշի՝
Շրջուզեատիդ լոկ շրշոնով:

Գա սյուբն սզատ քեզ այցելու,
Նային բեղի աստղերն ազատ,

Ըստվերին մեջ մինակ ու զատ՝
20 Ես կը դողամ քեզ մոտելու:

Ո՛հ, թող երթա՛ սյուքն իր ծաղկոց,
նայի՛ն աստեղք թող յ՛Օվկեան,
Եվ թող մեկ մ՛ե՛ս ալ թալկանա՛մ
Քու նայվածքիդ մեջ կրակուբոց:

25 Մահիկն երբոր շառագունած՝
Իջնե լեռնեն ի հորիզոն,
Ալ կ՛անհետիս, չ՛ես շրջիր հոն՝
Կազին, հովին, աստղին դիմաց:

Գերեղմաննոցին ցուրտ ծառեր
30 Կը փրսփրսան մեռելոց հետ,
Շրջազգեստիդ շրշյունին գեթ
Ինձ արձագանք մահահրավեր:

Նրվաղած են լույս ու ժրխոր,
Դադրած շրշյունք կանանց՝ անմոռնչ
35 Արդ կը թաղվին համբույր, մրմունջ՝
Աստեղազարդ անդունդին խոր:

Շրջազգեստիդ խշրտուքն հար
Կը փրսփրսա դեռ ականջիս,
Հեծկլտալով իջնե հոգիս
40 Արտոսրալից անդունդ մ՛ի վար...:

18. ՁՈՆԻԿՔ

Մինակ էր.
Վարդ մ'ըզգոն
Մատուցի
ներա ձոն:

5 Շիկնեցավ
նե զըվարթ՝
Կ'ընդուներ
Երբ իմ վարդ:

ներա քով
10 Վարդն ո՛րչափ
էր անշուք՝
Գունաթափ

նույնպես ձոնս
Համբույրին
15 Ձ'որ տրվավ՝
Ձ'էր բնավ գին:

1871

19. ՄԱՆՈՒԿՆ ԱՌԻ ԽԱԶ

Ո՛վ խաշափայտ

Գու քառաթև,

Որո ճակատ

Սիրո արև՝

5 Գամված Հիսուս,

Փըշեց խոնարհ

Հոգի և լույս

Սեր ընդ աշխարհ,

Ընդունե՛ լիմ հոգիս հեզիկ փառաճաճանչ

10 Թեևրուդ տակ և սորվեցո՛ւր ինձի հավատ,

Սեր, հույս, որով միշտ բաբախե իմ փափուկ լանջ,

Եվ փարատե՛ լուսովդ խավարն սրտես վըհատ.

Սորվիմ աղոթք

Բառնալ քեզի,

15 Երբ խութից ոտք

Իմ հանդիպի

Սև Սատանին,

Որ ճգնի միշտ

Դյութեւ զ՛հոգին

20 Ի մութ, ի վիշտ:

20. ՍԻՐԵԼ

Բույլ մը նայվածք, փունջ մը ժըպիտ,
Քուրա մը խոսք դյուլթեց իմ սիրտ:

Ես ուզեցի լուռ մենանալ,
Սիրել փըթիթք, խորշեր թավուտ,
5 Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտըվան շաղն, իրիկվան բալ,
Ճակատագրիս սև գիծ կարդալ,
Խոկալ, սուզիլ, ըզմայլիլ սուտ:

Ո՛հ, խուրձ մը վարս, եղեմ մը շունչ,
10 Շրջազգեստ մը շրշեց իմ շուրջ:

Ես ուզեցի լոկ ու մինակ
Սրտակցիլ ջինջ վըտակին հետ.
Հիշատակի չ'ունի նա հետ,
Սի՛րտ մ'որուն մինչ սուզիմ հատակ,
15 Գտնեմ զ'իս հոն դժգույն, հատակ,
Գաղտնի՛ք մ'ունի— այն՝ անթիվ վետ:

Եթեր մը տրոփ սրտի լսեցի,
Հծծեց. — կ'ուզե՞ս սիրտ, ե՛կ ինծի»:

Ես ուզեցի սիրել զեփրուս,
20 Որ երկնքեն թռչի բեկբեկ,
Նա չը սիրեր խոցել երբե՛ք,
Հոգի՛ մ'որուն գաղտնիքն է բույր,
Գիտե շոյել երազներ բյուր,
Երկնի բույրն յ'ուշ կ'ածե առ հեք:

25 Ո՛հ, փունջ մը բոց փըսփըսաց ինձ,
— Կ'ուզե՛ս պաշտել հոգի մ'անբիծ»:

Ես ուզեցի քընարով մի
Լոկ սիրել հրս, հոս դալկահար,
Պաշտել, գրկել միայն քընար,
30 Սիրող էակ ճանչել զ'անի,
Լ'ստ իմ քըմաց լարել աղի,
Եվ սրտակցիլ սիրողաբար:
Նե մոտեցավ հուշիկ, ըսավ,
— Քնարդ է ցուրտ սիրտ և սերըդ ցավ»:

35 Թոթվեց թևերն հոգիս մուլար,
Ճանչեց ըզնե գեղ ու կըրակ,
Սիրտն անապակ՝ ինչպես վրտակ,
Անմե՛ղ՝ ինչպես սյուբ դալկահար,
Հավատարի՛մ՝ ինչպես քընար,
40 Հրածեշտ տըվավ կյանքի մեհնակ:

Բույլ մը նայվածք, փունջ մը ժըպիտ,
Քուրա մը խոսք դուրթեց իմ սիրտ:

1871

21. ԴՐԺԵԼ

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դրժոխք մ'անեծք խոցեց հոգյակս:

Ես ուզեցի պաշտել ըզնե,
Սիրել ժպիտքն՝ փրթի՛թք անհուն,
5 Սիրել աստղերն սև աշերուն
Եվ այն խոկումն, որ մըթագնե
Պայծառ ճակատը՝ այն ամպն է
Որ կ'ըշպարե դեմքը լուսնուն:

Գիշեր մը սուգ, անդունդ մ'հառաջ՝
10 Հուզեց ներա հոգին ու լանջ:

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մըտիկ ընել թնդյուն սրտին,
Շնչել, խըմել ներա հոգին,
Եվ շոշափել լոկ ձյունափայլ
15 Մոծորակին վըրա ծալ ծալ
Թափող վարսից ալյակք ծրփին:

Օվկեան մը տրտունջ լսեցի,
«Զ'իս կը նեղե՞ս» հծծեց ինծի:

Ես ուզեցի քրնար մ'ըլլալ
20 Ներա ձեռքին տակ հեացող,
Ներա հոգվույն խորն հիացող
Թեթև պատկեր մ'ըլլալ շարժյալ,
Մոռնալ զիս, լոկ ըզնե՛ խոկալ,
Կ'վառե երազ մ'որուն մեկ շող:

25 Ամպրոպ մը սաստ ցնցեց հեգիս,
Գոչեց — սիրել չ'ես կրնար զ'իս»:

Ի զո՛ւր սիրտըս մըխաց առջին՝
Խնկարկելու սիրտն անապատ.
Յուցի իրեն ճակատս գունատ,
30 Կուրծըս գոգած, մարն իմ աչքին,
Ի զո՛ւր շուրթերն դողդոջեցին,
Զ'ինքը սիրելիս հծծեցին յայտ:

Նե հեռացավ ինձմե, ըսավ,
— Բա՛վ սիրեցի քեզ, մնաս բարյա՛վ»:

35 Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս յ'իս,
Ճակատագիրս խնծղաց ի վեր,
Խորշ մը կար որ զ'իս չը ծաղրեր,
40 Այն լուռ փո՛սն էր գերեզմանիս...:

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դժոխք մ'անեծք խոցեց հոգյակս...:

1871

22. ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած են, լըճա՛կ,
Ու չ՛են խայտար քու ալյակք,
Միթե հայլվույդ մեջ անձկավ
Գեղուհի՞ մը նայեցավ:

5 Եվ կամ միթե կըզմայի՞ն
Ալյակքդ երկնի կապույտին,
Եվ այն ամպոց լուսափթիթ,
Որք նըմանին փրփուրքիդ:

Մեղամաղձոտ լըճա՛կդ իմ,
10 Քեզ հետ ըլլա՛նք մըտերիմ,
Սիրեմ քեզի պես ես ալ
Գրավվիլ, լըռել ու խոկալ:

Որքան ունիս դու ալի՛
Ճակատս այնքան խոկ ունի,
15 Որքան ունիս դու փրփուր՛
Սիրտս այնքան խոց ունի բյուր:

Այլ եթե գոգդ ալ թափին
Բույլքն աստեղաց երկնքին,

Նրմանիւ չ'ես կրնար դուն
20 Հոգվույս՝ որ է բոց անհո՛ւն:

Հոգ աստղերը չ'են մեռնիր,
Մաղիկներն հոգ չ'են թոռմիր,
Ամպերը չ'են թրջեր հոգ,
Երբ խաղաղ եք դու և օդ:

25 Լըճա՛կ, դու ես թագուհիս,
Զի թ'հովե մ'ալ խորշումիս,
Դարձյալ խորքիդ մեջ խըռով
Զ'իս կը պահես դողդղալով:

Շատերը զ'իս մերժեցին,
30 «Քնար մ'ունի սոսկ — ըսին.
Մին՝ «դողդոջ է, գույն չ'ունի—
Մյուսն ալ ըսավ — կը մեռնի՛»:

Ոչ ք ըսավ — հե՛զ տղա,
Արդյոք ինչո՞ւ կը մըխա,
35 Թերևս ըլլա գեղանի,
Թէ որ սիրեմ, չը մեռնի»:

Ոչ ք ըսավ — սա տըղին
Պատռե՛նք սիրտը տըրտմագին,
Նայինք ինչե՛ր գրված կան...»
40 — Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան:

Հոն կա մոխի՛ր... հիշատա՛կ...
Ալյակքդ հուզի՛ն թող, լըճա՛կ,
Զի քու խորքիդ մեջ անձկավ
Հուսահատ մը նայեցավ...:

1871

23. ԹՐՔՈՒՀԻՆ

Երեկո է. բոցավառ է հորիզոն. ~
Կառք մը կ'անցնի դագաղի պես համրընթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրոփե հոն,
Վերջալույսի աղջիկ մ'է սա, ո՛վ Աստված.

5 Եթե նայի՛,
 Կ'ըսես — հի՛մա կը մարի»:

Մեղրամոմե անդրիանդի մ'է հանգույն. ~

Ի՛նչ դալկահար... կարծես հաջաղը վառե
Պատան մ'է նուրբ ներա վարդիցը դժգույն.

10 Աստված ըզնե զույգ մ'աշերովն կը վառե.
 Եթե ժպտի՛,
 Կ'ըսես — ո՛հ, հի՛մա կ'անցնի»:

Նայիլ կ'ուզե, բայց ա՛վելի կ'նըվաղի,
Սիրտը խունկի պես կը մըխա՛ սիրավառ,

15 Նե շողերու, բույրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրե ծաղկե թառ.
 Եթե շարժի՛,
 Կ'ըսես — հի՛մա կը թռչի»:

Հանչն է հուզյալ Օվկեանի մը նըման.

20 Կ'ուզե սիրե՛լ... համբույրի մ'հետ նըվաղիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամեկ սիրո կրակե բաժկին հուսկ կաթիլ.

Եթե շիկնի՛,

Կ'ըսես — հի՛մա կը բռնկի»:

25 Սրտի մեղո՞ւ, ինչպես կոչեց Համարթին,
Որուն ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սեր,
Ես կոչեմ զնե կո՛ւյս, որուն սիրտն է երկին
Անհուն սիրո, որ հորիզոն չ'ունի դեռ.


Եթե խոսի՛,

30 Կ'ըսես — հի՛մա կը հատնի»:

Նե կը վառի, մի՛շտ կը վառի, չը հատնիր
Տընանկ կընոջ տաճարն վառած ճրագին պես,
Աստղերու նման գիշեր սիրե՛՜ փողփողի՛լ.
Կրակ մ'է փրթած կողեն սիրո բոցագես...

35 Թե իսկ մեռնի՛,

Կ'ըսես — հի՛մա կը ծընի»:



Պ. Դուրյանի տաղերի և տետրի շապիկի վերջին էջը՝
հեղինակի ձևավորմամբ

24. ՆԵՐԱ ՀԵՏ

Համբույր մ'առի ներանե,
Համբո՛ւյր մ'անհուն գորովի,
Երբ կարմիր շողք մարեին
Հորիզոնին վերևի:

5 Ձեռքըս տարավ կուրծին՝ հոն
Սիրո երկին մ'որոտար.
Թոշնեցա գիրկն ես իբրև
Համբույր մ'անհուն, դալկահար:

Նե գ'իս իր քով նըստեցուց
10 Գորգի վըրա դալարյա.
Հուսկ ճաճանչ մը կ'պլպլար
Ներա դիմացը վըրա:

Թոթովեցի... դողացի...
Առի համբույր անհամար.
15 «Խոսի՛նք» ըսավ — ո՛հ, խոսի՛լ,
Հատնիլ է լոկ ինձ համար:

Աչերու բոցն երբ մարի,
Դադրի տըրոփն երբ սրտին,

Լոկ այն ատեն հարկ է որ
20 Անզոր շուրթերը խոսին:

Հուր հորիզոնն մարեցավ,
Երկինքն աստղեր փթթեցան,
Համբույր մ'առի դարձյալ ես
Հ'անուն աստեղց ցիրեցան:

25 Նե թողուց որ վարսքն ազատ
Սյուքը դեպ յ'իս բերելով
Միշտ հովահրե բըռնկած
Ճակատըս զով բույրերով:

Ո՛հ, այն ժամը ոսկեզօծ
30 Անշուշտ սահած, թըռած է
Ճակատագրին անողորմ
Սև ձեռքերեն երկաթե:

Մեր համբույրներն պահեցին
Տերեները խարշափմամբ,
35 Եվ շողերու տըվին շուք
Աստղերն երկնից այն անամպ:

Չեոք վերցուցինք աստղերուն,
Մեր ուխտեցինք իրարու,
Դողզըղացին աստղերն ալ
40 Մեր երզումեն ահարկու:

**Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրակեց ի գորով,
Բնությունն եղավ պրսակիչ,
Մեզ պրսակեց աստղերով...:**

1871

✓

25. ՏՐՏՈՒՆՁՔ

է՛հ, մնաք բարով, Աստված և արև,
Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև...:
Աստղ մ'ալ ես կ'երթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ

5 Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թըռին այրել ճակատն երկնքին.

Այլ այն Աստուծույն՝ շանթերո՛ւ արմատ՝
Հավելուն զենքերն ու զարդերն հրրատ...:

Այլ, ո՛հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարե զ'իս,

10 Աստվա՛ծ, խոկն հըսկա փշրե հյուլեիս,

Որ ժպըրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,

Ելնել աստղերու սանդուղքն ահալի...:

Ողջո՛ւյն քեզ, Աստված դողդոջ էակին,

Շողին, փըթիթին, ալվույն ու վանկին,

15 Դու որ ճակտիս վարդն և բոցն աչերուս

Խըլեցիր թրթռումս շրթանց, թռիչն հոգվույս,

Ամպ տըվիր աչացս, հեք տըվիր սրտիս,

Ըսին՝ մահվան դուռն ինձ փիտի ժպտիս,

Անշուշտ ինձ կյանք մը կազմած ես ետքի,

20 Կյանք մ'անհուն շողի, բույրի, աղոթքի.

Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ

— 60 —
Վրացի լուսավորչի
(Կապույտ փայտե թղթի վրա)

Հոս մառախուղի մեջ համր անշըշունջ,
Այժմեն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պլլըվիմ անվանդ մոնչեմ անդադար,
25 Թող անևծք մ'ըլլամ քու կողղդ խըրիմ,
Իսող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»:

Ո՛հ, կը դողդոջեմ, դժգույն եմ, դժգո՛ւյն,
Փըրփըրի ներսըս դըժոխքի մ'հանգույն...
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մեջ սե,

30 Թյափելու մոտ շոր աշնան մեկ տերե...:

Ո՛հ, կայծ տըվե՛ք ինձ, կայծ տըվե՛ք, ապրի՛մ...
Ի՛նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...
Այս ճակատագիրն ի՛նչ սե է, Աստվա՛ծ,
Արդյոք դամբանի մրուրո՞վ է գծված...:

35 Ո՛հ, տըվե՛ք հոգվույս կրակի մի կաթիլ,
Սիրել կ'ուզեմ դեռ լ'ապրիլ ու ապրիլ.
Երկնքի աստղե՛ր, հոգվույս մեջ ընկե՛ք,
Կայծ տըվե՛ք, կյա՛նք՝ ձեր սիրահարին հեք:
Գարունն ո՛չ մեկ վարդ ճակտիս դալկահար՝

40 Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չ'են տար:
Գիշերն միշտ դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն հար կուլա, խուզարկե վըհեր:
Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,
Անոր համար նա դըրավ այդ լուսին.

45 Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,
Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վըրան:

Ի զո՛ւր գըրեցին աստղերն ինծի «սե՛ր»,
 Եվ ի զո՛ւր ուսուց բուրուլն ինձ «սիրել»,
 Ի զո՛ւր սյուքեր «սե՛ր» ինձ ներշնչեցին,
 50 Եվ զիս նորատի ցուցուց ջինջ ակին,
 Ի զո՛ւր թավութքնե՛ր լըռեցին իմ շուրջ,
 Գաղտնապահ տերևք չ՛առին երբե՛ք շունչ,
 Որ չը խըռովին երազքըս վըսեմ,
 Թույլ տըվին որ միշտ ըզնե երազեմ,
 55 Եվ ի զո՛ւր ծաղկունք, փըթիթնե՛ր գարնան,
 Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան...
 Ո՛հ, նոքա ամենքը զ՛իս ծաղրեր են...
 Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն...:

26. ԶՂՋՈՒՄ

(Օր Մը Վերջը) ~

- Երեկ երբ պաղ քրտանց մեջ
Սև մըրափ մը կ'առնեի,
Եվ թոշնած զույգ մը վարդեր
Այտերուս վրա կ'այրեին,
5 Անշուշտ ճակտիս վրա մահու
Դալկություն մը կը պլպլար,
Եվ մահու թռիչ մ'ունեի,
Լըսեցի մորս հեծեծում...
Բացի աչերըս խոնջած,
10 Մորըս արտոսըր տեսի՛...
Ո՛հ, ճշմարիտ գորովի
Մարգարիտներ սուտ ու կեղծ...:
Մայրըս անհո՛ւն ցավ մ'ունեի,
Այն սև ցավը ե՛ս էի...
15 Ա՛հ, գըլուխըս փոթորկեց...
Այս սև հեղեղն տըվի դուրս...
Ո՛հ, ներե՛ ինձ, Աստված իմ,
Մորըս արտոսըր տեսի՛...:

1871

27. ԶՆԵՆ ՊԱՇՏԵՄ

Ճառագայթի ու վարդի
Փթթումներով վեհապան՝
Ես չը սիրեմ սա դեմքը
Սիրո ժպտով մը օծած:

5 Ես չը սիրեմ, երբ կույսի մ՝
Աչերը գ՛իս բուրվառեն՝
Զերթ հուր ամպոց գույգ մը հյուս
Հոնիցը տակ մեղմորեն:

Գիսաստղի պես հերարձակ՝
10 Ես չը սիրեմ սա վրճիտ
Կույսն, ոչո դեմքեն կը փթթին
Լուսնի դալուկն ու ժրպիտ:

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կույսի մը հեզանազ,
15 Որ եղեմ մը կը բուրե,
Կ՛վառե երկինք մը երազ:

Ես չը սիրեմ սա կապույտ
Զույգ մ՛երկիններն* գինովցած,

<* Աչքի նմանությամբ առնված>

Ոյր մեկուն մեջ սլաշտի ևա,
20 Եվ մյուսին մեջ ալ Աստված:

Ես չը սիրեմ սա օտար
Ժրպիտները հուսաշող,
Որք ծաղիկներ են սուտ սոսկ
Սրտի անդունդը ծածկող:

25 Ես կը պաշտեմ զ'իմ Պ...
Ինձ կը բավե իր սրտին
Մեկ ճառագայթը միայն,
Եվ մեկ վարդն իր ժրպիտին:

Թեև սև աչքն հեղեղեն
30 Անթիվ աստեղց միշտ բուլլեր՝
Իր սև հոնից շուքին տակ՝
Զ'որս ութ օրն է նա գրծեր:

Հուսինը ո՛չ ներա վարդն,
Եվ ոչ ալ վարդը ունի
35 Ճառագայթումը ներա,
Ճառագայթո՛ւմ սիրողի:

Ես կը դողդողամ իր վրրա,
Նե իմ վրրա գորովի,
Իսկ թե մոռնա՞ զ'իս օր մը...
Ա՛հ, այն օրը քա՛ր կտրի...:

1871

28. ԿՈԿՈՆ — ԾԱՂԻԿՔ ԿՈՒՅՍԻՆ

Հուսափրթիթ շանարև
Զույգ մ'աշխարհներ ես տեսի
Ճառագայթից, բույրերու
Եվ փափկության ու լույսի:

5 Ո՛հ, չ'է՛ նոցա պես անբիծ
Իտալական վեհ երկին,
Եթե չ'ունին աստեղց բույլ,
Ամպ ու կայծակ ալ չ'ունին:

Ո՛հ, հավիտյան միշտ կոկոն
10 Կարծես զույգ մը ծաղիկ են,
Բայց նրման կույս սրտերու՝
Կարի քաղցրը կը բուրեն:

Ձեռք կարկառել. ս'աշխարհաց
Ակնախրտիղ ու անտես՝
15 Հանդուգն ըլլալ է լոկ քան
Զ'աշխարհակալն Արտաշես:

Ի՞նչպես արդյոք կերտեց նա՞
լուսագունդներս այս դողդոջ,
նա աշխարհի քան ըզկերտ՝
20 Մտածեց ոգի տալն կրնոջ:

Կը դողդողան իմ շուրթեր
Հըպիլ սիրո այդ խոռով
Կոկոն — ծաղկանց՝ խամրելու,
Արատելու երկյուղով:

25 Այլ որ շուրթերն՝ հանդրգնի
Հըպել հրաշից այդ լույսե,
Կ'երդնում յ'աշխարհն աստեղաց,
Թե նա դա՛ր մը կը ծըծե:

29. ՍԵՎ, ՍԵՎ

Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եվ թիթեռնի մ'ուններ թևեր.
Վերջալույսի նրման ամպոց
Երազներ հո՛ւր ճակատս վառեր:

5 Արդ սառույցներ դառն արտոսրի
Կը քարանան կուրծիս ներքև,
Եվ բարդք ամպոց սևաթորմի
Կ'ուզեն խնդզել սիրտս ու արև:

Հազիվ քանի մ'օրերն կյանքիս
10 Ոսկեզօծեց իմ բախտը վատ,
Որո՛նք եղան լոկ օվասիս
Մեղմող կյանքիս դառն անապստ

Մենանայի օրեր ցըվերջ
Երբեմն՝ հովտի ծաղկանց լ՛երկնի
15 Ձյունափրթիթ ամպերուն մեջ,
Կյանքի մրրուրն ես թափեի:

Ծրծեի սե՛ր, ծրծեի կյա՛նք,
Մինչ վերջալույսն կը հըրահրեր,

«Մնաս բարովի» սա կարմրորակ՝
20 Տըխուր կըրակ լ'երկնի բոցեր:

Ունեի ես երբեմն առատ
Վարդեր, առատ աստղեր նույնպես,
Ճակատագիրս սև տեսավ շա՛տ,
Բրցուց, քաղեց զ'անոնք սրտես:

25 Ունեի ես իմ սիրուհին,
Որո թեպետ աչքն էին սև,
Սակայն սըգալ չը գիտեին...
Հրեշտակ մ'էր նե, հրեշտակ անթև:

Սև երազ մը օր մը դողդոջ
30 Մըղեց զ'իս սև՝ փոսի մ'առջին,
Ուր քար կտրած՝ սիրտ ի թընդոջ՝
Դագաղի մ'աչքս հառած էին:

Ավա՛ղ ներա վարդքն ու աստղերն
Լուռ պիտի տար կուլ այն սև փոս,
35 Ցուրտ համբույր մը առի ճակտեն,
Ներա վերջին ձոնն էր ափսո՛ս:

Եվ լըսեցի յայնժամ՝ թի թի
Սև սև հողեր կուշտ թնդեցին
Տըխուր քողքին վըրա փայտի...
40 Դըժոխք մ'անեծք այն սև՝ օրին:

**Այն ցուրտ հողերն ՚ իմ դատարկ սիրտ
Լըցուցին, փոսն գոցելնուն հետ՝
Եվ այս աշխարհն ալ անժրպիտ
Գոցեցին իմ առջև հավե՛տ...:**

1871

30. ԱՌՒ ՄԱՅԻՍ

Մաղիկներու մայրի՛կ դու կույս՝
Ո՛վ իմ Մայի՛ս ծաղկահանդերձ,
Սա երփներանգ ծաղկոքդ հանդերձ
է՞ր չը բերիր Մաղիկն հոգվույս:

- 5 Ո՛հ, միթե կա՞ այլ զըվարթուն
Մայիս հոգվո Մաղիկներու.
— Նա փողփողե վերև գլխու,—
Մի դալկահար Մայիս անհուն:

31. ՄԱՆԻՇԱԿ

Ո՛վ մանիշա՛կ, մանիշա՛կ,
Ինչո՞ւ այդպես գլխիկոր
Նայիս հողին սրգավոր...
Ո՛հ, ինչի՞ այդ նըշանակ:

5 Միթե դու կո՞ւյս մը տեսար,
Որուն աչաց քով կապուտ՝
Ըզքեզ գրտար, այնչափ մութ,
Որ կը սրգաս սեահար:

Եթե դու ալ վարդին պես
10 Ունենայիր դույզն բոսոր,
Կը շիկնեիր, ինչպես որ
Շիկնեցավ այն վարդը վես,

Երբ տեսավ օր մը ներա
Վարդերն անբլծ այտերուն:
15 Շուշանին պես դալկություն
Եթե ըլլար քու վրրա,

Դժգունեիր որպես նա,
Ինչպես որ օր մը շուշան

**Դժգունեցավ աննըշան՝
20 Տեսավ ձեռներն երբ ներա:**

**Եվ դեռ ըսե՞մ... օր մ'երկին
Ամպոտեցավ... է՞ր արդյոք...
Երբոր կ'ընեի նե աղոթք,
Վերն հառած աչքն ու հոգին:**

32. ԻՄ ՀԱՆԳԻՍՏԸ

Եթե մոտի հողակույտիս,
Թուխ — մոխրագույն լճեր ներա
Թե ջուխտ մարգրիտ թափին իմ վրա,
Զը ցավաղնիր ոսկերոտիս.

5 Ա՛յս իմ հանգիստ.
Իմ լըռանիստ
Ա՛յս օթևան
Խաղաղության:

33. ՆՈՐ ՍԵՎ ՕՐԵՐ

Մինչ բռնության՝ ընկա՛ն արյան դարերը,
Աշխարհ մը կա արցո՛ւնք թափող սարերը,
Արյամբ պղտո՛ր դեռ գետերուն փունքը.
Զը դադրեցաւ դեռ այս երկրին սև սուգը.

- 5 Ավերակույտն այս ահարկու,
Աշխարհ մոխրոց ու նոճերու:

Հայ դյուցազանց, որ հոն ընկան ի վաղուց՝
Ոսկերտտիքն՝ արմատնե՛րն այն վրրիժուց
Ա՛հ, դեռ բողբոջ մը չ'արձըկած հո՞ղ դարձան...

- 10 Ուրեմն հիմա աղիք չ'ունի Հայաստան...
Ա՛յ. դալկահար դու հայրենիք...
— Եվ դեռ Քրդի՞ն ալ խոնարհինք:

- Մտռախուղ են հագեր դաշտքն ու լերինքը,
Զը գեղգեղեր Հայ հովվուհւոյն սրրինգը,
15 Հայուն համար չը փալփըլիր աստղիկը,
Արցունքներով թոռմեր հոգվոյն ծաղիկը.
Դադրեր անմեղ խինդ, թինդ ու պար,
Շողա ազա՛տ Քրդին տապար:

Գողգոթ մտնե՛ն առագաստը գիրգ հարսը,
20 Արտասվաթոր՝ դեմքին ծածկած հույլ վարսը՝
Որ չ՛ըլլա թե հանկարծ սիրո մրմունջը
Խափանե վատ Քրդին տուփոտ մըռունչը.

Սերը փեսին արյամբ կարմրի,
Հարսը Քրդին կ՛երթա գերի...:

25 Մի՛շտ կը ցանե Հայն, չը հնձեր... անոթի՛...
Իր դալկահար դեմքեն երկու շիթ կաթի,
Արտոսը ու բիրտ միսնգամայն... ո՛վ Աստված.
Նա ճաշակե տրտմած սրտով ցավ ու հայց.

Այս տարաբախտ ազգն է Հա՛յը,

30 Մեր արյո՛ւնը, մեր եղբա՛յրը:

Ա՛հ, ոտնակոխ Հայուն սիրտը և տաճար
Հրացանն չ՛ուս սա կոշտ Քրդին անդադար,
Եվ մեր ներսը չ՛եռա՞ր կարմիր մեկ ւլիին
Կամ մեկ փրփուրն հայրենյաց սուրբ երակին,

35 Որ սառույցի զերթ որդիներ՝

Մեր աղիքները չ՛ենք թոթվեր:

Ի՞նչ սիրտ է այս, որ հոս գամեր է Աստված,

Մինչ չը սիրեր նա հայրենիքը ցաված...

Չ՛ունի ներսը Հայն իր նախնյաց տըրրոփր,

40 Լրբե՛ր է դ՛ինք ճակատագրին Սերորը.

Իրես դարձուց Հայն սուսերին,

«Սև» ժառանգեց լոկ պապերեն:

Սառե աչեր, քարե լեզու, ա՞յս մընաց
Բյուր փառքերեն մեր գոռ ու պերճ հայրենյաց,
45 Սեւազրլուխ խումբ մը ագռա՞վ մընաց լոկ՝
Կամ խումբ մը կույր խըլուրդ՝ ըստրո՞ւկ փառքի սոսկ.
Ա՛հ, այն արծիվ ժողովրդեն,
Որ հարվածվի արդ կոշտ Քրդեն:

Ի՛նչ, սե ձեռքեր հըպին վըճիտ ճակատին
50 Հայ կուսիկին նըվիրական լաչակի՛ն,
Դըժոխք մը տարփ թոշնեն վարդը կուսության,
Կարծես ծաղիկ մը կոխկոտեն — գ՛այս կըզգան,
Ինչպես որ Հայ մը մորթեն,
Կարծեն թե հավ մը մորթեն:

55 Է՛հ, մի՛ վախեք, ասեղ մ՛անգամ պետք չ՛է մեզ,
Այլ հայրենի սոսկ ըզգացում մ՛աղեկեզ.
Ժանգոտ սուր մը, պատռած դրոշ մը թե չ՛ունինք,
Կուրծերնուս տակ տըրոփող սի՞րտ մ՛ալ չ՛ունինք.
Օ՛ն, ոտքերնիս վարենե՛նք գետին,
60 Հայտենե՛նք մեր ցավը ահագին:

Մեր քերց վարդերն և արևներն մեր եղբարց՝
Մեր տաճարաց խաչերն՝ պատի՛վն հայրենյաց
Մենք պահանջենք, բարօրությո՞ւն մեր ազգին.
Զ՛ա՛յս պահանջե՛նք՝ գ՛ա՛յս Սուլթանեն սրտագին,
65 Մեր պատիվն ու Քուրդը կ՛ուղե՛նք,
Եվ կամ նորա զենքին դեմ զե՛նք:

34. ԻՄ ՅԱՎԸ

Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Յամաք գտնե՛լ աղբերքն յամայր,
Յամքի՛լ ծաղիկ հասակի մեջ,
Ո՛հ, չ'է այնչափ ցավ ինձ համար:

5 Զերմ համբույրով մը դեռ չ'այրած
Սա ցուրտ ճակատըս դալկահար՝
Հանգչեցունե՛լ հողե բարձին,
Ո՛հ, չ'է՛ այնչափ ցավ ինձ համար:

Դեռ չը գրկած էակ — փունջ մը
10 Ժրպտե, գեղե, հուրե շաղյալ՝
Գրկե՛լ սա ցուրտ հողակույտը,
Ո՛հ, չ'է՛ այնչափ ցավ ինձ համար:

Քաղցր երազով մ'հրդի մրափ մը
Չ'անդորրած գլուխս մրկահար՝
15 Ննջե՛լ հողե վերմակի տակ,
Ո՛հ, չ'է՛ այնչափ ցավ ինձ համար:

Հագնի՛լ հյուզին մուր-անունը,
Ծրծե՛լ նորա մըրուր — օգն հար,
Միշտ ցավի՛լը միանգամայն,
20 Ո՛հ, չ՛է՛ այնչափ ցավ ինձ համար:

Հեզ մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թըշվառ,
Չ՝օգնաժ անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցա՛վ ինձ համար:

1871

35. ՆՎԵՐ ՀԻՇԱՏԱԿԻ
ԱՌ Պ. 2. ՃԱՆՖԵՍՃՅԱՆ

Հ ՈՒ Շ Ք

Սա խաղաղ Մայր — Օվկեանին,
Ուր փողփողեն ավազք ոսկի՝
Մեր երազոց վառարանին՝
Թ' Էղբեն՝ վարդից մեջ աճյունի
5 Երբ արևը շողշողե,
Դու իմ սերը միշտ հիշե՛:

Թավուտքե մը կանաչ ու մորչ,
Որոց շուքը սիրեինք միշտ
Նստիլ, խոսիլ շրթամբք դողդոջ,
10 Ծրծեկ անհագ իրարու սիրտ,
Երբ տերև մը խարշափե,
Դու իմ մրմունջքը հիշե՛:

Առավոտներն գարնանային,
Ո՛հ, հորիզոնն ալ վարդավառ՝

15 Յ'այց ելնելուդ ծաղկած մարգին,
Ուր կը գտնես մորը շոր մացառ՝
Երբ թռչնիկ մը ճըռվողի,
Դու իմ իղձերը հիշե՛:

Պաղլար-պաշի ելած ատեն՝
20 Եվ կամ սս'րը Չամլըճային՝
Սիրո՞ւն վայրեր ուր միշտ արդեն
Ճեմել հոգիք մեր սիրեին՝
Երբոր զեփյուռ մը փըշե,
Դու իմ հոգին միշտ հիշե՛:

25 Եվ առօրյա աշխատանքի
Վաստակաբեկ վերադարձիդ՝
Եվ կամ սիրո արշավանքի
Դարձած ատեն տըրոփ ի սիրտ՝
Երբ հորիզոնն հրդեհե,
30 Դու իմ կրակները հիշե՛:

Ամրան գիշեր մ'երբոր գտնես
Աստղերն առատ գլխուդ վըրա՝
• Եվ լուսինը լապտեր ընես
Դողդոջ քայլից դեպ 'ի Մոտա,
35 Երբ շրջագգեստ մը շրջե,
Իմ մաշած սիրտը հիշե՛,:

Տրտում նստած դու պատուհան՝
Հառած երկնից այն սևերես՝
Սև մըտածմանց լոկ վառարան
40 Տժգույն ճակատդ և աչերդ վես՝
Տըխուր կոշնակ մ'երբ հնչե,
Մըտերմիդ մա՛հը հիշե՛:

1871 <Հոկտ. 6>

36. Ի ԳԵՐԵԶՄԱՆՆ
ԱՄԵՆԱՍԻՐԵԼՎՈ ՎԱՐԴԱՆ ԼՈՒԹՅՅԱՆԻ

Հ Ե Մ Ե Մ Մ ՈՒ Ն Ք

Ո՛հ, երկնքի ժապավեններ՝
Ճառագայթներ՝ միացուցած
էին սրտերը մեր միմյանց՝
Մեր սրտերը սիրանըվեր:

5 Նոքա միմյանցս համար քանի՞
էին անճո՛ւն բա՛ց մատյաններ,
Հոն ամեն բառ խորք մը ուներ
Իր ներքևը սիրո, ցավի:

Ո՛հ, կը հիշե՞ս, Չամլըճայի
10 Սարը նստած լո՛ւռ մըխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սև հովանոցք վշտահարի:

ԸՍթամպուլի կապույտ գոտվույն՝
Վոսփորի ծուփը դիտեինք,
15 Ուսկից և մերթ զ՛անամպ երկինք.—
Ո՛հ, ախորժներ՝ լուռ մեր հոգվույն:

Այն հյուսկենները երկնքին՝
Այն ամպերը ձյունաթորմի՝
Մինչ երեկո, ո՛հ, մի առ մի
20 Մեր նայվածքը գրրավեին:

Զ' էինք խոսեր, խոսքն մեր հոգվոց
Անհունությունը կը պղծեր,
Մենք զերթ երկու տժգույն բոցեր
Իրարու մեջ կ'այրեինք սոսկ:

25 Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում,
Սև՝ ծրծեինք՝ սո՛ւզ անհատնում,
Նայեինք միշտ երկրես հեռու:

Անհուսությո՛ւն, գերեզմանի
30 Այդ սև կաթը շատ ըմպեցինք,
Քեզ հափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից տժգույն որդի:

Քու դալուկըդ՝ զիս ցավցուց շա՛տ,
Եվ նայվածքդ վերջին նըվաղ՝
35 Զ'որ ուղղեցիր ինձի, ավա՛ղ,
Բևեռացուց յ'իս հիշատակդ:

Երջանի՞կ ես հոդ թե թշվառ,
Զվարթնո թևով լուր մ'ինձ դրկե,
Ա՛հ, այս աշխարհն միշտ տաղտուկ է...
40 Ցավերու մեծ մայր մ'է աշխարհ:

Ո՛հ, եթե հող ծառի մը շուք
Կա և նորա քով մեկ վըտակ,
Եթե կա հող սե՛ր անապակ,
Կան աղատ օդ, ազատութիւնք:

- 45 Ո՛հ, կը թոթվեմ ես այս աղտոտ
Զորան հողվույս՝ կյանքս՝ մինչ իսկ այսօր,
Հող կը հագնիմ, հո՛ղ սրգավոր...
— Ա՛հ, ուզածներս, Վա՛րդան, կա՞ն հող...:

37. ԻՄ ՄԱՀԸ

Եթե տժգույն մահու հրեշտակ
Լենհուն ժպտով մ'իջնե իմ դեմ...
Շոգիանան ցավքս ու հոգիս,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

5 Եթե սընարըս՝ իմ տիպար
Մոմ մը վըտիտ ու մահադեմ,
Ո՛հ, նըշույե ցուրտ ճառագայթ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթե ճակտովս արտոսրազօծ
10 Զ'իս պատանի մեջ ցուրտ զերթ վեմ
Փաթթին, դընեն սև դագսուղը,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթե հընչե տըխուր կոշնակ՝
Թրթոուն ծիծաղն մահու դժխեմ,
15 Դագաղս առնե իր համըր քայլ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթե մարդիկն այն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դեմ՝

Համասրփոռն խունկ ու աղոթք,
20 Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթ՛ հարդարեն իմ հողակույտ,
Սվ հեծեծմամբ ու սրգալին
Իմ սիրելիքը բաժնըլին,
Գիտցեք որ մի՛շտ կենդանի եմ:

25 Իսկ աննըշան եթե մընա
Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,
Սվ հիշատակս ալ թառամի,
Ա՛հ, այն ատեն ես կը մեռնի՛մ...:

38. ԻՆՁ Կ'ԸՍԵՆ

Ինծի կ'ըսեն — ինչո՞ւ լուռ ես».—
«Ո՛հ, միթե բառ կամ խոսք ունի՞
Արշալույսը, որ կը բռնկի,
Զի անհունն է այն ալ ինձ պես»:

5 Ինծի կ'ըսեն — միշտ տխուր ես».—
«Ի՞նչպես չըլլամ, մեկիկ մեկիկ
Թոթափեցան գլխուս աստղիկք...
Արշալույս մը չ'անցալ սրբոս»:

Ինծի կ'ըսեն — կրակոտ չ'ես,
10 Լըճակի մը պես ես մեռած,
Դալկահա՛ր դեմքդ ու հայեցված»:—
«Ո՛հ, հատակն են իմ փրփուրներս»:

Ես ինձ կ'ըսեմ — ժամդ է հասեր,
Քու երկրորդ սև մորդ գրնա գոգ,
15 Գերեզմա՛ն, հո՛ն գտնես դու գոգ
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր...»:

1871

39. Ա.

- Ծրեկոյցան բալն կը սողար քարդիլ խավ,
Աստեղազարդ անդունդն հյուսիլ լուռ ու սյավ,
Տըխո՛ւր ըստվեր, զոր կը ձրգեր իր ետև
Լուսափըթիթ օրն սիրայնոց կարճատև:
- 5 Կը նըշմարվեր հագիվ երկնի կապուտակ
Գմբեթին խոր փալփլող լ'ալվույն ջինջ հատակ
Անդրադարձող գիշերվան աստղն անդրանիկ,
Ձոր գրկեցին շուտ Վոսփորյան ջինջ ալիք:
Մառը մտնող արփվույն մարեր հուսկ շառայլ
- 10 Սառնամանուտ սարերու վրա քայլ առ քայլ,
Ինչպես հյուծյալ կույսի մ'ականարկ առ դամբան,
Ուր պարեն ցուրտ ծիծաղք սիրո դառնության,
Ինչպես և իմ դյուլթյալ ականարկս առ արոտ,
Ձոր մըթագնեց մառախուղ մի նախանձոտ,
- 15 Ի՛ալ չը կրցի ընդնշմարել էակն ան,
Ձոր գգվեին ճաճանչ, զեփյուռ իրիկվան.
Հողմածածան իր շրջազգեստն ու հոպոպք
Դեղձան վարսից գիրգ ուլան շուրջ ոսկի ծոպք,
Կարծես ծաղիկ մ'էր երագի հիասքանչ,
- 20 Կը կոխկըռտեր այն ծաղկալից մարգաց լանջ.
Թողե՛ք կոխել զի կը փթըթե ավելի.

Երբոր հովիկն իր այտեն գույն գեղանի
Եվ իր ամբիժ լանջեն առած քիչ մը հոտ՝
Տանի սփռե անապատներն ավազոտ,
25 Ի՛նչա փթթին ծաղիկներ բյուր առավել.
Անոր համար ի՞նչ է ծաղիկ փթթեցնել,
Մինչդեռ սիրո կես դիակներ կը հառնեն՝
Երբ սև աչքեն սրլաք մ'ուղղե բոցեղեն:

Լուսինն արդեն կը քողազգեր՝ պրճներ զինք
30 Նուրբ ամպիկով, ուսկից ուսան թրքուհիք
Ծածկել իրենց դեմքն հաջաղով նրբաթել,
Անոր նրման տժգոյն ըլլալ և դյուլթել:
Լուսի՛ն, գըտիր լույս ցողելու ցածուն հյուղ,
Ուր գեթ ցամքած է կանթեղին առկայծ յուղ-
35 Մի՛, մի՛ սորվիր գաղջ արևեն ձրմեռվան
Մոռնալ հյուղին, ուր ամայի է վառարանն,
Եվ լոկ սրտերն հոն կը մըխան հուսահա՛տ...
Ծագե հյուղին այն՝ բանաստեղծն ուր աղքատ
Ինք լույս, կըրակ ոչ մեկն ունի գրրելու.
40 Սարն իր աստեղց թո՛ղ, դըղյակն ալ ջահերու,
Գրնա՛ ցողել լույս տընակին այն ցածուկ,
Ուր մայր մը գիրկն առած կայաւառ մի մանուկ՝
Ցույց տալ կ'ուզե քեզ Աստուծո զերթ պատկեր,
Դու որ միայն սիրահարաց ես լապտեր:

45 Տերևներուն մեջեն արծաթ լի լուսինն
Կը դիտեի՝ ինչպես որ դեմքն հարս կուսին՝
Երբ կը ծածկե քողքն հիմենյան ոսկեթել,

Բայց սա վարդի փոխան գիտե լույս փթըթել:
Ալ աստղն աղոտ և կարծես թե ավելի

50 Երկընթի լուրթ խորը սուզած կը փալփլի,
Եվ վերջալույսն ալ կը մարի որ դեռ հոն՝
Հրդեհի նման բոցավառեր զհորիզոն:
Եվ դուք՝ կրակք սիրո, մարիք շուտ և դուք,
Տևեք ինչպես վերջալույսն այս բոցաշուք....:

55 Արդյոք արևն այսօր ո՛րքան սիրաբույր
Կուսից լույս դեմքն այրեց, ուսկից մեղմ համբույր
Քաղել դողաս, կը վախնաս թե կը թռչնի
Իր այտերուն վառ վառ վարդեր գեղանի:
Թավուտք այսօր շուքերնուն մեջ առանձին՝

60 Խորհրդավոր ի՛նչ փըսփըսուք լըսեցին,
Ի՛նչ խոստումներ, ի՛նչ մրմունջներ սրտմաշուք,
Իսկ դո՞ւք, մացա՛ոք, հովանոցա՛կք, ա՛հ, իսկ դուք.՞.՞.՞.
Ո՛հ հովանի՛ք, թավո՛ւտք, խորշե՛ր անմարդի՝
Ուր դայլալիկ թռչնո, խորշյուն սաղարթի

65 Եվ երբ լըսվի շրջագգեստի մը շրշյուն
Չոր տերևոց վըրա՝ սըփոռ գորս աշուն,
Երբ շուքին տակ կույս մ'առանձին ընե մտն,
Եվ տերևոց ետև դողամ անոնց նման,
Որ չըլլա թե դիպիմ աչքին բոցեղեն,

70 (Պե՞տք է դողա միթե տերևն արևեն)
Երբ ծիծառնուկն ինձ հետ հեծե աղեկեղ,
Ո՛րչափ ատեմ քաղքին ժխորն, սիրեմ Ձեզ:

(Հիվանդությանս պատճառով ընդհատված)

<1871>

1. ՀԱՅՈՒՂԻՆ

Աշնան մեջ էր, եղեկո մը
Վերադարձիս յՅուսկյուտար,
Օդը պարզ էր, հողմը մեղմիկ,
Մովուն ջուրերն ալ հանդարտիկ:

5 Շոգենավին սարավանդը
նրստած անկյուն մ'առանձնակի՝
Ուշադրությամբ ես նույն օրվան
լըրագիրները կարդայի:

Մեկ մ'ալ հանկարծ սանդուխեն
10 Վեր ելնելու ոտնաձայն մը
Շրփոթեց զիս և աչերս
Դարձուցի դեպ յայն կողմը:

Հայուհի մ'էր վեր ելնողն,
Բարձրահասակ և գեղադեմ.
15 Անցավ մոտես նե սիգաճեմ,
նստավ անկյուն մ'ինձ դեմ սու դեմ:

Ո՛հ, կարծես թե նե երկնային
Զրվարթուն մ'էր վար իջած՝
Լույս սփռելու, սեր բուրելու,
20 Խրոտվելու սրտերն այրած:

Այլ շրգիտեմ թե ինչո՞ւ
Կրկին աչերըս հառած՝
Իմ թերթիկիս վըրա միշտ՝
Սիրտս էր ամբողջ խրոտված:

25 Մինչև մեկ մ'ալ նավաստին
Խռպոտ ձայնով մը գալով մոտ,
Ըսավ. «Հասանք յՅուսկյուտար,
Ալ ի՞նչ նստեր ես դու հող»:

Վեր վերցուցի աչերըս,
30 Ոչ ոք տեսի մեջ նավին.
Մինակ էինք երկուքնիս,
Մեկ մ'ես, մեկ մ'ալ... նավաստին:

2. *

* *

- Ահա սրանայ օրն երջանիկ՝
 Ի յիշատակ ոսկեղենիկ,
 Յորում լըցան հէք հոգւոյս իղծք,
 Ետուն տեղի սրտէս թախիծք,
 5 Թարմացան հոյլ վարդք ոսկեփունջ
 Կենացս պատեաց բուրում զիմ շուրջ,
 Ել կարէ ոչ սրտիկն իմ վառ՝
 Գոլ գոհ, յագիլ լոկ՝ի կիթառ,
 Զհոգիդ ըղսիրտ եւ ըզբարիս,
 10 Դու որ յարտօսը զհիքօք փարիս,
 Փրկչին մերոյ արձան տիպար՝
 Փոյթ թշուառաց ՚ի մըխիթարս,
 Դու որ սփռես զդամբանօք վարդ,
 Տոս ցոյց զերկին յակնարկ զըւարթ,
 15 Երգես սոխակ ՚ի գիշերի,
 Ո՛հ, ի գեղգէղդ սոսկումն ցըրեմ
 Գերեզմանաց խօլ արհաւիրք,
 Պարգես զբարեաց դյաւէրժ երկինք:
 Քե՛ւ, քե՛ւ շնչեմ ես յայս յաշխարհ,
 20 Եւ քոյդ ՚ի շունչ մըխիթարար
 Սիրելեացս խոր փակեցան փոսք,

Աստեղք յերեւ գան լուսահոսք,
Յորչափ են թիւ՝ կեանք առ յապա
Աստեղաց վառ՝ ցորչափ նոքա,
25 Եւ ի յալիսըդ ձիւնափառ
Ըսփոփես զհէքս հոգեբարբառ,
Եւ ի դամբանս եկ առ ի գութ՝
Ըզփրրկութեան մնչիլ դաղօթ:

Տ ԱՐԲԵՐԱԿՆԵՐ



1. ԿԸ ՍԻՐԵՄ ԶՔԵԶ

Ո՛հ, ո՛վ ես դու, սե՛ր, երկնային շո՛ւնչ կամ հո՛ւր,
Քու սև անո՛ւշ աչերդ շունի գիշերը,
Վարդը շունի քու լանջդ ամբիժ ձյունաթույր,
Լուսին շունի քու վարդագույն ւայտերը:

5 Յայգն՝ աստղերուն փաղփուն, լուսնույն սիրադեմ,
Ցերեկն՝ ալյաց, ծաղկանց ժըպտիս. մեկուն... գեթ.
Իսկ քեզ համար ես արցունքով կաղոթեմ,
Դու չես շնորհեր նայվածք մ'ինձ սև աչերեդ:

Արդյոք էա՛կ մ'ես, թե երկնից զըվարթուն.

10 Կը նախանձին գեղույդ վըրա վարդ, լուսնակ,
Զայնիկդ ապշած լըսելով քաղցր ու թրթռուն՝
Նոճյաց խորերն կը սգա լըռին լուսինյակ:

Այլ ի՛նչ քաղցր է, եթե ըլլամ ես զեփյուռ,
Եվ գըգվելով մագերդ խարտյաշ ու անոսր,

15 Տամ շունչս հուշիկ այտերուդ վրա վարդասփյուռ,
Սըրբեմ, եթե կա աչքերուդ մեջ արտոսր:

Պարտեզիդ մեջ իցի՛վ թե վարդ մ'ըլլամ ես,
Եվ երբ դու գաս առավոտուն ժըպտով պերճ,

Որ քու այտերդ կարմիր գունովրս ներկես,
20 Թոռմիմ... փափկիկ ձեռքիդ մեջ տամ կյանքիս վերջ:

Երանի՜ թե վըտակ մ'ըլլամ ես վըճիտ,
Եվ երբ հուշիկ նըստած մոտ իմ հզերքին՝
Պատկերանա հայելույս մեջ քու ժըպիտ,
Պըղտբերելով կապույտ ալիքըս ցամքին:

25 Այլ ոչ, ա՛նգութ, եթե ունիս սիրահար,
Իցի՛վ թ'անոր գերեզմանին վեմն ըլլամ,
Եվ հոն թափած դառն արցունքներդ ծըծիմ հար,
Ըզգամ դեմքդ... այլ ոչ, թեպետ վեմն, այլ կուլամ:

Ո՛հ, դու սիրե, գըգվե, ժըպտե, Հայ աղջիկ,
30 Քեզի համար սիտի մեռնիմ, թո՛ղ պլպլուն
Արցունք մ'հեղու դագաղիս վրա սև աշիկդ,
Տըխուր շիրմիս վերև երգե թո՛ղ պլպուլն: -

- Աշնան տըժգույն գիշեր մըն էր ձմրահուպ,
 Կը ցոլային երկինքն աստղեր բյուր՝ ասուպ,
 Չոր թերթերուն խորերն լուսինն իր բեկբնկ
 Շաղն կը ցողեր՝ ամրան վարսիցն ողբերեկ.
- 5 Շամբին մեջ թարմ կը թավալեր վըտակը,
 Փաղփուռն աստղեր կը շողային հատակը,
 'Ի անոր ալյացն հեշտիկ մրմունջը միայն
 Սիրո քնարին վերջին լարին էր ողբ՝ ձայն...
 Սյուքը կ'սուլեր տերևներուն մեջ թեթև,
- 10 Դեմքիս վրա կը սահեցներ շղարշե թև.
 Նա իր շնչովն դիս գոհ ընել կը կարծեր,
 Բայց կարծարծեր սրտիս սիրուն վառ կայծեր:
 Ոգի մ'անցավ սրբտես, շթողուց հոն ըստվերն՝
 Հիշատակ մը... միայն գիտեն այս աստղերն...
- 15 Համբուրից տխուր հիշատակ մ'էր սյուքին շունչն,
 Իր դողդոջ ձայն տերևներուն այս շըշունջն.
 Անույշ ժըպիտն ու վեհ նայվածքն այս ալին,
 Մետաքս վարսերն սև հողին տակ կը հալին...
 Տըժգույն ճակտին տըխուր պատկերն այս լուսին...
 20 Ո՛հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տրվի թե կուսին...
 Կր սիրե նա, նայվածքիդ մեջ կը թռչնի...

- Ոխի մեջ՝ քար, սիրո մեջ՝ վարդ, սիրտ մ'ունի...
 Անույշ աչեր, ժըպիտ, արցունք տեսա լոկ,
 Կուրծըս վարսեր լանջ մ'ըզգաց սիրատրոփ։
- 25** Սիրո մրմունջ՝ հառաչ լսեցի բեկբեկ խոսք,
 Դողդոջ ու գիրգ պաղ ձեռք մ'ըզգաց ձեռքըս սոսկ.
 Թևերուս մեջ լույս մը՝ հով մը մարեցավ...
 էակ շէր նա, այլ սեր, հուր, շունչ, ժըպիտ, ցավ...
 Ըստվեր մ'էր նա, որ սահեցավ զերթի թախիժ,
- 30** Բայց կանգ առավ՝ փոս մը, քար մը ցըցուց ինձ՝
 Հիշատակ մը՝ գերեզման մը՝ սուրբ սափոր...
 Ուր կը հածի հեկեկով սիրտս ցողաթոր...
 Երանի թե ըլլամ ես շիթ մ'արտասուք՝
 'ի անհետանամ դամբանիդ քով սիրասուգ,
- 35** Եվ կամ թե խոտ մ'ըլլամ ու հոն ես ցամբիմ...
 Ո՛հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տրվի թե կուսին.
 Դարեր անցնին շուքըդ պիտի չը մեռնի,
 Արցունքներով կյանքըս պիտի ուշ թոռմի,
 Շիրմիդ վարդերն դեռ չը թոշնած գրրկեմ բեզ,
- 40** «Կյանք կուտաս սիրտ թե տաս» ըսին եսուես...

3. ՄՆԱՍ ԲԱՐՅԱՎ

Առսուռ մը դեռ մթնշաղ
Կը ծավալեր շող ու շաղ,
Ծաղկանց մեջ քեզ տեսա ես,
Կը ժպտեիր լուսնո պես:

5 Աչերդ սիրո ատրուշան,
Մասներդ էին գիրգ շուշան,
Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայվածքեդ ծներ նոր եթեր:

Սիրտըս թըռավ ոտքիդ տակ,
10 Սիրեցի քեզ, իմս հրեշտակ...
Սիրով եղան ձյուն մազեր,
Ըսին՝ կյանքը երազ էր:

Մինչդեռ դու շես սիրեր դիս,
Մ'իշխեր գոնե տկար սրտիս.
15 Ուր սր երթամ դեմքդ ինձ հետ՝
Նայվածք չէ այդ... մահո՛ւ նետ:

Երբ անտառին խորն նըսեմ
Կերթամ լալ՝ լուռ մենաճեմ,

Դարձյալ հոն կը գտնես զիս,
20 Տերևներեն կը խոսիս:

Երբ առվակին եզերքը
Նըստիմ սփոփել իմ վերքը՝
Դարձյալ դու կը գտնես զիս,
Ալյաց մեջեն կը ժպտիս:

25 Երբ լեռները կը փախչիմ,
Որ չը տեսնեմ քեզ, հանգչիմ,
Հողմույն մեջեն կը խոսիս,
Թե՛ դու բնավ չե՛ս սիրեր զիս:

Լուսնի լուսով գիշերը
30 Երբ ցողեն իմ աչերը,
Դարձյալ դու կը գտնիս զիս,
Աստղերուն մեջ կը ժպտիս:

Իսկ գերեզման երբ մտնեմ,
Քեզ հոն պիտի չը գտնեմ...
35 Մնաս բարյա՛վ... Հայուհիս,
Անգո՛ւթ, արդունք մ'ալ չունիս:

ՀԱՊԱՐԱԿԱՄՈՍՈՒԹՅՈՒՆ



1. ԽՈՍԱՐԱՆ

Այս օրերս Սամաթիա սուլյն «լուսարանին» կարևորությունը զգաց և «գործադրեց»¹⁾:

Շատ քիչ անգամ տեսնված է ղգալ և գործադրել բառերուն համրնթացությունը, որուն շարժառիթին վրա ուրիշ միջոցով կը խոսինք:

Սամաթիա սուլյն հառաջադիմության քայլափոխին մեջ ալ անդրանկության պսսկը ընդունեց, Սամաթիա նյութական մոխրին տակ վրո պահեց բարոյական կայծը, և այսօր փլատակաց մեջեն իր հարվածյալ գլուխը վերուցած «ԼՈՒՅՍ» կը պոռա. ստակ կուտա, մինչդեռ հովեն խարխուլ հյուղակին հողե կանթեղը կանուխ կը մարի. կաշխատի, կը հոգնի, կը մսի, կը քրտնի իր զավկին բարոյականը և ապագայն վաստրկելու համար: Վերջապես Սամաթիո թաղը մյուս թաղերեն ավելի ձայն, հուր և ճիգ կարտահայտե և ապագային մեջ ալ դաստիարակ մայրեր կը խոստանա յամոթ մյուս մեծ և հարուստ թաղերուն: Սամաթիացին զգաց, որ ազգի մը դաստիարակության և հառաջադիմության աղբյուրը կիրթ մոր ստինն է, զգաց և գործադրեց, աղջկանց վարժարան մը կանգնեց անձնվեր և ազգասեր անձի մը ջանքով²⁾ և ահա այսօր ալ վե-

րաժնության տաճարին մեջ ուրիշ լուսեղեն սյուն մ'ալ կանգնեց:

Խոսարան:

Այս բառը միմիայն եվրոպական թերթերու մեջ գրեթե կը կարդայինք, այս հարկը Սամաթիացին զգաց, այս հարկը Սամաթիացին ունեցավ:

Խոսարանը ազգային խնդրոց քաղարան և դաղափարներու կրթարանն է, հառաջագիմության բաժակ մը, ուր մրուրը հյութեն կը դտվի:

Խոսարանն իր մեջ սպագային նախազգաց ձայներն ունի: Սկզբունքներու ընդհարումը լույս կը ժայթքե. հոն կը սրվին գաղափարները, հոն կը ցրվին սխալ ըմբռնումները, հոն կը փթթին հանձարները, հոն կուղղվին կարծիքները, հոն կը հյուսվին գեղեցիկ միտումները, հոն կը կառուցվին միտքն ու սիրտը, հոն կարտահայտի լույս և կասլ, վերջապես հոն կը կաղզուրի ներկայն և հուսադրվի ապագայն:

Լուսավորության կանթեղին յուզը մեր քիրտն է, ևթե մեր հուրը մարի, այն ալ կը մարի:

Ուրեմն աշխատինք, որ քրտնինք, առանց հոգնելու շրջագցվիր այնչափ հանգստյան քաղցրությունը: Սամաթիա Պոլսո արվարձաններուն նախնի Աթենքը եղած է, պետք է որ Պոլսո մյուս թաղերն ալ անոր շավղին հետևին, այլ ընդհակառակը անոնցմե շատերը վարժարանաց ուրիշ կարևոր հարկեր հարելու տեղ, նույն իսկ վարժարաններն ալ անկւարգ ու կիսափակ պահելու անփութ ռեմոն վիճակի մը մեջ կը ծրփան. (բարեհույս եմք որ Ամեն. ս. Պատրիարքի³) ևռանդուն ջանքովը աղքատիկ և անտարբեր թաղերու այս թշվառ կացությունը քիչ ժամանակեն կը կերպարանափոխի):

Շատերնիս գրեթե կզգամք, որ խոսարանը վերոհիշյալ հառաջադիմության ջահերը կարտադրե. ուրեմն ինչո՞ւ կը դանդաղինք յուրաքանչյուր թաղի մեջ խոսարաններ բանալու, ո՞վ կարգելե մեզ — ոչ մարդ և ոչ օրենս:

Թատրոնին ծուռ նայեցանք՝ պատճառելով, թե սիրային դեպքեր կը գործադրվին թատերաբեմին վրա և անոր քաղաքակրթական և բարոյական օգուտներուն աչք դոցեցինք, երեսն ձգեցինք բարին ու շարը, արդարն ու անիրավը, վսեմն ու նվաստը և աշխարհային դարձվածքներն և գաղտնիքները մեր առջև պարզող այն գեղեցիկ տեսարանը թողուցինք որ մթագնի, հավիտենական սեր մրմնջող այն սրտաշարժ քնարը թողուցինք որ փոշոտի, թեպետև հոն ղգացինք հին գլխո անկումը և նորին վերականգնումը:

Վերջապես այս հարկն ալ փակեցինք կամ քակեցինք:

Պատճա՞ռ:

Վասնզի թատերաբեմին վրա դերասանուհի մը «կը սիրեմ զքեզ» կըսե եղեր: Խեղճը չէ կարող նշմարել այն արցունքը, զոր այն խոսքին վրա հեղինակը թափած է և արուսասանողն ալ կը փղձկի գուցե:

Բայց վերոհիշյալ «բծախնդիր» հին գլուխը «օրթա օյինիի»⁴) և ուրիշ խայտառակ ներկայացմանց հանդիսատես կըլլա եղեր — այդ հոգ չէ...

Թատրոնը իրեն չը հաճախելուն երկրորդ պատճառ մ'ալ ավելցուց հետո՝ ստակ:

Թատրոնը թեպետ ինկավ, բայց նորեն հոգի կառնու՞մ), վասն զի իր փլատակին մեջ դեռ լույսը պլպլաց:

Գալով խոսարանին՝ իր բեմին վրա առ այժմ ոչ կին (բայց կը փափագինք որ ունենա) և ոչ դրանը մեջ ստակ ունի

(Ավաղաղաբայութի մերկ վավակաց նկարագիրը⁶) եթե միտքերնիս բերենք, պիտի ըսենք թե այն ստակին վրա, որ արցունք կր կաթե՝ նա սրտի հատոր չէ):

Ինչո՞ւ ուրեմն մյուս թաղերն ալ չեն շարժիր այս ապահով «լուսարանին» կառուցմանը ձեռնարկելու՝ փոխանակ գիշերները երեկույթներու և կիրակի օրերը սրճանոցներու մեջ անօդուտ և անգործադրելի առարկություններով և խնդիրներով պաղելու (խնդիրները եթե ազգային կամ օգտակար ըլլան, ատոր խոսք չունինք):

Գաղղիո կայսրուհւոյն և Ավստրիո կայսեր եկած ատեն ներկայացման խնդիր մը հուզեցինք և այն խնդրոյն մեջ չը հաջողելովնիս⁷) ազգին արժանապատվութեան վնաս մը եղած ըմբռնեցինք, մինչդեռ անդին քյուրտերը մեր եղբայրները հարստահարելով և անոնց՝ սրտաճմլիկ ճիշերը մեզ հասած ատեն անտարբեր կենալով, այս՝ թե մարդկութեան և թե ազգութեան արժանապատվութեանը վնասող կացութեան մեջ անհաջող և պարսավելի դեր մը կատարեցինք և դեռ կր կատարենք.

Ասկե կրնա՞նք հետևեցնել, թե հայը փառք մը կակնկալեր այն ներկայացմանց մեջ — ոչ, այլ կրնանք ըսել, թե հայը դեռ իր արժանապատվութեան կետերուն լավ վերահասու եղած չէ:

Խոսարանի մեջ այս և ուրիշ տեսակ խնդիրները կը հուզվին և կը պարզվին, առանց ազգային թերթերուն կարոտելու և հեղինակ մը իր գրածը կարդալով ավելի ազդում և զգացում կը պատճառե, որչափ ուրիշ մը զայն կարդալով. առաջինը իր ոգին շատերուն կը ներշնչե ու կը ներգործե, իսկ հրկրորդը միայն իրեն (այն ալ պակաս):

Խոսարանը կանոնավոր և համեստ վիճարանության բեմ մը կը ներկայե:

Հրապարակային լավ կամ գեշ խոսք մը արդյունք մը կարտադրե՝ մեկին կամ շատին նկատմամբ:

Խոսարանին մեջ գաղափար մը անդորր կարտահայտիր, այլ կամ պիտի զարնե և կամ պիտի զարնվի և, ինչպես վերը ըսինք, այս հարվածեն լույս մը պիտի բխի, այս լույսը պիտի ծավալի, այս լույսը պիտի խմորի և մեր գլխուն մեջ կեդրոնանալով, մեր ձեռքերը զեղուլ և այրել պիտի սկսի, և այն ատեն պիտի ըսենք, թե «մեր գլուխները տկար են այս լույսը պսպսկու համար, կամ աշխատիլ հարկ է և կամ «մեռնիլ», պիտի զգանք, թե մարդ և ազգ ենք, և հարկ է գործադրել այն բաները, զոր պահանջեն այս երկու մեծ սկզբունքները: Հոն պիտի սովորինք հավասարություն, ազատ մտածում, ընկերականություն, եղբայրություն, վերջապես բոլոր մահու և կենաց խնդիրները իրենց հետևանքներովը մեր առջև պիտի դրվին և այն ատեն ընտրումնիս ընդհանուր և ազատ պիտի ըլլայ, միատեղ պիտի վիճինք և պիտի վճռենք, վերջապես, հայր հոն պիտի ամփոփի և պիտի սփոփի:

Լրագիրները խճդիր մը կառաջարկեն և խոսարաններու մեջ նույն խնդիրը կանոնավոր վիճարանության ենթարկելով, կը պարզեն և կը գործադրեն:

Լրագրաց միջոցով ազգօգուտ խնդիրներ շատ առաջարկված կան, բայց միջոց չըլլալուն պատճառով անզգայության մատախուղին մեջ թավալած ու թաղված են:

Խոսարանը ազգային թե առաջարկության և թե գործադրության կեդրոնականությունը իր մեջ կը պարունակե, և քա-

նի որ հասարակաց կամքը կը հագի, ուրեմն ազգին տարտամ
վիճակն ալ կը հանգի:

Կարծեմ մերովսանն կրցանք բավական բացատրել խո-
սարանին կարևորութիւնը և արդյունավոր արտադրութիւնը:

Ուրեմն մյուս ազգային թաղերուն նախանձոտ նայվածքը
կը հրավիրեմք⁸) նախաքայլ Սամաթիո խոսարանաց և հառա-
ջադիմութեանը վրա:

Մենք, երիտասարդներ, մենք պիտի հանդիսանանք լուսո
դրոշակիրները, թող մեր ալևոր հայրերը ապագային աստղը
իրենց կենաց սև կամարին վրա նշմարելով գոնե իջնան այն
անցելույն փոսը: Ինչպէս որ մենք մեր հայրերուն նախապա-
շարյալ գաղափարներուն վրա կը խղճանք, մեր զավակներն
ալ մեր գաղափարներուն վրա պիտ խղճան, որոնք դեռ հին
գլխո մը մրուրն ու մնացորդն են. սրբենք մեր ճակատը և ծա-
վալենք մտածումնիս հոն, ուր որ կը հասնի:

Ահա մեզի աղքատութեան մեջ հառաջադիմութեան միջոց
մը, ձեռնարկենք, քանի որ գործադրելի և դյուրամատչելի է:

Պիտի խոսինք՝ ինչ որ կզգանք, պիտի տանք՝ ինչ որ
ունինք:

Ինչո՞ւ դանդաղինք այն խնդրոց և ձեռնարկաց մեջ, ոչ
առանց մեր կենաց վնաս մը առթելու՝ մեր և ապագային բա-
րոյական և նյութական կյանքը կապահովեն:

Ուրիշ առթով դեռ կը խոսինք:

2. ԹԱՏՐՈՆ

Ամեն հիմնարկութիւն և սկզբնավորութիւն իր հաստատութիւնը ունեցած օրեն՝ կունենա նաև իր հակառակորդներն ալ, որոնք զանի խորտակել ու անհետացնել կուզեն. ուստի այն հիմնարկութիւնները, հակառակորդաց կամացը չը զոհվելու համար, պետք է անոր հիմերը խիստ զգուշությամբ և ավելի ամուր կերպով հաստատվին՝ որ ո՛ւրից փոթորիկի մը բռնված ատեն, եթե յուր մասնիքներն ալ խորտակվին, գոնե յուր հիմերը հաստատ մնան:

Մեր մեջ բավական ժամանակե ի վեր բազում հաստատութիւններ եղան, բայց դժբախտաբար ասոնցմե շատերը՝ անհետ եղան ի շնորհս հակառակորդաց (ինչպես խոսարաճի հաստատութիւնն ալ, որ իր ծնունդը առած օրեն իր թշնամիներն ու հակառակորդներն ունեցավ¹), բայց ասոնք լավ գիտնալու են, թե ամենափոքրիկ վնաս մը կամ արգելք մը չը պիտի կրնան հասցնել, քանի որ անոր հիմերը ավելի հաստատ և խիստ խորը ձգված են ժողովրդյան սրտին մեջ). այնպիսի հաստատութիւններ, որոնք հառաջադիմության շավղին հետևող ազգի մը նախաքայլերն են և առանց անոնց՝ հառաջադիմութիւնը անկարելի է:

Ո՞ր են այնչափ այլևայլ նպատակներով կազմված ընկերութիւնները, ի՞նչ եղան ատոնք, և ի՞նչ արդյունք կրցին

հառաջ բերել, — ոչինչ, այլ մեկ մեկ անհատի կրից և թշնամացը զոհվելով, անհետացան՝ սուանց արդյունք մը հառաջ բերելու և ահա ասոնցմե մինակ Հայկական և Անձնվեր ընկերությունները դեռ հաստատ կեցած են²), որոնք մեծապես օժանդակեցին ազգին և դեռ կօժանդակեն թե բարոյապես և թե նյութապես:

Այս հաստատությանց կարգեն է նաև թատրոնի հաստատությունն ալ, որ երբեմն զանազան թշնամիներէ պաշարվելով, նախատվեցավ, բամբասվեցավ և վերջապես այնպիսի վիճակի մը հասավ, որ միշտ իսպիանվելու երկյուղը կազդեր ճշմարիտ թատերասերներուն. և ահա դեռ այդ անորոշ և տատանյալ վիճակովն է, որ կը շարունակվի մինչև ցայսօր:

Թատրոնը հայելի մ'է, որուն մեջ մարդս կրնա իր ճշմարիտ պատկերը տեսնել և որով իր վրա նշմարած անհաստեքները անհետացնել և մաքրել, իսկ դերասաններն ալ մեկ մեկ դաստիարակներ են, որ ամեն աստիճանի մարդոց ճշմարիտ պատկերը կամ բարության և լավության հետևանքները ներկայացնելով, մարդուս բարոյական զարգացմանը պատճառ կըլլան. ուստի, սրտի և մտքի բարոյական զարգացմանը փափագողը պետք է թատերասեր ըլլա, կամ այն, որ թատերասեր է՝ ուրեմն բարոյականության ծավալման ալ փափագող է:

Ամեն լուսավորյալ ազգ՝ այս ճշմարտության համողութեամբ ըլլալնուն, քանի քանի թատրոններ և թատերական խումբեր ունին իրենց մեջ, որոնք միշտ պետք եղած քաջալերության արժանացած ըլլալնուն, կարողացեր են օրինավորություն պահել և հառաջադիմել, և ասով ժողովրդյան համակրությունն ալ գրաված են:

Մենք, որ իբր լուսավորյալ ազգ կը պարծինք և միշտ հա-
ռաջադիմության քայլեր առնելու կաշխատինք, այս ճշմարտու-
թյունը, որ ինչպես ըսած էինք, թե հառաջադիմության մի-
ջոցներեն մեկն է, իբր երևակայություն մը կը նշմարենք և
թատրոնը ոչ թե բարոյական և օգտակար հաստատություն մը,
այլ իբրև զբոսատեղի մը կը նկատենք, և ահա ասոր համար
է, որ մինչև ցարդ օրինավոր Հայ թատերաբեմ մը ունե-
ցած չենք:

Ժամանակ մը Արեւելյան անուն թատրոն մը ունեինք:
Ասիկա մեկ քանի տարի շարունակ Հայ ներկայացումներ
տալով՝ կրցավ հասարակության ընդունելությանը և քաջալե-
րությանը արժանանալ. բայց հանկարծական արկած մը զանի
իր այս ընթացքեն դադրեցուց³⁾:

Բայց և այնպես. երբեմն երբեմն այլևայլ անուններով
թատերական խումբեր և վարչություններ տեսնվեցան⁴⁾, որոնք
նույն թատրոնը դարձյալ վերականգնելու հուսով աշխատեցան,
զոհվեցան և վերջապես վնասվեցան թե բարոյապես և թե
նյութապես, բայց, ավա՛ղ, որ իրենց այս աշխատությունը, որ
նյութական օգնության կը կարոտեր, բնավ քաջալերող չեղավ.
այն ժողովուրդը, որ խիստ գեշ օգերուն անգամ հեռավոր տե-
ղերե խումբ խումբ թատրոն կը հաճախեր, կարծես այն ատեն
այլևայլ պատճառաբանություններով անտարբերության մեջ
թաղվեցավ և սկսավ անտարբեր աչոք դիտել, մինչդեռ մեկ
քանի տարի հառաջ իբր լուսավորության նախաքար մը և ազ-
գության փառք մը կը համարեր:

Ի՞նչ շահ կրցանք ունենալ ասկե, ոչինչ, բայց եթե նույն
խումբերը անօգնական մնալով, տեղի ունեցած մեկ քանի
անտեղությանց ու ապօրինավորությանց առաջքն առնուլ ան-

կարող եղան և ասով ժողովրդյան այն անտարբերությունն անվստահության փոխվելով՝ ալ յուր փափագը բոլորովին մարեցավ, թատրոնի վրա ունեցած գաղափարը խանգարեցավ և Արևելյան անունն ալ իր դիրքովը մեկտեղ Ալգազարի փոխվելու դժբախտությունը արժանացաւ⁵⁾։

Ի՞նչ օգուտ կրցին ունենալ այնչափ զոհողությունները, աշխատությունները և ժողովրդյան այն փափագը.— ոչինչ, բոլորն ալ հօդս ցնդեցան, և անոնց հիշատակները միայն կեցած են այսօր, և որոնք միշտ ցավ կը պատճառեն ճշմարիտ պագման տեր եղողներուն։

Մեկը, մեկը կար միայն⁶⁾, որ թատրոնի վերականգնության կարծես ի բոլոր սրտե ուխտած՝ առանց վարանելու ամեն միջոց ձեռք առավ, զոհեց իր անձը, իր կյանքը, իր քսակը և վերջապես զոհեց ամեն բան՝ ինչ որ իրեն սիրելի էր, և ահա ի շնորհս անոր, գրեթե կես-Հայ թատրոն մը ունինք այսօր Օսմանիե անվամբ⁷⁾, բայց այն ալ անորոշ վիճակի մը մեջ։

Ուրեմն ինչո՞ւ շենք քաջալերել վանի, բանի որ մեզի փառք ու պարծանք համարվող շենքի մը հաստատությանը և անցյալին մեջ տեղի ունեցած նախատինք մը մեր ճակտին յիրայեն սրբելու համար ամեն ջանք և զոհողություն չի վլանար։

Մենք խիստ բծախնդիր ըլլալով, ամեն բանի մեջ օրինավորություն կը բնտռենք. այո՛, օրինավորությունը միշտ հարգելու է, բայց սա ալ գիտնալու է, որ առանց կողմնակի պարտավորությունները ի գործ դրվելու՝ օրինավորությունն ալ անկարելի է։

Մենք թողզով մեր հայկական ներկայացումները, կը դի-

մենք օտար թատրոններ, որ մեզի բնավ օգուտ մը չընելեն
զատ՝ մեծ ամոթ մ'ալ կրնա համարվիլ, քանի որ մենք մեզի
համար թատրոն մը ունինք. այո՛, թողլով մեր թատրոնը կը
հաճախենք հոն, որովհետև օտար թատրոնները ավելի զար-
դարուն են և դերասաններն ալ ավելի հառաջագեմ, որովհետև
մեր թատրոնը խիստ աղքատ է և դերասանները տկար, հե-
տևաբար՝ ապօրինի. կուզենք որ մեր թատրոններն ալ օտար
թատրոններու նման ըլլան: Զարմանալի պահանջում. ենթա-
դրենք պահ մը, թե ներկա թատրոննիս յուր այս կաղն ի կաղն
ընթացքին մեջ անգամ, պետք է ամենայն կերպիվ անոնց
փայլունությունը ունենալ.— շատ աղեկ,— այն անձը, որ
ամեն զոհողություն և վնաս չէ խնայած և յուր վնասը գոցելու
համար օտար ներկայացումներ տալ ստիպվեցավ, ալ ավելի
ծախքեր ընելու համար որո՞ւ վստահի, (բայց դարձյալ նույն
անձն էր, որ կատարյալ սիրահարի մաս կատարողի մը 10
ոսկի ամսական կը խոստանար)— ժողովրդյա՞ն,— մեր ժո-
ղովուրդը միշտ նորասեր ու կասկածոտ է, ամեն բանի սկիզբը
կը հարգե, կը քաջալերե, կը պաշտե և վերջապես անոր հա-
րատնության ի բոլոր սրտե կուխտե, բայց փոքրիկ շարժում
մը, կասկած մը կարող է ժողովրդյան այս եռանդը մարել ու
ամեն խոստում մոռցնել— ահա ճիշտ այս հետևությունն
ունեցած է թատրոնի մասին ժողովրդյան ունեցած փափագն
ու տված կարևորությունը. ուրեմն, ինչպես համարձակի ալ
ավելի պարտուց տակ ճգմվիլ, քանի որ ժողովրդյան կողմեն
փոքրիկ շարժում մը և քաջալերություն մը անգամ տեսած և
ընդունած չէ:

Արդ, ո՞ր ժողովուրդ, մենք բուն մեր ուզածին նման թատ-
րոն մը ունենալու համար պետք է հարգենք զանի, որ մինակ

այս նպատակին և մեր անվան պատվուն համար կաշխատի, քաջալերենք զանի, որ նա ալ մեզ գոհացնելու կարող ըլլա, թողունք օտարները, որովհետև օտարներեն չկա մեզ հույս, հուսանք մինակ Հայ անունեն, սիրենք ինչ որ Հայ անունը կը կրե, Հայը միայն կրնա հայուն օգնել և անոր ցավակից կամ ուրախակից ըլլալ: Այո՛, անցյալին մեջ տեղի ունեցած մեկ քանի անտեղությանց պատճառով, մեր սրտին մեջ դեռ ամփոփ կեցած ատելութիւնը անհետացնելով, պետք է շի զլանալ այն քաջալերութիւնը անոր, որ ապագային և թե ներկային մեջ ՀԱՅ անունը կրող թատրոն մը մեզ ներկայացնելու փորձ կը փորձե, և փոխանակ օտար թատրոններ հաճախելու, դիմենք հոն և մեր տեսած ու նշմարած պակասութիւնները ու ապօրինավորութիւնները լրջմտությամբ իմացնենք վարչության, որ նա ալ առանց վարանելու իր նպատակը կատարելագործել աշխատի, ասով ոչ թե ուրիշ բան մը, այլ Հայ թատրոնի մը հաստատությանը օգնած, օտարներու առ և մեր պատվուն պաշտպանությանը աշխատած և Արևելյան թատրոնին՝ մեր վրա ծանրացուցած նախատինքը անհետացուցած պիտի ըլլանք:

3. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հառաջարան: — Օրագիր և թերթի: — Մայիս 24: — Խոսք մ'ալ:

Գաղափարի սվին՝ գրիչ շարժել կարենալես ի վեր, հոգ-վույս ծալքերը մեկուսի թղթատելե ավելի՝ կը սիրեմ հրապարակական ձայնարկությունները: Չեմ ուզեր նմանիլ անոնց, որոնք իրենց հոգվույն կայծերովը աստղերուն հետ կ'ընդհարին անձայն: Սակայն զբաղմունքս և ուրիշ պարագաներ շատ քիչ անգամ սույն փափագիս լրմանը տեղի կուտան: Թեպետև թատերաբեմի մը միջոցավ հայրենյաց հսկա դարերու ավերակաց մոխրոտ շունչն ուզեցի ըլլալ, բայց երևակայության հեղեղներուն արտադրած սույն կաթիլները ցնդեցան համր կամարի մը տակ: Հոգվույս քրտունքն էին անոնք: Խոսքեր, որոնք հանճարներու ամպրոպին մեջ կը փսփսան թեև, բավական է որ խոսին: Որչափ թերթեր բացվին՝ այնքան վհեր կը գոցվին:

Այն, որուն խոկմունքը համասլաց սլաքներ կ'արտադրն, բնական է, որ երբ ասպարեզ նետվի, արձագանք մ'ունի իր գաղափարին, քրքիչ կամ ծափ: Ես վայրկյան մը մտածեցի անուշադիր անցնիլ այն ժխորին մեջեն, և միայն ուշ դնել այն

Օվկեանին, որ իմ ներսս կը փրփրի.— այլ ո՛չ. հարկ է այն ծափահարին ձեռքը թոթվել և այն քրքիջին դեմ որոտալ: Սիրել և մաքառիլ: Ահա սրտիս ծալուցը մեջ երկու հրատառ բաներ, ճակտիս տակ երկու հրաբուխներ:

Ահա իմ գաղափարս.

Խառնել գահոսները, մոտել այն վհին, ուր ճառագայթը կը սոսկա թափանցելու. վիճ մը, որ կը շնչե, և գծուծ, գունատ և անզոր էակներու վխտում մը անոր աղիքը կը կազմե. լույս և ձեռք կը պոռա նա: Այն վիհը մարդկության ահագին և խորունկ վերքն է: Լույսը և եղբայրության շունչն է անոր սպեղանին:

Հոս կ'ուզեմ խառնել նաև դարուց մոխրակույտը և ի տես բերել այն մարած հրաբուխը¹⁾, որ ասկից տասնևինը դար առաջ վերանորոգության կայծեր սփռեց, այն կարմիր բլուրը, ուր լուսեղեն դիակ մը վառեցավ²⁾ ահավոր ջահի մը պես. այն արտոսրալից խորշը, ուր տիեզերքն հեղաշրջող սա փոթորիկը հեծկլտաց՝ «Սիրեցեք զ'միմյանս»³⁾:

Բայց ավա՛ղ որ Գողգոթան միջին դարը պիտակեց: Այն վսեմ փոթորիկը արյան ծովեր ալեկոծեց, փայտակույտներ հրահրեց: Մենաստաններու մեջ մահաշշուկ հծծյուն մը սողաց: Տիեզերքի երակներուն մեջ ցուրտ սարսուռ մ'էր այն:

Խղճի շղթա հյուսեցին կողմնակի շարաշշուկ գանչյուններ:

Ա՛հ, ո՛րչափ այլալեցին Աստվածաշունչ հեղափոխականին հագագը:

Եվ դեռ մինչև հիմա միայն երկու իր ակնածությամբ և հավատարմաբար կը նային այն հեղափոխական հրաբուխին.

երկնի աստղը և հյուղին փոշոտ լուսամուտը՝ նվաղյալ աչքի պես:

Ա՛հ, մինչև ե՞րբ մարդիկ թույն ու խավար պիտի շնչեն:
Ե՞րբ պիտի լոն թնդանոթը:

Ե՞րբ պիտի սիրե կղերն ալ:

Ե՞րբ տիեզերք համեղբայրության վառարան մը պիտի ըլլա:

Ե՞րբ պիտի ծավալի համայն աշխարհ իր ամբողջությամբը լՈՒՅՍՈՒԼ:

Ե՞րբ:

Արդյոք դեռ շատ դարե՞ր կան հոլովելիք:

Ես կը տարակուսիմ, որ չըլլա թե աշխարհ իր երկանցք մեջ այս երազները հեղհեղած միջոցին ալեվորի և լուսածամ աստղերուն վարսերը թափթփին:

Այլ ո՛չ, հարկավ Աստծո մը ըմպած բաժակին մեջ պատրանք չի գտնվիր:

* * *

Այս օրերս երբ Օրագիրը նորափետուր տեսա⁴), բերկրեցա, համակրական նոր նշույլ մը կ'ընդամարվեր հոն: Հիրավի որչափ դմայլում ազդեց ինձ այդ կերպարանափոխությունը, — ինչպես շատերուն, — երբ նա հառաջադիմության նշանավոր քար մը կ'առնեք և իր մեջ կը փայլեր հայկական լեզվին կորովը: Կը շնորհավորեմ այդ հսկա քայլը:

Օրագիր հրապարակ իջնելեն ի վեր Հայ հասարակությունը զայն համակրությամբ ընդգրկեց, վասնզի Օրագիր, վսեմ և ազատ գաղափարներ արտաշնչեց: Անշուշտ այս անգամ ալ, որ հայկական լեզվով ոգևորվեցավ, ազգն իրավամբ իր հա-

մակրական ընդգրկումը պիտի ամրապնդե: Հասարակաց կարծիքը չկրնար ուրանալ այն շահերը, զորս ազգը քաղեց ազգային թերթերեն, որոնց գլխավորներեն Մասիս⁵⁾ իր հայկաբանությամբը, Մանգումե⁶⁾ իր հախուռն գաղափարներովը և Օրագիր⁷⁾ իր հասուն խորհրդածությամբքը բավական լույս ու շահ ջամբած են ազգին: Հրապարակական թերթերն ազգի մը հառաջադիմության թևերն են: Լուսավորյալ դարու փառաց դասիններ: Մեկանը խավարի սև արյունն է: Մծենք միշտ զայն: Հոգեսպառ ընենք. տապալենք խավարը: Խավարի արյանը մեջ լուսո զենքեր թաթխենք, գրիչներ: Հարդենք գրիչը, ինչպես հսկայն իր զենքը, քահանայն իր խաչը: Հառաջադիմական խոկմանց ծալերով ծանրացած ճակատներ հանձնենք մեր հողակույտին: Այս է մարդկության պարտքը: Իրավ է որ Մամուլնիս ամուլ չէ: Բայց ինձ այնպես կ'երեկի, որ Հայության կենաց ծառեն մեկ-մեկ տերև կ'ընկնի, երբ անընդհատ նոր թերթեր ծնանելնուն հետ կը մեռնին: Ասոր պատճառն այն է, որ մեր հասարակությունը չը հարգելու նոր ասպարեղ նեավող գաղափարի մը դողդոջումը և թոթովումը, կ'ուզե որ հանկարծ արծվի մը պես թևարկե և օվկեանի մը պես մոնչե: Անհնար է այս: Օվկեանն անգամ ատեն մը կաթիլ մ'էր: Վերջապես խոսքերնիս եզրակացնենք:

Վարժարան և տուպարան, ասոնք են մեր զարգացման վառարանները. ասոնցմե մարդ,— մայր ալ հասկնանք,— և գիրք դուրս տալ աշխատինք: Եթե ամեն հայ մարդ և ամեն գաղափար գիրք ըլլան՝ այն ատեն մեր հուսացած իրականացյալ ազգն ենք:

Երջանիկ և անմահ ազգ մ'ենք:

Վարդի և արշալույսի ամսուն՝ Մայիս 24ր⁸) կը մոտիկ
Կրակոտ հիշատակի մը սրտագրավ թվական: Տես սա կա-
պույտ եթերին ձյունատիպ ամպիկը. տես սա Վոսփորի խա-
ժագույն ալին.— ձգե՛նք, եղբա՛յր, թող երկին ու ծով իրարու
նային:

Տես սա կանաչագեղ թավուտքը: Շուք և փսփսուք
ունի.— ձգե՛նք, եղբա՛յր, թող հոն սիրեն: Տես սա դափնեզարդ
և դրոշավոր շոգենավները, որոնք Վոսփորի խաժագույն լան-
ջը պատռելով կը թռչին: Անոնց մեջ խուռն ու դվարթ ամբոխ
մը կա: Հոն սրտերը շոգենավին անիվներեն ուժգին կը բա-
բախեն: Կարծես թե եռանդը զիրենք կը տանի, քան թե շոգե-
նավին մեքենայն: Հոն կիներ ալ կան: Հաստատուն աստղերու
պես զիրենք շրջապատող մոլորակներուն լույս տվող էակներ:
Ծածանող դրոշակներ, բոցավառ ճակատներ, դյուլթյալ նայ-
վածքներ, կցկտուր ձայնարկություններ, նվագարանաց թըր-
թըռումներ...:

Ո՛հ, ուր կ'երթա այս սրտագրավ շենքը:

Հոն, ուր կան նաև ամպիկներ, ալի, թավուտք, շուք ու
փսփսուք: Գեղ, գույն, բույր, ամեն բան կա հոն: Բայց հոն
ա՛յլ է սերը: Հոն շատեր զիրար կը սիրեն, հոն հոգիները կը
սիրեն, հոն հայրենիք մը կը սիրեն: Հոն կայսերաշնորհ Սահ-
մանադրության մը⁹) հիշատակը կը տոնեն: Հոն ազգային հան-
դես մը կը կատարվի:

— Այդ շոգենավը նետվինք ուրեմն, եղբա՛յր, որ կարծես
թե Վատիկանը զարնող շանթեն շուտ այն սրբավայրը կ'ուզի

նեսովիլ, հոն, ուր հոգիներու բուրում մը կը ծավալի: Ազգային հանդեսները ազգի մը շնչառութիւններն են:

Բայց բա՛բե: Ո՛րչափ կարճ կը տևե այս սիրային օրը: Արևը կը փութա իր ճառագայթները լերանց գագաթը մարելու: Իսկույն օդը կը տարածամի, մինչդեռ սրտեր դեռ կը բաբախեն և շուրթեր դեռ կը դողդոջին խոսելու համար:

Շոգենալները կը սուլեն: Բաժանում կը գուժեն:

Տեսե՞ր եք այն ալին, որ հանդիսականները ի ծով կամ ի վերադարձ հրավիրելու համար ծովափին ավազներուն վրա կը շփշփա:

Լսե՞ր եք այն հսկա ծառերուն սոսափած տխուր «երթայք բարյավ»ը, որոնք իրենց շուքին տակ հյուսված մտերմությանց վկա հանդիսացան:

Հիրավի դառն է այս ժամը: Բայց ամբողջ տարի մը դառն չլլալու համար երանի թե այն բոցավառ ճակատները չը մարին, երբ այն օրվան վերջալույսը հորիզոնին վրա մարի:

4. ՊԱՌԱԿՏՈՒՄ ՄԸ

Հուսավորութեան հսկա մը այս օրերս ծանր կնճիռ մը կ'երկնեն:

Կառափն իր գաղափարը կը ծաղրեն:

Ազգասիր մը ազգային ներդաշնակութենէն թել մը կը կոտորե՞լ), ազգին սրտին վրա մշտնջենավոր վերք մը կը փորեն, վերք մը՝ զոր Ազգայան բուրաստանի²⁾ ծաղիկները կը պճնեն:

Ազգայանը գրկող գաղափարին ձայնախող հարված մ'է այդ:

Ցուրտ օձտում մը, որ Ազգայանի վսեմ նպատակին վրա ոճիրներ կը ջարդեն:

Ինչո՞ւ այդ օձտումը:

— Ի՞նչ, ազգային ամբոխն ու ժխորը ամբաստանե՞լ:

Միթե անցյալ տարվան Սահմանադրութեան հանդիսին³⁾ ազգն իրավունք չունե՞ր իր քույրերը կամ ապագա մայրերը տեսնելու վազել, որոնք կ'ուշանային⁴⁾ հանդիսավայրին առավել ավյուն ներշնչելու:

Սակայն իցի՞վ թե՛ այս տարի ալ Ազգայան աշակերտուհիները Պեյգոզի ծովափը բերող շոգենավին անիվը կոտորե՞ր⁵⁾ քան թե ազգի մը սիրտը:

Գուցե այս տարի Ազգայանք ճերմակ հեղեղի մը անզգայութեամբ չէին անցնեն սիրազեղ ամբոխ մը մոգաբար պատուելով:

Ազգային հանդիսավայր մը ճնշքե՛լ, ազգային հիշատակ մը հռչակե՛լ՝ ազգի մը սիրտը ճնշքել, ազգի մը սիրտը հռչակել է:

Ասով Ապապյանի վսեմ նպատակը իր օրրանին մեջ կը դեղնի, լուսահար ճակատը կը կարմրի, մայրութեան կորովի սիրտը կը սխրի, ծունկը կը կթոտի:

Ազգայանի սրտեն սրբազան տրոփը խեղդել է այդ:

Մտածեցե՛ք, ո՛վ Ազգայանի վեմը:

Դուք՝ որ ազգին գահոսը կը խառնեք միշտ, դուք՝ որուն քրտունքը ազգի մը այն ահավոր վերջին սպեղանին կը կաղմեն և քանի մը տարի առաջ լուսո սաճարին հիմունքը օծեցին. մտածեցե՛ք:

Այդ տաճարին սեմին վրա սիրտ մը կ'արյունի:

Ազգինն է այդ սիրտը:

Եվ դուք պարծանոք կը խոստովանիք թե Ձեր նպատակն է այդ սիրտը վիրաբուծել, մտածեցե՛ք վերջին անգամ:

Եվ Ազգայան սանուհիք կը հավանին այս որոշման: Ձեր բողոքեր այսպիսի ցավալի պառակտման մը դեմ⁶), և իրենք իրենց կ'ուզեն օտար հանդիսավայրի մը մեջ հիշատակել ազգին Սահմանադրութեան ԽՈՐԹ հանդեսը⁷:

Անոնք այժմեն կը սովորին դյուրավ վշտահարել, հանրութեան դեմ քեն պահել, բաժանման ոգի կրել, անոնք՝ որ լուսո տաճարի մը հանրութեան ջահերը պիտի ըլլան, անոնք՝ որ մայրութեան առաքելուհիներ պիտի ըլլան:

Ջնջեցե՛ք, ջնջեցե՛ք այդ սև դրոշը Ազգայանի պայծառ ճակտեն:

Ձեր նպատակեն սոսկացե՛ք:

5. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Առ Պ. Ա. Լուսինյան.— Գանձանակ մը.— Հայրենասիրաց
խումբ.— Սահմանադրության հանդիսին նոր փայլեր.—
Ազապյան մը.

* * *

Պարո՛ն.

Ներեցեք եթե պատասխանս ակամա քիչ մ'երկարածգեցի:
Շնորհակալ եմ Ձեր այդ ողջույնեն:

Սիրեցի այդ ողջույնը՝ ծառավի հանձարի մը այդ ջերմ
ընդգրկումը:

Ձեք խաբվեք. այն համեստ գաղափարները, որոնք որո-
տալու հետ բուրել, շանթելու¹ հետ բուժել գիտեն՝ այն գաղա-
փարները պատրաստ եմ զինել² իմ կողմես:

Սակայն կը ցավիմ որ չեմ բուրրուիին, զոր³ դուք կը նկա-
տեք Ձեր պըշոող գրչուլը:

Այն դափնիները, զորս⁴ դուք իմ ճակտիս բուրրել կ'ըղ-
ձար՝ կը ճնշեն արդեն ճակատս:

Անտեղի⁵ կը⁶ թոթվեք Ձեր ծաղկապսակ քնարը, հանձարի
այդ վեհ սիրտը ի զո՛ւր կը սասոեք⁷:

Թո՛ւյլ տվեք, Ազնի՛վ բարեկամ, որ Ձեր այդ ջերմ հա՛մակրության դիմաց սիրտս լուռ դողդոջեմ:

Դուք զիս լավ նկարագրեր էիք. արտոսրի պես լոկկ և հառաչի պես մթին, դուք որ աստղի⁸ նման⁹ խայտալ և շանթի նման որոտալ գիտեք:

Խոսեցեք և սավառնեցեք, պերճախո՛ս բարեկամ, և թույլ տվեք, որ բեռնային երկրի պես ցուրտ, տխուր ու դալկահար ճակտի մը վրա լոկ լուռ խորշոմներ ծալվին, ցավոց¹⁰ թերթե՛ր, և հանճարը շրթանց¹¹ մեջ մեռնի, քանի որ Ձեր կրակոս ճակատն անգամ պերճախոս հանճարի¹² բեմ մը կը ներկայեմ:

Սակայն¹³ շեմ ուզեր հոս խոսքս երկարել:

Մտե՛րու խոսակցությունե՛ք¹⁴ աստղերու¹⁵ և¹⁶ տերևներու շուփին վերապահենք, Ազնի՛վ բարեկամ...:

Այնպիսի նյութեր ունիմ, որոց վրա խոսելու տեղ մերթ որոտալ, մերթ բուրել, մերթ սաբսափիլ¹⁷ հարկ է. կոշման¹⁸ և¹⁹ սրտի²⁰ դյուցազներ²¹ են²² անոնք²³ վսե՛մ հիշատակներ. խոկմանցս²⁴ վրանին մեջ²⁵ թռչտող²⁶ հրեշտակնե՛ր²⁷:

Պիտի խոսիմ անոնց վրա որչափ որ արտասանվելու համար շուրթեր այրե՛ն:

Այն նշանավոր օրը պիտի հիշատակեմ, յորում²⁸ իրարու ձեռք թոթվիցինք, այն օրը՝¹) յորում²⁹ ամեն գլուխ³⁰ հեղաշրջում³¹ մը³², ամեն³³ սիրտ³⁴ կրակ³⁵ մը³⁶ և³⁷ ամեն³⁸ հոգի դմայլում մ'ունենր:

Կ'ուզեմ այն³⁹ հանդեսեն²) վսեմ գործերու փունջ մը քաղել:

Կ'արի՛ կը գուրգուրամ այս հանդիսին վրա, դի մեկ հատիկ է:

Տխուր⁴⁰ բան. գործեր չ'ունինք, որ հիշատակներ ունենանք:

* * *

Հորիզոնին վրա վարդերու հրդեհ մը կը ծավալեր³): Աստղերն⁴¹ անգամ խտղտել⁴², տժգունել և մարմրել կ'սկսեին: Թավուտքի մը դայլայլիկը Մայիս 30ի առավոտը կը հծծեր:

Բյուզանդյանի կապույտ գոտին⁴) կը ծփծփար:

Տեսարանին⁴³ մեջ փա՛ռք և թվականին մեջ կրա՛կ կար:

Ճակատս երազներու օրորոց մ'էր դարձած: Կը դողդոջեի⁴⁴ այս թվականին առջև:

Ոսկեզօծ սարեր ընդնշմարեցի. վարդերու աճյունին մեջեն մեծ⁴⁵ կայծ մը կը բարձրանար Երկնքի լուսալիր Բիբր: Լուրջ Վոսփոր մը կը ծիծաղեր, կ'ուռեր և կը փրփրեր, կը սոնքար⁴⁵ այնպիսի սիրալիր և նշանավոր թվականի մը ներքև:

Նվազներու, կեցցեներու և ծափերու ներդաշնակություն մը, սրտագրավ ժխոր մը Գուզկունճուքի նավամատույցը թրնդացուց:

Շոգենավ մ'էր այս ժխորը շնչողը. սրտագրոշմ⁴⁷ դրոշակներ⁴⁸ կը⁴⁹ ծածանեին⁵⁰, սրտեր կը բաբախեին հոն⁵¹. ամենքը գունաթափ էին, կը հեալին⁵² սույն թվականին վայրկյաններուն հետ:

Երևակայե զիս ալ, բարեկա՛մ:

Զեմ գիտեր, թե ինչպես ինքզինքս այս շոգենավը նետեցի:

Կը քալեինք, կ'երազեի. սիրտս⁵³ դաշնակ մ'էր և հոգիս մեղեդի մը: Հանկարծ ձայն մը զիս թոթվեց⁵⁴, տեսիլ մը սառած նայվածքս հափշտակեց, երիտասարդ մ'էր տեսածս⁵⁵,

դժգույն այտերեն խարտյաշ մորուք մը վար կը թափեր. կարծես թե այդ⁵⁶ անձին ներսը սրբազան բան մը կ'որոտար. իրեն հետ ձայնը կը դողդոջեր, ձեռքը գանձանակ մը կար... ա՛հ, քաղցր⁵⁷ այդ անձը... լուսո⁵⁸ սիրահարը, հառաջադիմության զինվորը⁵⁹ Անձնվեր⁶⁰ ընկերության⁶¹ 5) առաքյալը⁶². Թշվառներու անդունդին հսկող այդ աստղը⁶³ ճանչցի և սարսուռացի...⁶⁴ Հայաստանի արտասվալից ուրուն անցավ վրայես:

Պ. Գ. Զոպանն էր այս անձը. պարծանոք և հարգանոք կը հորջորջեմ. ԳՈՐԾՈ՛Ղ⁶⁵ ՄԸ⁶⁶. փա՛ռք իրեն, որ հիշատակ⁶⁷ մը⁶⁸ հիշատակով⁶⁹ կ'անցունե⁷⁰: Մեկ քանի տարի⁷¹ է⁷² որ⁷³ Սահմ.⁷⁴ [անադրության] հանդեսներուն և⁷⁵ ազգային⁷⁶ ուրիշ⁷⁷ համախմբությանց⁷⁸ մեջ իր գանձանակովը կերևի⁶), ամբոխը կ'ակնածի այդ պատկառելի մուրացկանեն, սրտե՛ն կուտա:

Անձնվեր⁷⁹ ընկերության⁸⁰ գանձանակն ինկած լումաները հին գլուխ մ'հեղափոխելու⁸¹ կը ծառայեն, ուր գաղափարք⁸² ժանգոտած են⁸³, ուր աղջամուղջք կը վխտա՛ն:

Աշխատի՛նք որ մեր⁸⁴ ընկած⁸⁵ հայրենիքը⁸⁶ վերականգնելու տքնող այդ առաքյալներուն ճակտին վրա մխացող քրտունքը⁸⁷ չը սառին:

Երանի այդ⁸⁸ անձերուն⁸⁹, որոնք իրենց անշուք կյանքին հետ հսկա փա՛ռք մը կը տանին:

* * *

Փա՛ռք⁹⁰ այն ընկերությանց, որոնց նպատակը մարդկության կամ հայրենյաց ավերակ սրտին հետ կը խոսի: Հայրենասիրաց խումբը կուզեմ հոս հիշատակել, որ այս տարի

Սահմ.[անադրության] հանդիսին առթիվ իր սրբազան ձգտմանը մեջ⁷) հսկա քայլ մ'առավ:

Հայաստանի ավերակ և ամայի սրտին վրա նորընծյուլ ծաղիկ մ'է նա, իր արևն իր նպատակն է, իր ցողն իր քիրտն է:

Մե՛ծ է իր նպատակն:

Նա հայրենի փլատակաց վրա գաղափարի վերանորոգության վառարաններ՝ վարժարաններ պիտի կանգնե. հեղափոխության մրրիկներ՝ սմբած հանձարներ պիտի հարուցանե:

Իցի՛վ թե խավարասերներ իր նպատակին չը դավեն: Կրթականան խնժիղք այդ ճիվաղներուն սև շրթանցը վրա, երբ այսպիսի լուսասփյուռ նպատակներ ասպարեզ կը նետվին: Կը մոտի այն ժամը, որ այդ սև կառափները ընկնին, որոնք վսեմին, բարվույն, ճշմարտին և գեղեցկին՝ բնության հանձարը և մարդկության ոգին բաղկացնող այս շորս տարերյոցուրտ գերեզմաններ կը հանդգնին ըլլալ:

* * *

Չեմ դանդաղիր մատուցանել իմ անկեղծ շնորհակալիքս Հայկական⁹¹ ընկերության⁸)⁹² Սահմ.[անադրության]⁹³ հանդեսին⁹⁴ այդ⁹⁵ վեհաշուք⁹⁶ դրոշակրին⁹⁷:

Այս տարի ավելի շքեղ էր իր ձևկատը, ավելի մեծ էր իր փառքը, վասնզի Հիսարի դպրոցի աղքատիկ աշակերտությանց⁹)⁹⁸ անմեղ սրտերն ալ ծափահարեցին:

Կը փութամ նաև⁹⁹ շնորհակալ ըլլալ որբերու մեծանձն բարեկամին, որ բարեհաճեցավ Ս. Փրկչյան վարժարանի աշակերտները¹⁰), Սահմ.[անադրության]¹⁰⁰ հանդեսեն¹⁰¹ չը զրկել¹⁰²:

Ս. Փրկչյան որբե՛րը, անդունդը թափած այդ շողերը, ո՛հ¹⁰³, անոնք ո՛րչափ շնորհակալ ըլլալ գիտեն, իրենց ձեռքը սեղմող ձեռքին մեջ դողդողալ և փայփայված ատեն փղձկիլ կը սիրեն. արտոսըրը անոնց հոգիեն կը բխի, անոնք աշխարհի վրա բարերար սրտի սիրահար են լոկ:

Սահմ.¹⁰⁴[անադրության] հանդեսին ներկա գտնվող այդ որբոց¹⁰⁵ մեջ չը տեսի¹⁰⁶ մեկը, որ ժպտեր կամ զմայլեր, ամենքն ալ տխուր էին և կապշեին, մութ էին իրենց ճակատագրին պես:

Օրհնյա՛լ ըլլա այդ թշվառիկներու¹⁰⁷ բարեկամը, թող ինք այդ որբոց¹⁰⁸ աղոթքն հետը տանի, անոնք ալ իր հիշատակը, ինք որչափ անհունը¹⁰⁹ ծածկե՛ փառքը չ՛կրնար ծածկել:

* * *

Երբ¹¹⁰ որոտընդոստ պե՛րճախոս մը իր շանթերը զգածյալ համախմբության մը սիրտը խրելի վերջը թողուց որ մխա՛, ամպիոնին վրա շիկնոտ դեմք մ՛երևաց. ծափերու թագուհի մ՛էր նա. թոթվեց հոն սիրտը՝ զգացմանցն այն բուրվառը, կուգար իր ճիշը ծափերու ամպրոպի մը մեջ սուզել, սակայն ամբոխին համար գրեթե նորատեսիլ էր այս... ուզեց ըսել և զմայլիլ և թողուց որ սրտերը լուռ ծափահարեն:

Ո՛հ, հանճարի երկնած շանթերը շուրթերու վրա կը մարին երբեմն, գույնն ու ձայնն են որ մարդը պերճախոս կրնեն:

Երբ վերոհիշյալ ատենախոսուհին¹¹⁾, որուն անունը հարգանք կը հորջորջեմ, օր. Ադ. Վարդանյան իր ատենախոսությանը մեջ կըսեր «Ես սիրեցի իմ ազգս...», սկսած խնժիղ մը փոթեց շուրթերս, մրմռացի յուրովի. սիրե՛ է իր ազգը. նման անոր, որ առանց աղոթելու կը պաշտե յուր Աստվածը:

Ուրախ եմ որ շարաշար կարմրեցա այս թյուր կարծիքին վրա, հեգնս փուշի մը պես հոգվույս խրեցալ, երբ լսեցի և տեսի ազգասեր օրիորդին նպատակն ու գործը:

Ազդու շեշտ մ'էր իր խոսքը, որ եզրակացուց թե՛ կնոջ շուրթերը ոչ թե միայն ժպտելու, համբուրելու և հրապուրելու համար գծված են, այլ մանավանդ ՀԵՂԱՓՈՆԵՆԼՈՒ:

Պատիվ կը համարիմ ինձ ծափահարել սրտի և մտքի այդ վեհ սուաքելուհին:

6. ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԱՌ ՍԱՄԱԹԻԱՑԻՍ

Ձուգակշիռ Օգսեն էֆ.[Էնտի]ի և Փանոսյանի և Հաշտություն

Սամաթիացի՛ք.

Խառն ի խուռն կընթանանք. կանգ առեք վայրիկ մը. վի՛հ կա առջևնիդ. ական պեղած են ձեր ոտից տակ. ընկերական աղետալի պայթյուն մը կ'սպառնա Սամաթիո և անվիրիպելի է. Սամաթիա հրաբուխ մ'է այսօր. կը մխա. մոտալուտ է յուր պոռթկումը: Այդ ականին և հրաբուխին վրա երկու տարակարծիք բանականներ կան, գաղափարաց երկու ախոյան ըմբիշներ կան: Այդ երկու բանականներեն, այդ երկու ըմբիշներեն կախումն ունի Սամաթիո ճակատագիրը. դոցա մինն է Լույս, մյուսն Մութն է: Մութ անկանի պիտի. և այդ անկումը պիտի լճոռե Սամաթիո բախտը. Անկումը որչափ մեծ և սոսկալի ըլլա՝ այնչափ շքեղ ու հաղթական պիտի ըլլա կանգնումը: Այդ Անկ ու Կանգման մեջ փայլի պիտի Սամաթիո փառքը. Սամաթիա այլակերպիլ կ'ուզե, որպեսզի նորափետուր զարդարվի. հեղափոխել կ'ուզե, որպեսզի տապալե միապետները, զտվիլ կ'ուզե, որպեսզի յուր ընկերականության մրուրն ու փրփուրը դուրս սա: Սամաթիո ընկերական մարմինը խորդ ու ժահահատ նյութերվ բնդորած է. ընկերական բուրման օրենքը կը պահանջե, որ անգամ մը վերլուծի՛ ու վերաբաղադրի՛ Սամաթիա:

Աղմկարարք և խավարասերք Սամաթիան խաղաղ, մի: անձնվեր, ազատասեր, գործող ու աշխույժ տեսան և նախանձեցան. պաղ ու գազան հոգիներ կարծես իրենց հակասակերը տեսան ու զշարեցան: Տեսնենք իրենց այդ շար նախանձն ի գործ դնելու համար ի՞նչ ըրին.— երկու բան կար ընելիք: Երկպառակել Սամաթիան. վատահամբավել Սամաթիացին:

Որովհետև թշնամին ընտանի էր, ըսավ. Սամաթիան բաժնելու համար, պետք է կասկածներ հարուցանել խաժամուժ ռամկին մտաց մեջ, Սամաթիան վատահամբավելու համար՝ մուր քսելու է: Կասկածն հարուցին, մուրը քսեցին, Սամաթիա պառակտեցավ, Սամաթիացին վատահամբավեցավ: Հետևա՞նքն,— հետևանքը «վաղը արև պիտի ծագե» ըսելու շափ պարզ և հայտնի է, այսինքն շինությանց գործույն հապաղումը¹⁾). շինությանց գործույն հապաղմանեն ի՞նչ պիտի հետևի,— շինությանց գործույն պաշտոնեից²⁾ ապիկարությունը կամ անոնց անձեռնհասությունը.— այդ անձեռնհասության կամ այդպիսի անձեռնհասություն մ'ի վեր հանելու համար խարդախ և դավաճան հետամտության հետևանքն ի՞նչ էր,— մասնավորաց, թաղին պաշտոնեից, (անձին), դեմ ունեցած ատելությունը վրեժխնդրելու միջոց մը. այսինքն մեկ քանի մաբողոց բերնին մեջ պաշտոնեից անկումը խնդրող ու բողոքող կցկառուր ձայներ դնել, հոս ծպտյալ խարդավանքը մերկանալ կ'սկսի, հոս գազան որոգայթ դավաճանությունն: յուր սև դիմակը վար առնուլ կ'ստիպվի, զի հոս խնդիրն ալ հանրական ըլլալէ կը դադրի ու կը մասնավորի, խնդիրն ընկերականութենեն ի մարդ, մարդեն յանհատն կ'անցնի, ալ անհատն անհասին հետ մարտնչիլ կ'սկսի: Ո՞վ են այս ան-

հատներ այժմ: Վերցնենք խնդրույն քարը, և ահա տակեն Օգսեն էֆենտի մը ու Փանոսյան մը դուրս կ'ելլան. երկուքն ալ ժողովրդյան գաղափարաց վրա իրենց դերն ունին, երկուքն ալ ժողովրդյան մարդիկ են ի նա. կշռֆի զարնենք երկուքն ալ: Զուգակշռենք:

Սամաթիո Ազգին նվիրած նշանավոր անձերեն մինն ալ պարծանոք կ'ըսեմ, թե Օրագրի խմբագիրն է, Օ. նշանավոր ստորագիրն Հայ լրագրաց մեջ փայլածին պես³), խմբագրական ասուլարեզը նոր մարդ մը կը տեսներ. ընթերցողք նոր ճաշակ մը ու նոր աշխույժ կը կ'զգային անոր իմաստասիրական խորհրդածություններեն ու սպարդական ոճեն. Ազգային խնդրոց նեղ ու աղոտ կարծիքներ նոր ընդլայնում ու նոր լույս կ'առնվին, և ընթերցողք Օ. ստորագրությամբ հողվածներն այնպես ախորժանոք և հիացմամբ կը լափեին, ինչպես նոթին խորտիկ մը կամ պապակյալը պաղ օշարակ մը:

Ազգ.[ային] խնդրոց նկատմամբ ամենեն նոր, հանդուգն, իրական, շոշափելի, պարզ, քաղաքագետ, հեռատես ու պայծառ կարծիքներ միշտ Օրագիրն հայտնած է և կը հայտնե. խոսքիս ապացույց 2—3 տարվան Օ. ստորագրությամբ և Օրագրի մեջ հրատարակված Ազգային հողվածներն և ուրիշ լրագրաց կամ անձանց Ազգային հողվածներն իրարու քով թող բերե ու թող բաղդատե չհամոզվողը: Թեև այս տարի օր մը Մասիսի և օր մ'ալ Երկրագունդի մեջ աղճատյալ և եսական խոպան գրիչ մը ֆաշիշուկ և մեկն ալ բանաստեղծական գահավեժ դատմամբ մը վերացական առարկությունք անվանած էին Օրագրի կարծիքներ: Զեմ ուրանար, թե Մանգումե ալ չէ հայտնած ազգօգուտ կարծիքներ. բայց ալ հինցած են նոքա, և կ'երևնա թե Մանգումե ալ ծերանալ սկսած է, սա դժբախ-

տությամբ, որ քանի ծերանա կապիկի պես այնչափ ալ շարահիճանա պիտի: Մանգումբի նշանավոր հողվածք հիմա «Ազապյան վարժարան» վերնագրովներն են: Սա ալ բավ է հիշել, թե անգամ մը հասարակությունը Օ. ստորագրության համար Մանգումբ կը կարդար⁴). Մանգումբ առ Օրագրով է այնպես ինչպես հարդն առ ցորենով. թեև քիչ մը շափազանց ըլլա այս գուպակշռությունը, շատ անգամ Մանգումբ գրելու տեղ կը «հայհոյե»⁵) և խոսելու տեղ «տյուզյունայով»⁶) բառեր» կը շարե, անշուշտ քերականության սա առածին համեմատ, թե «խոսքը բառերն կը շինվի»: Անժխտելի ճշմարտություն մ'է, թե այն ազգային անհատն, որ ազգային խնդրո վրա «սուր» ու «պայծառ» կը մտածե և ձեռնհաս է գործելու, պարտի Ազգը զայդպիսիք ի պաշտոն կոչել: Գործելու ձեռնհասությունը մտածելու կարողութենեն կախումն ունի, մտածելու կարողության «հանճար» կ'ըսեն. խիստ իմաստությամբ ըսավ Կարմիր հռչակավոր Հանրապետականն⁷) իր նշանավոր ատենախոսության մեջ, թե նյութական «ուժի» մեջ Հանճարն է հաղթական... «Դեպքերն» ու «պարագաներն» են, որք զհանճար մարդույն ի վեր կը հանեն. ո՞վ կը մտածեր, թե Կամպեթթա, օր մը դիկտատոր Պորտոի⁸), ոտքերը գետնին զարնելով բանակներ պիտի հարուցանե⁹), և աշխարհի էն հանճարեղ կարծված քաղաքագետին «խաղալ» չկրցած «դերն» ինքն պիտի խաղա ճարտար ճարպիկությամբ. պարագաներն ու դեպքերը Կամպեթթաի աննշան հանճարն ականահարեցին¹⁰):

Թաղեցին Օգ. [սեն] էֆ. [ենտի] խորհելու, խոսելու հետեւլապես գործելու «ձեռնհաս» արժանիքը ճանճչնալով ի պաշտոն հրավիրեց իր ազատ քվեովը, իր ազատ կամօքն ու ազատ համոզմամբը, և յուր շինությանց ծանր գործին մեջ նետեց

դանի ալ իբրև անդամ մը. ասի պատեհ՝ դեպք մ'էր, որով Օգսեն էֆ. [էնտի] ինչպես նաև յուր անդամակցաց գործելու ձեռնհասութիւնը ի վեր երևեր պիտի. ի՞նչ կը նշանակե, երբ Փանոսյան կ'ելնէ ու զՕրագիրն յուր ընտրող հասարակութեան աչքին կասկածելի կը ցուցնէ¹¹⁾. բարուրանաց «մուր քսելով վրան» և ասի պարզապես և ուղղակի Օրագրի թե խմբագրական և ժողովրդյան առ նա ունեցած վստահութեան վարկը կոտրելու անհրաժեշտ ջանք մ'էր. Ասի՝ Սամաթիացիք ոչ զՕրագիրն, այլ դձեղ անվանարկել է, ասի Զեր ազատ «բլեն» հեզնել է, ու ազատ կամքը բռնաբարել և ազատ համոզումը դաղթակղել է: Փանոսյանի միակ նպատակն է «ասով» խանգարել նունյան վարժարանի շինութիւնը¹²⁾ և հասկցնել ազգին, թե լոկ ինք կարող է աղջկանց վարժարան կանգնել ու կառավարել: Փանոս, եթե հառաջադիմութեան և ոչ «ցուցամոլութեան» բարեկամ է, եթե իրոք ազատամիտ և ոչ «եսական» մեկն է, ինչո՞ւ «մրցում» չ'սիրեր: Ազգին մեջ «գործոն ազգանվեր» — (անշուշտ իրեն նման) — մարդ չգտնվելու դժբախտութեան վրա կոկորդիլոսի արցունք¹³⁾ կը թափե: Ինչո՞ւ համար երբ գործողը գործելու կը ձեռնարկե, իսկույն գործողին վրա կատաղի հարձակումներ կ'ընէ, զանի կը վատահամբավ և թումբեր ու խոչեր կը կանգնէ գործողին ու շարունակողին քայլերուն առջև: Սամաթիացի՛ք, թողունք զՕրագիրն և զՄանգումե ազատ իրենց գործոց մեջ, մեկը ձեր ընտրած յուր ընկերներով թող զնունյանն և մյուսը թող զԱգապյանը¹⁴⁾ շարունակե. թող երկուքն ալ գործեն ու մրցին, տեսնենք ապագան զորն յերկուցունց ծափահարե պիտի. ով որ «սուր» ու «քաջ» կը մտածե՝ նա «հաստատուն» ու «տևական» կը գործե, զի «սկզբունքով» կը գործե: Ով որ «հախուռն» ու «գահավեժ» կը մտածե՝ նո-

րա գործը պղպջակ մ'է, որ «ընդ երևալն կ'աներևութանա»: Սամաթիացի՛ք, արթննանք. շրջահայաց ըլլանք. Փանոսյան կ'ուզե զմեզ երկպառակյալ պահել ու զմեզ կուսակցութեան բաժնելով գործելու անկարող վիճակի մը մեջ «կղզիացնել», զմեզ և գործող մարդիկը վհատեցնելով զինքը միայն «փառաբանել տալ» կը ցանկա: Թոթվեցեք զձեզ, Սամաթիացի՛ք, կուսակցութեան «ցեցն» ինկած է ի ձեզ. միգուցե «մաշե»: Իրավ Փանոսի եռանդն ու աշխույժը շատ, բայց «խելքը» քիչ և «մտածումը» «կարճ» է քչիկ մը: Սամաթիացի՛ք, դուք եսական «միապետութունը» սապալող առաջին թաղեցին եղաք, առաջին թաղեցին, որ դպրոցներ «ընկերութեամբ» հառաջ տանել սորվեցուցիք Պոլսո Հայոց¹⁵):

Այսօր դուք միապետ մ'ունիք¹⁶) ի ձեր գլուխ, որ զօրենքն իր «էֆենտի», «աղա», «պեյ», «փաշա» և «սուլթան» «քեյֆին» վրա հիմնած է: Սամաթիացի՛ք, ասի ի՞նչ կծու հեգնութուն է ձեր ազատասեր և ընկերասեր ոգվո՞ ու պատվույն դեմ. ըսել է որ դուք այսօր «քեյֆի» մ'օրինաց գերին եք. Սամաթիացի՛ք, անտարբերութունը մահ է. քիչ մ'ալ եթե անտարբեր մնար «գերեզման» մ'է ձեր ներկան և «ափսոս» մը ձեր ապագան. մի՛ թողուք, որ կուսակցութեան հրդեհը ձեր ընտանիքներն ալ համաճարակե. դողացե՛ք. հրդեհը Սամաթիո տուները քանդեց¹⁷). միգուցե դուք ձեր կուսակցութեամբ Սամաթիո ժողովուրդը քանդեք. հրդեհն զՍամաթիա դժբախտ հոգեվարքի մը մեջ թողուց, միգուցե դուք վանի ի գերեզման իջեցնեք: Ամեն հրդեհ կայծե մը կ'սկսի. ընկերային ամեն աղետաբեր ավերումներն ալ կուսակցութուններն կը ծնին, կուսակցութունք կարծյաց գայթակղութեանց հետևանքներն են, «վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ այս գայթազղութիւն»¹⁸):

Ձեր այդ կուսակցութիւնն Նաբոգոդոնոսորա ծառն է¹⁹)։
շատ մը վազիր ու վատթար կրից մեջ տղմտած հոգիք՝ նորա
բազմատեղնյան ոստոց վրա որջացած են. շո՛ւտ, Սամա-
թիացիք, շո՛ւտ «տապարն առ արմին դրէք»²⁰), պետք է տա-
պալի այդ ծառն, որպեսզի ցրվին «որջացյալք»։ Սամաթիո
ընկերական նավը «կոհակաց» ու «մորկաց» մատնված՝ կը
տատանի ընկլուզամերձ, այդ նավն իր մեջ «մեղավոր» մ'ունի.
շո՛ւտ, «Վիճակն արկէք», «Յովնան ի ծով»²¹)։ Եթե ոչ՝ Սամա-
թիան ամբողջ ընկղմի պիտի։

Հայկական Ընկ.[երութիւն]ը²²) Սամաթիո մեծության
խորհրդանշանն է, Սամաթիո արժանյաց հայելին է, ատոր մեջ
կը կարդանք ու կը տեսնենք Սամաթիացի Հայոցս կրակոտ
հոգին, աշխուժավառ սիրտը, գեղեցիկ զգացումներն ու գո-
վելի բարեմասնութիւնները։ Հայկ.[ական] Ընկ.[երութիւն]ը՝
Սամաթիո հոգին է. Հայկականին՝ հայհոյե²³), Սամաթիացվոյ
հոգվոյն հայհոյել է։ Պատվո և զգացման տեր Սամաթիացի՛ք,
ձեր էն նվիրական պատիվը, ձեր էն գեղեցիկ ու վեհ զգացումը
Հայկականի մեջ կը փայլի. երբ զՀայկականն հեգնեն ու ան-
վանարկեն, դձե՛ղ, ձեր պատիվն ու զգացումը հեգնած ու ան-
վանարկած կ'ըլլան. դեռ անտարբեր կը մնա՞ք, Սամաթիա-
ցի՛ք. դձեղ բաժանել կ'ուզեն, որպեսզի տիրեն²⁴)։ միացի՛ք,
գորութիւն ի միութեան է. ձեր միութեան կեդրոնն Հայկ.[ական]
Ընկ.[երութիւն]ն է, կեդրոնը քանդել կ'ուզեն, որպեսզի ամբողջ
Սամաթիան քանդեն. ճիզվիթք երբ իրենց մեկ սև նպատակն
հառաջ տանել կուզեն՝ զընտանիքներն իրենց միջոց ու գործիք
կ'ընտրեն. Սամաթիո ոսոխն ալ կուսակցութեան որոմը նախ
ընտանյաղ մեջ սերմանեց, որպեսզի երկպառակութեան հոգին
ընկերութեան ամեն կարգին մեջ համահավասար ճարակել

տա, բայց խաբված է. իր ցանած որոմներն ապառաժի վրա
անկան միայն, փուշերու մեջ հեղձան միայն. վա՛յ այդ անմիտ
և ապիկար որոմնացանին:

Կուսակցությունը Սամաթիո քամակին վրա բացված
քաղցկեղ մ'է, պիտի հյուծի Սամաթիան և մինչ յանդունդն գե-
րեզմանաց թավալե պիտի: Ա՛հ, դահիճ մ'է, սոսկացե՛ք, պի-
տի անդամահատե զՍամաթիան և գլխատե պիտի զՀայկա-
կանը. օ՛ն, փութացե՛ք, Սամաթիացի՛ք, բուծել զայդ քաղց-
կեղն ու արտասահման տարագրել դահիճը: Ո՛չ, Հայկ.[ական]ն
Ընկ.[երություն]ը, Մանգումեի ներկայացուցած Հայկ.[ական]
Ընկ.[երություն]ը չէ՛. Օրագիր՝ Մանգումեի ներկայացուցած
Օրագիրը չէ՛: Մանգումեի պես կարճատես և սևադետ չէ ամեն
ոք. մենք այսչափ տարիներե ի վեր զՀայկականն իր անձնվեր
ու հայրենասեր գործքերովն՝ (ըստ յուր կարողության)—և
զՕրագիրն իր ազատամիտ և օրենսգետ խմբագրությամբ լավ
կը ճանչնամք²⁵), ինչպես մարդ մը յուր ազատ գիտակցությամբ
կը ճանչնա ճշմարտություն մը: Մանգումեն երամակ մը հով
կլլողներու դյուրախաբ գլուխները գայթակղելու համար՝
Հայկ.[ական] Ընկ.[երություն]են և Օգս.[են] էֆենտիեն նպա-
տակի, գործի, եղելությանց են. հաշիվ կը պահանջե: Ման-
գումե Հայկ.[ական] Ընկ.[երութեն]են և Օգս[են] էֆենտիեն
ավելի վաղ ժողովրդյան մարդն եղած է. ժողովրդեն գործի.
նպատակի են. համար այնչափ մեծագումար դրամներ ու
նպաստներ առած է. ո՞ւր են նոցա կատարյալ և ամբողջ հա-
շիվները.— անշուշտ աղա, փաշա, պեյ, էֆենտի ֆեյֆին
հարցնելու է—: Նույն դրամոք, նույն նպատակիք, կատարյալ
գործեր ու կատարյալ նպատակներ ի գլուխ կ'ելլին. ինչ ձեռ-
նարկեց կիսկատար թողուց²⁶). Թեև կերպով մը գովելի են յուր

կիսկատարքն ալ, զի մեծագործութեանց հիմերն են. ուր աշխույժ շատ և հանճար քիչ կա, հոն գործք շարունակութուն և կատարելութուն չունին, հոն սկզբունքն «եղեգն շարժուն ի հողմոյ յանապատի»²⁷) է. ո՛չ, ո՛չ, Սամաթիացի՛ք սխալ և շինծու են Փանոսյանի այն կարծիքները, թե Օգսեն էֆ. [ենտի] և իրեն համամիտք Ագապյան վարժարանի թշնամի են և զանի կործանել կ'ուզեն ո՛չ ապաքեն սոքա էին, որ օր մը զՓանոս... [յան] քաջալերեցին և աջակցեցին նորա՝ Ագապյանը կանգնեցին Սամաթիո դպրոցազուրկ օրիորդաց համար. միթե այն ատենը Ագապյանը կանգնելը նունյանը ավերակ պահելու թշնամութիւն մ'էր, որ այսօր ավերակ նունյանը վերականգնելը Ագապյանի կործանման սպառնալիք կամ թշնամութիւն համարին. ո՛վ մտաթափութեանս. միշտ աջ աչոք դիտենք Սամաթիացիք, որ գործը բարի տեսնենք, ձախ աչոք չ'դիտենք, որ ամեն գործ շար տեսնենք: Սամաթիացի՛ք, զձեզ զրգոելու է: զձեզ Օրագրի դեմ զինելու համար Մանգումե այս խոսքերը կըսես, Փանոս. [յան] Սամաթիո խորթն է, իսկ Օգս. [են] Սամաթիո հարազատն է, սա միշտ իբր ընտանի մը, իբր բնիկ մը պիտի մտածես Սամաթիո վրա, իսկ նա միշտ իբր խորթ մը: Ագապյանը ձերը չէ, Սամաթիացի՛ք, անոր Փանոս. [յան] ի աղա, պեյ, էֆէնտի. փաշա ֆեյֆը կը խառնվի²⁸): Սամաթիո աղջկանց վարժարանը նունյանն էր, է՛ և պիտի մնա. պետք է դուք նունյանը կանգնեք, անի Մերն է, անի Սամաթիացվոցն է: Փանոս. [յան] անցավոր մ'է, Ագապյան վարժարանի ներկան հառաջադեմ ապագա շունի քանի որ հառաջադիմութիւնը քեյֆի վրա է, երեկ Փանոս [յան] ի քեյֆը կ'ուզեր, որ մինչև 1871 հուլիս 11 կյուրակե առավոտ ժամ 10¹/₄ օրիորդ վարդան-

յանք*²⁹) (զույգ մը քորք) շարունակեին. այդ ժամանակետեն անդին աղա-փաշա քեյֆը շուգեց որ շարունակեն. անոնք ալ շարունակեցին: Քաջ գիտնանք, Սամաթիացիք, որ այսուհետև, երբ Ազապյան վարժարան գնացող օրիորդի մը եղբայրը կամ ազգականը, կամ ծնողքը կամ բարեկամը Փանոսյանի հետ հակակարծիք ըլլա, նույն օրիորդն ալ օր. Վարդանյաններուն բախտին բախտակից պիտի ըլլա. և այսպես շարունակելով սա տխուր գուշակութիւն ընել պիտի տա մեզ, թե օր մը բոլոր օրիորդներն առտաքսելով համբավատեն Ն Ազապյան վարժարանն ալ Փանոսյանի կիսկատար արարից դրժբախտ ճակատագրին ենթարկի պիտի.— Աստված չ'ընե—: Ազապյան վարժարանը հյուր մ'է Սամաթիո ճամար. իսկ նունյանը բնիկ Սամաթիացի է. գուցե օր մը Ազապյան վարժարանը Փանոսյանի հետ Սամաթիայեն գաղթի³³), բայց նունյանը կը մնա և պիտի մնա, քանի որ կա Սամաթիան, քանի որ կան զանի կառուցանող Սամաթիացիք. ուրեմն, Սամաթիա-

* Հետաքրքրական էր իմանալ, թե արդյոք օր. Վարդանյան ի՞նչ պատճառով հրաժարած պիտի ըլլա. հարկավ դպրոց մը, ինչպես աշակերտ ընդունելու նույնպես զանի հրաժարեցնելու օրէնք մ'ունի, բայց գուցե Ազապյան վարժարան «բնութիւն» օրինաց ենթական ըլլալով, քաղաքական օրինաց ենթակա շճանչնար ինքզինքը: Բայց, Փանոսյան, Ձեզ ամոթ չէ՞, առանդ, փաստի, դատի, քննութիւն վճիռ տալ. կը հիշե՞ք Մխիթար վարդապետի խնդիրն³⁰) իր պարագայիվք, պոսվո՞ Փանոսյան. սկզբունք ունիք եղեր. հող չէ, դուք վարժված եք բան մը խոսած ըլլալու համար խոսիլ, բայց գիտցիք Մանգումե, որ ալ «հասկցածնիս շհասկանալ ձևացնելու ատենն» անցալ, ալ ասկե վերջ Ձեր պեյ էֆենտի փաշա վե աղա քեյֆին³¹) մեր ազիզ, էհալի. սուլթան, փատիշահ վե իմբերաթոր քեյֆը պիտի խառնվի. դուք առանց փաստի ու դատի վճռույն ու վճռողին ինչ պատվանուն կոտան «մաքասաբանութենեն»³²) լավ գիտեք: Աստված խելք տա Փանոսյան, ի՞նչ ըսեմ:

ցի՛ք, սիրելի արեւակիցք, և դուք դպրոցասեր ազգայինք, մի՛ խնայեք Նունյանի գանձանակին ձեր մեկ լուման: Ձեր ամեն մեկ լուման օր մը ամբողջ աշխարհ մը, ամբողջ դարեր ի լույս վերածնող մայրություն մը կրթող և վերականգնելու վրա եղող Տաճարի մեյմեկ քարերն ու ատաղձները պիտի ըլլան:

Ես ավելի Փանոսյանի, քան Օ. [գսեն] էֆենտիի, ես ավելի Ագապյանի, քան Նունյանի բարեկամ եմ³⁴). Բայց այս խնդրույն մեջ — զՕ. [գսեն], քան զՓ. [անոսյան] ավելի արդար և զՆունյան, քան զԱգապյան ավելի կարևոր, կենսական և շահավետ կը տեսնեմ Սամաթիո:

Սամաթիացի՛ք, դուք բարի և ազգասեր եք, բարի և ազգասեր են նաև ձեր անկախ քվեովն, անկախ կամոքն ու անկախ համոզմամբն ընտրած պաշտոնյայները, որոնց հանձնած եք այժմ շինությանց մեծ գործը, անոնք են սէր, անոնք են կասկածելի, որ զանոնք սև և կասկածելի երևցնել կ'ուզեն մեր հանրության առջև:

Վերջին խոսք մ'ալ Սամաթիացիք. ես իբր անաշառ պատգամավոր մը Սամաթիո ապագային կողմեն՝ ամբողջ երկսեռ Սերնդոց կուսո դավաճանն ու դահիճը պիտի ըլլաք, եթե զոհեք շինությանց գործը կուսակցության, եթե զոհեք ձեր արդար պաշտոնյայքը կուսակցության. և կը հավելում, ուրեմն ի՞նչ ընենք, որ մեր կուսակցության մեր մեջ բացած վիճը լեցվի, — սե՛ր, սե՛ր լնունք. — ի՞նչ ընենք ուրեմն, որ իրարմի փարսախսներով հեռացած խորհրդակցող ճակատներն իրարու մոտենան. «պագտովի՛նք», մոռնա՛նք: Մոռցի՛ք, Սամաթիացի՛ք, զմեզ զատող մրրիկները. մոռնա՛նք. մոռցիք կուսակցության ոխն ու ատելությունը, սիրո ձեռք կարկառեցեք իրա-

րու, համբուրեցեք զիրար. հաշտվինք, քանի քրքրենք կնճիռը՝
այնքան սրտեր պիտի արյունենք, այնքան վերքեր բսնանք
պիտի. եկե՛ք, ձեռք ձեռքի տվեք, միացե՛ք, Սամաթացվոց զո-
րությունը միության մեջ է. սիրեցե՛ք զիրար Սամաթիացիք. Ե
հաշտվեցե՛ք: Սամաթիո խրթին կնճիռը լուծող վերջին և միակ
բառն է «հաշտությո՞ւն, հաշտությո՞ւն»:

7. ԴՐԺՈՒՄ

Այս օրերս Ազապյանի մեջ ցավալի դեպք մը կը պատահի: Օր. Աղալինի Վարդանյան և իր քույրը կ'արտաքսվին հոն-կէ առանց պատճառի կամ առանց դպրոցական կանոնաց դեմ զեղծում մ'ըրած ըլլալնին հաստատվելու¹):

Ազապյան կը դրժե իր նշանաբանին: Պ. Փանոսյան կը գործադրել զայս: Զարմա՛նք: Գլուխն իր գաղափարը կը խեղդե-խրավունքի բույրը կրից դժոխքի մը կը խոնարհի:

Այդ սկզբունքի դարձը, այդ ցուրտ գաղափարը կատուկ մ'էր, որ զԱզապյանը և զինքը իր մեջ պլլեց: Հրապարակային մարդ մը, մանավանդ լրագրուպետ մը կամ վարժարանապետ մը, պետք է որ սկզբունքի մը այնպես գամվի՝ ինչպես Աստ-ւլած մը իր խաչին: Այնպիսի նվիրական բառեր արտաբերել, որոնք շուրթեր պետք է այրեն, այնպիսի գաղափարներ հրատարակել, որոնք ճակատներ պետք է պատռեն. ասոնք են Փանոսյանի պաճուճանքը:

Քանի մ'օր առաջ պ. Փանոսյանի հլու սարկավագներէն մեկը կ'ըսեր²), թե Ազապյան ապագային օրրանն է. այո՛, օրրան մ'է իրոք, սակայն մայր շունի, ո՞վ կ'ուրանա զայդ:

Դուք, Ազնիվ օրիորդ, Դուք որ Ազապյանի երևսին ճեւ-մակը եղաք, Դուք որ ի փառս Ազապյանի մինչև ցարդ սուրբ քրտունք թափեցիք³), արդ պ. Փանոսյան փոխանակ Զեր սր-

ժեքին համապատասխանող վկայագիր մը գոհունակությամբ
Ձեզ հանձնելու՝ Ձեր կրելու կարողութենէն վեր ցավ մը կու-
տա: Սակայն Դուք մի՛ ցավիք, թող ի՛նք կարմրի: Հանրու-
թյունն ամեն բան դատեց, Դուք ալ ամեն բան մոռցեք: Մի
ցավի՛ք, որ Պ. Փանոսյան Ագապյանի դռները Ձեզի գոցեց,
ազգի մը սիրտը բաց է Ձեզ համար. Դուք որ ճշմարտության
ճիշով մը նվիրական հարկ մը դղրդեցիք, Դուք որ Ագապուհի
մ՛ըլլալու Ագապյանի (իւր նվիրագործյալ նպատակն հասկա-
նանք) սրտին չը կոխեցիք, փա՛ռք Ձեզի, որ Ձեր սկզբ-
րունքին շինք տվիք և ամո՛թ անոր, որ իր սկզբունքը զարկավ:

8. ՈՎ ՈՐ ՈՒԶԱԾԸ Կ'ԸՍԵ, ԶՈՒԶԱԾՆ ԱԼ ԿԸ ԼՍԵ

Անլի տողեր կարդացի երեկվան Մանգումբի մեջ¹⁾ ընդդեմ «Դրժումն» մակագրյալ և «Արմենակ»* ստորագրյալ հոդվածոց: Մանգումբի՝ ամեն ներհակ գրվածք պատալանա և պատասխանի անաբժան կ'ըլլան եղեր: Կը գանիմ այդ տողերեն: Միթե բուն դայլայլիկ, կույր աչքեն լույս, խելագարեն տրամաբանություն կամ դժնիկեն խաղող կ'սպասվի²⁾, որ ես այլ Մանգումբի խմբագրութենեն օրինավոր խոսք կամ պատուասխան սպասեմ:

Իուք այդ տողերով ումիկ մ'եք: Մ.<եծապատիվ> Մանգումբ, և ձեր լեզուն շատ ցեխոտ է այս սնգամ. այդ աղտոտ լեզվեն պատասխան սպասելն անգամ արդեն իմ գզաց-

* «Դրժումն» ի վսեմախոհ հեղինակը դժբախտաբար չճանաչեմ: Շլամիտ տեսությամբ մը վԱրմենակն ալ լեզվովը «Շահնազարյան» մը նկատելն այքի ծիծաղս շարժեր շիտակը: Մանգումբ, դուք լեզու դատելու համար պարտիք շայր Արսենի²⁾ «կոտորած կաղամարով» մեկ քանի հոխա³⁾ դևո մյուրեպքեպ⁴⁾ լզել: Աքաղաղին զմարգարիտ «կուտեն» վար դասելեն՝ կը հետեվի⁵⁾ թե մարգարիտն արժեք չունի: Պահ մ'իներզինքնիս «Շահնազարյան» ենթադրելով (ըստ կարծյաց) եթե Արմենակ՝ Շ. [ահնազարյան] Վարժ. [արանի]⁵⁾ համար «ազ շերեֆ տեյիլ տիր»⁶⁾ Մանգումբի պես «Մաքասարան և քուտուզարան»⁷⁾ խմբագրի մալ Ազապ.[յան] Վարժ.[արանի]ի Տնօրեն և Դատարակ լինելը «հելպեթ շոգ շերեֆ տիր յա»⁸⁾:

«Հուր՝ր՝րա»⁹⁾ Մանգումբ:

մանս ու պատվույս դեմ է: Ես դձեղ կշիռֆի գարկի ձեր տարան հասարակության ցուցնելու համար¹⁰), և ոչ թե ի ձենջ պատասխանելու համար: Դուք որչափ անգամ խոսիք մամլով, այնչափ անգամ մամլո դեմ կը հայհոյեք: Վասնորո՞ անգղիական պաղությամբ մը լոկ կ'արհամարհեմ ձեր այդ հայհոյիչ լեզուն:

Հայկական վեհանձնությամբ ձեզ խրատ մ'ալ կուտամ. ազնվացե՛ք, Մանգումե էֆենտի, և լվացե՛ք ձեր այդ կեղտոտ լեզուն: Ասկե գատ ուրիշ Ստամպոլ շի կա¹¹):

Մի ղլանաք, Տեր, երկտողիս երկու տող շնորհել:

9. <ԱՌ «ՕՐԱԳԻՐ»>

4. Պոլիս, 23 Հուլիս 1871

Մ. <եծապատիվ> խմբագիր,

Կ'ազդարարեմ Մանգումեի խմբագրության, որ անձի անհասկացողություն և անհատի շփոթում ունի: Մանգումե էֆ. [ենտի] «վիհ մեծ կա ընդ իմ և ընդ քո¹) ակտրղընըզ մայլումաթ»²). ես ն. [ուպար] Շ. [ահնաղարյան]. Վ. [արժարան]ի աշակերտներեն չեմ. ես իմ լեզու՝ գավառիս մեջ, Հայաստանի մեջ ուսած եմ³). և զՁեզ ու զՕրագիր գուգակչոելու փառքն ու կարողությունը օտար Վ. [արժարան]ի աշակերտի ալ չեմ տար: ՁՁեզ ի խմբագրական օրինավորություն կը հրավիրեմ. զՁեզ կշոռըր գաղափարն է. գաղափարը թողուլ և անձին հարձակելու, անհատը քննադատելու ելնելը պարզապես խմբագրության անփառափառություն ու գաղափարի ապիկարություն է:

Ո՛չ, Մանգումե էֆ. [ենտի] Արմենակ վատ չէ, Ձեր և Ձեր անիրավությանց երկաթի ապտակ է:

Այս անգամ կներեմ Ձեզ, ըմբռնմամբ և յանլըջ մայլումաթով⁴) Արմենակա դեմ կրկին Ձեզ հատուկ եղած փաթավաթասըզ⁵) լեզվով ժայթֆելնուդ համար:

Կը խրատեմ Ձեզ հայրաբար, որ հասարակության առջև

պալադի⁶⁾ շերենալու համար պարտիք խմբագրական պատիվն ու օրենքը լավ ձանչնալ: Մասնավոր անհատի մը ուրիշ անհատի տեղ ըմբռնելով՝ հասարակութեան առջև խոսք ու վճիռ տալ խմբագրական պատվուն քիչ անարգանք չէ իրավ որ:

Ալ խոսք շունիմ Ձեզ և ոչ ալ Ձեզ դաս տալու ատեն: Այս է Ա և այս է Յ⁷⁾:

Ն ԱՄԱԿԱՆԻ



< Առ

Մասաթեոս վարդապետ Իղմիրլեան >

Շնորհափայլ հայր,

Սիրտ իմ թրթռայր ընդ առաջին տեսութիւն Ձեր¹⁾ և ճաշակէր դսիրաբուղիս բարեկամութեան զնախախայրիս, միանգամայն զարմանայի ընդ ուսումնական և կրօնական բարեմասնութիւնս վերնձիւղեալս ի Ձեզ:

Յօրէ անտի յօղեցաւ սիրտ իմ յաւէժ ընդ Ձեզ ի հանգոյցս սիրոյ. այլ բազդն ոխերիմ՝ վաղ վաղ արտասահման հալածեաց դիս յսփունս հեռաւորս²⁾ և ետ ինձ երազել և եթ ի կոհակս՝ փոփոզուն արտասուաց, և ոչ ևս ետ ինձ թոյլ զգէմս Ձեր սիրական նշմարել միւսանգամ, այլ ի հովիկս տերեւաշարժս միայն զհագագ Ձեր լսել:

Արդ վերընծայեմ վէտ ի վէտ զբոյրս սրտիս առ ՚ի խնդրել յերկնից մնալ Ձեզ հաստատուն ի Սուրբ աստիճանիդ Քրիստոսաւանդ վարդապետութեան, առ որ անձնայորդոր բղձայիք հասանել:

Այլ աղեխարշ սիրտ իմ տոշորեցաւ, զի ոչ լուայ յառա-

ջարդոյն զկատարումն ձեռնադրութեան³) յաւուրն գերերջանիկ, յորում լցան իղձք Ձեր և բազմաց իսկ, որ հիացմամբ զարմանային ընդ կրօնավայել բարոյս Ձեր:

Ո՛վ դժբախդութեան... շեղէ արժանի յաստուածապաշտառ սեղանի տեսանել զՁեզ՝ վառ ի սէր Քրիստոսի մերոյ խաչելոյ, լսել զուխտ Ձեր վասն նուիրելոյ Ազգիս զխաչ Ձեր և զարիւն անպարտ:

Եւ արդ ի լուր դասափոխութեան աստիճանիդ⁴) Սրբութեան Ձերոյ, եկի ի խնդակցութիւն և ի սիրելի տեսութիւն միւսանգամ, առ որ տենջայի անդստին ի նախասկիզբն տեսութենէ անտի մերմէ. այլ իբրև լուայ. յեղակարծ զբացակայութիւն Ձեր, անսէն եղի ի մտի այսու գրով մաղթել յերկնից վասն Ձեր աւուրս բազումս ի պաշտամունս աստուածային, պահել զՁեզ սուրբս, անյողդողդս և քաջարթունս, վեհաշուք վառել յՁեզ յԵկեղեցոյ կամար լուսերանգ՝ զերթ Արուսեակ՝ ընդ հոյս աստեղաց, փողփողել, ո՛չ ի խավարի, այլ հուպ ի լուսափայլ նշոյս արփոյն. և հակիրճ ասել՝ պահպանել յավէժ զՍրբութիւն Ձեր յայս տարադաս բարեկամութեան, որով մխիթարիմ յաշխարհի հարուածս:

Հրճուեցայց յաւէժ, յորժամ տեսից զՁեզ, մինչև իմ հասեալ յաղերեկ յալիս, յԱթոռ Հայրապետական և զՀովուապետի գաւազան ի ձեռին:

Մնամ միշտ անկեղծ և խոնարհ

1869 Սեպտ. 17

Օրթագիւղ

Բարեկամ Ձեր

Պ. Դուրեան

<Առ

Պ. Տ. Ադամյան>

Բարեկամ,

Անշուշտ կը ներես ինձ, եթե մեր բաժանման հաջորդող զգացումները լռության տակ թաղեցի, եթե չբացի ծանր շուրթերս քեզ «բարով նստիս» մաղթելու. անշուշտ եմ, որ լավ ես և առողջ, հիմա գուցե վառարանի մը ճարճատուն բոցերուն ըրողորտիքը կը խոկաս կամ կես մը կը մրափես. կոնակդ սաք, փորդ ուռուցիկ և երևակայությունդ կուսի մը պատկերովը առ լի... անշուշտ խաղ և պար ալ կը վայելես. երկուտեսակ օքուզ պիւր կը խաղաս, երկուքն ալ իրենց ճգնաժամերն ունին, հոռի՜ նսակ հոռի կամ թռփ¹)... վերջապես կը մաղթեմ, որ ձմեռը լավ որսեր քեզ մատակադարե, ձյունի վրա քալող կամ թռչող ձյունն գունտեր²), որոնց ճառագայթ մ'է հարած... որոնք սակայն շեն հալիր, այլ կը հալե՜ն... Թոշնիլ գիտեն անոնք գերբնական վայրկենի մը վառ նայվածքի մը մեջ... Սակայն մեկդի թողունք քիչ մը այս սերը և տարփը նայինք... կը բանաս խորհրդավոր արկղը, փայլուն մետաղներ կը ժպտին. երկու ժպիտ կա առջիդ. ո՞րը կ'ընտրես... կույս և ոսկի... գիտեմ, այս վայրկենիս ընտրեցիր... վերջապես շաղփաղփությունը ըսել կուզեմ, բարեկամ:

Ընտանիքդ լավ վիճակի մեջ է, քույրդ և պզտի հրեշտակ-
ներդ կլիմայիդ մոտեցան, անշուշտ բավական գոհ ես:

Եթե իմ վրայոքս ալ տեղեկություն կուզես, վիճակս նույ-
նությունն է. առանձինն ըլլալու համար շատ անգամ տունիս
մեկ ցուրտ խուցը մեկնած մույզ ու սառ մատներով գրիչ կը
ձարձատեմ, կը մրոտեմ, կը վառիմ, աշերս խոշոր խոշոր կը
բանամ, կը մրմռամ, ձեռքս ճակտիս կը տանիմ, անհամբե-
րության հառաչ մը կ'արձակեմ, կը խոկամ, կը ծխեմ...
ասոնցմե արտադրյալն է թատերախա՞ղ³)... հիրավի բռնի թա-
տերագիր կամ բանաստեղծ մը ըլլալ կ'ուզեմ, տենչ մը, որ
աղքատիկ հյուղի մը անկյունը՝ քաղցի և ցուրտի սև վերմակ-
ներուն տակ վերջապես ակամա կը մարի... Ինչ որ է, պիտի
հանդուրժեմ որչափ որ կարենամ, ստակը շեմ ատեր, բայց
գրիչը կը սիրեմ, սփոփ մ'է նա ինձ այս անձուկ կացությանս
մեջ, հիմակվան գործատերերը կով կուզեն գործածելու և աշ-
խատցնելու¹, ոչ թե մարդ⁴). ես այս սկզբունքը ճակտիս վրա
գրեցի— համբերել և հուսալ— այս սկզբունքը քեզ ալ կը հար-
մարի... տեսնե՛նք, քանի մը թատերախաղեր ունիմ, կրնամ
ստակով կամ ծափով փոխանակել... աս ալ ըսեմ, ամիսի մը
չափ մինչև անգամ խոնարհեցա դերասանություն ընելու⁵)
րնտանիքիս կարոտը լեցնելու համար, բայց Վարդովյանի²
(հին արկածներն մնացած ատելություն կրակովը բորբոքած)⁶;
նախատինքներուն շկրնալով հանդուրժել⁷)՝ աղտոտ անկողինս
թատրոնեն տուն փոխադրեցի⁸). այս ալ ըրի ապրելու համար,
անգործությունը թոթափելու³ համար, ինծի⁴ ըրած նախատա-
նաց պատմությունը սոսկալի է, և ես ավետարանական հեղու-
թյամբ⁵ ներեցի... հիմա այդ անցքը հոս պատմելը անպատեհ
է⁹)... Դու բաժանման կետերուդ շատ կրկնեցիր, որ գործ

գանեմ¹⁰). եղբայր, սա ճակատագրիս դեմ կը խոսիս... լուենք... աչերս կը լեննան... վերջացնենք... մատներս կը մսին, երթամ վարը քիչ մը տաքնալու¹¹)...

Կը խնդրեմ, որ դու ալ քու վրայոքդ մասնավոր տեղեկություններ պարունակող նամակ չղլանաս բարեկամեդ... հոս ցուրտը սկսեց, ածուխի կողովներով պզտի մերկ ու մսած աղջիկներ կ'երթեն կեն փողոցներու մեջ. հիրավի Վիկթոր Հյուկոյի աչքեն խլրտած է այս տեսարանը. հարուստները ջահերով կ'զբոսնուն, աղքատները առկայծ հողե կանթեղով մը կը մսին... ասոնք ալ սքողենք, Վարդան—Մարտիկ—Պետրոս—նույնություն¹²), մեր ճակատագիրները դպրոցի մեջ միացան և տեսնենք ի՞նչ համախումբություն մը զայն պիտի լուծեն¹³):

Ընտանիքդ սիրով քեզ կողջունե... նամակդ փութացուր. այսօր այսչափ... կը մսի՛մ...

Անկեղծդ

Պետրոս Դուրյան

1870, Դեկտմ. 21

Սկյուտար

<Առ

S. Խորեն եպիսկոպոս Նար-Պեյ>

Գերապատիվ Տե՛ր.

Այն հանճարի և եղբայրսիրութեան արտափայլումները, ճակտի և սրտի ճառագայթներու այն շքեղ միացումը, որով կը սավառնիք՝ կը դրդեն զիս Ձեր Սրբազնութեան դիմել, Ձեզ՝ յորում տնանկին՝ հաց և դիակին կայծ տալու կազմ՝ հոգի մը կը վառի. Աստուծո տաճարի բուրվառ մը, անդնդոց մեջ կանգնած² լապտեր մ'է այն:

Գերապատիվ տեր, Դուք Քրիստոսի ճառագայթը և միանգամայն հանճարի թևն ունիք, կույր մը չէ Ձեզ դիմողը որ աչերը բանաք, այլ մեկը որ ճակտին վրա սև ամպ մ'ունի. հյուղի մը հառաչն է այն, հոն ուր վառարանն ամալի է և սիրտ կը միսա, հոն ուր կյանքը կը լոռ և քնարը կը հեծկլտա:

Շատ անգամ հանճարի փոթորկին մեջ խարխուլ հյուղի մը տախտակը կը տարուբերի լոկ. երբ այն փոթորիկը կը դադրի, աղիտալի վերջալույսի³ մը⁴ մեջ վայրի ծառն մը շոր տերև մը կ'իյնա. այն տախտակը անհուշութեան հողակույտը⁵ հարդարող ցուրտ թի մ'էր⁶, և այն տերևը գուցե համաստեղութեններեն⁷ իյնող⁸ աստղի մը շուրբ:

Ի՛նչ ի՛նչ հանճարներ հյուղին այն գահոսային⁹ սեմին վրա խամրեցան կամ մարեցան. հասարակաց գերեզմաննոցներու մեջ հողակույտներ կան, որոնք հրաբուխներ պիտի ըլլային, բայց կայծը սրտի թանձր խավարին մեջ առանց երբեք հրահրելու թաղված է...: Հանճարը վհին մեջ գանկ մը եղավ, առանց մարդկության եթերին մեջ գիսավոր մը ըլլալու:

Ես ալ¹⁰ ժամանակե մը ի վեր այն սեմին վրա կը դողդողամ¹¹ կամ կը պլպլամ առանց հանճար մը ըլլալու, այլ մարդկային հեղափոխական¹² հրաբուխին բոլորտիքը դեգերող արյունած աչք մը որ անոր կայծերը կ'ընդնշմարե՝ իր հոշոտած զոհին արջան կալյակները դիտող¹³ վագրի մը պես: Ես կ'ուզեմ այն հեղափոխական¹⁴ հրաբուխեն¹)՝ այն սիրո հնոցեն՝ այն մարդկության արշալույսեն՝ Գողգոթայեն ձգտիլ մինչև այն գահոսը¹⁵՝ այն գոս արմասը՝ այն մարդկության վերջալուսային¹⁶ տժգույն հորիզոնը՝ հյուղը:

Այլ բավ հողե կանթեղի մը հետ հսկեցի առանձին¹⁷, ալ բավ սրտիս կայծերովը աստղերուն հետ ընդհարեցա անձայն, ալ բավ քրտանց ճակտիս վրա սառիլը զգացի. կը նետեմ ոտքս ահա դուրս այն նսեմ սեմեն և նախ Ձեզ՝ Սիրո պաշտոնեիդ կը դիմեմ:

Ձեր Սրբազնությունը, նշանավոր առթիվ մը, համակրական տեսակցության մը պատիվը ինձ տալե գատ, երջանկություն մ'ալ ներշնչած է²), որ կը նմանի խղզուկ սրտի մը արցունք¹⁸ մը տալու. ասի խոստում մ'է, որուն քաղցր պահանջումը պատեհ առթի մը վերապահած էի. ահա առիթը ինձ կը ներկայի³):

Ներեցեք, Գերապատիվ Տեր, այն հրաբուխի սրտին¹⁹, որ

Ձեր վսեմ քնարին շուրջը կը դեգերի⁴) և կը պատրաստվի Ձեր սրտին մեջ շաղ մը և շիթ մը թափել:

Ընդունեցեք, կ'աղաչեմ, Գերապատիվ Տեր²⁰, իմ կանխահայտ և ամենախորին մեծարացս հավաստին:

Պ. Դուրյան

1871 Հունվար 22

4

Առ

Պ. Տ. Ադամյան

Բարեկամ.

Հոս ձյունը բավական եկավ, ծածկեց հյուղերը, որուն ներքնակողմը մսող թշվառը ըսավ. «Ահա մեզ ծածկելու համար Աստուծո զրկած վերմակը» և դողաց. պատանքի մը պես ցուրտ էր այն: Տաքցի՛ր այն: վառարանին քով և մի՛ նախատեր զայն թեև նժդեհ՛հ ալ ըլլա¹). եթե անչքավորության¹ մեջ այդ նժդեհությունն ալ չըլլա ո՞ւր կը մնա մեր ճակատագիրը, այն ճակատագիրը, որ դմեզ միացուց մանկության մեջ՝ այն ընկերական վառարանին շուրջը որ դպրոց կ'ըսվի. միշտ ձանձրալի է այժմյան աշխարհը, անոր համար որ ուղեղին մեջ ջահ մ'ունի². աշխարհի քաղցրությունը վայելելու համար այն դարին մեջ շնչելու է որ քուրձ կը հագնի և կը սիրե. փիլիսոփա աշխարհը ըսել կ'ուզեմ, որ արդեն ուղեղներու մեջ կը սաղմնի³... Բայց հիմա սրտի ծալքերը թղթատելու ժամ չ'է...

Քու սիրալիր թերթիդ վերջը⁴ «Վարդան» կ'ըսես և հառա-
շելով կը գոցես. բարեկամ, երբեք պետք չ'է հուսահատիլ մեր
ազնիվ բարեկամին կացությանը վրա, որուն⁵ վրա երևցածը
լոկ բնության մեկ ժամանակական ներգործությունն է²), ինչ-
պես երբեմն⁶ Տ... եղբայրն ալ ունեցած է վաղանցիկ կեր-
պով³): Ասի իրենց ցեղին⁷ մեկ անվնաս օգիրևությունն է... շատ
մեծ հույս ունիմք, որ քաջառողջ կը վերադառնա:

Այլ քու վերադարձդ ե՞րբ պիտի ըլլա⁴), պետք է որ իմաց-
նես եթե գիտես կամ որոշած ես, արդյոք երբ մեր նսեմ⁸ ճա-
կատները պիտի միանան...

Քիչ մը առաջ⁹ նժղեհույությունը ծաղրեցի, այլ անոր դառ-
նությունը կզգամ հիմա. ա՛հ, բարեկամ, միթե մեր համագ-
գաց սրտերուն հարահույզ փոթորիկները իրարու հաղորդելու
համար կը բավե՞ն այս տկար թուղթերը, որոնք կրեայի
չափ համրընթաց են մեր մագնիսացյալ սրտերուն կայծերը
տեղափոխելու¹⁰ համար սրտե ի սիրտ...:

Իմ վիճակս եթե հարցնես՝ դեռ անորոշության մեջ կը ծփա,
կը տեսնեմ հուսոտ աստղեր, որ կը շողան. շատ լավ, եթե սև¹¹
ճակատագրիս թևերը չը փութան դանոնք պարածածկելու. առ
այժմ անչափ չ'եմ ցավիր իմ վիճակիս և հուսահատ ապագա-
յիս վրա որչափ առաջ. ալ ոչինչ փուլթս է, միմիայն ընտան-
յացս բեռ չըլլալ, այս [է] որ¹² կը կորացնե քամակս... Դեռ
խոսելիքներս ուրիշ ատեն...

Ի տեսություն

Պ. Դուրյան

5 Փետրվար 1871

Սկյուտար

Առ

Պ. Տ. Ադամյան

Սգավոր:

Մի՛ թաղեր¹ այդ անհուն հառաչը՝ սրտի՛ այդ² փոթորիկը թո՛ղ դուրս ժայթքի...: Դու³ ինձ հիշեցուցեր էիր, որ իր հողակույտին վրա¹) փունջ մը ծաղիկ սփռեմ. ե՛ս դժոխք մը անեծք Աստուծո անվանը վրա թափեցի, ավելի աղեկ չըրի՞. ծաղիկը կը թոռմի, սակայն անեծքս Աստուծու կողը խրեցա՛վ:

Ա՛հ, կը սիրե գինքը, կը սիրեհինք. իր հիշատակին վառարանն եմ, իր կսկիծին օվկեանն եմ, իր սուգին վիհն եմ, իր գերեզմանն եմ... Իր գերեզմանին վրա ծաղիկ սփռեմ մի՛, ո՛չ. ծաղիկը պաղ և անզգա է, հոգիես քամված արցունքը տաք, զայն կը թափեմ, ափերով կը թափեմ...: Աչերը կսկիծի մեջ արցունքի օվկեաննիր են, անոնք որ հաճույքի մեջ աստղեր են:

Զինքը պաղ հողով պատեցին, մենք իր հիշատակը տաք հառաչներու մեջ պլլե՛նք, պահե՛նք, վառ պահե՛նք⁴, միշտ պահե՛նք⁵...:

Կ'անիծես աշխարհը⁶, բարեկամ, արդեն ինքն անիծյալ է: Աշխարհ կամ Աստուծո ձանձրույթի մեկ հառաչն ըլլալու է (քառսը բնակած ատեն), կամ դժոխոց մեկ անհամ կատակը...

Ի՛նչեւիցե, ի՛նչ որ կ'ուզե թող ըլլա, բավական է որ կսկիծի՛
դուռ մ'է՛⁸:

Իմ վիճակս կը հարցնես, բավական բարվոքած եմ, նա-
մակը գրած օրերս⁹ գեշ վիճակի մեջ էի²), շատ ցավեցա որ
զքեզ¹⁰ խոռվեցի: Առ այժմ Տ.<ոքթ> օր¹¹ Քյաթիպյան դեռ
կը խնամե՞³), սակայն դեռ... Ա՛հ, թողեք որ հոգեբուխ
հառաչով մը զԱստված դղրդեմ... անհունության մեջ եմ ին-
կած¹². հարկ է որ լռեմ...

Բարեկամության¹³ վրա դիր հույսդ, կ'ըսես, պիտ ավելի
կսկիծի¹⁴ կը մղես, ո՞ւր են իմ բարեկամներս... ինչո՞ւ հե-
ռո՞ւմ¹⁵ ես...

Պետք է որ շուրթն առ շուրթն տեսնվինք... պիտի տեսնես
որ հրդեհ եմ... Ա՛հ¹⁶, շատ բաներ ունիմ...

Ի ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պ. ԴԻՐՅԱՆ

1871 Հուլիս 5
Սկյուտար¹⁷

6

Առ

Պ. Տ. Ադամյան

Սրտակից բարեկամ.

Փամասնակե մ'ի վեր է որ քեզ նամակ մի՛ գրեցի¹), որ
անպատասխանի մնաց. չցավեցա յայդ, հասկցա որ պատաս-
խանելու կամ միջոց չ'ես ունեցած կամ կարևորություն չ'ես

տված. Թեպետ կրնայի այն ատեն ևս նամակ մը երկրորդել սակայն ի՞նչ գրեի. ի՞նչ կրնա գրել այն՝ որուն սիրտը դատարկ է. պիտի մակաբերեա արդ յուրովի, թե քանի որ այժմ կը գրեմ՝ անշուշտ սիրտս լցուն ըլլալու է. . . . այո՛, առելի՞² է նա՞³ սգալի հիշատակի մը արտոսրով²):

Ես գրեթե խաղաղ կը նիրհեի, երբ Մայիս 21ի սև գիշերն կը քրտնեի³), երբ հոգի մը սրտերու և գերեզմանի մեջտեղ կը կողկողեր:

Փրտտեցան նորա ոսկերքը հիմա⁴), հարթ և անհայտ եղավ նորա հողակույտը... Չ'էի ուզեր⁴ հավատալ⁵ թե պիտի մեռնի մինչև այն ժամանակ, երբ իր⁶ վերջին նվաղյալ նայվածքներեն մին արձակած ատեն, դեռ ինձ շհասած երկուքիս մեջտեղ ինկավ՝ մարեցավ... մինչև այն ատեն, երբ խղզուկ ձայնը տխուր «մնաս բարով»ի մեջ կը մարեր... Ա՛հ, հիշատակներ կան որոնք իրենց շարունակութեանը մեջ միշտ միևնույն շանթերն են...: Սրտիս ծալուցը մեջ միայն մեկ կորովի խորշ մը կրցի⁸ իր⁹ տխուր դամբանականը⁵) արտասանելու վերապահել¹⁰:

Ինչպես որ տեղ մ'ըսած եմ⁶), մարդկութեան վառարաններեն մեկուն՝ վարժարանի մը մեջ, սև ճակատագիրը երկաթյա պսակով մը մեր գլուխները իրարու մոտեցուց, սեղմեց, ի մի խմորեց գաղափարները, և մեզ՝ մանուկ հանճարներս՝ դալկահար շանթերու փունջ մ'ըրավ. և¹¹ այդ սև ճակատագրիս պըլլված շաթերեն մին կը¹² մարի¹³ ահա¹⁴ բոլորովին, տխուր վերջալույս մը պատկերելով իր¹⁵ սիրելյաց սըրտին խոր:

Տխուր խոստովանութիւն:

Ես Վարդանի շարունակութիւնն եմ:

Ազնիւլ բարեկամ, ձմեռը քեզ կը գրեի թե կը մսիմ⁷)՝ արդ կը դողդոջեմ, բերնես միշտ¹⁶ արյուն կը հոսի, կը հյուծիմ, ճակտիս վրա կենաց շիկնոտ ժպիտը կը տժգունի: Անդու կերպով քնարս կը թոթվեմ անհուն «մնաք¹⁷ բարով»ի մը համար անոնց, որոնք իրենց¹⁸ ծալքերը ինձ չը բացին, այլ միայն դուրսեն ճաճանչեցին, նախ կն՛ջ... երեակայությանս տիրուհւոյն... երազի այն երփնեբանգ աստղին կամ ճաճանչոտ ծաղկին... ո՛չ, ավելի՛ն, շողերու և բույրերու թագուհւոյն...

Ա՛հ, ներա մեկ շողը երազ մը կը¹⁹ վառե, ներս մեկ բույրը սրտի մը մթին խորանը կը խնկարկե...: Մեռնի՛լ թարմ և երազկոտ... մեռնի՛լ առանց մարմարյա ճակտի վրա խորշոմ մը գծվելու²⁰, առանց շուրթեր համբուրով մը քորքորեցելու, առանց հոգին ժպիտով մը հրդեհելու²¹, մեռնիլ... տխուր է այդ, սակայն

Շատ կը ցավիմ որ սիտի կարենայիր անցյալները հոս գալ, բայց դարձյալ սե ճակատագիրը արյունոտ ձեռքը կարկառեց մեզ ու խառնակեց ամեն բան: Չ'եմ գիտեմ թե նորեն գալուդ համար միջոց պատրաստված է. եղբայրդ քանի մի²² օր է տեսած և հարցուցած չ'եմ⁸):

Ա՛հ, կուզեմ հետդ տեսակցիլ. դարձյալ ևս նույնն եմ, միայն թե քիչ մը գերեղմանի հակած և խոկմանցս դազաթնակետը հառած եմ: Կը հուսամ որ ալ քենե նամուսկ մի կ'ընդունիմ, կամ քիչ օրեն հոս կը տեսնվինք...:

Բարեկամդ
Պ. Դուրյան

1871 Հուլիս 6
Սկյուտար

Առ

Մեծ. <ապատիվ> Ա. էֆ. <ենտի> Լուսինյան.

Կ. Պուլիս

Ծղբա՛յր իմ,

Ներեցեք:

Իրավամբ դնե հռչակել կուզեի¹), այլ զգացումներս մար¹ և գրիչս տվար գտի նյութին վսեմության առջև... ա՛հ, միթե կարելի՞ է օվսաննա մը հեծկլտալ²): Այս օրերս դարձյալ մշտնջենավոր վերքս³) շունչ առավ կուրծիս² տակ, երկնքիս³ այդ սև աստղը. ձգե՛ սա «նոճյաց տղուն⁴» (իմ)⁵ օձիքը, սա «դաշնակաց բուն» որ վսեմությանց⁶ առջև երբեմն կ'ապշի, որուն սրտին անդունդը կ'ալեծփի և⁷ շուրթերը քար կը կտրին, որ միշտ իր վերքին կը նայի, ինչպես փառասերն իր աստղին... Ձգե՛ սա «մտերմաց դալկահարը»⁴)...

Հանցավոր եմ... այլ ո՛չ, վերքիս մոտեցի՛ր, եղբայր իմ, սա ահարկու անդունդին... սակայն սև ժայռը և երկնի⁸ աստղը⁹ կրնան հոն նայիլ լոկ:

Կու հուսամ որ մինչև այս տողերուն հասնելուդ ներեցիր և իմ¹⁰ չը կրցած հասկցուցածս¹¹ դու հասկցար անշուշտ, վասնզի սրտի մը խավերը կրնա թափանցել բանաստեղծի մը խոկմանդ սլաքը⁵). դեռ շատ կուզեի գրել, բայց թե՛ ես անհուն

եմ և թե՛ եղբայրս նամակը ուշ ձեռքս հասցուց⁶). բայց նա ալ
այսպես ընել ստիպված էր պարագայից բերմամբ:

Նամակիդ¹² կ'սպասեմ¹³:
Ի տեսութիւնս.

1871 Օգոստ. 13¹⁴

Եղբայրդ
Պ. Դուրյան

8

<Առ

Պ. Հ. Ճանֆէսճյան>

Մտերիմդ իմ,

Ահա՛ անհուն «մնաք բարով»ի առաջին թիւը կը վարենեմ:
Զքեզ տեսնել ուզեցի. ուզել՝ ինձ համար ծարավիլ է. դողդոջ
քայլերս կարգի դրի ձեր տունը գայու, վքեզ հարցուցի և հար-
ցունելուս՝ հետ՝ անմիջապես կոշիկներուդ տեղը նետեցի ակ-
նարկս. մայրդ և դատարկութիւնը տիտուր պատասխան մը
տվին ինձ.— Հոս չէ: — «Եղբայրս,— ըսի յուրովի,—
հոս չէ՛...»:

Գիտեմ, կենաց դառն ներդաշնակութիւնը շներեց գալ
տեսնել անգամ մը եղբայրդ¹), դալկահար² և դողդոջ հյուրը-
սակայն այս ճակատագրին սևությանը ի՛նչ պետք է ըսել, որ
իմ տկար քայլերս չի վարձատրեց և ստիպեց զիս հողդողդ

ոտնփոխներս ներդաշնակելով մեկնիլ տխուր ու ցաված:—
Ո՛ւր.— Փնտռել խորշ մը, ուր արտասովաց բոցանուտ շիթերը
կը քողարկվին մարդոց աչերեն:

Իմ վիճակս հուսահատական է, եղբայր իմ. սակայն ես
հանդարտ եմ և հարկավ քիչ մը տխուր. թոշնեցավ ամեն
մարդկային տենչ սրտիս մեջ, տենչ՝ աշխարհի այդ ոսկեզօ-
ծումը. ամեն հույսերս մոխիր դարձան, իբրև մեքենա կապ-
րիմ գրեթե, իմացական հրահրումս կորուսի, մտածումներս
կարճ են և մութ:

Սակայն մի՛ ցավիր, բարեկամ, սապես համոզվե, որ քու
եղբայրդ գերեզմանի տեղ Նոյան տապանը²⁾ կը մտնե աշ-
խարհի արյունահեղեղեն փրկվելու համար... ո՛չ, այս սև
մտածումը չը կշռեր երբեք ծանր՝ հոգվույս վրա, որչափ ար-
ցունք մը աշացս մեջ:

Ո՛հ, որչափ ինձ հաճոյական է քեզ առընթերակցելով³⁾
դալկահար վերջալուսի մը փողփողումովն քանի մը ժամեր
ծծել... սակայն դիտեմ, այս հիվանդությանս մեջ փոքր ինչ
նողկալի եմ... ինձ նայողին ճակտին վրա արգահատական
ծալքերու սլատկերումը կը տեսնեմ ես:

Սակայն դու, սրտահող բարեկամ, գիտեմ. որ միշտ զիս
ժպիտներուս, ցավերուս, առողջությանս և հիվանդությանս
մեջ առհասարակ⁴⁾ համահավասար⁵⁾, անհողղողդ⁶⁾, սիրով կը
սիրես, և երբ իմ վրա գուրգուրալով ներքինս կուզես խառ-
նել... Կուզես կմախքով լի հոգի մը խռովել... սոսկալի երա-
զոց անդունդ մը յզատորել, որ սիրտս է, ուր մահվան լու-
թյունը կը տիրե և այն լությունը լուծանող երկնից արձա-
գանքները կան միայն. դուն ալ հնչեցուր հոն քու քաղցր
բարբառդ, բարեկամ, գերեզմանի մը համար նոճիի մը ձայնը

բաւ է, և երբ այսուհետև տեսնվինք շատ չը պիտի խոսիմ, այլ լոկ ակնարկներով պիտի գոհանամ:

Երբեք մի՛ մտաբերեր որ ես հուսահատ եմ. բնա՛վ, բանաստեղծ մը մահվանն չը սոսկար. այն ատեն իրավունք ունեի ցավելու, երբ ամենքն աճմահ ըլլային, և ես միայն մահկանացու:

Այսպես համոզվե՛:

Ի քաղցր տեսութիւն

Պ. Դուրյան

1871 Սեպտ. 5

Սկյուտար

9

Առ

Մեծ. <ապատիվ> Ա. էֆ. <ենտի> Լուսինյան

Կ. Պոլիս

Եղբայր իմ,

Շնորհակալ եմ որ միշտ կը հիշեք զիս. «հուշը» «սեր»ի՛ քույրն է՛): Կը ցավիք անշուշտ որ ես փոխադարձաբար չ'եմ խոսիր: Ձեզ հիշեցուցած եմ արդեն, որ ես «վսեմ» ին առջև կը պապանծիմ²). պատասխանելու համար բաւական կը համարիմ երբ արտոսը մը աչքիս ետևը կ'այրի, և շունչ մը² շուրթերու մեջ³ կը բեկբեկի⁴, մանավանդ հիմա որ հոգվույս կենսաբույր ծաղիկը թռչնած է, և նորա տեղ վերք մը կը մխաներսս: Երկու տող բան չ'եմ կարող գրել, երևակայութեանս

մեջ ցուրտ մշուշ մը կա թանձրացած, վայր ընկան գլխուս
աստղերը, սև ամպերը ծանրացան⁵ հոն⁶:

Հիվանդությո՞ւն և ամբուժությո՞ւն, գերեզմանի այդ երկու
ստիկները կը ծծենմ. հուսահատությո՞ւն, գերեզմանի այդ սև
կաթը կը խմենմ... Ինձ համար շկա հույս, անդունդին մեջ շյու-
ղի մը պլլված եմ. իմ փրկությունս է աստղի մը պլլվիլ, եթե
սև ճակատագիրս ճերմակ բիծ մ'ունի...:

Ազնի՛վ Եղբայր, ո՞վ դրդեց Ձեզ⁷ այսչափ⁸ գորովիլ իմ
վրաս, ունկն դնել անպունդ⁹ հոտող¹⁰ անձի մը խոսից¹¹, և
զվարթ թիթեռնիկ գոլով¹², սիրել նոճիի մը շուքը... Ազնի՛վ
Եղբայր, թիթեռնիկով մը նոճի մը սգավորութենն չը դադրիր,
այլ դուցենորա ցուրտ շուքին ներգործության ներքև գողտր
թիթեռն մը թռչնի...:

Ա՛հ, այնչափ¹³ մթագնաց է երևակայությունս. ո՛հ, ո՛ր
եք կրակք իմ... մարեցա՛ք¹⁴... մարեցա՛ք¹⁵ և ա՛լ չի պիտի
վերալառիք¹⁶. այն¹⁷ Շունչն անցավ Ձեր վրայեն, որ աստղերը
վարող է մարել...: Դեռ կուզեմ գրել, բայց կը տեսնեք¹⁸ թե
այնչափ ուժաթափ են այս խոսքերը որքան գունաթափ է գա-
նոնք ներշնչող հոգին... Իմ մեն մի խոսքերս Դուք Ձեր վառ
երևակայությամբ մեկ մեկ գրքեր ըրեք և զիս պիտի լավ կար-
դաք այն ատեն, լավ պիտի սուզիք յ'իս:

Եղբա՛յր իմ, ներեցեք գրությանս աններդաշնակությանը.
Ի՛նչ ուղղություն կրնաս¹⁹ պահանջել ավրված դաշնակե կամ
նվագարանն մը²⁰:

Ի՛նչ գրելս չեմ գիտեր:

Կաղաչեմ, բավ համարեցեք ջախջախ²¹ քնարի մը այս-
չափ հեծեծանքը:

Քանի որ ժամանակնիդ ներե՛, կ'աղաչեմ, Ձեր սիրալիք

գրությունքը մի՛ վլանաք որոնք միշտ զիս պիտի հեղափոխեն²² ի վսեմն:

Դուք Երկրագունտներ²³ ինձ տալ խոստացած էիք³). Լիժի կարելի է զանոնք շնորհելու փութացիք, վասնզի առանց կարողալու բան մ'ունենալու՝ տունեն²⁴ դուրս չ'ելնելու ստիպված ըլլալովս²⁵ շատ կը նեղվիմ:

Ներա²⁶ հետ ի՞նչ ունեցաք⁴), մինչև հիմա, կ'աղաչեմ, տեղեկություն:

Տեսնվինք²⁷:

Եղբայրնիդ²⁸

Պ. Դուրյան

1871 Սեպտ. 629

10

<Առ

Պ. Ա. Լուսինյան>

Եղբայր իմ,

Ձեր սիրալիր տողերուն փոխարեն աստղերու հեղեղ մը կուտամ սրտես...

Օրհնյա՛լ ըլլաք, որ կուզեք² Ձեր վսեմ կրակովը բռնկել սա³ նոճյաց դալկահար որդեգիրը¹), որ միշտ իր սրտին մոխիրները կը գգվե. օրհնյա՛լ ըլլաք, որ կուզեք սրտես դուրս հեղեղել թանձրամած սուզը:

Պիտի կարգամ միշտ ձեր տողերը քաղցր արտասրներու փողփողումով⁴ և վեր պիտի առնեմ⁵ թաց բարձիս գամված դողդոջ գլուխս, կսկիծներուս⁶ մեջ վայրկյան մը հպարտ պիտի ըլլամ, կուրծիս⁷ հեքը վայրկյան մը պիտի դադրի՝ եղբոր մը վսեմ ոգին ծծելու և իր անմահ⁸ անունը սրտիս խորերը կու տալու:

Ա՛հ, խիստ վսեմ կը շարժիք, եղբայր իմ, և կը ներքե միշտ վեհանձնությամբ մը⁹ թաղված հոգվույս ցուրտ լոռությանը. սակայն ի՞նչ ընեմ. սառույցե¹⁰ գոտի մը սիրտս շղթայած է... ո՛հ¹¹, թող¹² Ձեր թրթռուն հոգին խոսի միշտ, թեպետև տժգույն ճակտիս վրա այնպես կերևի, որ ամեն բան կը մարի. սակայն կուրծիս¹³ տակ¹⁴ հեղաշրջումներ կեռա՛ն:

Խոսեցեք, եղբայր իմ. խոզին առջև չե՛ք թափեր Ձեր մարգարիտներն²), Ձեր խոսքերը սառույցե¹⁵ ճակտիս ետև¹⁶ արևներ են... միշտ¹⁷ խոսեցեք¹⁸:

¹⁹Կուզեի ներա պաշտպան հանդիսանալ, կուզեի այդ թեր—Հսկա Արամը ճզմել³), այլ ներեցեք, եղբայր իմ, գրիշս ձեռքիս մեջ կը դողա, ահա կը տեսնեք, տարտղնած վիճակի մեջ եմ: Եվ արդեն այսչափ⁴)... իմ խոսիլ հարկ չէ:

Գաճաճին գրածին արժանիք տալ է. միակ դուք ալ գրեք, բավական է, արդեն ես այնպես կը կարծեմ, որ այդ խժբծումը շատերուն քմծիծաղին արժանացած է. այսու ամենայնիվ կուզեմ գրիշ լզող գտնել այդ մասին մի քանի տող գրելու⁵). ասկե դատ, եթե բարեբախտաբար գրելու կարողություն մը ունենայի, ներա ատենախոսությունը շրկրնալ գտնելուս համար ետ պիտի կենայի, վասնդի Արամի այդ թերաքննության մեջ ներա⁶)... խոսվածքն... անանկ... նկատմամբ... մը խոսքերուն ականարկություններ կային, որոնք կրնային Արամին անտե-

դուժյուններ ընելովն... խծբծել: Շատ կաղաչեմ, որ այս մասին ներողամիտ լինիք, եղբայր իմ: Ներա համակրանաց նամակը կարդացի. շիտակը սքանչացա այն վսեմ զգացումներուն արտահայտութիւններն տեսնելով, որոնք կուսական բերանն մը կելնեն և մեծերու հիշատակարանը կընկնին:

Այսպիսի վսեմ նյութերու առջև լռելը մեծ բան է ինձ համար. վսեմ է ինձ համար լոկ դողդոջել:

Ա՛հ, այսպես միշտ իմ վրա գուրգուրալով, կուզե՞ք որ միշտ շնորհակալ ըլլամ. ի՞նչ ըրի Ձեզի, շեմ գիտեմ, եղբայր իմ: Ա՛հ, գիտեմ, դալկահար դողդոջ ըլլալուս համար զիս սիրեցիք... բանաստեղծական մը ըլլալուս համար բանաստեղծեմ մը գրավովեցա՞, գիտե՞մ...

Եթե ճակտիս վրա վարդ ունենայի՝ կիները զիս պիտի սիրեն. ա՛հ, ավելի լա՛վ է, որ դալուկն ունիմ²⁰, և բանաստեղծները զիս կը²¹ սիրեն:

Չորեքշաբթի օր⁷) Ձեզ սպասեցի. տխուր վերջալույս մ'ունեցա:

Տեսնվիմք, եղբայր իմ, գոնե Ձեզ հետ քանի մը զվարթ ժամեր ծծեմ:

Կը հուսամ²², որ քիչ²³ տաղտկալի կըլլամ Ձեզ տօգույն շրթանցս թափթփուկներով:

Երեկվընե ի վեր վիճակս²⁴ վատթարացաւ. կաղաչեմ, մի՛ տրամիք:

Ես տրտում ժամերուս աստղերուն կը հառիմ. Աստուծո
այդ կրակներն զիս փոքր ինչ կսփոփեն:

Մնաք բարո՛վ:

Եղբայրդ
Պ. Գուրյան

1871 Սեպտ. 9

Սկյուտար

11

<Առ

Պ. Ա. Լուսինյան>

Եղբայր իմ,

Ինչ մեկ քանի թատերախաղերս կուզեք. բայց ես միայն
նոցա ծրագիրներն ունիմ¹), որոնք անընթեռնելի ըլլալի զատ՝
թղթի կտորվանքներու վրա գրված են: Մաքուր ըլլալով «Վարդ
և Շուշան» անուն սիրային թատրերգութեան²) խաղատետրն
ունիմ քովս: Ասի տասն և հինգ տարեկան՝ հասակի սիրո և
հանճարի հանդուգն փթթում մ'է. եթե կը հաճիք, սա Ձեզի
կրնամ յուղարկել². Իսկ մյուս Ձեր մասնավոր խնդրվածներուն
գալով, անոնցմե մեկ երկուքին <այսինքն՝ Արտաշեսին և Ան-
կումն Արշակունյացին տետրերը>³ կը խոստանամ³), որ
Վարդուկյանը տեսնելով՝ քիչ մը միջոցի համար ուզեմ⁴). Եթե
տալու հաճի, ուրախութեամբ Ձեզ կը յուղարկեմ. բայց նոքա
ո՛ր երթալնին շփտցող փոթորիկներ են:

Եղբայր իմ, ի՞նչ պիտի ընենք զանոնք⁵), Ձեր գրութեան
ձեր զիս հետաքրքրութեան մեջ ձգեց. պետք է որ առանց ատեն

անցնելու հետաքրքրութիւնս հագեցնեք. ինձ մի քանի զվար-
ճալի վայրկյաններ պիտի հավելուք. ուրեմն, պիտի աշխատիմ
զանոնք Ձեզ յուղարկելու ջանալ:

Դուք բան մը ինձ կիմացնեք⁶). ես կը գուշակեի զայն-
արդեն. բայց դարձյալ լսած ատենս սիրուն հրճվւնք⁴ մը
ունեցա. ըսի ինքնին. «Արդոք պիտի վայելե՞մ այն օրն, ուր
նոքա գլուխ գլխի պիտի տան...⁷» մեծ պիտի ըլլա ինձ հա-
մար այն օրն... հարկ է որ հարուցած խոշոր անիվներուն
յուղ քսվի:

(Արդոք պիտի ապրի՞մ մինչև այն ժամանակ):

Այն շնորհալի հանդեսին մեջ ես ալ շշուկ մը պիտի⁵ ունե-
նամ, շեմ ուզեր զայս երազներու կարգն անցել⁷. մոտեցո՞ւր
այդ օրն⁸), եղբայր իմ, կուզեմ Ձեր ըմպած երջանկության-
բաժակեն կաթիլ մը գողնալ, որ կարող է սրտիս անհուն բա-
ժակը լնուլ: Ձեր ադամանդյա պսակին հետ իմ սիրտն ալ
պիտի ճաճանչե: Թո՞ղ գա այդ փառազօծ օրն, եղբայր իմ:

Դարձյալ սիրտս ցամքած է, չկարեմ զգացումներս ուզա-
ծիս պես դուրս տալ... ո՞հ, ցամա՞ք սիրտ, ե՞րբ պիտի թար-
մանաս, ե՞րբ առաջվան պես խնդումներ պիտի անձրևես:

Չտեսուի՞յուննիս երկարեցա՛վ, եղբայր իմ, Սկյուտարը մի՞
մոռնար⁹):

Նամակներուդ տողերը քիչ մը ստվարացուր, միշտ գրե՛,
եղբայր իմ, եթե ես⁸ զվարթ և առողջ ըլլայի, միշտ պի-
տի գրեի:

Սիրո անհունութիւն մը կը մաղթեմ...

Եղբայրդ
Պ. Դուրյան

< Առ «Օրագիր» >

Մ. [Եծապատիվ] խմբագիր.

Անցյալ ձմեռ Մայրաքաղաքիս Թուրքո-Հայկական թատերախմբին հուշարար Տիգրան Գալեմճյան անուն անձը իմ հեղինակությունքն եղող երկու Ազգային թատերախաղ ընդունեց ինն, որոց անվանքն են Սեվ ՀՈՂԵՐ ԵՎ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ԱՆԻՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՆ, սա պայմանավ, որ նոցա արժեզինքը անպատճառ պիտի վճարեր Պ. Տիգրան՝ հիշյալ թատերախաղաց ներկայացմանց միջոցին: Վերոհիշյալ թատերախաղները անցյալ ձմեռի վերջերը ներկայացվեցան¹) և, ըստ սովորության, արգո Հայ հասարակության կողմեն ջերմ ընդունելություն գտին՝ ըստ վկայության իմ հանդիսատես քարեկամաց, վասնզի դժբախտաբար հիվանդության պատճառավ, ես ինքնին չը կրցի վերոհիշյալ ներկայացմանց ներկա գտնվիլ և ծափահար հասարակության իմ անկեղծ շնորհալիքն արտահայտել: Պ. Տիգրան մինչև հիմա թատերախաղներս գրեթե անվճար թողելիզ գատ— վասնզի պահանջես դուզնաքյա մաս մ'եմ միայն դեռ ընդունած— խաղատետրերս¹ ալ իր ճանկը

¹ Վերոհիշյալ երկու թատերախաղներն գատ ՏԻԳՐԱՆ Բ. անուն երեք երեկույթի բաժնված և միայն երկու երկույթը շարադրված ազգ. [ային] թատերախաղ մ'ալ ունիմ Պ. Տիգրանի ճանկը նույնպես անցած²), որուն անձինքը ու տեսարաններն կը տեսնվին Պ. Ռ. Սետեֆճյանի հեղինակած ՀԻՄՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ անուն խաղին մեջ³), որուն ներկայացմանը ներկա չեմ կրցած գտնվիլ: Ասկից գատ ուրվագիրը և ամբողջ շարադրությունն իմս ըլլալով ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՀՌՈՎՄԱ անուն խաղ մ'ալ ունիմ Պ. Տիգրանի քով:

անցուցած՝ թե զանոնք ինձ վերադարձնելու և թե նոցա արժեզինքը ամբողջ ինձ հանձնելու մասին նենգամիտ դժկամութիւն մը կը հայտնե:

Ուստի, այս օրեան ներկայիվս կը հայտարարեմ թե առանց հիշյալ թատերախաղուց արժեզինքը ամբողջապես ինձ վճարելու՝ նոցա գալիք բոլոր ներկայացմանց իրավունքը իրավանց զորությամբ ինձ կը վերապահեմ իբրև հեղինակ, և եթե Պ. Տիգրան անիրավաբար իմ այս հայտարարութեան ականջ խցելու հանդգնի կամ վերոհիշյալ թատերախաղերը ինձ չը վերադարձնե և կամ նոցա արժեզինքը ինձ չը վճարե՝ պատասխանատու կը հրատարակեմ զինքը Դատաստանական բարձրագույն ատյանի առջև⁴):

Պ. ԴՈՒՐՅԱՆ

30 Սեպտ. 1871

Սկյուտար

13 ✓

Առ

Պ. Տ. Ադամյան

Բարեկամ.

Զեմ գիտեր թե ի՛նչ գրեմ. ո՛հ՛, դժվար է խոսիլ անհունի մը համար, անհունը շուրթեր չը կրնար ունենալ, անհունն ինքն իր մեջ կը թաղվի, ինքն իր մեջ կը փողփողե:

Ես ալ առաջինը չ՛եմ (թող այս խոսքը քեզ չը տխրեցնե),

իմ հոգին² հառած է դալկահար և անհուն աշխարհի մը, զոր երկինք³ կը կոչեն... Ա՛հ, բարեկամ, կուզեմ զգալ թե երկին մը կա, վասնզի դժվար է ինձ հավատալ թե աշխարհ մը կա ինձ համար... և ի՛նչ աշխարհ... Ես ըսած եմ անգամ մը, թե աշխարհ Աստուծո՛ւ այն գերմարդկային⁴ տիտանին⁵ ձանձրույթի⁶ մեկ հառաչն է¹), հառաչ մը, որ աշխարհաստեղծութենե՛ր տուաջ⁸ գահոսային⁹ խառնակության մը վրա հառաջ եկավ... Աղետալի՛¹⁰ փոթորիկ Աստուծո մը սրտին, անհուն անապատի՛ մը:

Դու կըսես վերջին նամակիդ մեջ. «Իբր թե յաստիս միայնակ, «ո՛ւր ես» կը գոչես ինձ. այդ հարցումդ զիս տխրեցուց, միթե սրտիդ ծալուցը մեջ անգամ չը գտա՞ր զիս»:

Ա՛հ, միթե հիշատակ կը բավե՞ ամենասիրելվո մը կրակոտ հիշատակը միթե կը բավե՞ անոր համար, որ «մնաս բարով»⁷ տխուր թեև մ'է դարձած, որ «դալկությանց բուրաստանին» կ'որդեգրի, հանցա՞նք է միթե բարեկամ մը կարոտիլ, անոր հոգվույն ծարավին ըլլալ, անոր խոսիցն ու ժպիտներուն անոթին ըլլալ... ո՛չ, չը բավեր ինձ հիշատակդ, դու ինքնին միայն¹¹ չը բավես ինձ. ինչպես որ ես Վարդանի՛ դու ալ իմ ցուրտ ու անթարթ աչերը¹² պիտի փակես²)... Մի՛ տխրիր բարեկամ... ես տխուր-զվարթ մ'եմ. ո՛չ, դողդոջ երջանիկ մ'եմ... մահու¹³ դալուկը իմ ճակտին վրա կը պլպլա իբրև մեղամաղձոտ ժպիտ մը, դալկահար¹⁴ ժպիտ¹⁵ մը¹⁶ որ դիս երկընքի հետ կը միավորե:

Երբ լսեցի որ¹⁷ գարնան հոս պիտի գաս³), սիրտս անհուն ուրախությամբ մը զեղվեցավ... Ինչո՞ւ արդյոք ինձի դրկած նամակովդ այս լուրը չը տվիր:

Գիտեմ որ սիրելի է քեզ կարդալ և հեղեղել ամենասիրել-

վո մը հիշատակը... ուստի վարդանի գերեզմանին¹⁸ ուղղյալ¹⁹ սա²⁰ ներփակյալ²¹ տաղերգությունը²² զրկեցի⁴):

Սա²³ խոսքը²⁴ թե՛ «Մեր անիծից ահաւորությունը, օր մը պիտի սարսուռի²⁵ հարկավ այն գերագույն անգութը, զոր մենք²⁶ Աստված կը կոչենք» զքեզ ահաւոր բանաստեղծ մը նկարեց իմ առջև...:

Մնաս բարյավ, ի տեսությո՞ւն:

Պ. Դուրյան

1871 Հոկտ. 14

Սկյուտար

14

Առ

Պ. Տ. Ադամյան

Եղբա՛յր¹ իմ.

Այն վերջին սիրալիր² նամակիդ փոխարեն, յորում ճշմարիտ — բարեկամական գորով մը կը հեծկլտար, ուզեցի սրտիս անդունդներեն աստղերու հուլյեր³ դուրս հեղեղել, այլ ավա՛ղ, այն անդունդները բոլորովին ցամքած գտի:

Շնորհակալ եմ որ զիս կը մխիթարես, սակայն ես արդեն ըսած եմ, թե բնավ մահվանե՛ս վախ չ'ունիմ¹), վասնզի տքնեցս ինքզինքս զզվեցնել աշխարհեն. եթե ցավ մ'ունիմ, այն է թե զքեզ վերջին անգամ չը պիտի կարենամ տեսնել, վասնզի յանկողնի եմ, ա՛լ դուրս ելնելու կարողություն չը մնաց վրաս. սանդուղեն վար իջնելու համար⁴ հարկ է որ հենարանին կըրթ-

նիմ: Ալ բոլորովին հայտնի եղև⁵ (թեպետև⁶ առաջին օրեն գիտեի և միշտ, մինչև անգամ բան մը շունեցած ատենս, անդրդվելի պահեցի այն գաղափարը⁷, թե ես «երկնքի հիվանդությունն» ունիմ:

Ափսո՛ս, շատ հեռու կ'երևի ինձ փթթինազարդ Գարունը, ձմրան ձյուները իմ սիրած վայրերուս⁸ հետ (ուր միատեղ շատ անգամ իրարու սիրտ կը ծծեինք) զիս ալ պատանաւորեի⁹ կ'սպառնան. եթե քու գալուստդ գարնան մնա¹⁰(²), շատ կը սոսկամ որ ո՛չ մտերմական ժպիտդ և¹¹ հետևաբար ո՛չ ալ գարնան փթթումը պիտի տեսնեմ:

Ալ բոլորովին մարմնույս հետ միտքս ալ տկարացավ, մարեցան խանդերս... ո՛չ, չեմ կրնար գրել, ցամաք են բոլոր գրածներս... կուզեի շատ բաներ գրել իմ այս նվաղյալ ժամերուն... ափսո՛ս, կուզեի իբրև հավերժական հիշատակ երկտող տաղ մը գրել քեզ³), սակայն իմ մեկ լավ և փայլուն ժամուս կուզեմ գրել, որպեսզի¹² ցամաք չը լինի... իսկ եթե դրժբախտաբար չը կարենամ գրել, գրված համարե գայն իմ գերեզմանի¹³ հողերուն վրա:

Կ'աղաչեմ, եթե ժամանակ ունենաս, նամակներդ ստեւս և երկար ըրե՛, ո՛րչափ սիրելի են ինձ անոնք. մնաս բարյա՛վ... (չըլլա՛ հավերժական)... Ի տեսությո՛ւն:

Պ. Դուրյան

1871 Նոյեմ. 23

Սկյուտար

<Առ

Պ. Ա. Լուսինյան>

Եղբայր իմ.

Ներեցեք.

ուշկեկ պատասխանելու: Թեև դարձյալ մատներս գրչիս վրա կ'դողդողեն. սիրտս զգածվելու տեղ կը'մարի. և ես նայելու տեղ կ'փղձկիմ. բայց կուզեմ օրհասականի մը դյուցապանական ճիգ մ'ընել և երկու տող ալ գրել.

Եղբայր իմ Ձեր վերջին նամակը զիս մխիթարել կուզե. և կ'ըսեք. «Մեկդի ձգե 'սա հիվանդ եմ'ի գաղափարը մտքեդ և բոլորովին կ'բուժիս»: Ա՛հ, Եղբայր իմ, կուրծիս տակ հրաբուխ բռնկած է. կրակներ կեռան ու կ'այրեն զիս. Աս² կրակը երկընկեց³ կրակին նման է, որ չ'մարիր և չ'պիտի մարի, մինչև⁴ չ'սպառե ամեն ինչ.

Այո՛, ալ հիմա հավատացի⁵ թե կը'ծյուրի՛մ եղեր. գիտեմ թե ալ շատ չ'ապրիմ⁶ պիտի⁷. Ա՛հ, եղբայր իմ, ահա երիտասարդ մը՝ որ եկած է աշխարհ միայն իր մահն ու իր⁸ թշվառությունը տեսնելու և զգալու համար.

չ'գիտեմ ինչ գրեմ. կ'զգամ շատ բայց գրելու դժվարություն մը կա. կարծես թե գերեզմանին մեջեն կը խոսիմ: Այ մարը մտնելու վրա եղող ճառագայթ մ'եմ. մարո՛ւմ⁹ մ'եմ¹⁰. քայքայում մ'եմ. գիտեմ այս տողերը վերջինն են և վերջինը¹¹ պիտի լինին. սակայն սա տարտղնած¹² ուշս¹³ ինչպես վրա բերեմ ու խոսիմ. բանաստեղծ չեմ, բայց բանաստեղծությունը

կը՛սիրեմ. ես որ աշխարհի մեջ¹⁴ միայն երգերը շատ սիրեցի, կուզեմ որ իմ վերջին շունչս ալ երգ մ՛ըլլա:

Կարափն իր վերջի շունչին¹⁵ իր¹⁶ էն ներդաշնակավոր ձիւը կ'արտասանե կ'ըսեն. թող ես ալ կարափին պես անցած ըլլամ աշխարհին¹⁷:

Ձեր գրեր վերջին ատեններս ինձ մեծ սփոփանք և ախորժ նվիրեցին¹⁸. հազիվ տերևոց և ստվերաց տակ, հազիվ Յուսկյուտարա¹⁹ գեղեցիկ և հովասուն դաշտաց և մարգաց մեջ մեկ քանի զվարթ պտույտներ ըրինք և ահա կրկին անկա, ա՛լ անշուշտ չ'կանգնելու հուսահատությամբ: Բայց դուք գրեցեք, Եղբայր իմ. Ձեր խոսքեր սպունգնե՛ր են, վիշտերս կը՛ծծեն. Այո՛ գիտեմ դուք բնավ տխրություն չ'եք սիրեր. և շատ անգամ տխրության Վաղափարը ծնող կամ զարթուցանող առարկաներ չ'տեսնելու համար առանձին տեղերե²⁰ կերթաք. բայց իմ տխրությունս կ'սիրեք, զի բանաստեղծական է. Ա՛հ. քանի՛ քաղցր եկավ²¹ ինձ սա խոսքդ²²՝ «Աւելի²³ կ'սիրեմ²⁴ Ձեր ճակտի մելամախճոտ²⁵ դալուկը դիտել²⁶՝ քան թե գեղեցիկի մը այտին վարդերը²⁷ կամ ճակտին ադամանդը²⁸»: Աշխարհի մեջ ապրեցա՛²⁹ և Ձեզի պես միայն ձայն մ'ը ըլլալ սիրեցի. Ձեզի պես երգել սիրեցի: Ով որ երգ չունի կամ երգել չ'գիտեր, զգալու ներդաշնակության³⁰, գեղեցկին ու սիրունին իտեականը շոշափելու քաղցրությունը չ'ունի:

Մարդուն նշանաբանը երգն է. էն Առաջին ձայնը երգն է. բնությունն ամբողջ երգ մ'է. Այո՛ Եղբայր իմ խիստ ընտիր խոսեր էիք օր մ'ինձ թե «Երգը ոչ այլ ինչ է բայց եթե ձայներու³¹ ներդաշնակավոր³² փունջ մը.»: Այո՛, ես ալ կ'ըսեմ.

«Երիտասարդ ըլլալ և³³ երգե՛լ

Մեր լինիլ³⁴ և աղոթե՛լ»¹)

Ա՛յս է կյանքը:

Ա՛հ, գեղեցիկ կյանք մ'ալ կա. սերն է այդ. «Երգե՛լ, աղոթե՛լ ու սիրե՛լ». Ա՛հ, ի՛նչ բանաստեղծական կյանք, ի՛նչ կատարյալ կյանք. դուք կ'երգե՛ք, կ'սիրե՛ք ու կ'աղոթե՛ք:

Աշխարհի մեջ հոգիներու էն³⁵ մեծ³⁶ ախորժը սիրելն է. դուք զ'այս՝ քան զամեն մարդիկ աշխարհի՝ ընտիր և վսեմ կերպով գիտեք. դուք կ'սիրեք և կ'սիրվիք. կ'սիրեք անդր քան զգերեզման³⁷. կը՛սիրվիք³⁸ անդր քան զհավիտյան: Եղբայր իմ քանիտ՛ն սիրելի՛ և տենչալի էր ինձ տեսնել Ձեր սիրո նշանաւոր³⁹ Հանդեսը²). Եթե դայն Երկրի վրա վայելելու անհուն քաղցրությունը շունենամ, Աստեղաց և Հրեշտակաց Հայրենիքեն⁴⁰ զեփյուռի շնչով նորա մեջ հծծելու երազը ու տենչը (ի՛նչ հուսահատ⁴¹ կը խոսիմ. ներեցեք եղբայր⁴², ամեն ինչ պիտի խոստովանիմ Ձեզ թեև⁴³ խառնաշփոթ.) ունենամ պիտի: Ա՛հ, քեզ հետ ես ալ կ'աղաչեմ և կ'փափաքիմ⁴⁴ Նախախնամության⁴⁵ որ⁴⁶ պահ մը հրաման տա որ մահն ու կյանքը զինդու ընեն և⁴⁷ ես⁴⁸ ալ⁴⁹ տեսնեի՛⁵⁰ Տապանի⁵¹ Թռչնիկին⁵² և⁵³ գիշերվան⁵⁴ Արևին⁵⁵ Աջակցումն⁵⁶... ինչ սրտահարույց⁵⁷ բոպպենե՛ր...

Այդ աջակցումը շանթի ու ծաղկի աջակցում մ'է.

Արևն ու տիեզերք զույգ մը նոր երջանիկ պիտի տեսնեն. Ձեր ճակատագիրը երջանկություն է:

Մարդիկ միայն Ձեր վրա նախանձելու չափ զմայլին պիտի:

Դուք ամբիժ եք և զուտ. ով որ ի Ձեզ սև ու պղտոր կրտեսնե ինքն է սևն ու պղտորը. Նուպարա և Փանոսյանի Մանուց ապագա ուխտն իր առաջին շունչն ու ճաճանչը ի Ձինչ

ընդունի պիտի³). Շահնազարս շափ պարտիս սիրել զՓանոս-
յան⁴). օր մ'ինձ ըսած էիր թեև թե՛ «Փանոսյան մեկ կողմով
ինձ սկզբունք մ'է, ճշմարտություն մ'է, նա մեծ գործող մ'է»:
Հոգ չէ նա զիս ալ նախատեսց⁵). հոգ չէ դուք էիք ինձ խրատողը
թե Փանոսյան երբ կիրքի ևլնն աչքին բիբն ալ լինի, Աստվածն
անգամ իր առջև գա, կը՛կոխե կանցնի կամ անդի՛ն գնա՛
կըսե. և այս ալ ամեն մարդու բնական է: ՊԱՌԱԿՏՈՒՄԻ⁶),
ՆՈՐԱՅՐԻ և ԱՐՄԵՆԱԿԻ վրեժն⁷) անշուշտ պիտի մոռնա⁵⁸ զի
գերեզմանեն անդին, բարկութենն վերջը⁵⁹ ամեն ինչ ներողու-
թյուն է: Ներենք ու ներվինք, Եղբա՛յր, սոքա օրհասականի մը
վերջին մրմունջներն են. ամեն ինչ անկեղծությամբ պիտի
ըսեմ, զի ալ աշխարհն⁶⁰ և խղճես կախում և նկատում չունիմ:

Եղբայր ահա ես կ'իջնեմ կամ⁶¹ մոտ⁶² եմ⁶³ իջնելու⁶⁴ այն
սև հատակ անդունդին մեջ՝ որո անունը գերեզման կ'ըսեն.
արդյոք ինչ պիտի ըսեն ինձ գերեզմանեն անդին (Անշուշտ⁶⁵
ահա թշվառ երիտասարդ մը որ աշխարհ հկալ և միայն իր
մեռնիլն զգաց ու մեռաւ!.)

Մեկ քանի պատառ թուխթերու⁶⁶ վրա արցունքոտ տողեր
գրեր հմ⁶⁸). անշուշտ բարեկամքս զանոնք պիտի պատվեն և
անոնց Արև տեսցնեն պիտի⁶⁷: Արդյոք Զարդարյանի⁶⁸ հետ
խոսեցար վերջի հեղինակած գործույս տպագրության հա-
մար⁹): Ուշս տարտղնած⁶⁹ է եղբայր իմ:

Մահվան սպանդ մ'են. կ'երթամ առաջի կտրչիմ¹⁰). կը՛-
հավատամ Աստուծո, կը՛հավատամ այն հանդերձյալ ապառ-
նիին. ո՛վ որ կ'հավատա երջանիկն. Աշխարհի մեջ միայն
անհավատն ապերջանիկ, հուսահատ և թշվառ է: Թերևս բա-
րեկամք կամ ընթերցողք զիս միստիզական կամ այլաբանա-

կան գտնան⁷⁰ տողերուս մեջ. Արդէն ես ալ այլաբանություն մ'եմ, խորհուրդ մ'եմ⁷¹. էությունս է, առումս⁷² այն⁷³ է⁷⁴:

Եղբայր իմ ինչու չ'ես գար. երբ մահճիս քով բարեկամներս կը տեսնեմ, կարծես հուսոս և կենաց հրէշտակներ կ'տեսնեմ:

Գիտեմ քիչ ատենեն պիտի մեռնիմ. արցունքի տեղ դագաղիս վրա երկու խոսք¹¹). հառաչանքի տեղ երկու շուն; աղոթք հոգվույս համար. և վշտի տեղ երկու փունջ ծաղիկ գերեզմանիս վրա. ես ալ մեռած չըլլամ պիտի, միշտ դալար ու կենդանի մնամ պիտի: Մի'տրտմիք կ'աղաչեմ սույն հուսահատ և օրհասական տողերուս:

Ա՛լ ույժ⁷⁵ չմնաց մատներուս վրա. կարծես թե բոլորովին ալ թալկացում⁷⁵ մ'եմ:

Ձեռքդ կը սեղմեմ գորովանոք և⁷⁷ ներա իմ հարգանաց հուսկ ողջույնս կուղղեմ¹²). Ժի՛ք և ծաղկի՛ք.

Ափսո՛ս. Այո՛, Ա՛հ մ'էր⁷⁸ սկիզբս, վա՛խ մ'եղավ⁷⁹ վախճանս⁸⁰.

Երջանիկ եք և երջանիկ պիտի ըլլաք և երբ երկինքն ալ երթամ Աստուծո և հրեշտակաց առջև Ձեր երջանկությունը պիտի խնդրեմ. վայելեցե՛ք... Մնա՛ք բարյա՛վ

Ա՛հ⁸¹. կրկին կ'ողջունեմ զՁեզ⁸² երկուքդ⁸³

Եղբայրդ⁸⁴

Պ. Դուրյան

<1871 Դեկտ. 10
Սկյուտար>

< ԴԱՄԲԱՆԱԿԱՆ >

< 1 8 7 1 >

< ԴԱՄԲԱՆԱԿԱՆ >

Մեծարգո՛ հանդիսականք.

Կ'աղաչեմ, կեցիք² քիչ մ'ալ, դեռ մի զատվիք այն սգալի՛ր դագաղեն, որուն տժգույն ճամփորդը հանդարտությամբ լսեյ իր բարեկամաց հառաչանքը: Լսեցեք և դուք ուրեմն իր կենաց վսեմ արձագանքը, զոր ինքը բարեկամի մը անկեղծ սիրտը փոխադրեց. լսեցեք իր մեծ հիշատակը հռչակող մտերմի մը տկար³ ձայնը, որ կը հանդգնի թնդացնել⁴ գերեզմանի մը: ահարկու կամարը:

Մեռավ մեր սխրալի⁵ բարեկամը, Վարդան Լուսֆյան. մեռավ երկրի վրա, գերեզմանաց անշունչ մարմարիոնեն ավելի, որ կը քրտնի, մեռավ այն ծաղկեն ավելի, որ սուրվե տարի կը վերածնի. մեռավ նա, ցամքեցավ քսաներորդ գարնանը մեջ: Բայց հիմա՞ լանք: Մենք մեծ սխալ մը կը գործենք⁶, զոր միշտ պիտի կրկնեմ. ծնող մարդուն վրա լալու տեղ մեռնող մարդուն վրա կուլանք⁷, մինչդեռ նա վշտալի⁸ անդունդի⁹ մեջ կը ծնի և երանության կատարը կը մեռնի:

Չըսենք թե տիեզերք Աստուծո մը ծաղրն է. երբեք. տիեզերք հոգիներու բովն է¹⁰:

Վարդան Լուսֆյան անոնցմե էր, որոնք միշտ իրենց կե-

նաց¹¹ մեջ երկնից¹² բուրումը կղզան. այն երջանիկներեն էր, որոնք մաքուր և կարճ կյանք մը կը շնչեն:

Այս զգածյալ բազմության մեջ շատ քիչեր կան, որ անոր սիրտը և հանճարը կը ճանչեն:

Հոս միայն մեկ ողբալիք կետ մ'ունինք¹³. Վարդան գաղափարի հեղափոխական¹⁴ մ'ըլլալու տրամադրյալ էր, երբ¹⁵ լուսո շենքը¹⁶ ձեռքն առավ, երբ ձեռքը թարմ և հանճարեղ ճակտին տարավ, մահը պաղ քրտամբ¹⁷ զայն ողողեց: Ահա այս է ցավալին:

Սակայն կ'ուզե՞ք որ այժմ իր հոգին չը խռովի. իր կրակն¹⁸ ու հիշատակը¹⁹ Ձեզ կը թողու, դուք որ իր բարեկամներն եք, հառաջ տարեք իր սկսած գործը եթե զինքը կը սիրեք:

Սակայն²⁰ այս սգալի հանդիսին մեջ բան մը զիս կը վարմացնե. ցավելով կը տեսնեմ որ մեռելաթաղներ բրիչ ի՞նչ ձեռին²¹ անհամբեր կսպասեն որ սիրելվույն²² սև փոսը վայրկյան մ'առաջ գոցեն. անոնք կը կարծեն որ²³ այն մարդոցմեն²⁴ մեկը կը թաղեն, որոնց գերեզմանը անդունդ մ'է, որոնք իրենց հիշատակին վրա կը մեռնին: Ըսեք իրենց, դուք որ Վարդանը կը ճանչեք, ըսեք որ ասի²⁵ այն մարդոցմեն չէ, ասի լուսո զինվոր մ'է և չը²⁶ թաղվիր որչափ որ²⁷ ցուրտ հող թափեն իր դիակին վրա. ասի²⁸ տասնևիններորդ դարու ազգի²⁹ մը³⁰ և լուսո ճառագայթներեն մին է:

Միթե կը թաղվի՞ ճառագայթը:

Մանավանդ ինչո՞ւ այս գերեզմանը, մինչդեռ իր բարեկամաց ջերմ սրտերը բաց են զինքը հյուրընկալելու.

Գոցվե, դու սև գիրեզման,
Վարդան մերն է հավիտյան:

Պ. Դուրյան

ՀԱՎԵԿԱԾ



<ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ>

Շատեր այն Ձոնին ոգիին ու լեզվին վրա հետաքրքրություն ընելով մեզ կը հարցնեն, թե ո՞վ է այս պ. Պ. Դուրյան. ուստի համառոտիվ ճանչցնենք ազգին:

Պ. Պ. Դուրյան Սկյուտարցի 16—18 տարեկան երիտասարդ մ'է¹), նախկին աշակերտ Սկյուտար Ենի մահալլեի վարժարանին²). 3—4 տարի առաջ վարժարանեն ելած³), առաջին անգամ միայն սարաֆի մը քով⁴) 9 ամսո շափ գրագրության պարապած, իսկ անկից ի վեր իր տունը թատերական ողբերգություններ հեղինակելով կզբաղի, որոնցմե ավարտած ունի Վարդ և Շուշան, Սև Հոդեր, Արտաշես Աշխաբհակալ և Անկումն Արշակունի Հարստության անուն ողբերգությունները և մտերս ուրիշ մ'ալ կը հեղինակե⁵). առաջինը միայն ներկայացված է անցյալ տարի Կեսիկ Բաշայի թատրոնը⁶), իսկ մյուսները դեռ իր քովն են:

Հայրը օրական հացը ճարող, բայց պատվավոր երկաթագործ մ'է⁷):

Եղբայրը⁸) երբեմն Մանգումեի և հիմա Մենմուայի⁹) խմբագիրներեն Հարություն էֆենտին է:

Այս պարագաները կը նշանակենք անոր համար, որ ոգիտե քանի քանի անկյուն զանազան տաղանդներ քաջալերու-

Թյան պակսութենեն անգործ ու վհատյալ կը կենան, միանգամայն իրենց աղքատ ծնողացը բեռ ըլլալու զգացումով կը տանջվին:

Այս կարգին է նաև պ. Պ. Դուրյան, բայց կը հուսանք, թիզանի տնական անկյունեն հանելով, հրապարակի ծառայության մտցնելու կարող ազգայինք իրենց ձեռնավությունը և քաջալերությունը չեն զլանար¹⁰): Եթե կը հավատանք, թե ազգային վերակենդանությունը միտքերու վերակենդանությամբ պիտի գոյանա, ուրեմն միտքեր վերակենդանացնելու մասին չը դանդաղինք:

<ՊԱՏԱՌԻԿՆԵՐ>


1. ՊԻՏԻ ՄԵՌՆԻՄ ԵՍ

Ինչո՞ւ մոնչեք, նոճիք սևագես,
Պիտի մե՞ռնիմ ես.
Սիրելիքս բոլոր խույս տվին քովես,
Պիտի մե՞ռնիմ ես.
Տխուր գերեզման, ո՞րչափ ինձ մոտ ես,
Պիտի մե՞ռնիմ ես:

2. * * *

Ես մեռնիմ նե, մի՛ գար, մի՛ լար իմ տապան,
Հողը, լեռը, սարը, ձորը զիս կողբան:

ՇՆՈՒՄԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՏԹ**— *Տաղք և թատերգությունք Պետրոսի Դուրյան, Նրատարակյալ ջան-
յոք ընթերցասիրած ընկերության Սկյուտարու, Կ. Պոլիս, 1872:*
- ՏԹՆԴ**— *Տաղք և թատերգությունք, նամականի, դամբանական, տապանա-
գիր, հավաքեց Բարսեղ Ե. Էքսերճյան, Կ. Պոլիս, 1893:*
- ՔԱ**— *Մինաս Չերազ, Poètes Arméniens («Հայ բանաստեղծներ»), Ժո-
ղովածու, Փարիզ, 1913:*
- Տ--** *Տաղք, փորձ մը բնագրային վերականգնումի, Նրատարակեց Արա
Գալայճյան, [Երուսաղեմ], 1967:*
- Ն**— *Նամականի Պետրոս Դուրյանի, Նրատարակեց Արա Գալայճյան,
Երուսաղեմ, 1968:*
- «Ընդունակ կ'էնագրուրյուն...»— *Բարսեղ Ե. Էքսերճյան, Ընդարձակ
կենսագրություն բարեհիշատակ Պետրոս Դուրյանի, Կ. Պոլիս, 1893:*
- «Պետրոս Դուրյան»— *Արշակ Չոպանյան, Պետրոս Դուրյան, կենսագրա-
կան և քննադատական ուսումնասիրություն, Թիֆլիս, 1894:*
- «Դուրյանի կյանքը...»— *Արշակ Չոպանյան, Պետրոս Դուրյանի կյանքն
ու գործը, Երկրորդ տպագրություն՝ վերամշակված ու ձոխացած: Տեքստը
պատրաստեց Գոհար Ազնավուրյանը, խմբագրեց, վերջաբանը և ծանոթագրու-
թյունները գրեց Ա. Շարուրյանը, Երևան, 1967:*
- ԲԾՀ**— «Բանբեր Երևանի համալսարանի», հասարակական գիտություններ:
- ԳԱԹ**— *ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության Ե. Չարենցի անվան գրակա-
նության և արվեստի թանգարան:*
- ԱԶՖ**— *Արշակ Չոպանյանի ֆոնդ:*
- ՄՄՆ**— *Մաքսուտ Միհրդատյանցի հիմնական նշումներ:*

ՄՄան— Մաքսուտ Միհրդատյանցի առանձին նշումներ:

Մ.— Մանոթագրություն

հրատ.— հրատարակություն

հ.— հատոր

ժ.— ժողովածու

ձ.— ձեկրոֆիլմ

Պետրոս Գուրյանի մահվանից մի քանի օր անց Կ. Պոլսի «Օրագիր ծիւն Ավարայրովո» թերթը 1872-ի Դեկտեմբերի 26-ի համարում (հին տոմարով) գետեղում է մի թղթակցություն, որի հեղինակը («Հանդիսական մը») նկարագրելով գրողի թաղումը, միաժամանակ հայտնում է. «Ակյուտարի Ընթերցասիրաց Ընկերությունը Գուրյանի հիշատակն ավելի անմահացնելու համար նորա հեղինակած բոլոր թատերադրությունները, ուրիշ այլևայլ գրած հեղինակությունները մի մատենի հավաքելով ի լույս ընծայե պիտի» (հոգվածի արտասպությունը տե՛ս «Ընդարձակ կենսագրություն...», էջ 139): Այս լուրը հաստատում է նաև «Փունջ» լրագիրը հունվարի 29-ի համարում. «Գոհությունս կը լսեմք, թե Ակյուտարի Ս. Խաչ թաղի Ընթերցասիրաց պատվարժան ընկերությունը յտադիր է այս վաղամեռիկ բանաստեղծին Լրկասիրությունները փունջ կապել և տպագրությամբ ի լույս ածել» (տե՛ս Վահան Զարդարյան, «Հիշատակարան տարեգիրք 1942 տարվո», Գա՛հիրե, 1941, էջ 52): Իսկ Տիգրան Բաբազյանը «Պ. Գուրյան» խորագրով իր սրտառուչ հոդվածում գրում է. «Սիրելի է մեզ հուսալ, որ հիշյալ ընկերության (ընթերցասիրաց— Ա. Շ.) սույն առթիվ ըրած որոշումն (Սրկերի հրատարակման— Ա. Շ.) հաջողությամբ զլուխ կելնե ու հետևապես հանձարեղ գրագետի մը ցանքն ու քրտունքն իզուր թափված չեն ըլլար: Այո՛, պետք չէ թողուլ բանաստեղծին քնարն, որ երթա անհետսնա դարերու փոշիներուն ներքև» («Մասիս» լրագիր, Կ. Պոլիս, 1872, 3 փետրվար, թիվ 1197):

Շուտով մամուլում տպագրվում է ընթերցասիրաց ընկերության եռանդուն գործիչներից մեկի՝ Դեռոգ Զոպանյանի (Զոպան) «Ազգ»-ը, որտեղ մասնավորապես կարդում ենք. «Պ. Գուրյան յուր հոգվույն վսեմ ձիրքերեն քաղած երկասիրության ընտիր հատվածներ ժառանգ թողած է մեզ այսօր, որք

գրական հավաքչուտ գանձեր ըլլալով իրավամբ արժանի են ի լույս ընծայվելու: Զայս տեսնելով Սկյուտարի Ընթերցասիրաց ընկերությունը կը փութա այսօր բարեհիշատակ հեղինակին դորժքերը հրատարակելու և հրատարակության արդյամբը նորա դամբանին վրա շիրիմ մը կանգնելու կրկնակի նպատակով մասնաժողով մը կազմել՝ 14 անդամն բաղկացյալ, որոց մեջ գանձապահ՝ ընտրված է Բեթրաք Լֆենտի էսմերյան:

Ամբողջ գործերը, որ տասնեն ավելի արձակ և ոտանավոր, թատերական և քնարերգական հեղինակություններն կը բաղկանան, առավազն 500 երես ութածալ հատորո մը մեջ սլիտի ամփոփին, որո հրատարակությունը լրանալեն հետո պիտի վաճառվի 11/4 արծաթ մեճիտի:

Մասնաժողովն սկսած է արդեն ձեռագիրներն հավաքել և հրատարակության գործին ձեռնարկել, զոր փութացնելու համար բաժանորդագրության տոմսակներ հանած է ի գին մեկ մեճիտ» («Մասիս», 1872, 12 փետրվար, թիվ 1201):

Գ. Զուպանյանն ընտրվում է հրատարակիչ մասնաժողովի ատենապետ, իսկ անդամների թվում վերը հիշված Բ. էսմերյանից բացի եղել են նաև Ավետիս Գոռանյանը, Թովմաս Ավետիսյանը, Սիմոն Ֆելեկյանը, Հովհաննես Ծանֆեսճյանը («Ընդարձակ կենսագրություն...», էջ 141):

Գրուզի ձեռագրերը հանձնվում են Գ. Զուպանյանին: Սակայն մասնաժողովը որոշում է, թե Դուրյանի երկերը խմբագրելու կարիք են զգում, ուստի օաղևրի խմբագրումը վստահվում է զրաբարի ուսուցիչ, բանաստեղծ ու խումբագիր Սիմոն Ֆելեկյանին (1835—1904), իսկ թատերագրություններինը՝ մեծանուն Լրդիծարան Հակոբ Պարոնյանին («Արևելք» լրագիր, Կ. Պոլիս, 9 դեկտեմբեր, 1892, թիվ 2667, տե՛ս նաև «Դուրյանի կյանքը...», էջ 83):

Դուրյանի առաջին ժողովածուն «Տաղք և թատերագրությունք» խորագրով լույս է տեսնում 1872-ի կեսերին («Մասիս», 1872, 6 հուլիս, թիվ 1258, «Մամուլ» հանդես, Կ. Պոլիս, 1872, 5 հուլիս, թիվ 212, էջ 48) և, համաձայն Տիգրան Արփիարյանի վկայության, արագորեն սպառվում («Մասիս» հանդես, Կ. Պոլիս, 1892, թիվ 3966, էջ 176):

Գրեթե Երկու տասնամյակ անց միայն լայնորեն հայտնի դարձավ, որ Պ. Դուրյանի անդրանիկ ժողովածուի մեջ տեղ գտած բանաստեղծություններն աղավաղված են: Առաջինն այդ մասին հայտնեց Հրազդանը (Արփ. Արփիարյան): Նա «Բարոյական խրատներ» քրոնիկում խոսելով բարոյակա-

նության անվամբ գործվող «գրական ոճիրների» մասին, գրում էր. «Մեր հայկաբաններն մին՝ պ. Սիմոն Ֆելեկյան անցյալ օր մեկ բարեկամիս կը պատմեն հետևյալը.

— Դուրյանին ոտանավորները երբ պիտի տպագրեին, կըսես, ինձի բերին, որ մեյ մը աչքես անցընեմ: Էֆենտիմ տեսա, թե մեջը շատ մը փոխելու բաներ կան, անբարոյական տողեր կ'սես, ամենքը վերցուցի, շինեցի, շտկեցի, կոկեցի: շնորհքով բան մը ըրի, որ երես կը ձերմկցեն, թե՛ հանգուցյալին պատիվ կը բերես, թե՛ գրականության:

...Հանուն բարոյականի Դուրյան Ֆելեկյանեն սրբագրվեր է, այսինքն սրբապղծվեր է», — եղրակացնում էր քրոնիկագիրը («Հայրենիք», լրագիր, Կ. Պոլիս, 28 սեպտեմբեր, 1891, թիվ 45):

Ավելի ուշ, նախ Բ. էքսերճյանը 1892-ին («Արևելք», թիվ 2667) ապա և գրողի կրտսեր եղբայր Ագրիպպաս Դուրյանը 1930-ին հրատարակության հանձնեցին Պ. Դուրյանի ավագ եղբոր՝ Հարություն Դուրյանի նամակը, որով նա ժամանակին բողոքել է աղավաղումների դեմ: Նկատի ունենալով այդ նամակի կարևորությունը, այն մեջ ենք բերում ամբողջությամբ՝ արտատպելով Սրուսաղեմի «Սիոն» հանդեսից (1930, թիվ 4—5, էջ 150—151):

Բողոք մը

Մեկ քանի շաբաթի ՚ի վեր լուր կա, թե Պ. Դուրյանի երկասիրությանց մեջ, հրատարակիչ Մասնաժողովո կողմանե, հեղինակին ոգվուն և ճաշակին հակառակ սրբագրությունք և փոփոխությունք ներմուծած են: Առաջին անգամ սույն տարածայնությունք ինձ անհավատալի թվեցան, և սաշափ միայն կը համարձակեի հավատալ, թե թերևս այն երկասիրությանց մեջ տառասխալներ սպրդած ըլլալին, որ հեղինակ մը յուր կենդանությանը, եթե տպագրել ուզի, հարկավ ուշադիր կ'ըլլար: Սկյուտարի Ընթերցասիրաց Ընկերությունը հեղինակին երկասիրությունքը հրատարակելու փափագը ցույց տվավ, ևս ալ հավանություն տվի, և հավաքված գրությունքը պ. Գ. Զոպանյանի անձնական ստորագրությամբը նորա հանձնեցի: Հանգուցելուն թաղմանեն ութ օր ետքը Ընկերությունս յուր ընթերցարանը գումարում մ' ըրավ, որ ներկա չգտնվեցա բանավոր պատճառով մը. սույն ժողովն 14 անդամներ բաղկացյալ Մասնաժողով մ' էր ընտրեր երկասիրությանց հրատարակմանը

ձևոնարկելու նպատակով: Հետո Մասնաժողովո առաջին նիստերուն մեջ, իբր թե հեղինակին թերուսթյունքը նկատվելով, անդամներեն մեկուն կողմանն՝ նույն գործոց սրբագրությամբ և կամ առանց սրբագրության հրատարակմանը առաջարկություն մ' է եղեր, և սորա անդամներեն ոմանք սրբագրության կետին ընդդիմացեր և ոմանք ևս հավանություն են տվեր: Մասնաժողովո սույն անհամաձայնությունը ՚ի նկատի շունենալով, կը հարցնեմ Մասնաժողովո, թե քանի որ ես միայն պ. Գ. Չոպանյանի՝ Պ. Դուրյանի գրությունքը կը հանձնեմ, ի՞նչ իրավամբ Մասնաժողովը սույն գրությունքը սրբագրելու կը ձևոնարկե՝ առանց նախապես իմ կամքը հարցնելու, կամք մը, որ նույն իսկ հեղինակին կամքն է, որ եթե հեղինակին սույն կամքն անտարբերությամբ ոտնակոխ ընեմ, մինչև գերեզման խիղճս զիս պիտի տանջե, և լավ է, ըստ իս, գործերն շհրատարակվիլ, քան թե սույնպիսի անվանարկությամբ ի լույս գալ, որ մինչև հիմա օրինակն և ոչ իսկ տեսնված է. արդյոք Գաղղիո հռչակավոր բանաստեղծ Վիթթոր Հյուկոի առաջին գործոց խակությունը վերջին հռչակավոր երկասիրությանց արա՞տ կը բերե: Ինչով երբեք, միայն սա հայտնի է, թե հեղինակին մեռնելեն վերջը ուրիշ գրապետ մը նորա գործերն հրատարակելու ձևոնարկե՝ լոկ մութ և կամ անհասկնալի բառերու ծանոթությամբ մը: Ինչպես որ օրինակ կը տեսնեմք, որ շատ հեղինակներ իրենց մութ և անիմաստ գրվածոցը համար կը քննադատվին: Եթե Պ. Դուրյանի գրվածքն ալ քննադատության արժանի կետեր կը պարունակե, թո՛ղ քննադատվին, արդեն քննադատության ասպարեզն բաց է, թո՛ղ որ ծաղկահասակ հեղինակն յուր գրվածոց պարգությամբը յերևան գա: Ինչպե՞ս լռենք, Պ. Դուրյանի գրվածոց մեջ Մասնաժողովո մի քանի անպամոց կողմեն անիմաստ և մութ նկատված տողերն ուրիշ գրագետներու պարզ և հասկնալի կերևան: Ընկերությանս անհունս երախտապարտ կը գտնվի (ինչպես հույարկավորության հանդիսին նկատմամբ եմ), եթե Պ. Դուրյանի երկասիրությունքը յուր բնագրին պես ամբողջապես հրատարակվեր, իսկ զալով սույն անիրավ ձևոնարկության՝ կը բողոքեմ, վասնզի զինքն մինչև հիմա Պ. Դուրյանի երկասիրությանց հրատարակիչ կը ճանչնալի և ոչ թե սրբագրիչ. բաց աստի, Մասնաժողովո ատենապետ պ. Գ. Չոպան հակասության մեջ կը գտնվի Փետրվար 11 թվականավ լրագրաց մեջ հրատարակած մեկ ծանուցագրովը, ուր ինքն Պ. Դուրյան Պեշիկթաշլյանի արժանավոր հաջորդ կանվանե, և հետո կելլե հեղինակը անվանարկելու խոր-

հուրդ մը կը հղանա: Վերջին խոսքս սա է, որ մինչև հիմա տպված թերթերն, որոց մեջ հեղինակին ազգունն և ճաշակին հակառակ սրբագրութունք մտած են, նորեն տպագրվին, և ասկե վերջն ալ Մասնաժողովո անհասկընալի տեսած կետերը, ծանոթությամբ միայն բավականանալով, շարունակվի, ապա, թե ոչ բնագիրք ևտ տրվին:

Հարություն Ա. Դուրյան
1872, Ապրիլ 2

Հ. Դուրյանն իր վրդովված նամակը գրել է ժողովածուի առաջին մամուլներում տեղ գտած աղավաղումների առիթով: Ինչպես հաստատում է Բ. էքսերճյանը, այդ բողոքը իր դերը խաղացել է. «Հետ այնորիկ սրբագրութուններ կընդհատին և հաջորդ ֆորմաներն ըստ բնագրին կը շարունակվին տպագրվիլ» («Արևելք», 1892, թիվ 2667):

Մամուլում շատ է գրվել Ֆելեկյանի «ավերածութունների» մասին: Մուլրակը (Տիգրան Կամսարական) բողոքելով նրա «պղծիչ սրբագրությանց դեմ», հրապարակային բացատրություն է պահանջել և հարց է հարուցել Ֆելեկյանին «բարոյական պատասխանատվության մը» ենթարկել («Մասիս», 1892, 31 դեկտեմբեր, թիվ 3972, էջ 291): Այդ պահանջը պաշտպանել է արևելահայ մամուլը («Տարազ» հանդես, Թիֆլիս, 1893, № 6, էջ 95. «Մանր լուրեր»): Ֆելեկյանի մահն անգամ չկարողացավ մեղմել նրա դեմ եղած վայրույթը. «...Կրկին անմոռաց պիտի մնա՝ իր խաթարիչը Դուրյանի թողած քերթվածներուն»,— նրա մասին գրեց Մուլրակը («Մաղիկ» հանդես, Կ. Պոլիս, 1904, թիվ 8, էջ 414):

Պ. Դուրյանի գործերի երկրորդ ժողովածուի հրատարակությունն իրագործեց ուսուցիչ Բարսեղ էքսերճյանը (1863—1944):

Տակավի՛ն 1876-ին, հրք Միհրան (հետագայում՝ Եղիշե) Դուրյանը ուսուցիչ էր Սկյուտարի ճեմարանում, աշակերտներից ոմանց, որոնց մեջ էր նաև Բ. էքսերճյանը, ծանոթացնում է իր եղբոր մի քանի անտիպ նամակներին: Այդ ժամանակվանից էլ, ինչպես վկայում է Բ. էքսերճյանը, ճեմարանի աշակերտները միտք են հղանում հրատարակելու Դուրյանի անտիպ գործերը: 1880-ին ճեմարանի նախկին սաներ Բարսեղ էքսերճյանը, Սիմոն Գարսամաճյանը, Արմենակ Աստվածատրյանը և Հարություն Գազազյանը կազմում են մի մասնախումբ՝ որոշելով ձևք բերել ու տպագրել Դուրյանի

նամականը և թատերախաղերը («Արևելք», 1893, թիվ 2789): Նյութական միջոցների հայթայթելու նպատակով նրանք նախապես ֆրանսերենից գրարարի են թարգմանում և լույս ընծայում Շատորբիանի «Ազալա»-ն, որի առաջաբանում հայտնում են իրենց մտադրության մասին. «Եթէ ըստ ակընկալեաց մերոց յաջողեացէ մեզ գտանել խրախոյս, ՚ի մտի ունիմք ածել ՚ի լոյս զանտիպ գործս վաղամեոիկ քերթողին Պետրոս Դուրեանի՝ ցանկալոյն այժմեան մերազնեայ բանասիրաց» (Շաղոպրիանու Ազալա, Կ. Պոլիս, 1880, էջ 9):

Սակայն 1885-ին սույն մասնախմբի անդամները ցրվում են, և ձեռնարկը պոլիս ՚ի պոլիս:

1890-ին Նիկեոմեդիայից վերադառնալով Կ. Պոլիս, Բ. էքսերճյանը որոշում է, այս անգամ միայնակ, տպագրել Դուրյանի երկերը: Նա մամուլում զետեղում է բաժանորդագրության մասին հայտարարություն՝ տեղեկացնելով, որ իր ձեռքի տակ ունի գրողի «անտիպ գործոց մի հավաքածույն», մտադիր է հավաքել «ցիր ու ցան եղած» երկերն էլ ու «տպյալ գործերու մեկ մասին հետ միացնել և հրատարակել»: էքսերճյանը միաժամանակ խոստանում է ժողովածուի սկզբում տպագրել Դուրյանի նկարը, ինչպես նաև որպես առաջաբան, զետեղել կենսագրությունը («Արևելք», 1892, 27 մարտ, թիվ 2453): Այս հայտարարությունը մամուլում հավանության է արժանանում, մի ընթերցող (Ք. Տ. Վ. Հ.) «Առ հրատարակիչս Պ. Դուրյանի գործոց» նամակում առաջարկում է ծրագրվող հրատարակությանը կցել Դուրյանի «Հուղարկավորության հանդեսին նկարագիրը, գերնվմանին վրա խոսված դամբանականներն և յուր հիշատակին ձոնյալ ոտանավորները, որչափ որ կարելի է» («Արևելք», 1892, 17 սեպտեմբեր, թիվ 2594): էքսերճյանը ստանալով Սդիշե Դուրյանի համաձայնությունը, («Արևելք», 1892, 24 հոկտեմբեր, թիվ 2626) ծավալում է հոանդուն գործունեություն: «...Ես,— պատմում է նա,— ծանոթություններ հավաքելու կամ ձեռագիր մը գտնելու համար գրած էի ի Մանչեսթերը, ի Վենետիկ, ի Սելանիկ, ի Տարտանել, ի Տրամա, ի Ջմյուռնիա, անձամբ պացած էի ի Մոտա (ուր կը բնակի Դուրյանի մայրը), Սկյուտարու շորս կողմը, Պոլսո շատ մը թաղեր, ի Բերա, Պեշիկթաշ, Օրթագյուղ, Ռ. Հիսար, Պեոյուքտերե, Սամաթիա և ոչ թե մեկ՝ այլ 2—3 անգամներ» («Արևելք», 1892, 28 սեպտեմբեր, թիվ 2603): Սդիշե և Ազրիպպաս Դուրյանները նրան են տրամադրում իրենց եղբոր ձեռագրերը կամ դրանց ընդօրինակու-

Յլունները, օգնում են նաև գրողի ծանոթները, մտերիմները: Էքսերճյանը մտադիր էր ժողովածուում տաղերից, թատերախաղերից, նամակներից ու վարդան Լուսինյանի հիշատակին արտասանված դամբանականից բացի տպագրել նաև Դուրյանի հոգվածները, թարգմանությունները և այլ նյութեր ու այդ նպատակով մամուլի միջոցով դիմում է անում («Արևելք», 1892, 5 մարտ, թիվ 2434, 23 հունիս, թիվ 2523):

Այս լայն նախապատրաստական աշխատանքը ավարտվում է նրանով, որ Բ. էքսերճյանը 1892-ին հրատարակում է Դուրյանի «Տաղք և թատերգությունք, նամականի, դամբանական, տապանագիրք» ժողովածուն, ուր տեղ են գտնում 35 տաղ (այդ թվում հինգն անտիպ), երկու տպված թատերախաղ, 13 նամակ և 4. Լուսինյանի դամբանականը:

Ինչ-ինչ պատճառներով էքսերճյանը չի կարողացել օգտագործել իր ժողոված թուր նյութերը: Այդ պատճառներից կարևորագույնը դաժան գրաքննությունն էր: Հր. Աճառյանը վկայում է, որ 90-ական թվականներին Դուրյանի 1872-ի ժողովածուն «սաստիկ արգելված» էր (Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 107): Ահա թե ինչու նոր ժողովածուից դուրս մնացին քաղաքական, հայրենասիրական ու սոցիալական բովանդակությամբ տաղերը, պատմական ողբերգությունները: Այս հանգամանքը ժամանակին Լկատել է ժողովածուի պետերբուրգյան գրախոս «Առյուծը». «Վաղամեակի բանաստեղծին շատ մի սիրուն ոտանավորները և թատերգությանց շատերը դուրս ձգվեցան այս գործին իբր վնասակար» («Արաքս» հանդես, 1893, գիրք Բ, էջ 117):

Դուրյանի Երկերի երկրորդ ժողովածուի մասին չափազանց խիստ արտահայտվեց երիտասարդ Արշակ Չուպանյանը: Ժողովածուի առաջին երեք մամուլներում հրատարակված տաղերի կապակցությամբ նա հանդես եկավ «Դուրյանի նոր տպագրության առթիվ» գրախոսականով: Անելով մի շարք ճիշտ դիտողություններ (ժամանակագրական սկզբունքի անտեսում, կետագրական «անթիվ» անճշտություններ, վանկուրառային սխալներ և այլն)։ Չուպանյանն ըստ Լուսինյանի սույն հրատարակությունը համարում էր արտավոր («Հայրենիք», 1892, 19 սեպտեմբեր, թիվ 246): Իր բոլոր թերություններով հանդերձ էքսերճյանի հրատարակությունը նախորդից անհամեմատ բարձր էր, քանի որ առաջին անգամ Դուրյանի տաղերը հիմնականում հրատարակվեցին:

տարակվեցին ըստ հեղինակային բնազդերի (տողատակում մեծ մասամբ ցույց էին տրված Ֆելիկյանի աղավաղումները):

էքսերճյանին հայտնի են եղել Դուրյանի շատ հեղինակութուններ: Այլևայլ առիթներով նա հաստատում է, որ գրողի 1869—1871 թվականների ըստեղծագործությունները «երեք հատորներ կը գրավեն, որոց առաջին հատորն հրատարակված է (խոսքը 1893-ի ժողովածուի մասին է— Ա. Շ.), ի բաց առյալ յուր կենսագրականն», որ մնացած գործերն «կրնան երկու հատոր կազմել քաճական ֆորմայի բաղկացյալ» («Ընդարձակ կենսագրություն...», էջ 13 և 94, «Արևելք», 1894, 30 ապրիլ, թիվ 3069):

Արդյոք այս նյութերի մեջ նա մտցնում էր նաև ֆրանսերենից կատարած Դուրյանի այն ութ թատերախաղերի և «La jeune fille» («Ջահել աղջիկ») բանաստեղծության թարգմանությունները, Տաճատ Լուսֆյանի և Սիմոն Ֆելիկյանի մոտ եղած «գրվածքները», Որդիկ էֆենտիի ընտանիքում ուսուցիչ եղած ժամանակ գրած հարսանյաց ճառը և այլ երկեր, որոնց մասին հրապարակային հարցում է արել մամուլում («Արևելք», 1892, թիվ 2523): Առավել հավանական է, որ էքսերճյանը խոսել է իր ձեռքի տակ եղած գործերի մասին, որոնք նա չի կարողացել (կամ չի ցանկացել) օգտագործել: Ավելորդ չէ նկատել, որ դարասկզբի մամուլում երևացած մի տեղեկության համաձայն «Տ. Հմայակ քահանա էքսերճյան (նա քահանա էր ձեռնադրվել 1893-ի հուլիսին— Ա. Շ.) ...ձեռնարկած է նոր հատորի մը պատրաստության, Մառզված էջեր, որուն մեջ պիտի ամփոփվին Դուրյանի կարգ մը անտիպ ձեռագիրներ...» («Մասիս», 1900, թիվ 14, էջ 216): Այդ հրատարակությունը գլուխ չի եկել: Փաստ է սակայն, որ էքսերճյանն իր տրամադրության տակ է ունեցել Դուրյանի գործերից: Սփյուռքահայ լրագրող և հասարակական գործիչ Խաչիկ Ամիրյանի (այժմ Երևանի համալսարանի արևելագիտական ֆակուլտետի դասախոս) Պետրոս Դուրյանին նվիրված հոդվածում կա հետևյալ կարևոր տեղեկությունը. «Ի ձեռին ունիմ իսթանպուլահայ գրագետ Վ. Ս. Մովակի կողմն ինձի տրամադրված և Բարսեղ էքսերճյանի կողմն ընդօրինակված տետրակ մը...» («Լուսադրյուր» հանդես, Փարիզ, 1953, հոկտեմբեր, թիվ 14, էջ 51—52): Հնարավոր է, որ այս տետրակը ընդգրկում է հենց այն նյութերը, որոնք պատրաստել և հրատարակել է Բ. էքսերճյանը: Առայժմ այդ տետրակի ճակատագիրը նույնպես անհայտ է:

Ըստ Բաբկեն Կյուլեսերյանի, Ն. Դուրյանը, երբ Երուսաղեմի պատրիարք էր, մտադրվել է «իր հսկողության ներքև» հրատարակել եղբոր գործերը. բայց վերահաս մասը խանգարել է («Սիռն», 1930, թիվ 4—5, էջ 150)։

Յարդ լույս տեսած Դուրյանի բոլոր ժողովածուների հիմքում, բացառությամբ Ա. Գալալճյանի հրատարակության, ընկած է էքսերճյանի քննական հրատարակությունը (միայն 1908-ին Կ. Պոլսում տպագրված «Երգեր և տաղեր»-ը հիմնականում ընդգրկել են 1893-ի հրատարակությունից դուրս թողնված քերթվածները, որոնք նույնությամբ քաղված էին 1872-ի ժողովածուից; 1926-ին Բեյրութում լույս ընծայված «Քերթվածներ»-ում տեղ են գտել 1872 և 1893 թվականների ժողովածուների բոլոր տաղերը, բայց հիմք է ծառայել 1872-ի աղավաղված հրատարակությունը)։ Ժամանակագրական սկզբունքը հիմնականում պահպանված է «Տաղեր»-ի երևանյան հրատարակություններում, որոնք օժտված են նաև հակիրճ ժանոթագրություններով։ Այդպիսի ծանոթություններ ունեն վենետիկյան ժողովածուները, իսկ 1947-ի «Երկեր»-ում տրված են տեքստային բացատրություններ։

Մինչև օրս Պ. Դուրյանի հայտնի ժողովածուների թիվը հասնում է 22-ի։ Սակայն տպագրվել է մի ժողովածու ևս, որի մասին տեղեկություն է տալիս միայն Հրաչյա Աճառյանը։ Շուշում պաշտոնավարած ժամանակ (1902—1903), նա ուսուցիչ Ավետիս Տեր-Հարությունյանի հետ կազմել է Դուրյանի տաղերի ժողովածուն։ «Առաջաբանը գրեց նա, — պատմում է Հր. Աճառյանը, — կենսագրությունը գրեցի ես, տաղերի վերջը դրինք բառարան, որտեղ ևս հավաքեցի և մեկնեցի դժվար հստակաճի բառերը։ Գրքույկը տպվեց բողոքական Մահտեսի Բարայանի տպարանում։ Պայմանավորված էինք, որ յուրաքանչյուրս ստանայինք իրեն վարձատրություն 100 օրինակ։ Շարաթ երկու էր։ Ավետիսը ստացավ իր 100 օրինակը։ Հաջորդ գիշերը տպարանում հրգե՞ն եղավ և ամբողջ գիրքը այրվեց։ Ես ոչինչ չստացա։ Ավետիսը ավելի ուշ գնաց Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցը։ Այդտեղ էլ վաճառեց իր 100 օրինակը։ Ես մի օրինակ գնեցի մեկից 10 կոպեկով և ուղարկեցի Վիեննայի Մխիթարյանց գրադարանը։ Այսպիսով ամբողջ գիրքն անհետացավ և, մնաց միայն մի օրինակ վիեննայում։ Ես էլ չունեմ» (Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 265)։

Մինչև այժմ լույս տեսած ժողովածուներն են.

1. *Տաղք և թատրերգությունք Պետրոսի Դուրյան, հրատարակյալ ջանյուք Ընթերցասիրաց ընկերության Սկյուտարու, Կ. Պոլիս, 1872:*
2. *Տաղք և թատրերգությունք, նամականի, դամբանական, տապանագիր, հավաքեց Բարսեղ Ծ. Էքսերճյան, Կ. Պոլիս, 1893:*
3. *Բանաստեղծություններ, ժողովածու, Բագու, 1900:*
4. [*Տաղեր, կազմեցին Ավետիս Տեր Հարությունյան և Հրաչյա Աճառյան: Առաջարան Ա. Տեր-Հարությունյանի, կենսագրությունը և բառարանը՝ Հր. Աճառյանի, Շուշի, 1902—03*]:
5. *Բանաստեղծություններ, ժողովածու, երկրորդ տպագրություն, Վաղարշապատ, 1904:*
6. *Երգեր և տաղեր, եղիշե Սրբազան Դուրյանի բարեհաճ արտոնությունամբ, Կ. Պոլիս, 1908:*
7. *Տաղք և նամականի, Նյու-Յորք, 1918:*
8. *Ընտիր քերթվածներ, Վիեննա, 1922:*
9. *Քերթվածներ, Դ տպագրություն, Բեյրութ, [1926]:*
10. *Տաղեր. կազմեցին և խմբագրեցին Ալադան և Վ. Նորենց, Երևան, 1932:*
11. *Տաղեր. կազմեցին և խմբագրեցին Ալադան և Նորենց, երկրորդ հրատարակություն, Երևան 1936:*
12. *Տաղեր, նամականի, դամբանական, Պեյրութ, 1940:*
13. *Տաղեր, նամակներ, հատվածներ, Վենետիկ, 1945:*
14. *Ընտիր քերթվածներ, Հալեպ, 1945:*
15. *Երկեր. կազմեց և տեքստը խմբագրեց ՀՍՍՀ գիտ. ակադ. իսկական անդամ Հր. Աճառյան, Երևան, 1947:*
16. *Քերթվածներ՝ և նամակներ (Ժննդյան հարյուրամյակի առթիվ), Պեյրութ, 1952:*
17. *Տաղեր, կազմեց և խմբագրեց Սողոմոն Տարոնցի, Երևան, 1954:*
18. *Քերթվածներ և նամակներ (Բ տպագրություն), Պեյրութ, 1956:*
19. *Տաղեր, նամակներ, հատվածներ (Բ տպագրություն), Վենետիկ, 1959:*
20. *Տաղեր, առաջարանը, բառարանը և ծանոթագրությունները՝ Վ. Նորենցի, Երևան, 1963:*

21. Տաղեր. կազմեց, առաջարանը, բառարանը և ծանոթագրությունները գրեց Վաղարշակ Նորենցը, Երևան, 1967:

22. Տաղք, փորձ մը բնագրային վերականգնումի, հրատարակեց Զրա Գալայճյան, [Երուսաղեմ], 1967:

23. Նամականի Պետրոս Դուրյանի, իրատարակեց Արա Գալայճյան, Երուսաղեմ, 1968:

Ինֆեազբեռի խնդիրը: Պետրոս Դուրյանի ինքնագրերի հավաքմամբ զբաղվել են նրա հարազատները և ամենից առաջ Ծ. Դուրյանը: Վերջինս եղբոր գործերը միշտ էլ պահել է իր մոտ՝ Կ. Պոլսում, Արմաշում և այլուր, իսկ 1921-ից, երբ ընտրվել է Երուսաղեմի պատրիարք, տարել է այնտեղ: Մի շարք հավաստի տեղեկություններ ցույց են տալիս, որ Դուրյանի ինքնագրերը գտնվում են Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքում: Այսպես, Ա. Զուպանյանը այլևայլ աուիթներով հուզելով Պ. Դուրյանի գործերի «քննական խնամյալ հրատարակության» խնդիրը «Անահիտ» հանդեսի (Փարիզ) քրոնիկներից մեկում (1932—1933, թիվ 5—6, էջ 213) գրել է. «Ծ՛րբ լույս պիտի տեսնեն Պետրոս Դուրյանի «Ամբողջական գործը», զոր կրնա միայն հրատարակել Երուսաղեմի Միաբանությունը, որուն մոտ կը գտնվին Պետրոսի բոլոր ձեռագրերը»: Նույնն է պնդել նա հետագա տարիներին (տե՛ս «Անահիտ», 1939, թիվ 1—2, էջ 60—61, 1947, թիվ 2, էջ 58—59), ինչպես և «Պետրոս Դուրյանի կյանքը և գործը» վերամշակված աշխատության առաջարանում (էջ 12): Հակոբ Օշականը վկայում է. «Տեսա իր (Պ. Դուրյանի— Ա. Շ.) ձեռագիրներու տետրակը Դուրյան սրբազանեն Մեսրոպ սրբազանի (խոսքը պատրիարք Մ. Նշանյանի մասին է— Ա. Շ.) անցած» («Համապատկեր արևմտահայ գրականության», երկրորդ հ., Երուսաղեմ, 1953, էջ 313): Իսկ սփյուռքահայ մտավորական Սիմոն Սիմոնյանը «Ճանապարհ և ճամբարություն» ուղեգրություններում հայտնում է, որ ինքը Երուսաղեմի հիշյալ վանքում տեսել է Պ. Դուրյանի «գրական խառնակյալ արխիվը» և տալիս է դրա նկարագրությունը («Սփյուռք», շարաթաթերթ, Բեյրութ, 1959, սեպտեմբեր 19, թիվ 32, էջ 3): Վերջապես Արա Գալայճյանի հրատարակությունը ևս հաստատում է, որ Պ. Դուրյանի ինքնագրերը այժմ էլ պահվում են Երուսաղեմի պատրիարքարանում (Տ, էջ է)

Պետրոս Դուրյանը երազում էր իր երկերը, հատկապես բանաստեղծությունները, հրատարակված տեսնել: Փաստերը ցույց են տալիս, որ նա տպագրության է պատրաստել իր քերթվածների գրքույկը և նույնիսկ ձեռագրել էր այն: Այդ ձևավորման վերաբերողությունը առաջինը հրատարակեց Քեռոզիկը «Ամենուն տարեցույց»-ի 1914-ի հատորում՝ հետևյալ վկայությամբ. «Պետրոս Դուրյան ինք իր ձեռքով գծած է սույն զարդանկարն իր ձեռագիր տետրակին ետևը» (էջ 19: Տե՛ս նաև Վ. Քերզիքաշյան, Պետրոս Դուրյան, Երևան, 1959, էջ 187 և Երուսաղեմի հրատարակությունը): Դատելով այդ զարդանկարից, Դուրյանը մտադիր է եղել իր գրքույկը լույս ընծայել «Տաղք» խորագրով: Այս իմաստով 1872 և 1893-ի ժողովածուների կազմողները հարազատ են մնացել հեղինակին՝ պահպանելով նրա ընտրած վերնագիրը:

Դուրյանը բանաստեղծություններ գրել է դպրոցական նստարանից: Հայտնի է, որ նախապես նրա ազգանունը եղել է Զրմպայան և միայն հետագայում է, որ փոխել է Դուրյանի: Ա. Զոպանյանին դրած 1892-ի դեկտեմբերի 25-ի նամակում Ե. Դուրյանը հաստատում է. «Դուրյանն ունի տղայական գրվածքներ, որոնց վրա դեռ Զրմպայան կը ստորագրե 1867-են առաջ» (ԲԵՀ, 1967, № 1, էջ 171): Սրանից կարելի է հետևեցնել, թե Ե. Դուրյանին ծանոթ են եղել եղբոր «տղայական գրվածքները»: Էքսերճյանը հայտնում է, որ Պետրոսի ազգական և ընկեր Հովհաննես Ծանֆեսճյանն ունեցել է Դուրյանի «խուղթերն ու անտիպ գործերն մաս մը», որոնցից ինքը չի կարողացել օգտվել, քանի որ հանձնված են եղել Ա. Զոպանյանին («Արևելք», 1892, 28 սեպտեմբեր, թիվ 2603): Իսկ Ծանֆեսճյանի մոտ, ինչպես երևում է Զոպանյանի ուսումնասիրությունից, գրողին վերագրվող «տղայական սիրավեպի մը» առաջին մասից և անխորապիր բանաստեղծությունից («Գարնանային կենացս մեջ»), բացի եղել են նաև երգիծական ոտանավորներ, որոնք կորել են («Դուրյանի կյանքը...», էջ 42, 158):

Ծանֆեսճյանն ունեցել է Դուրյանի ուրիշ ձեռագրեր ևս: Ա. Զոպանյանի արխիվում մեր ուշադրությունը գրավեց Լևոն Քյութունճյանի 1926-ի հուլիսի 9-ին Լոզանից գրած նամակը: Այստեղ նա Զոպանյանին է ներկայացնում պոլսեցի իր մի ծանոթի՝ Մկրտիչ Փափազյանի խնդրանքը՝ Դուրյանի «յոթ

կտոր ձեռագիրները, ոտանավոր և նամակ, անտիպ և ցարդ անծանոթ» որևէ բարերարի վաճառելու մասին (ԳԱԹ, ԱԶՖ, № 2353): Պարզվում է, որ Հովհ. Ճանֆեսճյանի մահից հետո Դուրյանի ձեռագիրներն անցել են նրա քրոջ դստեր՝ Մ. Փափազյանի կնոջ ձեռքը: Վերջինս տնտեսական դժվարություններից դուրս գալու նպատակով, որոշել է վաճառել դրանք: Այդ ձեռագրերի մասին Մ. Փափազյանը նախապես հայտնել է Ե. Դուրյանին, սակայն վերջինս համաձայնել է ընդունել միայն որպես նվեր: Նույն ֆոնդում պահպանվող 1926-ի օգոստոսի 27-ի նամակում (№ 6630) Մ. Փափազյանը Ա. Զուպանյանին հավաստում է ինքնագրերի վավերականությունը և խնդրում նրան օգնել վաճառելու: Ինչպե՞ս է վարվել Զուպանյանը, հայտնի չէ, միայն Մ. Փափազյանը 1929-ի դեկտեմբերի 11-ի նամակով շնորհակալություն է հայտնում վերջինիս՝ իր խնդրերին «ընթացք տված» լինելու համար և ավելացնում է, թե ինչու թյուրումնճյանն իրեն տեղյակ է պահել (ԳԱԹ, ԱԶՖ, № 6631): Բարեբախտաբար մեզ հաջողվեց նամակագրություն հաստատել պր-ն ինչու թյուրումնճյանի հետ, որ բնակվում էր Լոդանում: Ի պատասխան մեր հարցման, պր-ն թյուրումնճյանը հայտնեց, որ ինքը «մոռացած է Մ. Փափազյանի» խնդիրը և հավանական է համարում, որ այդ ձեռագրերը «գնված լինին Նուպարյան մատենադարանի կողմն»: Սակայն, ինչպես մեզ հայտնեց Փարիզի Նուպարյան մատենադարանի նախկին տնօրեն պր-ն Ա. Սալմասյանը, Դուրյանից ինքնագրեր երբևէ ձեռք չեն բերվել:

Բայց իսկապե՞ս Հ. Ճանֆեսճյանից Մ. Փափազյանին անցած ձեռագրերը անտիպ գործեր են: Այս հարցի պատասխանը որոշակիորեն բացասական է: Հայտնի է, որ ԳԱԹ-ում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի միջոցով ստացվել է Պետրոս Դուրյանի երեք բանաստեղծության ինքնագիրը և մի նամակի պատճենը, որոնք նվիրել էր Նյու-Յորքում հրատարակվող «Նոր աշխարհ» թերթի խմբագիր Սամվել Թումանյանը (տե՛ս «Գրական թնրք», 1968, 27 սեպտեմբեր, № 39): Հիշյալ լրագրի խմբագիրը, որ Երևանը 2750-ամյակի տոնակատարության առիթով հյուր էր Սովետական Հայաստանում, մեզ հայտնեց, որ այդ նյութերը, ինչպես և իր մոտ՝ Նյու-Յորքում եղած 2—3 կտոր գործ, ինքը յոթ-ութ տարի առաջ նվեր էր ստացել իր թերթի ընթերցողներից մեկից՝ Փափազյան ազգանվամբ մի ծերունուց: Ուրեմն՝ այդ ինքնագրերը նախ չեն վաճառվել, ապա դատելով ԳԱԹ-ում պահվող

նմուշնհրից, սուսգրված գործեր են, որոնք Դուրյանը, ըստ երևույթին, հարկ է համարել նվիրել Ն. Ծանֆեսճյանին:

1867-ին, էրբ Պ. Դուրյանը ծառայում էր սեղանավոր Մարտիկ աղայի մոտ, նույնպես գրել է բանաստեղծություններ: Այս առթիվ Չոպանյանը պատմում է. «Նամակի կապույտ բարակ թուղթ մը ձեռքս անցավ, ծայրերը փեթոված, որուն վրա Պետրոսի մեկ ոտանավորին երկուբուկես տունը մնացած էր, գրված «Ի Մեծ Նոր Խան», ինչպես նշանակված էր տակը» («Դուրյանի կյանքը...», էջ 32): «Վարդ և Շուշան» թատերախաղի բեմադրության 1869-ի փետրվարի 22-ի ազդի վրա հիշված է եղել «Հիշատակ» խորագրով մի բանաստեղծություն, որի արտասանությամբ հանդես է եկել Վերգինե Գարագաշյանը («Ուսմուլ», 1869, 22 փետրվար, թիվ 3, էջ 24):

Դուրյանը վաղ շրջանի բանաստեղծություններին կարևորություն չի տվել և չի մտցրել իր կազմած ձեռագիր տետրում: Այդ մասին ուղղակի հիշատակում է Հակոբ Օշականը. «Տեսա իր ձեռագիրներու տետրակը... Անկնիք, մռայլ գիր մը: Թուղթին հասարակությունն իսկ սրտաճմլիկ էր այդ տետրակին վրա: Փետրեցի իր սկսնակի էջերը, որոնք կը պակսին: Թվակա-նով մը մասնավորված բանաստեղծություններն ամենեն կանուխը կը կրի: 1867-ը. ան որ «Իցի՛վ թե» վերնագիրը կը կրե» («Համապատկեր արևմտահայ գրականության», երկրորդ հ., էջ 313):

Ա. Չոպանյանի արխիվի նյութերից երևում է, որ Դուրյանը երկու անգամ առանձին տետրերում արտագրել է իր բանաստեղծությունները: Արխիվում կա թղթի մի ուղղանկյուն պատառիկ, որի մի երեսին սև թանաքով գրված է.

Տ Ա Ղ Բ

Պ. ԴՈՒՐՅԱՆ

1 8 7 1

Իսկ մյուս երեսին կարդում ենք. «Երկրորդ տետրակին մեջ կողքը րացածիդ պես առաջին թուղթին վրա գրված է միայն ինչ-որ տեսար այս թուղթին կոնակը միևնույն գրերով, միևնույն մեծությամբ»:

Պ. Դուրյան գրած է իր բոլոր տաղերը մեկ տեսակ մեղանով, որուն գույնը սև է, նվազ սև մը»։ Ուրեմն, 1871-ին Դուրյանը կազմել է բանաստեղծությունների երկրորդ տետրը, որին անշուշտ պետք է նախորդած լիներ առաջինը։ Որ իսկապես եղել են և կան երկու տետր, հաստատում են նաև Սիմոն Սիմոնյանն («Սփյուռք», 1959, թիվ 32, էջ 3) և Ա. Գալայճյանը (Տ, էջ է)։

Ձեռագիր տետրերում տեղ են գտել թանաքով արտագրված տաղերը։ Նախքան տետրերում մաքրագրելը, Դուրյանն իր տաղերը գրել է մատիտով, առանձին թերթերի վրա։ Այդ եզրակացության էն բերում Ա. Չոպանյանի հետևյալ տողերը. «Իր տաղերուն սևագրություններն մեկ քանին տեսած եմ, գրեթե ամենքը մատիտով գրված են, թերևս դաշտը, բլուրի մը վրա, կամ զբոսավայր մը, եկող անցնող տպավորությունը կամ սիրտը տրոփեցնող հիշատակ մը իր թռիչին մեջ բռնելով ու թուղթին վրա սեղեղելով։ Սըրբագրությունները հաղվագյուտ են այդ ձեռագիրներուն մեջ։ Կան, որ անարատ են, օրինակվածի պես, իրենց վերջնական ձևով խորհված ու գրված։

Կան իր տաղերուն մեջ այնպիսիներ, որոնց մեջ ինքն իսկ փոփոխություններ մտցուցած է, բայց ատեն անցնելու ետքը քննական աչքով վերընթերցումն մը հետո, ինչպես կտեսնենք իր տաղերուն երկրորդ օրինակության մեջ, զոր ինքն իսկ կատարած է» («Դուրյանի կյանքը...», էջ 182—183)։

Մատիտով գրված տաղերը օրինակելով առաջին տետրում, Դուրյանը չի գոհացել և շարունակել է վերամշակել դրանք՝ մաքրագրելով երկրորդ անգամ։ Այս ձևով էլ ստեղծվել են երկու տետրերը։

Այժմ այդ տետրերի մասին։

Ձեռնամուխ լինելով Պ. Դուրյանի մասին կենսագրական և քննադատական ուսումնասիրություն գրելուն, Ա. Չոպանյանը 1891-ին դիմում է Ե. Դուրյանի օգնությանը։ Վերջինս Արմաշից Չոպանյանին է ուղարկել սովորական տետրի հինգ էջի վրա հետաքրքիր նշումներ (որ դրանք գրված են նրա ձեռքով, ցույց է տալիս Եղիշե վ.[արդապետ] Դ.[ուրյան] ստորագրությունը)։ Այդ փաստաթուղթում ուշագրավ է Պ. Դուրյանի տաղերի երկրորդ տետրի հետևյալ ցանկը՝ գրություն թվականներով և Ե. Դուրյանի թուղթիկ դիտողություններով։

(Յուր վերջին ձեռագրին կարգավ)

1. Իդձք Առ Հայաստան (1869):
2. Սիրեցե՛ք Զ'միմյանս (1869):
3. Պետք է Մեռնի՛լ (1869):
4. Ի Պատր.[իարքական] Ընտր.[ություն] Ամենա՛ւպատիվ] Հայրիկին (1869):
5. Ի Դիմավորության (1869):
6. Հայրիկն Հայոց (1869):
7. Երգ Մարտին Վարդանանց (1869):
8. Նե (1871):
9. Առ Կույսն (1871):
10. Վիշտք Հայուն (1868):
11. Կույսն Լքյալ (1870):
12. Նայվածք Մը (1871):
13. Նվազ Ժ-րդ Տարեդարձի Ազգ.[ային] Սահմանադրության (չհրատարակ-ված) (1870):
14. Հժժյունք (1871):
15. Զոնիկք (1871):
16. Մանուկն Առ Խաչ (1871):
17. Իցի՛վ Քե (1867):
18. Սիրեցի Քեզ (1869):
19. Սիրել (1871):
20. Դրժել (1871):
21. Լճակ (1871):
22. Քրքուհին (1871):
23. Ներա Հետ (1871):
24. Տրտունչք (1871) Առաջին Կասկածք (ըստ վերջընթեր ձեռագրին), «Մերձ ի մահ գրված» վերնագրին մասը քերթողինը չէ:
25. Զղջում (Օր Մը Վերջը) (1871):
26. Զ'նե Պաշտեմ (1871):
27. Կոկոն-Սաղիկը Կույսին (1871):

28. Սև, Սև (1871):
29. Առ Մայիս (1871):
30. Մանիշակ (1871):
31. Իմ Հանգիստը (1871):
32. Նոր Սև Օրեր (1871):
33. Իմ Տավը (1871):
34. Նվեր Հիշատակի Առ Պ. Հ. Ծ. [անֆեսճյան], Հոֆ (1871):
35. Ի Գերեզմանն [ամենասիրելի] Վ. Լուսինյանի. Հեծեծմունք (1871):
36. Իմ Մահը (1871):
37. Ի՞նչ Կրսեն (1871):

Այս ցանկից հետո Ե. Դուրյանը նկատում է. «Հայտնի կերևի, թե քերթողն 1871 տարվույն մեջ յուր բոլոր քերթվածներն աչքի անցուցած, սրբագրած և ըստ այնմ օրինակված է» (ԳԱՔ, ԱԶՖ, չհամարակալված նյութեր):

Պատրաստելով իր ուսումնասիրության երկրորդ հրատարակությունը, Ա. Չոպանյանը մեջ է բերել սույն ցանկը, կատարելով այսպիսի մի հավելում. «38 Անտիտոս քերթվածի մը և մասը (Երեկոյան բալն կը սողաւ բարդիլ իւսով). ներքեր բանաստեղծին ձեռքով գրված՝ Հիվանդութեան պատճառով ընդհատված, անթվական, անշուշտ 1871-ի վերջերը» («Դուրյանի կյանքը...», էջ 183):

Այս լրացումը, ինչպես կտեսնենք, արված է՝ հիմք ընդունելով իր ձեռքի տակ եղած մեկ այլ ցանկ:

Ե. Դուրյանն այս փաստաթղթում անհրաժեշտ է համարել խոսել միայն «գլխավոր սրբագրությունք» կրած երկու քերթվածի («Միրեցի քեզ» և «Ներս հետ») մասին միայն, իսկ մյուսների առթիվ նշել է. «Մնացյալ սրբագրությունքն բավական անշան փոփոխություններ են, ավելորդ համարեցի նշանակել զայն» (ԴԱՔ, ԱԶՖ, չհամարակալված նյութեր): Սա, ինչպես երևում է, չի գոհացրել Չոպանյանին և նա դիմել է Ղայաթիայի կեդրոնական վարժարանի իր երբեմնի դասընկեր Մաքուստ Միհրդատյանցին, որ մաթեմատիկայի ուսուցիչ էր Արմաշի դպրեանքում: Չոպանյանը նրանից խնդրել է ոչ միայն Ս. Դուրյանից կենսագրական անհրաժեշտ տեղեկություններ իմանալ, այլև «մատնանիչ ըներ Պետրոսի բանաստեղծությանց մեջ Սիմոն Ֆելեկյանի մտցուցած ձախավեր «սրբագրություն»-ները»: Մ. Միհրդատյանցը նաև «նշանակած է այն սրբագրությունները, զոր ինքն իսկ Պետրոս կատարած է

իր տաղերուն վրա, երբ զանոնք առաջին տետրն մը ընդօրինակած է երկրորդ տետրի մը մեջ, ուր իր տաղերուն տված է վերջնական ձև մը» («Դուրյանի կյանքը...», էջ 45)։ Սրանք հիմնական նշումներն (հն) են։ Բայց կան և առանձին նշումներ (ան), որոնց մասին Մ. Միհրդատյանցը 1892-ի նոյեմբերի 20-ի նամակում Ա. Չոպանյանին գրել է. «Ապահով եղիր, դուրսը բնավ սրբազրույթուն չը մնար, միայն թե բան մը խորհեցա, երբեմն ձեռքովդ օրինակած և ինձ նվիրած Դուրյանի տաղերը բազդատեցի բուն ձեռագրին հետ և սրբագրեցի բնականաբար, իմ նշանակած սխալներն զատ, ուրիշ անհամապատասխանություններ ալ գտա, արդյունք գրաշարներու տգիտության կամ անդետ կերպով կատարված հոռի սրբագրություններու։ Այդ խարդախյալ, Երբեմն ալ անիմաստ տողերն, խաբվելի և նեղվելի ազատելու համար քեզ, պետք տեսա կտոր մը թուղթի վրա նշանակել զանոնք» (ԲՆՀ, 1968, № 1, էջ 152)։

Միհրդատյանցի հիմնական նշումները կատարված են քառածալ մի թղթի վրա, որի մի էջին գրված է. «Բ տետրակին մեջի ոտանավորներն իրենց կարգավ» և տրված է տաղերի ցանկը։ Մյուս էջերում կարմիր թանաքով գրված են Դուրյանի բանաստեղծությունների առանձին տողերը, կապույտով ցույց են տրված հեղինակային սրբագրումները, իսկ սևով՝ Ֆելիկյանի աղավաղումները («Ա և մեկնով ստորագծյալ բառերը կամ գրերը Ֆելիկյանի կողմի ավերված են ըսել է»)։ Այդտեղ ևս հաստատվում է. «Այս գրածներես դուրս սրբագրություն չը կա ոչ առաջին տետրակին մեջ, ոչ առաջինն երկրորդին անցած ժամանակ և ոչ ալ երկրորդին մեջ» (ԱԶՖ, ՄՄՀՆ)։ Առանձին նշումներն արված են տետրի սովորական թղթի երկու էջերին, կարմիր, կապույտ և սև թանաքով՝ նույն սկզբունքով, ինչ հիմնական նշումները։ Դուրյանին նվիրված իր ուսումնասիրությունը վերամշակելիս Չոպանյանը լայնորեն ներկայացրել է Միհրդատյանցի դիտողությունները։

Այդեն տեսանք, որ Ե. Դուրյանն իր բերած ցանկը կազմել էր բանաստեղծի «վերջին ձեռագրին» հիման վրա։ Բայց Մ. Միհրդատյանցը ևս նշում է, որ իր բերած ցանկը երկրորդ տետրակինն է։ Ուրեմն դրանք պետք է լինեն միևնույն (երկրորդ) տետրակի ցանկը։ Սակայն համեմատությունը պարզում է, որ Միհրդատյանցի ցանկում մտել է 34 տաղ. չեն հիշվում «Ի՛նչ հանդիստը», «Ի՛մ մահը» և «Ի՛նչ կըսեն» գործերը։

Ցանկի վերջում Միհրդատյանցն ավելացրել է. «Ասոնցմե վերջը կուգան

բրցված այն երկու թուղթերը, որոնք քու քովդ են եղեր, և Հայր Սուրբը (Յ. Դուրյանը—Ա. Շ.) կը հիշեցնեք քեզ, որ զանոնք ալ չը կորսընցնես»։ Եվ ապա. «Զատ թուղթին վրա գրված է հիվանդությանը պատճառով ընդհատված քերթվածը (Ա.) անթվական»։

Նախ. ի՞նչ «երկու թուղթերի» մասին է խոսքը։ Անկասկած, ցանկում շիվարկված Լրեք տաղերից երկուսի («Իմ մահը» և «Ի՞նչ կըսեն»)։ Դա հաստատվում է Յ. Դուրյանի 1894-ի մարտի 23-ի Արմաշից Ա. Չոպանյանին ուղղած նամակով։ Այս նամակը տպագրված է «Հայրենիք» լրագրի 1895-ի հունվարի 15-ի համարում, ինչպես նաև Ա. Չոպանյանի գրքի առաջին հրատարակութունում։ Նամակի բնագրում կա մի հետգրություն («Հ. գ.»), որը չի հրատարակվել, բայց հենց այդ հատվածն է լույս սփռում հետաքրքրող խնդրի վրա։ Այդտեղ կարդում ենք. «Դուրյանի «Ի՞նչ կըսեն» քերթվածին ձեռագիրն խնդրած էիք. «Իմ մահն» ալ անոր հետ ղրկեցի Ձեզ։ Պ. Մաքսուտ Միհրդատյանցի ձեռամբ զանոնք ետ դարձնելի հետո անցյալ ամառ Դավիթ Խաչիկյանի հանձնեցի բնագիր թուղթերն Ձեզի տալու համար։ Եթե Ձեզի չէ տված, ուրեմն յուր քով կմնան։ Իրմե ուղղակի պահանջեցեք զանոնք» (ԿԱԹ, ԱՉՑ, № 1740)։ Այսպիսով, ցանկից դուրս մնացած «երկու թուղթերն» են «Իմ մահը» և «Ի՞նչ կըսեն»-ը։ Գալով «Իմ հանգիստը» բանաստեղծությանը, ապա դա, հավանաբար, մեխանիկորեն է դուրս մնացել։ Այս երկու բանաստեղծությունը, ինչպես նաև «Ա.» («Երեկոյան բալն կը սողար...») անավարտ տաղը գրվել են ավելի ուշ՝ երկրորդ տետրը կազմելուց հետո, այդ պատճառով էլ Դուրյանը չի հասցրել դրանք օրինակել և մնացել են առանձին թղթերի վրա։

Մեր ատածը հաստատվում է նաև Ա. Գալաթյանի բերած Բ տետրակի ցանկով։ Այստեղ ևս նույն հաջորդականությամբ հիշված են Յ. Դուրյանի թվարկած բոլոր տաղերը, որտեղ վերջին, 36-րդ տաղն է «Ա.»-ն հրատարակչի ծանոթությամբ. «(Տետրակեն անջատ՝ առանձին թուղթի վրա)» (Տ, 1, 2 ժԱ)։ Իսկ «Ի՞նչ կըսեն» և «Իմ մահը» քերթվածները, որոնք Յ. Դուրյանի ցանկում գրավում են 36—37 տեղերը, Ա. Գալաթյանի ցանկում տեղ չեն գրտել այն պարզ պատճառով, որ (ինչպես արդեն տեսանք ժամանակին) դրանք հանձնվել են Ա. Չոպանյանին և, հավանաբար, կորել են։ Երուսաղեմում պահվող Բ տետրակի ցանկում պակասում են նաև 19 և 20 էջերը, որոնք պարունակում են «Նայվածք մը» տաղի վերջին տունը, «Նվագ է տարեղար-

ձի Ազգային Սահմանադրության» բանաստեղծությունն ամբողջությամբ և «Հծծյունք»-ի առաջին և երկրորդ տները (Տ, էջ ԺԱ)։

Դուրյանի տաղերի Ա տետրակի մասին հանգամանալի տեղեկություններ ենք գտնում հրուսաղեմյան հրատարակության առաջաբանում։ Ըստ Ա. Գալայճյանի՝ այդ տետրակում առանց «Սիրեցի բեզ» ու «Ձոնիկք» բանաստեղծությունների տարբերակների, զետեղված է 29 տաղ և խորագրված է «Պ. Դուրյան. Տետր առաջին. 1871»։ Վերջին երեսի վրա էլ կա այն զարդանկարը, որի մասին խոսք եղավ վերևում։ Հրատարակիչը բերում է այդ տետրակի տաղերի ցանկը՝ փակագծերում տալով որոշ ծանոթություններ (Տ, էջ է և ԺԱ)։

1. Իզնֆ Հայրենասիրի
2. Սիրեցե՛՛ք Ձմիմյանս
- 2բ. Սիրեցի բեզ (Ջնշված հեղինակին կողմև. տարբերակ թիվ 16 ի)
3. Պետֆ է Մեռնի՛լ
4. Յընսուրումն Պատրիարքական Ամեն. Հայրիկին
5. Ի Դիմավորություն Ամեն. Հայրիկին
6. Հայրիկն Հայոց
7. Երգ Պատերազմի Վարդանանց
8. Առ Կույսն
9. Վիշտֆ Հայուն
10. Կույսն Լֆյալ
11. Նայվածֆ Մի
12. Նվազ է Տարեյարձի Ազգային Սահմանադրության
13. Հծծյունք
- 13բ. Ձոնիկ (Ջնշված հեղինակին կողմև. տարբերակ թիվ 22-ի)
14. Մանուկն Առ Խաչ
15. Իցի՛վ Թե
16. Սիրեցի՛ Քեզ
17. Սիրիլ
18. Գրժել
19. Լընակ
20. Թրֆուհին

21. Կիշեր Մի
22. Չոնիկի
23. Նե
24. Առ Մայիս
25. Առաջին Կասկած
26. Վերոգրյալ Տաղեն Օր Մը Վերջը
27. Չ՛նե Պաշտեմ
28. Կսկոն-Մաղկունք Կույսին
29. Սև, Սև

Գալով Բ տետրակին՝ Ա. Գալայճյանը ևս հաստատում է, որ այն խորագրված է «Տաղք. Պ. Դուրյան. 1871»:

Հենց այս տետրակի վրա է, որ Ս. Ֆելեկյանը մտցրել է իր ուղղումները. որոնք արված են «տարբեր գույն մեկանով և երբեմն մատիտով: Իր մեթոտեղած է «սրբագրելի» բառին վրային բարակ գիծ մը քաշել և տողերուն միջև գտնվող ազատ միջոցին վրան ավելցնել «սրբագրությունը» (Տ. էջ է):

Սկսած անցյալ դարի 90-ական թվականներից Պ. Դուրյանի տաղերը քարվանդակ են այլ լեզուների (ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, բուլղարերեն, հունարեն, հունգարերեն, իսպաներեն, ադրբեջաներեն, թուրքերեն, պարսկերեն, ռումիներեն):

1. («ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԵՆԱՅՐՍ ՄԵՋ»)

(էջ 11)

Ինքնագիրը գտնվել է Հ. Ճանֆեսճյանի մոտ, հայտնի չէ՝ պահպանվե՞լ է, թե ոչ: Բանաստեղծության ընդօրինակումը Ա. Չոպանյանի ձեռքով տե՛ս ԳԱԹ, ևՉՖ, շհամարակալված նյութեր:

Առաջին անգամ տպագրվել է 1894-ին, Ս. Չոպանյանի «Պետրոս Դուրյան» ուսումնասիրությունում (Թիֆլիս, էջ 23—24), ապա գետեղվել է 1918, 1926, 1940, 1945 (Վենետիկ), 1952 և 1959-ի ժողովածուներում:

Ըստ Հ. Ճանֆեսճյանի՝ Դուրյանի «առաջին ոտանավորն է կամ գեթ առաջիններեն մին» («Դուրյանի կյանքը...», էջ 23): Նրա իսկ կարծիքով

գրված է 13 տարեկան հասակում, 1864-ին (Չոպանյանը իրավացիորեն գրողի ծննդյան թիվն ընդունում էր 1851-ը): Բանաստեղծությունը տեղ չի գտել հեղինակի օրինակած տետրերում:

Չոպանյանն այս բանաստեղծության մասին գրում է. «Կպատմվի, թե Ստեփան Փափաղյան..., որուն ձեռքն անցեր է այս տաղը, սաստկորեն հանգիմաներ է փոքրիկ Դուրյանը այդպիսի ամբարիշտ բան մը գրած ըլլալուն համար և խստիվ պատվիրեր է այդ մեղքն անգամ մըն ալ չգործել» («Դուրյանի կյանքը...», էջ 24):

Տպագրվում է ըստ «Դուրյանի կյանքը...» ուսումնասիրության:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պետրոս Դուրյան» (1894)

8 Մըլած փքքսն սրտիս մեջ նոր:

13 Ինչո՞ւ արդյոք խորշակահատ

16. Սըրտերն զեղու արտասուք միշտ:

2. ԻՑԻՎ ԹԵ

(էջ 13)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Առաջին անգամ լույս է տեսել հեղինակի կենդանության օրոք՝ Կ. Պոլսի «Մեղու» պարբերականում (1871, 19 հունիս, թիվ 43), առանց գրությունից վավականի նշման: Զետեղվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908 և 1922-ի հրատարակություններից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

2 Չ՞ունի երկին աշացդ կայծերն ու կապույտ, (ՏԹՆԴ)

5 Գիշերն երկնի կայծից՝ լուսնույն սիրաղեմ, (ՏԹ, ՏԹՆԴ)

12 Նոճերու մեջ սրգա լըռիկ լուսինյակ: (ՏԹ, ՏԹՆԴ)

16 Լոկ սրբելով՝ թե շողար աչքդ արտասուք: (ՏԹ)

19—20 Գույնով ներկել այտերդ, թափել զոգդ իմ ցող, (ՏԹՆԴ)

Վերջին շնչիկս ի գիրկդ առնեք Ելևէջ (ՏԹ, ՏԹՆԴ)

Բոլոր աղավաղումները մատնանշել է Ա. Գալայճյանը, իսկ 20-րդ տո-
ղինը՝ նաև Մ. Մխչրղատյանցը: Վերջինս որոշակի ասում է. «Իցի՛վ թե»-ին
մեջ փոխառնել գրելու

Քոռմեի գիրգ ձեռքը տալի կյանքիս վերջ
քու տետրակիդ մեջ գրված է.

Վերջին շնչիկս ի գիրկդ առնե՛ր ելևէջ

Քննարկ անանկ սրբագրություն մը շրկա տետրակներուն մեջ» (ան):

«Մեղվի» տեքստի 2, 5, 12, 16, 20 և 22-րդ տողերը նույնպես համա-
պատասխանում են Դուրյանի տաղերի երկրորդ տետրի տեքստին:

ՏԵՔՍՏՅԻՆ ԱՅԼ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մեղու»

- 1 Ո՛հ ով ես դու, սե՛ր, երկնի հո՛ւր կամ ժպիտ,
- 4 Չունի լուսին վարդերն շիկնոտ այտերուդ:
- 8 Դու շ՛ես շնորհեր նայված մ՛ ինձ հուր աշերեդ:
- 11 Ձայնիցդ ապշած լըսելով քաղցր ու թրթրուն:
18. Եվ երբ գալիր այգուն շավղին ժպտով պերճ.
- 23 Պատկերանա՛ր հայելվույս մեջ քու ժպիտդ
- 25 Ո՛հ, իցի՛վ թե լինեի ես ճառագայթ,

ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄԿՆ)

- 1 Ո՛հ, [ո՛վ] ի՞նչ ես դու, սե՛ր, երկնի հուր կամ ժըպիտ...
- 16 Նոկ սրբելով՝ [թե] եթե շողա աչքդ [արտասուք] աբտսուխ:
- 23 [Պատկերանար հայելվույս] Յոլանա՛ր իմ հայելվույն մեջ քու ժըպիտ՝
Բանաստեղծության տարբերակն է «Սիրեցի քեզ»-ը:

3. ՎԻՇՏՔ ՀԱՅՈՒՆ

(էջ 15)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է 1872, 1908, 1918, 1926, 1940, 1947, 1956, 1963 և 1967-ի
ժողովածուներում:

- 3 Համբուրին հետ շիթ մ'ըզգացի արտասովաց
- 19 Ալ բոեւ են ծոցեղ հուսո քաղցր հրեշտակք
- 26 Ի գլուխ կրես, դու պըսակ
- 36 Սիրագեղ լանջք կուսից տեսավ երբ 'ի խոց...
- 40 Խույլ քույլ՝ բյուր բյուր ոգիք թըռան տրտմալիք:
- 42. Քողին պսակ և քնար

Բոլոր աղավաղումները, բացի 3-րդ տողինից, մատնանշել է Մ. Միհրը-դասյանցը (հն, ան): Նա հիմնական նշումներում ցույց է տվել նաև մի աղավաղում.

28 Ալ շըկա թագդ նախնի սակուն ՏԹ-ում ճիշտ ձևն է՝ առչի: Ըստ Միհրդասյանցի (հն)՝ 36-րդ տողում Դուրյանը նախապես գրել է «սիրատրոփ», իսկ Ֆելեկյանը դարձրել է սիրաբուրբ, մինչդեռ ՏԹ-ում սիրագեղ է: Առանձին նշումներում արդեն հիշյալ տողը ճշտված է. րնագրայինը սիրատրոփն է, իսկ Ֆելեկյանինը՝ սիրագեղը:

Մ. Զերազը 9-րդ տողի՝ «Արարտյան հսկայից» ընդգծված բառի փոխարեն առաջարկել է «Արարտա» ձևը (ՔԱ, էջ 14), բայց դա աղավաղում դիտելու սրևէ հիմք չունենք:

1893-ի հրատարակությունում «Մնաս բարյա՛վ» բանաստեղծութունից հետո աստղանիշով զետեղված է հետևյալ անվերնագիր հատվածը՝ նշելով գրություն տարին ու ամսաթիվը («1868, Հունիս 28»).

Փոխանակ քաղցր օրորներու...
 Օրրոցիս քով մայրիկս զքեզ միշտ ողբաց
 Երբ համբուրեց զիս՝ յուր այտերն չին թաց,
 Քշվառ մ' էի, աչերս արցունք նախ տեսան.
 Սիրուն գրկեդ հեռու աչերս ես բացի
 Այլ րնագրամար ես քեզ համար նախ լացի, իմ անուշ
 Նոճեագարդ տխուր դամբան այդ անհուշ՝

Մի շարք ժողովածուներում (1900, 1904, 1947 և այլն) այս հատվածը տպվել է նույն հաջորդականությամբ, կարծես իրոք «Մնաս բարյա՛վ»-ի մի մասն է: Գրականագետ Վ. Թերզիբաշյանը ուշադրություն դարձնելով այդ հատվածին, հանգեց այն եզրակացության, թե դա «Վիշտք Հայուն» բանաստեղծության 1—7 տողերի մի տարբերակն է և ըստ 1872-ի ժողովածուի վերականգնեց «ավարտված և վերամշակված տեքստը» (Վ. Թերզիբաշյան, Պետրոս Դուրյան, Երևան, 1959, էջ 140): Թվում է, թե դժվար է համաձայնել այս ենթադրությանը, քանի որ գրականագետը չի հիշատակում սույն հատվածի առթիվ տողատակին բերված Բ. էքսերճյանի կարևոր ծանոթագրությունը: Մի քանի տողերի տարբերակների կապակցությամբ էքսերճյանն ամեն անգամ ընդգծել է, թե դրանց հեղինակը Պ. Դուրյանն է: Այսպես. «Սույն տաղն նույն իսկ Պետրոս Դուրյան սրբագրած է...», «Սույն ոտանավորն ևս սրբագրած է քերթողն հետո, և փոխած է վերնագիրն ...», «Սույն ոտանավորն սրբագրած է նույն ինք Պետրոս Դուրյան...» (ՏԹՆԴ, էջ 58. 60 և 64): Բայց ահա քննարկվող հատվածի կապակցությամբ է միայն, որ նշում է. «Առաջնույն մեջ (1872-ի ժողովածուի— Ա. Շ.) հրատարակված է սույն տաղն՝ սրբագրված» (էջ 62): Պարզ է, որ ականարկը վերաբերում է Ս. Ֆելեկյանին: Վ. Թերզիբաշյանը ևս տարակույսներ է ունեցել հիշյալ հատվածի առթիվ՝ գրելով. «Սակայն, մեր կարծիքով, անաւարտ վարիանտի հատվածը ավելի բնորոշ է Դուրյանի պոեզիայի անմիջականության և անկեղծության համար» («Պետրոս Դուրյան», էջ 140): Ուրեմն, բնական կլիներ ենթադրել, որ բանաստեղծության հանրահայտ տեքստի 1—7 տողերի բուն հեղինակը Ս. Ֆելեկյանն է, իսկ էքսերճյանը գրաքննական նկատառումներով չի մատնանշել աղավաղումները, ինչպես չի անվանել բանաստեղծության վերնագիրը, առաջին տողից բաց է թողել «հայրենիք» բառը և վերջին երկու տողը փոխարինել բազմակետերով:

Սակայն այսպիսի ենթադրությունը մերժվում է Մ. Միհրդատյանցի բերած փաստերով և Երուսաղեմի հրատարակության տեքստով: Բանաստեղծությունն իրոք աղավաղվել է, բայց, ինչպես արդեն տեսանք, 1—7 տողերում որևէ աղավաղում չկա: Ուստի Վ. Թերզիբաշյանի ենթադրությունն ընդունելի է: Պետք է կարծել, որ էքսերճյանն ունեցել է «Վիշտք Հայուն» բանաստեղծության նախնական տարբերակը՝ վերոբերյալ հատվածով, որն անծանոթ էր Միհրդատյանցին:

ՇԵՂԻՆՎԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄՀՆ)

Վիշաք [նժդեհին] Հայուն

- 4 [Աղոտ] աչերս [արտասվալից լույս տեսան] տեսան արցունքներու լակ երկինգ:
- 7 Փառաց դարեր ծընող՝ [իյնող] ընկնող հայրենի՛ք,
16—17 Ի՛արյունարուխ [սիրտ] կող ու լանջ:
[Մ'ոխրով պատած արյունաներկ] Մոխիր հագած,
արյուն ծըծած սև հողե՛ր,
19 Ալ ծոցեդ թոեր են հուտ քաղցր [հրեշտակք] հրեշտակի
30—31 [Աղի աղի արտասվաց] Դառնաքախիծ մըտածմանց
[Կաթիլներ ցուրտ ու սառած] Քրտունքներ սառ՝ փառ կտրած՝
34 Վարդատարփիկ [պլպուլն] բուլբուլն դողով թռչեցավ,
36 [Սիրարուխ] Սիրատրափ լանջք կուսից տեսավ երբ սրախոց...

4. ԻՂՁՔ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

(էջ 18)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է 1872, 1908, 1918, 1926, 1940, 1945 (Վենետիկ), 1947, 1952, 1956, 1959, 1963 և 1967-ի ժողովածուներում:

Ե. Դուրյանը Չոպանյանին ուղղած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում նշում է, որ Ս. Ֆելեկյանի ձեռքը դիպել է նաև այս բանաստեղծությանը. «Սրբագրիչն ամբողջ քերթվածին ազնվական ներշնչումն ու desiderata: (ցանկությունները, իղձերը— Ա. Շ.) վրեժխնդրության ցասկոտ նզովքի մը հեղաշրջած է» (ԲՅԸ, 1967, № 1, էջ 167):

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ (ՏԹ)

- 1—4 Երբոր ցողին փառփուն շիթեր գրչերվան
հոտի՛ թերթի՛ ծաղկի վըրա կը տեպան,
Եվ երբ երկինգ աստղեր շողան մթավար,
Ցայտեն արցունք՝ կայծ իմ աչերս խավար.
12—13 Երբե՛ք, այլ ուղի մ'արցունք ըլլալ, ձեզ ցո՛ղ տալ:

Երկաթ՝ շղթա՝ բանտ և անդունդք ու վըհեր,

24 Երբե՛ք, այլ ձեզ պատուով մ'ըլլալ, ու լո՛ւյս տալ
27—28 Բնության դաշնակք, ո՛հ, չ'են կրնար նվագեր
Ձանգ հառաչք, յոր մորնչեն նոճիներ.

31—34 Թերևս ժպտին Հայոց մըթին սարերը,
Կամ շունչ ծխեն Սիպիւրիո սառերը,
Բայց սև հոգիք ու սև ճանկեր անողոք
Խեղդել կուգան ազատ հոգվույս իմ բողոք,

39—42 Բնավ ինձ հետ իրավունք ոչ թոթովեց,
«Հայր շես» ծաղրեց, և ձայնը գիս չը թովեց.
Հա՛յ ու շղթա, ձեզ մոռնա՛լ,

Երբե՛ք, այլ շունչ մ'ըլլալ, ու ձեզ ոգի տալ:

45 Թե հայութիւն երկնե «Ազատ զավակներ»,

47—48 Քնա՛րդ իմ, զքեզ մոռնա՛լ,

Ո՛չ, յետ շիրմիս քեզ ձայն ըլլալ, ու հայ լալ:

31—34 և 40-րդ տողերի աղավաղումները ցույց է տվել Ծ. Դուրյանը, վկայելով նաև, որ յոթերորդ տան վերջին տողերը (41—42) «յուր կողմանն» ավելացրել է Ս. Ֆելիկյանը (ԲՅՀ, 1967, № 1, էջ 167): Իսկ Ա. Չոպանյանը («Դուրյանի կյանքը...», էջ 175) հենվելով մեզ անծանոթ մի աղբյուրի վրա՝ մատնանչել է (Ծ. Դուրյանի նշածներից բացի) նաև 27, 39, 41—42, 45 և 47—48 տողերի աղավաղումները: Մյուսները ցույց են տալիս՝ օգտվելով Երուսաղեմի հրատարակությունից:

ՇԵՂԻՆԱԿՍՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ («Դուրյանի կյանքը...», էջ 186)

Իդձք [հայրենասիրի] առ Հայաստան

33 Բայց սև [ձեռքեր, մատնիչ շուրթեր], հոգիք ու սև ճանկեր չ'են կրնար
47 [Ձեզ չեմ մոռնար դեռ հայեր] Թեև ըլլամ ես մեռել,

5. ՍԻՐԵՅԵՔ ԶՄԻՄՅԱՆՍ

(էջ 21)

Օրինակված է ինքնագիր երկու տեսրերում:

Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում: 1893-ի հրատա-

րակությունում զրաքննական նկատառումներով բաց են թողնվել երկրորդ և երրորդ տները՝ «Հետագա երկու տուներն պակաս են» ծանոթությամբ: 1908, 1922, 1926, 1940, 1947, 1954, 1956, 1963, և 1967-ի ժողովածուներում տպագրվել է լրիվ, իսկ 1900, 1904, 1918, 1945 (Վեներիկ), 1959-ի հրատարակություններում՝ հասպավիած:

Ե. Գուրյանը Ա. Չոպանյանին ուղղած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում (ԲՆՀ, 1967, № 1, էջ 168) որպես վրիպակ մատնանշում է միայն հարցական նշանի պակասը 5-րդ տողում (սա ուղղել է Բ. էքսերճյանը): Իսկ Մ. Չերազը մատնանշել է 4-րդ տողի մի վրիպակը. Վիհ-ի փոխարեն՝ վեհ (ՔԱ, էջ 27): Իրականում, դաստիարակված Կալայճյանի հրատարակած տեքստից, կան էական սղավաղումներ.

10 Նոր կրրոնին հետ արյան ուղխի առին քայլ... (ՏԹ)

12 Զհաղցր հագագ թե «ըզմիմյանս սիրեցեք»: (ՏԹ)

28 Ծոխն ու տընանկ պատանհին մեջ կ'ըլլան մի (ՏԹ, ՏԹՆԴ),

ՏԹ-ում 28-րդ տողի հարաբերական շաղկապն է և:

ՆԵՂԻՆԱՎԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄ («Գուրյանի կյանքը...», էջ 185)

29 [Ահեղասաստ] Կայծակնարև թե մըռընչեն մըրրիկներ

Սիրեցե՛ք գ'միմյանս — Քրիստոսի պատվիրանը (Հովհ., ԺԳ, 35):

6. ՊԵՏԹ Է ՄԵՌՆԻՒԼ

(էջ 23)

Օրինակված է ինքնագիր երկու տեսրակում:

Առաջին անգամ տպագրվել է 1872-ի ժողովածուում, ապա ղետեղվել մյուններում, բացի 1908, 1945 (Հալեպ) և 1952-ի հրատարակություններից:

Բ. էքսերճյանը կարծում է, որ այս բանաստեղծությունը գրված է Գուրյանի սիրած աղջկա («Զ'նե պաշտեմ» տաղում հիշված «Պ...»-ի) «ազեցուցության տակ» («Ընդարձակ կինսաղորություն...», էջ 55):

Ա. Գալայճյանը ցույց է տալիս հետևյալ աղավաղումները.

2—3 Երկինքն աստղեր գերթ «սիրո վերեք» ցուլային, (ՏԹՆԴ)

Դեղնած ու չոր թերթից՝ լուսինն յուր բեկբեկ (ՏԹՆԴ)

9 Նա յուր շնչովն իս գոհ բնել կր կարծեր, (ՏԹՆԴ)

17 Կը սիրե նե, նայվածքին մեջ կը բոսմի. (ՏԹ, ՏԹՆԴ)

24 'Իողոռոջ ու գիրկ' պաղ ձեռք մ'ըզպաց ձեռքը սոսկ (ՏԹ)
37 Շիրմիդ վարդը չը թոռմած՝ քեզ գրրկեմ ես... (ՏԹ, ՏԹՆԴ)։

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ

ծ Կը շոյեր գլուխս՝ այրած ճակատս [շղարշե] վառե թե,
18 Ո՛հ, Ի՞նչ է նե-ձյունով [շինված] շաղված մի անդրի,
Առաջին սրբագրությունը մատնանշում է Ա. Գալայճյանը (Տ, էջ 25),
երկրորդը՝ Ա. Չոպանյանը («Դուրյանի կյանքը...», էջ 185)։ Ի դեպ՝ 18-րդ
տողի առթիվ Կյուրեղ Քիպարյանը գրել է. «Զյունով շաղված մի անդրի»,
բառ առ բառ Հյուկոյեն է» («Բնագմավեպ», հանդես, Վենետիկ, 1922, թիվ
11, էջ 338)։

7. Ի ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ

(էջ 25)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում։

Առաջին անգամ «Պ. Տուրյան» ստորագրությամբ տպագրվել է 1869-ին
«Օրագիր ծիլն Ավարայրով» թերթում (հոկտեմբեր 2, թիվ 21)։ Զետեղվել
է 1872, 1908, 1926, 1940, 1947, 1956-ի և Երուսաղեմի ժողովածուներում։

«Օրագիր...»-ում ունի «Ձոն Առ Հայրիկն Խրիմյան Ազգասեր Նորընտիր
Պատ.[րիարքն] Կ. Պոլսո» խորագիրը, իսկ տները համարակալված են հայ-
կական թվանշաններով (Ա—է)։

Հեղինակի կենսանություն օրոք տպագրված տեքստում տեղ են գտել մի
շարք վրիպակներ, որոնք մատնանշել է Պ. Դուրյանը հետևյալ նամակում
 («Օրագիր...», 1869, հոկտեմբեր 6, թիվ 24, մ.)։

«Պ. խմբագիր.

Հինգշաբթի օրվան 21 թիվ օրաթերթով գրասիրաբար հյուրընկալած
Ձոնեհնուս մեջ տպագրական տառասխալներ և վրիպակներ վրիպած և որով
իմաստ և նշանակություն այլափոխած ըլլալուն՝ ստիպվեցա հաջորդ թերթով-
նիդ սույն սխալները ուղղելու բարեհաճելիդ խնդրել, որոնք հետևյալներն են.
Ա. Հաստվածին Դ տողին մեջ վոխանակ «սառուտ սարերուն» ըսվելու՝ «սա-
ռուտ սառերուն»։— Բ հաստվածին Դ տողին մեջ «ավերք» ըսվելու՝ «ավեոք»—
Գ հաստվածին է տողին մեջ «Այս» ըսվելու՝ «զայս» և Թ տողին մեջ «գրր-

գըլլակ» ըսվիլու՝ «գգլլակ»։— Ե հատվածին Ը և Թ տողերուն մեջ «փալ-
փըլին» ըսվելու՝ «փոշեղին» և «երկնքին» ըսվելու տեղ՝ «երկնքեն»։— Զ
հատվածին Զ տողին մեջ «նախնի» ըսվելու՝ «նովանի» և Ը տողին մեջ
«գիտության» ըսվելու՝ «գերության», է հատվածին Ա տողին մեջ «բոցագես»
ըսվելու «բոցակեզ» ըսված է։

Սույն երկտող գրությունը ձեր պատվական լրագրին մեկ անկյունը զե-
տեղելով՝ մեր անկեղծ հրախտագիտությունն ավելի Ձեր վրա հրավիրած
կլլաք։

1869 Շոկտ. 2 Սկյուտար

Պ. Դուրյան»։

Այս վրիպակները կանխված են 1872-ի և հետագա հրատարակություն-
ներում։

Բանաստեղծությունը Դուրյանն ընդօրինակել է իր տետրերում և հավա-
նարար արտագրության ընթացքում էլ փոխել վերնագիրը, վերացրել տների
համարակալումն ու կատարել որոշ խմբագրումներ։ Ա տետրում խորագրին
է. «Յընտրումն Պատրիարքական Ամեն. Հայրիկին» (Տ. էջ ԺԱ)։

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ (ՏԹ)

25 Բացաթըռիչ Հայի առ Հայ նա թրուով,

29 Կը հագնեք սեվ ու գրգլլակ,

«Օրագիր...»-ի տեքստը ևս հաստատում է, որ սրանք բնագրային
չեն։

ՏԵՔՍՍՍՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Օրագիր...» (մ.)

3 Փախավ խավարն, փողփողե լույս արևուն

8—9 Շուր ներշնչոզն շին աստղեր,

Եղբայրության հուրն է ձայն,

12 Եվ արևուն բոցերուն հետ հուր դարձավ.

15—16 Ազատության Հայաստանի սիրահար՝

«Հայ» կոչելով շուրթերն ևղան բալկահար։

24 Ուր Հայն նեշեց՝ հառաչ ու հուր դրկեց հոն,

28 Այլ կուրծֆն ուներ Հայ, սեր, հուր,

- 34—35 Զր կրցան ձայնն մարել՝ խեղդել իր հույսեր,
Միշտ «Հայ» գոչեց, բարձն էր գլխուն Մասայց սար,
41 Բաց են սրտեր, բաց են քներ, բաց ճակատ.
44 Ազատասեր Հայու մը իղձն քեզ հրեշտակ.
47—49 Արտասր ու քիրտդ թող փալվիլեն
Զերթ աստեղի Հայ երկնքին,
Եվ սորվեցու Հայուն դու
54—55 Հայն ու դամբան, տանաւ, հյուղակ Հայաստան,
Թող փլատակաց մեջեն զարթնուն հիշատակք,
58 Գիտության լույսն Հայ աստղ
64—65 Վե՛ն իրավանց, սիրո, լուսո ենք կարոտ,
Ազատության Հայն կր հենու, ոչ թագի,
67—68 Եվ ալ մոռնա խնդն Հայր
Իր հին խոր վե՛րն ու վայր,

Այս ձևը արժանացել է հորեն նարպեի ուշադրությանը, որ, ինչպես Բ. էքսերճյանն է գրում, «մեծ կարողություն մը կը նշմարե այդ երիտասարդ բանաստեղծին վրա, առ ինքն կը կոչե զինքը՝ տեսնելու և անոր հետ խոսակցելու համար» («Ընդարձակ կենսագրություն...», էջ 65)։ Ի դեպ, Ե. Գուրլանի վկայությամբ, Մ. Խրիմյանը նույնպես շատ է հավանել այս բանաստեղծությունը և խոստովանել. «Իմ Պատրիարք եղած ատենս շատեր գրեցին ինձի համար, բայց անոր (Պ. Գուրլանի— Ա. Շ.) գրածին պես չի էլար» (ԲՅԸ, 1968, № 1, էջ 149)։

Բանաստեղծության գրության ամսաթիվը վերականգնել ենք ըստ «Օրագիր...» թերթի տեքստի։

Մկրտիչ Խրիմյանը Կ. Պոլսի պատրիարք է ընտրվել 1869-ի սեպտեմբերի 3-ին։

8. Ի ԴԻՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ,

(էջ 28)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում։

Տպագրվել է 1872, 1908, 1918, 1940, 1947, 1956 և Երուսաղեմի ժողովածուներում։

Բանաստեղծութիւն զրուիցան մասին էքսերճյանը հայտնում է. «1869-ին նորընտիր Պատրիարքն Սկյուտարու Ս. Կարապետ եկեղեցին կուղա՝ Վարդավառի տոնին՝ Ս. Պատարագ մատուցանելու համար: Պետրոս ՂիմաՎորուրյան առթիվ ոտանավոր մը կը գրե... և ձեռք կը մատուցանե նա: Սրբազան Պատրիարքը կը հավնի և այն ատենն մեծ համակրութիւն ցույց կուտա անոր...» («Ընդարձակ կենսագրութիւն...», էջ 67):

Հարկ է նկատել սակայն, որ «Վարդավառի տոնը» նշվել է հին տոմարով հուլիսի 20-ին (տե՛ս «Օրացույց և դուշակութիւնք Օդոց 1869 թվին Քրիստոսի և Հայոց ՌՅԺԸ=1318 հորինյալ ի տեր Երեմիա քահանայի», Կ. Պոլիս): Իսկ Մ. Խրիմյանը Սկյուտար կարող էր այցելել միայն 1869-ի իոր աշնանը կամ ձմեռնամուտին, քանի որ նա Կ. Պոլիս է հասել նույն տարւա նոյնմբերի 6-ին («Մասիս» շաբաթաթերթ, 1869, թիվ 926): Բանաստեղծութիւն թվականը տարակույս չի առաջացնում, որովհետեւ թե՛ երկու ցանկերում և թե՛ բոլոր հրատարակութիւններում նշված է՝ 1869:

Երուսաղեմի հրատարակութիւն տեքստը ի հայտ է բերում հետևյալ ազավաղումները.

ՏԹ

2 Ճակատն գոհարք՝ աստեղք կը փայլին.

15—14 նա կուղա Հայոց մարգերեն կարմիր,

Ազատեց Քրդեն Հայը վշտակիր,

17 Տեսեր, քուրձ հագեր, կարծես ենք դրակ,

33 Բայց դեմքին վրա կանուխ են փթթած

17-րդ տողի «կարծես ենք դրակ» բառերի անիմաստ լինելը («դրակ» ըստ Հր. Աճառյանի արմատական և Ստ. Մալխասյանցի բացատրական բարանների նշանակում է «հասակ», «բոյ») զգացել է նաև Մինաս Չերաղը և բանաստեղծութիւն ֆրանսերեն տողացի թարգմանութիւն ծանոթագրութիւնում նկատել. «Ենք դրակ բառերը հավանաբար պետք է կարդացվեն ինք դիակ» (ՔԱ, էջ 25):

Մովսեսի բնար— ըստ Աստվածաշնչի Մովսես մարգարեն իր երգով կարողացավ օգնել իսրայելցիներին փրկվելու եգիպտացիներից:

(էջ 30)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Առաջին անգամ տպագրվել է 1869-ին «Օրագիր ծիլն Ավարայրվո» թերթում (հոկտեմբեր 27, թիվ 42): Զետեղվել է 1872, 1908, 1918, 1926, 1940, 1947, 1956-ի և Երուսաղեմի ժողովածուներում: Բանաստեղծության աղավաղման մասին որևէ հիշատակություն չունենք: Մ. Չերազը կարծում է, որ 18-րդ տողը պետք է լինի ոչ թե «Յա՞յ. քուն Հայն», այլ «Հայ, քուն Հայն», (ԻՄ, էջ 18), բայց դա մերժվում է Դուրյանի կենդանության օրոք լույս տեսած և Երուսաղեմի հրատարակության տեքստերով:

«Օրագիր...»-ի տեքստը ժողովածուներից հայտնի տեքստի համեմատությամբ ունի 4 ավելի տող և էական այլ տարբերություններ, ուստի ստորև ներկայացնում ենք հեղինակի կենդանության օրոք հրատարակված ամբողջ տեքստը (մ.).

Սկացիր սարերեն Հայ փութով, հովիվ.

Քով հովիվ,

Փարատի սև ամպ, փայլի արդ արև

Արդարև,

5 Լույս տեսնան դաշտեր ազատ առնենք քայլ

Առ նենգ գայլ,

Յըցուր ցուպդ, Հայերն կանչև մի յարուտ

Մի հար հոտ.

10 Ծանկեր արյունոտ կուրծ մեր թափ առինք,

Քափառի՞նք...

Եկո՞, հովվե մեզ սիրածդ, ազգասեր

Ազգ ա՛ս էր:

Դու գըթոտ նման երկնի Հայրիկին՝

Յ՝ այր ՚ի կին,

15 Յանմեղ և յալի տիրե լույս և սեր

Լույս եվս է՞ր

- Յավի՛ չը զարթնու հրենվան յայգուն յայն
 Յա՞յ, քուն Հայն:
- 20 Մերք փըլատակաց եղար դու լուսին
 Դու լուսին
 Սոխակ ծնար նոնյաց խորերն ու հրգեբըդ
 Վերքերըդ
 Առած բյուրավոր դևո դու կանչեցիր,
 Կան՝ չէ ցիր
- 25 Երդերդ միշտ մեր սիրտ, սիրո, հոգվո ձայն
 Հոգվոց Հայն
 Հանեց, վստեցավ ձայնեդ, իմացավ
 Հիմա ցավ.
- 30 Ըզեկ կը խնդրե Հայն արդ ամբօխ չէ,
 Ամբողջ է.
 Արդ ըսե Հայուն, ջըրե ազդ անոր,
 Աստանոր.
- 35 Ես կարոտ եմ վառ սրտից՝ ձեռքերի,
 Ձեր գերի,
 Եղբայրքն ազատել, լույս տալ, ի Մասիս,
 Ի մաս յիս,
 Առնել իմ նախնյաց արյուն փրտերեն,
 Քյուրտերեն
- 40 Ինչպես առի վրեժ, Հայեր փրկեցան
 Փրկեց ան
 Ցանկամ, որ օրհնենք ինձ տան Հայկառան՝
 Հայկ՝ Արամ.
- Ասե՛ն ինձ Հայեր՝ թշվառք, ան յամայր
 «Ահա մայր»
- 45 Մեռնիմ քեզ համար, Հայաստան անուշ,
 Տան անուշ:

1869 Հոկտ. 24 Սկյութար

(էջ 32)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է 1872, 1908, 1918, 1926, 1940, 1947, 1956, 1963 և 1967-ի ժողովածուներում:

Նրուսաղեմի հրատարակությունը պարզում է հետևյալ աղավաղումները.
ՏԹ

8 Հավերժ կանգնեն հաղթանակ.

14 Ուստի ծագի մեզ առավոտ:

Մ. Չերազը 8-րդ տողի «կանգնեն» բայը համարել է քերականորեն սխալ և առաջարկել է «կանգնենք հաղթանակ» ձևը (ՔԱ, էջ 17): Դա, ինչպես տեսնում ենք, պատճառաբանված դիտողություն է:

1908-ի տխրահամբավ «Սահմանադրության» օրերին այս բանաստեղծությունը առանց գրության թվականի նշման, լույս տեսավ նաև «Հայրենիքի քնար» հանդեսում (Կ. Պոլիս, 3 սեպտեմբեր, թիվ 4, էջ 90): Խմբագրությանն անձանոթ է եղել բանաստեղծության տպագրված լինելու փաստը, այդ պատճառով էլ ներկայացվել է որպես անտիպ գործ: Բայց հենց այդ «սխալը» ցույց է տալիս, որ խմբագրությունն իր տրամադրության տակ ունեցել է բանաստեղծության որևէ ձեռագիր:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայրենիքի բնար»

5 Փշրի պարսկին անտաշ կացին:

8 Հավերժ կանգնին հաղթանակ

12 Մսուից անվեհեր:

15 Մեր սուտերաց փայլին,

17 Մեր ամեն փայլին

Ա տետրում բանաստեղծության խորագիրն է «Երգ Պատերազմի Վարդանանց» (Տ, էջ ԺԱ):

Սասանե (Սասանյաններ) — Թագավորական հարստություն, որ իշխել է Պարսկաստանում 226—651 թթ.:

(էջ 33)

Սիրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Առաջին անգամ լույս է տեսել Դուրյանի կենդանության օրոք («Մեղու», 1871, 1 հուլիս, թիվ 46): Զետեղվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908, 1922, 1932, 1936, 1963 և 1967-ի (Երևան) հրատարակություններից:

Այս բանաստեղծության տարբերակն է «Մնաս բարյավ»-ը, որը «Տաղեր»-ի Երևանյան հրատարակիչների կողմից գիտվել է առավել հաջող, այդ պատճառով էլ... դուրս է թողնվել «Սիրեցի բեզ»-ը:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

2 Վարդից հրդեհ՝ կար յերկինն՝ (ՏԹՆԴ)

15—16 Եվ թափթըփել ի քո գիրկ (ՏԹ, ՏԹՆԴ)

Զարեհն մատունհրդ գիրգ (ՏԹ, ՏԹՆԴ)

27 Քեզ՝ ուր կուրծն վարդի թերթ՝ (ՏԹ, ՏԹՆԴ)

44 Քե բնավ գիս սիրած չես (ՏԹ, ՏԹՆԴ):

15-րդ տողի աղավաղումը նշել է նաև Մ. Միհրդատյանցը (հն), իսկ բոլորը՝ Ա. Գալաճյանը: «Մեղվի» տեքստը ևս պարզում է, որ 16, 27 և 44-րդ տողերն աղավաղված են:

ՏԵՔՍՍԱՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒՅՑՈՒՆՆԵՐ

«Մեղու»

5 Թավուտքի մը տակ ծաղկոտ,

14—15 Փետել թեւթերն վարդին վես

Եվ թափթըփել քու հեշտ գիրկ

30 Եվ սրտերու վերք փորել:

43 Հովին մեջեն կը հնչես

45 Գրկեմ սրտովս այդ ցուրտ հող,

Հինգերորդ տնից հետո լրացուցիչ կա հետևյալ տունը.

Ո՛հ, խոցեցիր իմ սիրտս ալ

Եվ ժրպիտրդ զըլացար,

Նըշողումն այն կենսատու

Այրեց ցավեր սրտերու:

Հիշյալ քառատողի մասին էքսերճյանը գրել է. «Այս մեկ տունն Ա տպագրութեան մեջ շկա: 1871 տարվո Օրագրին մեջ հրատարակված է սակայն, զոր Պետրոս հետո ջնջած է» («Ընդարձակ կենսագրութիւն...», էջ 54, Մ.): Եթե կենսագիրը շի շփոթում, ուրեմն այս բանաստեղծութիւնը Դուրյանը երկու անգամ է տպագրութեան հանձնել:

Ի դեպ այս քառատունը բերում է նաև Ա. Գալայճյանը, միայն վերջին երկու տողերը «Մեղվի» տեքստից տարբեր են.

S (էջ 77)

Նըշուլումն այն կենսատու

Այրեաց ավեր սրտերու:

Դուրյանն այս բանաստեղծութիւնը վերամշակել է: էքսերճյանից բացի այդ մասին ակնարկում է նաև Հ. Օշականը («Համապատկեր արևմտահայ գրականութեան», երկրորդ հ., էջ 344), բայց ավելի հանգամանորեն խոսում է Ա. Զոպանյանը: Նա իր մենագրութեան մեջ ապացուցելու համար, որ Դուրյանի միևնույն բանաստեղծութեան տարբերակները հաճախ երկու տարբեր բանաստեղծութիւններ են՝ վկայակոչում է նախնական («Մնաս բարյավ») և ավարտուն («Սիրեցի քեզ») օրինակները: Զոպանյանի արխիվի նյութերը ցույց են տալիս սակայն, որ բանաստեղծութիւնն ունեցել է երեք տարբերակ:

Ե. Դուրյանը որպես «նույն իսկ հեղինակին ձեռամբ... գլխավոր սըրբագրութիւնը կրած» քերթվածի օրինակ բերում է «Սիրեցի քեզ»-ը, նշելով գրութեան թվականը՝ 1869 (ԳԱՔ, ԱԶՅ, շհամարակալված նյութեր):

Սիրեցի քեզ

Առտու մը դեռ մըթընշաղ՝

Կը ծավալեր շող ու շաղ,

Մաղկանց մեջ քեզ տեսա ես,

Կը ժրպտեիր լուսնո պես:

- 5 Աշերդ սիրո Ատրուշան,
Մատներդ էին գիրդ շուշան,
Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայվածքեդ ծներ նոր եթեր:
- Սիրտըս թըռավ ոտքիդ տակ,
10 Կոխեցիր հոն քաղցր հրեշտակ
Սիրով եղան ձյուն մազեր,
Ըսին՝ կյանքը երազ էր:
- Մինչդեռ դու շես սիրեր զիս,
Մ՛ իշխեր գոնե տկար սրտիս.
15 Ուր որ երթամ դեմքդ ինձ հետ՝
Նայվածք չէ այդ՝ մահու նետ:
- Քավուտհներու տակ նըսեմ,
Երբոր մենիկ կարուսավեմ
Հոն ես դու, կը գըտնես զիս
20 Տերևներեն կը խոսիս:
- Նրբ անվակին մեջ փաղփուն՝
Կուզեմ քաղել դեմքըդ, դուն
Դարձյալ հոն կը գըտնես զիս,
Ալյաց մեջեն կը ժըպտիս:
- 25 Երբ կը փախչիմ ժայռ ու սար,
Երբալ հանգչիլ շիրմաց սնար,
Հովին մեջեն կը մընշես
Թե դու բնավ զիս սիրած շես:
- Իսկ երբ գրկեմ ցըրտին հողն
30 Քեզ շեմ գրաներ այլևս հոն,
Կույս է մ՛ է հաև գերեզման,
Կա՞ խորին սիրտ մ՛ անոր նման:

Ե. Դուրյանը հարկ է համարում նաև նկատել. «Քերթողին առաջին անգամ գրածն այս է, երկու տարի վերջ, (այսինքն 1871-ին— Ա. Շ.) ըրած է երկրորդ սրբագրութունն մը, իսկ երրորդ վերջին անգամ մաքուր գրելու ժամանակ վերջնական փոփոխութունն մը ըրած է միայն (հրատարակչալին վրայեն համեմատելով կրսեմ) ինքնի հապավելով սա տունն» (բերվում է «Մեղվում» տպված քառատողը)։

Ա. Զոպասյանի արխիվում կան «Բերթցի քեզ» բանաստեղծության երկու արտագրութուններ ևս։ Դրանցից մեկը կատարված է իր իսկ ձեռքով և ավարտունի համեմատությամբ տեքստային որևէ տարբերություն չունի։ Մյուս արտագրութունն ըստ երևույթին պատկանում է Մ. Միհրդատյանցին։ Դա օրինակված է կարմիր թանաքով, ապա վրան խաչ է քաշված։ Առանձին արտագրված և նորից ջնջված է «Մեղվից» ծանոթ տունը, որի կապակցությամբ նշված է. «Երկրորդ անգամ գրածին վեցերորդ տունը, դոր ջնջած է», իսկ ամբողջ տեքստի մասին ասված է. «Առաջին տետրակին մեջ այսպես գրած ու ավրած է. հետո ուրիշ մը գրած է նույն տետրակին մեջ, որ գրեթե նույնությամբ երկրորդ տետրակին մեջ անցված է, տուն մը միայն ամբողջապես հապաված է» (խոսքը վեցերորդ տան մասին է— Ա. Շ.)։

Տարբերակի քննությունը ցույց է տալիս, որ նրա առաջին 4 տունը տեքստային ընդգծված տարբերություններով համապատասխանում է «Մնաս բարյա՛վ» բանաստեղծության 1—4 տներին, իսկ 5—8 տները մատնանշված տարբերություններով՝ «Միրեցի քեզ»-ի ավարտուն տեքստի 9—12 տներին։ Սա բանաստեղծության առաջին տարբերակն է, որին հաջորդել են մյուսները։ Ինչպե՞ս են ստեղծվել 5—8 տները, ինչպես նաև «Մնաս բարյա՛վ» լրիվ տարբերակը, ցավոք, հնարավոր չէ պարզել։

ՉԵՂԻՆԱԿԱՑԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄՀՆ)

5 Թավուտքի մը [տակ] խոք ծաղկոտ

11 Կը [փետեի] փետտեի՞ր ծաղիկ մի,

14—15 [Փետեի] Փետտեի թերթի՞ր վարդին վեա՛

Եվ թափթըփեի թու [հեշտ] գիւղ գիւղ

33 Թավուտքի [մի] մը շուք նըսեմ

43 Հովին մեջեն [կը] միշտ մընչեա՛

Միհրդատյանցի ցույց տված երկու սրբագրություն (տող 5 և 15) համապատասխանում է «Մեղվում» տպագրվածին, իսկ 16-րդ տողը բերված է ինչպես «Մեղվում», բայց չի նշված նախնական խմբագրումը:

12. ԿՈՒՅՍՆ ԼՔՅԱԼ

(էջ 36)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908, 1922, 1945 (Վենետիկի և Հալեպի), 1952 և 1959-ի հրատարակություններից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

5 Ո՛հ ինչո՞ւ կուսին (ՏԹ, ՏԹՆԴ)

9 Կա՛յծ ու ծիծաղ, ծաղիկն համբուն, (ՏԹ, ՏԹՆԴ)

12 է կուսին ճակատ (ՏԹՆԴ)

14 Գեղգեղն գե՛լ աղեո՞ւ սրբտին. (ՏԹՆԴ)

19 Ալիք սիրո ցույց տան ձայն՝ նետ, (ՏԹ, ՏԹՆԴ)

26 Իջևեր գեփյուտ ցողիկ հեշտին՝ (ՏԹ)

30 Հանն կուսին լանջ: (ՏԹՆԴ)

26-րդ տողի աղավաղումը նշել են Բ. էքսերճյանն ու Ե. Դուրյանը: Վերջինս նկատում է, որ Ֆելիկյանի խմբագրածն անիմաստ է, ուշադրություն չի դարձված, որ «նույն խոսքին բայն՝ սահին, հոգնակի մնացած է» (ԲԵՀ, 1967, № 1, էջ 167): Այս, ինչպես նաև 5 և 19-րդ տողերի աղավաղումները, ցույց է տվել Մ. Միհրդատյանցը (հն, ան): Բոլորը մատնանշել է Ա. Գալսեյանը: Թե ՏԹ-ում և թե Դուրյանի Բ տետրակում 4-րդ տողն է՝

Պարգեց աստեղց կարմարն կապույտ

և ընդգծված բառը անուշադրության սխալ է: Դա հաստատում է նաև Ա. Գալսեյանը, որ գրում է, թե այդ բառը Ա տետրում եղել է կամար:

ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄհն)

1—4 Հալեց [սառերն] սառեր գարնան արև,

Ոսկի [մատով] մատամբբ ծաղիկ, տերև

Ցանեց, ցրվեց ամպ ու [թուխ] բալ փուլթ,

Պարզեց [աստղեր, կամար] աստեղց կամարն կապույտ.

13—14 [Թառեր սոխակն ի խիտ սաղարթ՝] Բուլբուլն բառեր թավուտ թփին՝
[Կը] Գեղգեղե [դողդոջ ու] [սրտագին] [զվարթ] գե՛լ աղիոֆ սըրտիե

16 [Կը] Զայհակցին [սիրո է օր] [քաղցր] հեշտ սիրո ժըխա՛ր...

13. ՆՎԱԿ է ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

(էջ 38)

Պ. Դուրյանն այս բանաստեղծությունը օրինակել է երկու տետրերում, Բ տետրակի ինքնագիրը կորել է (Տ, էջ ԺԱ և 61):

Առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի 1914-ի գրքում (էջ 19—20)՝ վերջին տան ձեռագիր լուսատիպով (Ֆաքսիմիլե) և հետևյալ ծանոթագրությամբ. «Միակ անտիպ քերթվածը, զոր Եղիշե արք. [եպիսկոպոս] Դուրյան հաճեցավ մեզ տրամադրել»:

Զետեղվել է միայն Երուսաղեմի ժողովածուում:

«Ամենուն տարեցույց»-ի տեքստում տեղ է գտել մի աղավաղում՝ 20 Արյուն չը ծըծած հողդ, չը քափած գանկ.

Ե. Դուրյանի և Միհրդատյանցի ցանկերում մտել է այս բանաստեղծությունը, տարեթվի նշումով, ըստ որում Ե. Դուրյանը փակագծերում ավելացրել է. «չհրատարակված»: Ե. Դուրյանի մոտ վերնագրում նշված է «Ժ-րդ տարեդարձի», իսկ Միհրդատյանցի ցանկում և «Ամենուն տարեցույց»-ում՝ «է»:

Ազգային սահմանադրություևն— Արևմտահայերի ներքին գործերին վերաբերող կանոնադրություն, որի հեղինակներն են Ն. Ռուսինյանը, Ն. Պալյանը, Գր. Օտյանը, Սերվիշենը և ուրիշներ: Պատրիարքարանն ընդունեց 1860-ի մայիսի 24-ին, իսկ Բ. Դուրը հաստատեց 1863-ի մարտի 17-ին: Դուրյանի բանաստեղծությունը գրված է այս վերջինի՝ յոթերորդ տարելիցի առթիվ:

(էջ 40)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908-ի հրատարակութունից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

2 Քե կուսին տիպար (ՏՔՆԴ)

4 Ո՞վ հարգեւ զանի (ՏՔ, ՏՔՆԴ)

7—8 կուսին աշերաց (ՏՔՆԴ)

Երկինք ո՞վ նայեւ: (ՏՔ, ՏՔՆԴ)

11 Ձ' Աստվածն այն երկնից (ՏՔ, ՏՔՆԴ)

2, 4 և 8-րդ տողերի աղավաղումները ցույց է տվել Մ. Միհրդատյանը (հն):

ԷԵՂԻՆԱԿԱՑԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄհն)

2—4 Քե [կուսին] կույսին [չըլար] տիպար

Այտերուն [տիպար] չ'ըլար՝

Ո՞վ [հարգեւ] կ'հարգեւ զ'անի:

7—8 [կուսին] կույսին աշերաց՝

[Երկնից] երկինք ո՞վ [նայեւ] կ'նայեւ:

2-րդ և 7-րդ տողերի սրբագրումները նշել է նաև Ա. Գալայճյանը:

15. ԱՌ ԿՈՒՅՍՆ

(էջ 41)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908, 1922, 1945 (Հալևա) և 1952-ի հրատարակութուններից: Միայն Երուսաղեմի ժողովածուում է նշված տարեթիվը, իսկ Մ. Չերազը, ինչպես և «Տաղեր»-ի 1932-ի ժողովածուի

կազմողները համարել են անթվակիր (էջ 84): Ծ. Դուրյանի և Միհրդատյան-
ցի ցանկերը ևս ապացուցում են, որ գրության տարեթիվը ստույգ է:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

1 Ո՛հ, մինչ ց՛ երբ, ըսե՛, ո՛ կույս, հոգիս ըլլա գեղույդ գերի, (ՏԹ, ՏԹՆԴ)

5 Զըլացար դու, անգո՛ւթ, վարդ մը տըրժույն ճակտիս, (ՏԹՆԴ)

12 Կուտին տեղ լաց, քա՛ր (ՏԹՆԴ)

Բանաստեղծության ֆրանսերեն թարգմանության ծանոթության մեջ (PA, էջ 11) Մ. Զերադը նկատել է, որ առաջին տողի «մինչ»-ը տաղա-
չափորեն սխալ է և չի ամբողջացնում 16 վանկանի տողը: Մ. Միհրդատյան-
ցը ցույց տալով հեղինակային սրբագրումները, հիշյալ տողի խնդրո առար-
կա բառը օրինակել է մինչև, բայց մոռացել է նշել նախնականը՝ մինչ-ը:
Բոլոր աղավաղումները ցույց է տվել Ա. Գալայճյանը:

ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄհն)

1 Ո՛հ, [մինչ] մինչև ց՛ե՞րբ, ըսե՛ [ո՛վ] ո՛ կույս, հոգիս ըլլա գեղույդ գերի,

3 [Մեղմ] Լոկ [համբուրիկ մը] ճամբուրիկ մ՛ ուզեցի քաղել այտեդ մեկ թարմ
վարդ,

2 Ո՛չ, ես չ՛եմ [ապրիր պանդուխտ քու] կրեաւ ապրիլ զուրկ գրկեդ,

16. ՆԱՅՎԱԾՔ ՄԸ

(էջ 42)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում, Բ տետրակում վերջին տունը
պակաս է:

Առաջին անգամ «Հայեաց մի» խորագրով տպագրվել է Դուրյանի կեն-
դանության օրոք («Մեղու», 1871, 10 հուլիս, թիվ 49): Զետեղվել է բոլոր
ժողովածուներում, բացի 1908, 1922, 1945 (Հալեպի և Վենետիկի) և 1959-ի
հրատարակություններից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

7 Արշալուսին կանուխկեկ՝ (ՏԹՆԴ)

14 Ո՛րչափ սիրեմ կրակներս մեռկ (ՏԹ, ՏԹՆԴ)

16 Հոտոտելու կուսի նման՝ (ՏԹՆԴ)

Վ. Պերզիրաշյանն առաջինն է ցույց տվել, որ 14-րդ տողի մերկ բառը ըստ իմաստի անհարիր և տաղաչափորեն սխալ հանգ է՝ առաջարկելով ըստ «Մեղվի» օրինակի փոխարինել «Այն»-ով («Պետրոս Դուրյան», Երևան, 1959, էջ 146): Նման ուղղումը ճիշտ է և արտացոլվել է 1963-ի ու 1967-ի (Երևան) ժողովածուներում: Գրականագետը վստահ է, որ նախորդ տողի («Երբ միայնակ ես գամ ման»), ընդգծված բառը ևս պետք է լինի միայնիկ: Նշված ժողովածուների կազմողը անվերապահորեն ընդունել է այդ դիտողութայունը ևս: Հավանաբար, Ա. Զոպանյանն զգացել է «Մեղվի» տեքստի «միայնիկ» բառի անհաջող լինելը և Միհրդատյանցին առաջարկել «մի անգամ» ձևը, սակայն վերջինս նկատել է, որ դա «աններդաշնակ և անիմաստ է միանդամոյն» ու ցույց է տվել ճիշտը՝ «միայնակ» (ՄՄան): Բոլոր աղավաղումները նշել է Ա. Գալայճյանը:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մեղու»

13 Երբ միայնիկ ես գամ ման,

16 Հոտոտելու կուսի մը նման՝

21 Ո՛րչափ սիրեմ 'ի սաղարք.

25—26 Բայց անոնք չեմ փոխեր բնավ

Մեկ հայեացին հետ անբավ՝

Ա տետրակում նախապես խորագրվել է «Նայվածք Մի» (Տ, էջ ԺԱ): Ա. Գալայճյանը մատնանշում է հեղինակային մի սրբագրում ևս (Տ, էջ 57), որ համապատասխանում է «Մեղվի» տեքստին:

21 Որչափ սիրեմ ի [սաղարթ] սաղարքս

Վերջին տունը, որ պակասում է Բ տետրակում, Երուսաղեմի հրատարակութունում տպված է ըստ Ա տետրակի տեքստի: 1872 և 1893-ի ժողովածուներում 25-րդ տողն է.

Բայց զասոնք չ'եմ փոխեր բնավ

Իսկ Ա տետրում ընդգծված բառն է ասոնք: Մենք ևս թողնում ենք ասոնք, բայց ժողովածուներից հայտնի զասոնք ձևը չենք դիտում աղավաղում՝ ուղղակի ապացույցների շունենալու պատճառով:

(էջ 44)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում: Բ տետրակում առաջին երկու տունը պակասում է:

Առաջին անգամ «Հծծյուն» վերնագրով տպագրվել է հեղինակի կենդանության օրոք («Մեղու», 1871, 27 մայիս, թիվ 37): Զետեղվել է բոլոր հրատարակություններում, բացի 1908 և 1945 (Հալիպ) ժողովածուներից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

- 11 Գիսաստղի պես բաց կ'նագիս՝ (ՏԹ)
 14 Շրջագայիս ո՛սիրելի, (ՏԹ)
 16—17 Քո հմայոզ հայեցվածքով: (ՏԹ)
 Գա սյուրքն զով քեզ այցելու, (ՏԹ)
 23—24 Եվ թող մեկ մ'ե՛ս ալ դալկանա՛մ (ՏԹ, ՏԹՆԴ)
 Մեջ նայվածքիդ կրակուրոց: (ՏԹ)
 29 Շիրմաց մեջի ցուրտ ցուրտ ծառեր (ՏԹ)
 31—32 Սրտիս քելերն իմ դառնաղետ (ՏԹ)
 Տան արձագանք մահահրավեր: (ՏԹ)
 34 Դադրած շրշյունք սրտերս մունջ (ՏԹ)
 37—38 Քո Լայլերուզ խշրտուքն հար (ՏԹ)
 Կը մրմնջե գեռ ականջիս: (ՏԹ)

1891-ի օգոստոսի 30-ի նամակում Ծ. Դուրյանը Ա. Զոպանյանին տեղյակ է պահել 14, 16 և 29-րդ տողերի աղավաղումների մասին, իսկ Բ. էքսերճյանն ու Մ. Միհրդատյանը ցույց են տվել բոլորը (բացի 24-րդ տողից):

Չր. Աճառյանը 11-րդ տողի աղավաղման կապակցությամբ անհրաժեշտ է համարել բացատրել. «Պետք է կարդալ շորս վանկով՝ հեռուն-կնա-գիս, հրատարակիչները (1872-ի— Ա. Շ.) անհարմար գտնելով այն՝ հեռուն բառի տեղ գրել են գրարար բաց և կարդացել՝ բաց կը նագիս» (Ծրկեր, 1947, էջ 57), իսկ 29-րդ տողի աղավաղման մասին ասված է. «Այսպես են սրբագրել՝ խուսափելու համար գերեզմաճեղքին բառը կիսելու անպատեհություն»

նից, բայց չեն մտածել, որ շիրիմը գերեզմանատուն չէ, այլ գերեզմանի քարը, որի մեջ ծառը շի բուսնում» (նույն տեղում, էջ 58):

ՏԵՔՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մեղու»

- 5 Թերթեր հուզող հովիկի պես՝
9 Արև կը փախչիս ինձմե սյուքի
11 Գիսաստղի պես հեռու կ'նազիս,
18 Նային աստղերն քեզի ազատ,
20 Ես կը վախում քեզ մոտելու:
27 Այլ կ'անհետին, չե՛ս շրջիր հոն,

ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄՀՆ)

- 5 Թերթեր հուզող [գեփյուռի] սյուֆի մը պես՝
20 Ես կը [վախնամ] քեզ մոտելու:
40 [Արտասվալից] Արտասրալից անդունդ մ'ի վար...

Առաջին երկու տունհրը, որոնք պակասում են Բ տեսքում, Երուսաղեմի հրատարակությունում ապված են ըստ Ա տեսքի տեքստի և 1872 և 1893-ի ժողովածուների համեմատությամբ որևէ տարբերություն չունեն:

Ա. Զոպանյանի ձեռքով կատարված բանաստեղծության քննադրային օրինակումը պահվում է իր արխիվում:

18. ԶՈՆԻԿՔ

(էջ 46)

Օրինակված է ինքնագիր երկու տեսքերում:

Տպագրվել է բոլոր հրատարակություններում, բացի 1908, 1922, 1945 (Վենետիկի ու Հալեպի), 1952 և 1959-ի ժողովածուներից:

Դուրյանն այս բանաստեղծությունը հիմնովին վերամշակել է: Միհրդատյանը բերում է նրա սկզբնական տարբերակը, որ կրում է «Զոնիկ» խորագիրը (հն):

Մինակ էր
Մեկ վարդ մի
Ներս ձոն:
Մատուցի:

5 Թարմ այտերն
Շիկնեցան
Նրբ առավ
Իմ վարդն այն:

[Հոն տեսի] ճերա քով
10 [Թե] վարդն ո՛րչափ
էր անշուք [էր]
[Մաղկանց պապ] Գունաթափ

Նվ նվերս:
Ալ ո՛րքան
15 ներա քով
Աննշան:

Այս տարբերակը բանաստեղծը շնչել է («ինք ավրած է»):
Առաջին տան հեղինակային փոփոխություններն են. այստեղ արդեն վեր-
նագրված է «Ձոնիկք» (ՄՄՀն).

2—4 [Թարմ վարդ մի] Վարդ մ' ըզգոն
[Ներս ձոն] Մատուցի
[Մատուցի] Ներս ձոն:

19. ՄԱՆՈՒԿՆ ԱՌ ԽԱՉ

(էջ 47)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:
Տպագրվել է 1872, 1893, 1900, 1904, 1918, 1926, 1940, 1945 (Վենե-
տիկ), 1947, 1956, 1959-ի և Երուսաղեմի ժողովածուներում:
Հստ Բ. էքսերճյանի գրված է մանուկների համար («Ընդարձակ կեն-
սագրություն...», էջ 82):

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ (ՄՄհն, ՄՄաճ, Տ)

ՏԹ, ՏԹՆԴ.

9 Ընդունե՛ իմ հոգիս հեզիկ փառաճաճանչ
14 Դառնալ քեզի՝

ԶԵՂԻՆԱԿԱՑԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄհն)

9 [Ընկալ և] ընդունե՛ լ՛ իմ հոգիս հեզիկ փառաճաճանչ
15 Երբ [ընդ խութ] խութից ոտք

Առանձին նշումներում Միհրդատյանցը մերժում է 2-րդ տողի Ա. Չոպանյանի ուղղումը («Եվ մութ, ի վիշտ») ասելով, որ ճիշտն է «Ի մութ, ի վիշտ»:

Ա. Չոպանյանը 1893-ի ժողովածուի մասին գրած հոդվածում կարծում էր, որ այս բանաստեղծությունը «տղայական խաղ մըն է, պետք էր իր տաղերեն դուրս ձգել, կամ գոնե հատորին հտևը, ծանոթագրությանց մեջ դնել իբր հետաքրքրություն» («Հայրենիք», 19 սեպտեմբեր, 1892, թիվ 246): Վերամշակված ուսումնասիրությունում նույնը նա ասում է նաև «Հայրիկն Հայոց» բանաստեղծության մասին: Այս դիտողությունն անընդունելի է, քանի որ Դուրյանը հիշյալ բանաստեղծություններին ինչ-որ արժեք տվել է և օրինակել տաղերի կրկու տետրերում էլ:

20. ՍԻՐԵՆԷ

(էջ 48)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Առաջին անգամ տպագրվել է Դուրյանի կենդանության օրոք («Մեղու», 1871, 19 հուլիս, թիվ 50): Զետեղվել է բոլոր հրատարակություններում, բացի 1908-ի ժողովածուից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ (Տ)

ՏԹ, ՏԹՆԴ.

14 Սիրտ մ'որո մինչ սուգիմ հատակ,
22 Հոդի մ'որո գաղտնիքն է բույր,

«Մեղվում» այս տողերը համապատասխանում են Ք տետրի տեքստին: ՏՔ-ում 10-րդ տողն է «Շրջազգեստ մը շրջեց իմ շուրջ»: Այդ կապակցութեամբ Մ. Միհրդատյանցը ասում է, որ ներդաշնակ է «շրջեց», իսկ «շրջեց»-ն «անիմաստ է» (ան): ՏՔՆԴ-ի վրիպակների ցանկում (էջ 258) 3-րդ տողի մեծատառով բայը ուղղված է մեծատառով, որն, անշուշտ, նոր վրիպակ է: Անընդունելի է նաև Մ. Չերազի առաջարկած ուղղումը 8-րդ տողի՝ «Խոկալ, սուզի, ըզմայիլ սուտ» ընդգծված բառը զուտ-ով փոխարինելու մասին (ՔԱ, էջ 55):

ՏԵՔՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մեղու»

- 3 Ես ուզեցի լուռ մինանալ,
- 5 Սիրել կայծեր երկնի կապուտ
- 10 Շրջազգեստ մը շրջեց իմ շուրջ:
- 16 Գաղտնիք մ'ունի— իր անթիվ վեստ:
- 33 Նե մտեցավ հուշից, ըսավ,

ՉԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄԿՆ)

- 1 Բույլ մը [հայեաց] նայվածք, փունջ մը ժրպիտ,
- 5 Սիրել [կայծեր] կայծերն երկնի կապուտ,
- 16 Գաղտնիք մ'ունի— [իր] այն՝ անթիվ վեստ:

21. ԴՐԺԵԼ

(էջ 50)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Առաջին անգամ լույս է տեսել գրողի կենդանութեան օրոք («Մեղու», 1871, 19 հուլիս, թիվ 50): Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի

1908-ի հրատարակութիւնից: Այս բանաստեղծութիւնն իմաստային ու տա-
ղաշարփական կապը նախորդի հետ ակնբախ է: Այդ պատճառով էլ Գուրյանն
իր տետրերում օրինակել է հերթականութիւնով և այդպես էլ հրատարակել
«Մեղվում» (նույն համարում): Ուստի ճիշտ չէ դրանք բաժանելը, ինչպես
վարչիկ են նախորդ ժողովածուների կազմողները:

Բանաստեղծութիւնը «խմբագրել» է Ս. Ֆելեկյանը, իսկ Բ. էքսերճյանը
հրատարակել է ըստ հեղինակային ինքնագրի:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

1 և 41 նումբ մը կնճիո՝ բուռ մը կայծակ՝ (ՏԹ)

7 Պայծառ ճակատն՝ այն ամպն է (ՏԹՆԴ)

16 Թափող վարսից ալյակլէն ժըփին (ՏԹՆԴ)

30 Կուրծըս զոգած՝ մառն իմ աչքին, (ՏԹՆԴ)

33 Նե հեռացավ ինձնե, ըսավ, (ՏԹ, ՏԹՆԴ)

39 Խորշ մը կար որ զ'իս կը ծաղրեր, (ՏԹ)

1 և 41-րդ տողերի աղավաղման մասին Ա. Զոպանյանին հայտնել է
Ծ. Գուրյանը 1891-ի օգոստոսի 30-ի նսմակում, իսկ 39-րդ տողի աղավա-
ղումը համարել է տպագրական վրիպակ՝ տալով բնագրային ճիշտ ձևը (չ՞
ծաղրեր) և փակագծում ավելացրել. variante շէր ծաղրեր» (ԲԾԸ, 1967, № 1,
էջ 167, 168): Բ. էքսերճյանը 39-րդ տողը տպագրել է «խորշ մը կար, որ
զիս չը ծաղրեր», սակայն վրիպակների ցանկում ընդգծված բայաձևն ուղղել
է «չէր ծաղրեր»-ի (ՏԹՆԴ, էջ 258), որ նախնականն է: Մ. Միհրդատյանցը
որպես աղավաղումներ ցույց է տվել նաև հետևյալ տողերը.

4 Սիրիլ ժպիտքն՝ փրքիքֆ անհուն,

24 Կ'վառե երազ մ'որոն մեկ շող,

30 Կուրծս զոգած՝ մարն իմ աչքին:

Ընդգծված բառերը, ըստ նրա, համապատասխանաբար պետք է լինեն՝
փրքիքիֆ, վառե և Գոգացած կուրծս: Պետք է ասել, որ «Մեղվում» նույնպես
այս բառերը տպված են Մ. Միհրդատյանցի ուղղած տեքստով: Այնուամե-
նայնիվ, մենք այս ուղղումները չենք անցկացնում, քանի որ ոչ Բ. էքսերճ-
յանը, ոչ էլ Ա. Գալայճյանը որևէ նշում չեն անում:

«Մեղու»

- 4—7 Սիրել ժպիտֆ՝ փըթթի՛ֆ անհուն,
 Սիրել աստղեր սև աշերուն,
 Եվ իր խոկումն, որ մըթազնե
 Պայծառ նակատն, ո՛հ այն ամպն է
- 14 Եվ շոշափել լոկ ոսկեփայլ
- 24 Վառն երազ մ՛որուն մեկ շող
- 26 Գռոսց.— «Սիրել շե՛ս կրնար զիս»:
- 29—30 Յուցի նակատս իրեն գունատ՝
 Դոզացան կուրծս՝ մարն իմ աչքին,

Մի՛րդատյանցի մատնանշած հեղինակային փոփոխությունները պարզում հն, որ բանաստեղծությունը նախապես ավարտվել է վերջնական տեքստի 35—40 տողերով: Վերամշակելով, Դուրյանը նախնական տեքստի 25—26 տողերը դարձրել է 33—34՝ դրանց փոխարեն գրելով 25—26 տողերը, ավելացրել 27—32 տողերը և կրկնվող երկտողը: Այս տեսքով էլ բանաստեղծությունը տպագրվել է «Մեղվում»: Բանաստեղծությունը վերջնական մշակման է ենթարկվել, հավանաբար «Մեղվում» տպագրվելուց հետո:

ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՍԿՆ)

- 4—9 Սիրել [ժպիտթ] ժպիտֆն փըթի՛թթ անհուն,
 Սիրել [աստղեր] աստղերն սև աշերուն
 Եվ [իր] այն խոկումն, որ մըթազնե
 Պայծառ [ճակատն] նակատը՝ [ո՛հ] այն ամպն է
 Որ [կը] կ՛ըշպարն դեմքը լուսնույն:
 [Բույլ մը արցունք՝ փունջ մը] Գիշեր մը սուզ, անդունդ մ՛նառաջ՝
- 14 Եվ շոշափել լոկ [ոսկեփայլ] ձյունափայլ
- 19—23 Ես ուզեցի [ըլլալ] քննար մ՛ըլլալ
 Ներա [ոտքին տակը] [նիրհող] [դողացող] ձեռքին տակ նկացող,
 Ներա հոգվույն [խորը լըռող] խորն ճիացող

- Թեթև պատկեր մըլլալ, [մոռնալ] շարժյալ,
 [Զիս միմիայն] Մոռնալ զիս, լոկ ըզնե՛ խոկալ:
- 25—26 [Նե հեռացալ ինձմե, ըսալ] Ամպրոպ մը սասա [Քնդաց անձին]
 ցնցեց հոգիս,
 [Բալ սիրեցի քեզ, մնաս բարյալ»] [գոռաց] [ըսալ] Գոչեց— սիրելի
 չ'ես կրնար գ'իս»:
- 30 Գոգացած կուրծս՝ [մաշն] մարն իմ [կյանքին] աչքին,
 39 [Մեկ] եորը մը կար, որ գ'իս [չ'ծաղրեիր] [չէր ծաղրեիր] շը ծաղրեր,

22. ԼՃԱԿ

(էջ 52)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է բոլոր հրատարակութուններում, բացի 1908-ի ժողովածուից:

Բանաստեղծության գրության մասին պահպանված են երկու վկայություն: Ա. Զոպանյանը, հիմնվելով ժամանակակիցների հիշողությունների վրա, հայտնում է. «Անգամ մը, արդեն ծանրապես հիվանդ, Զամընա կերթա վերջին պտույտ մը ընելու, ետ դարձած ատեն, կհանդիպի գինովի մը, որ անոր դժգույն դեմքը և դանդաղկոտ քալվածքը տեսնելով, կըսե. «Ասալ երթալոց է»: Դուրյան այս խոսքին տպավորության տակ տուն դառնալուն պես կնստե ու կգրե իր զմայլելի Լճակը («Դուրյանի կյանքը...», էջ 201):

Իսկ դերասանուհի Ազնիվ Հրաշյան իր հուշերում պատմում է, որ 1870-ի ամռանը, Սկյուտարի Ազիդիե թատրոնում «Ալպյաց հովվուհի» ներկայացման փորձից առաջ «ներս մտալ պատանի մը, երկար հասակով ու երկար վզով. ուներ երկայն քիթ, գունատ էր: Մոխրագույն ու շատ մաշած դգեստ էր հագած: Թևին տակ կար տետրակ մը: Երբ երեցավ, դերասանուհիները սկսան ծիծաղիլ, ըսելով. «Քա՛ Թերեզա, բուկինդ եկավ»: Իսկ Թերեզան պատասխանեց. «Այնքան գունատ է, որ ինձի պետք չէ, շուտով կը մեռնի»: Ես լսեցի այդ խոսքերը, բայց չէի կարծեր, որ պատանին ալ լսած էր:

Այդ ցնցոտիներ հագած ու գերեզմանին մոտեցած պատանին Դուրյանն էր, մեր բոլորիս սիրելի բանաստեղծը: Իսկ իր թևի տակի տետրակն էր

«Քատրոն» խաղը, զոր կուզեր կարդալ Վարդովյանին և ընդունել տալ խաղացուցակին մեջ:

Երբ իր մահնն հետո կարդացի անոր բանաստեղծութիւնները, այն ատեն իմացա, թե ան ալ լսած էր Քերեզա Չուհաճյանի խոսքերը, քանի որ գրեր էր.

Նատերը զ'իս մերժեցին,

«Քնար մ'ունի սոսկ— ըսին.

Մին՝ «գողգոջ է գույն շունի»—

Մյուսն ալ ըսավ— կը մեռնի՞» («Անահիտ», 1909, ապրիլ-մայիս, թիվ 1.—2, էջ 20):

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

6 Ալյակդ երկնի կապույտին, (ՏՔ)

8—9 Որք նըմանին փրփուրիդ: (ՏՔ, ՏՔՆՂ)

Մեկամաղձոտ լճակ իմ (ՏՔ, ՏՔՆՂ)

12 Գրավիլ, լըռել ու խոկալ (ՏՔ, ՏՔՆՂ)

42 Ալյակդ հուզե՞ն թող, լըճակ (ՏՔ)

Մ. Միհրդատյանցը հիմնական նշումներում ցույց է տվել 12-րդ տողի աղավաղումը, իսկ առանձին նշումներում 8-րդ և 10-րդ տողերի մասին կարդում էնք.

«Լճակին մեջ ալ սա երկու պզտիկ տարբերութիւնները կան.

ինք (Դուրյանը— Ա. Շ.) գրած է.

Որք նըմանին փրփուրիդ:

Մինչդեռ մեր գիտցածն է առանց (ք) ի

Որք նմանին փրփուրիդ:

ձ.[հոագրում] Որ բոց է անհուն

<ժողովածուններում> Ու է բոց անհուն»:

Ինչպես տեսնում ենք, Մ. Միհրդատյանցը 20-րդ տողում ևս աղավաղում է նկատել: Դժվար է ասել՝ Մ. Միհրդատյանցն է ճիշտ, թե՞ մյուս հրատարակիչները, քանի որ ձեռքի տակ չունենք ինքնագիրը: Թողնում ենք ըստ նախորդ հրատարակութիւնների: Մ. Չերապը կարծում է, թե 23-րդ տողի

(Ամպերը չ'են թրչեր հող) քրչեր բայը եղած պետք է լինի քոչիւր (ՔԱ, էջ 69): Սակայն նման «ուղղման» օգտին ոչ մի փաստ չկա:

ՇԵՂԻՆԱԿԱՑԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄԿՆ)

[Լրճակ] Լճակ

- 3 [Արդյոք] Միքե հայլվույդ մեջ անձկամ
5 եվ կամ [թե արդյոք] միքե կըզմայլի'ն
- 12—18 [Գրավիլ] Գրավիլի, լրոեւ ու խոկալ:
[Որչափ] Որքան ունիս դու ալի'
Ճակատս [այնչափ] այնքան խոկ ունի,
[Որչափ] Որքան ունիս դու փրփուր'
Միրտս [այնչափ] այնքան խոց ունի բյուր:
[Միայն] [այլ] [թե գոգդ] [գոգրդ] Այլ եքք գոգդ ալ թափին
[Թե] բույլթն [աստեղց] աստեղաց երկնքին,
Բանաստեղծության վեցերորդ տունը (տող 21—24) նախապես եղել է.
21—24 Հոդ ամպերը շեն քրչիւր
Հոդ աստղերը շեն մեռնի'ր...
Լրճակ, դու ես թագունիս'
Զի քու ներսըդ գտնեմ զիս:
Դուրյանը ջնջել է այս տունը՝ գրելով տեքստից հայտնի տողերը, միայն նրա 4-րդ (բանաստեղծության 24-րդ) տողում կատարելով հետևյալ սրբագրությունը:
24 Երբ [հանդարտ] խաղաղ եք դու և օդ:
Ապա բանաստեղծը գրել է 7-րդ տունը (տող 25—28)՝ պահելով նախորդ (նախնական) տան 3-րդ տողը միայն:
33 [Մեկը չ'ըսավ] Ոչ ոք ըսավ— հե'գ տղա,
43 Զի [անդունդիդ] քու խորհիդ մեջ անձկամ

(էջ 55)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում: Գրաքննական նկատառումներով 1893-ի հրատարակությունում վերնագիրը փոխարինվել է աստղանիշներով (քրիստոնյան իրավունք շուներ գովերգել մուսուլմանուհուն): Դա մեխանիկորեն անցել է 1900 և 1904-ի ժողովածուներին, իսկ 1940-ի հրատարակությունում գետեղվել է «Գեղուհին» խորագրով:

Ա. Չոպանյանը ձեռքի տակ ունենալով «Քրքուհին» խորագրով Դուրյանի աշակերտական տարիներին գրած մի բանաստեղծությունը, հավանաբար կարծել է, թե նախնական տարբերակն է համանուն խորագրով հանրահայտ բանաստեղծության և հարցում է արել Մ. Միհրդատյանցին, թե իրոք «տուն մը պակաս չէ»: Վերջինս, 1891-ի սեպտեմբերի 18-ի նամակում ի պատասխան բերել է Ե. Դուրյանի խոսքերը. «Ոչ, այդ տեսակ բան (պակաս տուն— Ա. Ը.) չը կա... Քրքուհին բնավ փոփոխություն կրսած չէ, ձեռագիրը քովս է» (ԲՆՀ, 1968, № 1, էջ 144): Իրականում «Քրքուհին» աշակերտական փորձը «Հայուհին» բանաստեղծության տարբերակն է (տե՛ս այդ քերթվածի ծանոթագրությունը):

Ավելի ուշ, 1892-ի նոյեմբերի 8/20-ի նամակում, Մ. Միհրդատյանցը բանաստեղծության գրության մասին ընկերոջը հայտնում է. «Քեզի պզտիկ պատմություն մը ընեմ: Հոս տաճկաբան մը կար, զոր հրաժարեցուցին: Ատիկա օր մը խոսքի մեջ պատմեր է մեկուն (սա ալ ինձ պատմեց), թե ինք, Դուրյանը և ուրիշ մը, դասընկերներ կարծեմ, կերթան Չամլըճա, ծառի մը տակ կը նստին:

Քիչ մը վերջը, պայատական կառք մը, կրելով իր մեջ թրքուհի մը խիստ գեղեցիկ կուգա կերթա ճիշտ անոնց դիմացը: Քրքուհին, ընկողմանած կառքին մեջ, պահ մը լաջակը մեկ կողմ կը նետե և նրբաթել հովհարովը դեմքը կը հովհարի: Նույն միջոցին Դուրյան հափշտակյալ անոր գեղեցկութենեն մատիտն ու թուղթը կը հանե գրպանեն և կարտադրե վարկենական ներշնչմամբ ինչ որ կը կարգամք Քրքուհի վերնագրույն տակ» (ԲՆՀ, 1968, № 1,

էջ 152—153): Այս տեղեկութիւնն օգտագործել է իր գրքում Ա. Զոպանյանը («Դուրյանի կյանքը...», էջ 201):

Ա. Զոպանյանին գրած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում Ե. Դուրյանը նկատում է միայն, որ 1872-ի ժողովածուում տեղ է գտել վրիպակ (8-րդ տողում տպված է հաշաղը, պետք է յինի՝ հաշաղը): Ասենք նաև, որ 9-րդ տողում վառդիցը բառի փոխարեն տպվել է վառդիկը: Այս վրիպակները վերացրել է Բ. Էքսերճյանը, սակայն իր հերթին թույլ է տվել հետևյալ աղավաղումները.

ՏԹՆԴ

9 Պատան մ'է նուրբ ներա վարդիցը տրծգույն.

13 Նայիլ կ'ուզե, բայց ավելի կը նվաղի,

26—27 Որուն ծըծած ծաղիկըն՝ սիրտ, մեղրն է սեր,

Ես կը կոչեմ զնե կոյս՝ որուն սիրտն է երկին

34 Իսկ քե մեռնի՛,

27-րդ տողի աղավաղումը ցույց է տվել նաև Մ. Միհրդատյանցը: Դատելով նրա մատնանշած հեղինակային սրբագրումներից՝ հիշյալ տողում «երկին»-ը նախնական է, իսկ ավարտունն է «յերկին»: 1872-ի ժողովածուում 35-րդ տողն է. «Թե իսկ մեռնի», իսկ ՏԹՆԴ-ում՝ «Իսկ քե մեռնի»: Սրանցից առաջինը, ինչպես ցույց է տալիս, նախնական է, իսկ երկրորդը՝ վերջնականը: Ինքնադրի բացակայությունը հնարավորություն չի տալիս պարզել այդ դիտողության ստուգությունը, ուստի հիշյալ բառերը թողնում ենք ըստ 1872-ի և Երուսաղեմի հրատարակությունների:

ՆԵՂԻՆԱՎԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄՀՆ)

8—9 Ի՛նչ [թալկահար...] դալկահար... կարծես հաշաղը վառե

[Պատանք մի է] Պատան մ'է նուրբ ներա վարդիցը դծգույն.

12 Կ'ըսես.— Ո՛ն հի՛մա [սա] կ'անցնի»:

22 Քամել սիրո [հերո] կրակե բաժկին հուսկ կաթիլ.

26—27 Որուն [խնդրած] ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սեր,

Ես [զնե] կոչեմ զնե կո՛յս [մ'], որուն սիրտն է [երկին] յերկին

- 32.—33 [Զրքավոր] Տընանկ կընոչ տաճարն վառած հրագին պիս,
Աստղերու [պես] նման գիշեր սիրեն՝ [բայց ոչ նիրհ] փողփողի՛լ.
35—36 [Թե իսկ] Իսկ բե մեռնի՛,
[Կը խարվիս թե] Կ'ըսես— հի՛մա կը ծնի»:

24. ՆԵՐԱ ՀԵՏ

(էջ 57)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Առաջին անգամ «Գիշեր մը» խորագրով տպագրվել է Կ. Պոլսի «Եփրատ» թերթի 1871-ի դեկտեմբերի 11-ի թիվ 45-ում (թերթի այդ համարի լուսանկարը տե՛ս ԳԱԹ): Ավարտուն տեսքով զետեղվել է բոլոր հրատարակություններում, բացի 1908, 1945 և 1959-ի (Վենետիկ) ժողովածուներից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

11 Հուսկ ճաճանչ մը պլպլար (ՏԹ, ՏԹՆԴ)

24 Հանուն աստեղց գիշերվան (ՏԹ)

«Կը պլպլար» ձևը իմաստով ու քերականորեն ճիշտ է և հաստատվում է թե Մ. Միհրդատյանցի նշումներով և թե «Եփրատ»-ի ու Երուսաղեմի ժողովածուի տեքստերով:

Երկրորդ աղավաղումը, ինչպես ցույց է տալիս Մ. Միհրդատյանցը, Ս. Ֆելեկյանինն է: Այն վերացրել է Բ. էքսերճյանը, բայց տողատակին չի նշել: Այս առթիվ Վ. Թերզիբաշյանը գրում է. «Դուրյանի երկերի առաջին հրատարակության մեջ ցիր ու ցան էպիտետը (պետք է լինի ցիրեցան— Ա. Շ.) փոխարինվել է գիշերվան բառով: Դուրյանի ձեռագրի համաձայն 1893 թ. տպագրված տեքստում ցիր ու ցան է (իմա՛՛ ցիրեցան— Ա. Շ.), չգիտեա ինչու 1947 թ. Պետհրատի հրատարակության մեջ պահպանվել է աղավաղված ձևը...» («Պետրոս Դուրյան», Երևան, 1959, էջ 150, ծ.): Ավելացնենք նաև, որ «գիշերվան» է 1954-ի «Տաղեր»-ում, իսկ 1963 և 1967-ի հրատարակություններում արդեն հաշվի է առնվել Թերզիբաշյանի դիտողությունը:

«Նփրատ»

10 Բազմոցի վրա դազարյաց
15 «Խոսի՛նք», ըսավ— ո՛հ խոսի՛լն

21—22 Հուր հորիզոնը սկսավ,
Երկինքն աստղեր փրքտեցան,
24 Հանուն աստեղ ցիր և ցան:

29--30 Ո՛հ, այս ժամը ոսկեղօծ
Անշուշտ սանով թըռած է

Մ. Միհրդատյանցը վկայում է նաև (ած), որ 28-րդ տողը պետք է լինի ձակատըս զով բույրերով:

Բայց ոչ
ձակատս սև բույրերով:

Ա. Զոպանյանին տրամադրած նյութերում Ծ. Գուրյանը նշում է, որ բանաստեղծուհիուհունը «հատաչ քան զվերջին տպագրությունն» կրել է հեղինակային սրբագրությունների և բերում է միայն երկրորդ տան 3—4 (բանաստեղծության 7—8) տողերը, մյուսները համարելով «բավական աննշան փոփոխություններ», որոնք ավելորդ է գտել ցույց տալ (ԳԱԹ, ԱԶՖ, շհամարակալված նյութեր):

Հեղինակային բոլոր սրբագրումները ցույց է տվել Մ. Միհրդատյանցը (հն).

{Գիշեր մի} ներա հետ

6—8 Միրո [մ'] երկին [կորոտար] մ' ուրտար.

[Գրկացը մեջ թռչնեցա] Թռչնեցա գիրկն ես իբրև

[Կարտասովի անդադար] Համբույր մ' անհուն, դալկանար:

10—11 [Բազմոցի վրա] Գոգի վրա դալարյա.

Հուսկ ճաճանչ մը [նըշույեր] կ'պլպլար

13 [Դողդոջեցի ու լացի] Թռավեցի... դողացի,

17 Աչերու [կայծն] բոցն երբ մարի.

21 Հուր [հորիզոնը սկսավ] հոբիզոնն մարեցավ,

26 Սյուբը դնպ (ինձ) յ'իս բերելով

35 Եվ շողերու [շուք] տրվին շուք

Անկասկած, բանաստեղծութունը «Եփրատ»-ի խմբագրութեանն է հանձնելով և վերջին վաղ, իսկ փոփոխութունները կատարվել են հեղինակի ունեցած օրինակի վրա, քանի որ Դուրյանը, եղբոր վկայութեամբ, 1871-ի հոկտեմբերի վերջերից արդեն անկողին էր ընկել և, բնականաբար, ի վիճակի չէր տպագրված տեքստը վերանայել:

25. ՏՐՏՈՒՆՋՔ

(էջ 60)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է բոլոր հրատարակութուններում, բացի 1908-ի ժողովածուից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

1 Է՛, մընաք բարով, Աստված և արև՝ (ՏԹՆԴ)

5 Եվ թըշվառ ոզվոց անեծք ողբադին, (ՏԹՆԴ)

11—12 Որ ժպըրհի ձգտել՝ սուզիլ խորն երկնի, (ՏԹ, ՏԹՆԴ)

Ելնել աստղերու սանդուղքն անալի...: (ՏԹ, ՏԹՆԴ)

15 Դու որ ճակտիս վարդն ու բոցն աշերուս (ՏԹՆԴ)

19 Անշուշտ ինձ կյանք մը պահած ես ետքի, (ՏԹՆԴ)

25 Թո՛ղ անեծք մ'ըլլամ ու կողըդ խըրիմ. (ՏԹՆԴ)

27 Ո՛հ, կը դողդոջե՛մ, տժգույն եմ, տժգե՛ւյն, (ՏԹ, ՏԹՆԴ)

33 Այս եակատագիր ի՛նչ սև է Աստված, (ՏԹՆԴ)

44 Անոր համար նա դըրավ այդ լուսին. (ՏԹ)

Անոր համար է որ նա դըրավ այդ լուսին. (ՏԹՆԴ)

48 Եվ ի զո՛ւր ուսույց բուլբուլն ինձ «սիրել», (ՏԹՆԴ)

58 Աստուծո ծաղրն է աշխարհ ալ արդեն... (ՏԹՆԴ)

Առաջին հրատարակութունում վերնագրից վեր փակագծերում նշված է հղել «Մերձ ի մահ գրված», տեղ են գտել նաև մի քանի սխալներ՝ քևֆ՝ հևֆ-ի փոխարեն, վանֆին-վանկին և այլն, որոնք թերևս վրիպակներ են

(Համենայն դեպս ո՛չ Ե. Դուրյանը, ո՛չ Միհրդատյանցը մատնացույց անելով դրանք, չեն խոսում միտումնավոր աղավաղումների մասին):

Բանաստեղծի տաղերի Ե. Դուրյանի ընդօրինակած ցանկում ասված է. «Մերձ ի մահ գրված՝ վերնագրին մասը քերթողինը չէ՛» (ԱԶՑ, չհամարակալված նյութեր), իսկ Միհրդատյանցը 1872-ի նոյեմբերի 8/20-ի նամակում ուղղակի վկայում է. «Տրտունջֆին վրա Ֆեկեկյան իր գրով ավելացուցած է (սմերձ ի մահ գրված), մինչդեռ այնպես չկա ինչպես կը ցուցնե տետրակին մեջ ոտանավորներուն կարգը, մանավանդ որ երկու տետրակներու մեջ ալ կա» (ԲԵՂ, 1968, № 1, էջ 153):

Հակոբ Օշականը իր կազմած «Հայ գրականություն» քրեստոմատիայում (Երուսաղեմ, 1942) բանաստեղծության առաջին տողի Աստված բառի կապակցությամբ ծանոթագրել է.

«Տարօրինակ է քիչ մը այս բառը այդ տողին մեջ, հավանական է, որ գիշերվան մեջ գրված քերթվածը սկզբնական մեկնում ունի պատուհանեն տեսնված աստղակառույց երկինքը, այնպես որ աստված բառին կեսը՝ աստ, գրերի մարմինն է աստղ բառին, որոնք ինչպես նաև արևին (ամբողջ քերթվածը մտող, առողջ մարմինին պաղատանքն է դեպի կրակը, դեպի արևը) մեաք բառով մը հասկնալի է: Թերևս բանաստեղծը մտածած ըլլա աստղերուն, և գրած ըլլա Աստված բառը, որ նույնքան հզոր իրականություն մըն է այդ պահուն անոր մտքին վերև տիրական: Կը պատահի այս վիճակը, իր մտածումին ճիշտ հակառակը գրելու, ծանր տագնապններու մեջ տառապող մտքին համար: Եթե ներվի մեզ կարգալ այդ տողը «է՛», մեաք բառով աստղե ու արև», այս անբանականությունը ինքնին լուծված կ'ըլլա, քանի որ հաջորդ տողին տիրական բառը՝ պլպլալը, աստղերու լույսը հատկանշող բացատրություն մըն է: Եթե նկատի առնենք երրորդ տողին մեջ աստղ մ'ույլ հավելումը, վերի ենթադրությունը կը թվի ավելի քան հավանական: Այսպեսով կը լուծվի հակասությունը, որ կա Աստծու ուղղված մեաք բառովին մեջ: Մարդ մեաք բառով շրսեր անո՛ր, որուն քովը պիտի երթա: Անշուշտ այս բացատրությունը մեզի համարձակություն չի տար սրբագրել բանաստեղծին բառը» (էջ 179—180): Մ. Ծանաշյանը տեղեկացնում է. «Բնագրին մեջ կա Աստված բառը, բայց ինչ ինչ հրատարակություններ փոխած են զայն աստղի» և ակնարկում է, որ դրա պատճառը Օշականի ենթադրությունն է

(«Մաղկաքաղ արդի հայ գրականություն», առաջին հ., Վենետիկ, 1957, էջ 242, ծ.)։ Վ. Նորենցին ևս տրամաբանորեն ճիշտ է թվացել «աստղեր»-ը, բայց սրբապղծություն է համարել «ընդունել այդ քմահաճ շտկումը («Տաղեր», 1963, էջ 80)։ Ավելի ուշ նա «բացարձակապես ավելորդ» է համարում «աստղեր»-ի օգտին եղած «բոլոր ենթադրություններն ու տրամաբանությունները» («Տաղեր», 1967, էջ 132)։

Մի կարևոր վերապահություն։ Հնարավոր է, որ սփյուռքահայ դասագրքերում կամ քրեստոմատիաներում սրբագրվել է տողը, բայց Դուրյանի ոչ մի ժողովածուում այդպիսի փոփոխություն չի կատարվել։

Վ. Պարտիզունին նույնպես խոստովանում է, որ Դուրյանի «բոլոր հրատարակություններում» հիշյալ տողը տպվել է առանց սրբագրման։ Ի դեպ, նա կարծում է, թե «Տրտունջք»-ը տպագրվել է նաև 1908-ի Պոլսի ժողովածուում, ինչպես նաև Վիեննայի 1959 թ. հրատարակության մեջ։ 1908-ի ժողովածուն, ինչպես նշել ենք, միակն է, ուր տեղ չի գտել «Տրտունջք»-ը, իսկ Վիեննայի 1959-ի հրատարակություն գոյություն չունի։

Պարտիզունին հիշում է Օշականի ենթադրությունը, սակայն գտնում է, որ «համարձակության պետք է դիմել» և առաջարկում է Աստվածը փոխարինել Աստղեր-ով, քանի որ, ինչպես հավատացնում է գիտնականը, «քնագրում «համառոտագրության մը ձևով կամ անկատար գրված «աստղ»-ը կարող է լինել և՛ աստված և՛ աստղեր» («Գրական թերթ», 1966, 5 մարտի, № 10)։ Այսպիսով այն, ինչ Օշականի մոտ միայն ենթադրություն էր, այստեղ դարձել է իրողություն։ Վերևում ամբողջությամբ բերված է Օշականի ասածը և դրանից ոչ մի կերպ չի կարելի հետևցնել, թե բնագրում իրոք գրված է «Աստղ»։

Բայց մի շարք այլ փաստեր ևս չեն խոսում այդպիսի ուղղման օգտին։

Նախ. Օշականը, երբ հետազայում հանգամանորեն անդրադարձավ Դուրյանի ստեղծագործությանը և իր «Համապատկեր արևմտահայ գրականություն» աշխատության 2-րդ հատորում (Նրուսաղեմ, 1953), ավելի քան 150 մեծադիր էջ նվիրեց բանաստեղծին, խոսելով «Տրտունջք»-ի մասին՝ հարկ չի համարում անդրադառնալ իր ենթադրությանը և դա այն դեպքում, երբ քննիցս խոստովանում է, թե ինքը տեսել կամ ծանոթ է Դուրյանի ձեռագրե-

րին (էջ 313, 396 և այլն): Սա չի՞ նշանակում արդյոք, որ Օշականը անաշառորեն հրաժարվել է իր ենթադրությունից:

Երկրորդ. Ա. Զոպանյանին գրած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում պատասխանելով այն հարցին, թե ինչ աղավաղումներ են թույլ տրվել բանաստեղծի տաղերում, Ե. Դուրյանը «Տրտունջք»-ի կապակցությամբ նշում է միայն 14-րդ տողի վրիպակը (վանֆին՝ վանկին-ի փոխարեն): Եթե Ե. Դուրյանը հարկ է համարել խոսել վրիպակի մասին, ապա մի՞թե կանտեսեր աղավաղումը:

Երրորդ. Միհրդատյանցը ոչ միայն ցույց չի տալիս որևէ աղավաղում, այլև պարզում է, որ առաջին տողը նույնիսկ չի սրբագրվել:

Որ Վ. Պարտիզոնու առաջարկած «ուղղումը» ըստ էության մի աղավաղում է, հիմնավորապես ցույց սվեց գոող Արամ Արմանը՝ մեկ առ մեկ հերքելով գրականագետի բոլոր «փաստարկումները» («Գրական թերթ», 1966, 3 հունիսի, № 23): Ի լրումն ամենի հրապարակվեց նաև ինքնագրի լուսանկար-վերուրտադրությունը (նույն տեղում), որով վեճն ըստ էության ավարտված պետք է համարել: Սակայն «Գրական թերթ»-ում ծավալված մտքերի փոխանակությունից հետո էլ, ըստ երևույթին դրան անտեղյակ, սփյուռքահայ մամուլում արտահայտվեցին թեր ու դեմ կարծիքներ, որոնց հեղինակները աշխատում են տրամաբանորեն հիմնավորել իրենց տեսակետները (տե՛ս «Աշխարհ», Փարիզ, 1966, թիվ 316, «Երևան», Սոֆիա, 1966, թիվ 51, «Աշխարհ», 1970, թիվ 639 և այլն):

Վեճերի առիթ է տվել նաև բանաստեղծության 12-րդ տողը: Բացառությամբ «Տաղերի» 1954-ի և 1967-ի հրատարակությունների, բոլոր ժողովածուներում այդ տողը եղել է

Ելնել աստղերու սանդուղքն անալի...

Բ. էքսերճյանն այս առթիվ ոչ մի տարակույս չի ունեցել և բացատրել է. «Փոխանակ ըսելու առանց ալյաց, որ ալիք շունի» («Ընդարձակ կենսագրություն...», էջ 109, ծ.): «Ալիք» բառի փոխաբերական գործածության հետ է կապում նաև Մ. Ճանաշյանը՝ ենթադրելով, թե «Դուրյանն հորինված բառ մըն է անելանելի իմաստով» («Տաղեր, նամակներ, հատվածներ», Վե-

նետիկ, 1959, լջ 53): Պարույր Սևակը ևս կարծում է, թե խնդրո առարկա բառը նշանակում է «ալիքներից զուրկ, աստիճաններ չունեցող» և մեղադրում է Դուրյանի, ժամանակակիցներին, որոնք «նույնիսկ ընկալել չկարողացան այս պատկերը՝ կարծելով թե «անալին» վրիպակ է: Եվ շտկեցին էլ «այդ «վրիպակը»: Երկար տարիներ «անալին» դարձած էր «ահալի» («Գրական թերթ», 1962, № 5): Մենք չգիտենք, թե ժամանակակիցներից ովքեր են այդպիսի կասկած ունեցել, բայց ստույգ կարող ենք ասել, որ մինչև այժմ միայն նշված ժողովածուներում է «անալին» դարձել «ահալի»:

Տարակուսել են միայն հետնորդները:

Այսպես, Վ. Թերզիբաշյանը «անալին» համարում է «Դուրյանի մինչև այժմ մութ մնացած անհասկանալի բառերից մեկը» և կարծում է, թե «ձեռագրի սխալ ընթերցման արդյունք է դա, ըստ երևույթին տեքստի ու տառը շփոթվել է ն տառի հետ, քանի որ այդ երկու տառերը արագագիր ձեռագրում կարող են հիշտույթյամբ շփոթվել: Ուրեմն պետք է կարդալ ոչ թե անալի (անխմաստ էլպիտետ), այլ անալի, քանի որ երկնքի սանդուղքը իրոք որ ահալի է» («Պետրոս Դուրյան», Երևան, 1959, լջ 162, ծ.): Մ. Միհրդատյանցն ուղղակի ասում է, որ բնագրայինը, ճիշտը «ահալի» է և «ոչ թե անալի, ինչպես կը կարծե հայր սուրբն (Ս. Դուրյան— Ա. Շ.) ալ (հ) գիրը (ն)-ի հետ շփոթելով» (ԱԶՅ, ՄՄան):

«Տրտունջք»-ի 19-րդ տողի (Անշուշտ ինձ կյանք մը կազմած ես ետքի) կազմած ես բայը Բ. էքսերճյանը դարձրել է «պահած ես»՝ առանց որևէ նշման: «Գրական թերթ»-ի խմբագրության ստացած բանաստեղծության լուսանկարչական վերարտադրությունը ևս ապացուցում է, որ երկու տետրերում էլ բնագրում եղել է «կազմած ես»:

Վահե Հայկը բերելով բանաստեղծության հետևյալ տողերը

Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,

Նախ՝ կյանքը, վերջը՝ լացող մ'իր վրան:

տողատակին գրում է. «Այս երկու տողերեն ետքը տակավին կան ուրիշներ, սակայն կարգ մը գրագետներ կը պնդեն, որ այդ վերջինները հետո բերված հավելումներ են և թե անոնք Դուրյանինը ըլլալով հանդերձ «Տրտունջք»

վերջամասը շին կազմեր» («Նավասարդ» հանդես, Նյու-Յորք, 1922, ապրիլ, էջ 225): Ցավոք, հողվածագիրը չի անվանում գրագետներին, բայց այդպիսի ենթադրությունն անհիմն է:

ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄՀՆ)

[Առաջին Կասկածք] Տրտունջ

28 [Սիրտս բորբոքի] Փռվիրի ներսը դըժոխքի մ'հանգույն...

34 [Միթե] Արդյո՞ւ դամբանի մրուրո՞վ է գծված...:

39 [Ոչ գարուն] Գարունն ա՛չ մեկ վարդ ճակտիս դալկահար՝

46 Նախ՝ կյանքը, վերջը՝ լացող [մը] մ'ի՞ր վերան:

48 Եվ ի գուր ուսուց [սոխակն] բույբույն ինձ [սիրել] «սիրել»,

53 Որ չը խրոտվին [երազներս] երազքս վրսեմ,

57 Ո՛հ, [անոնք] նոքա ամենքը գ'իս ծաղրեր են...

Բոլոր ժողովածուներում «Տրտունջք»-ի վերջին տողը («Աստուծո ծաղրն է Աշխար ալ արդեն...») տպագրված է շեղագիր, որ առիթ է տվել տարբեր ենթադրությունների:

«Տրտունջին այս տողը,— գրել է էդ. Գուլանճյանը,— Դուրյանի գործերուն առաջին տպագրության մեջ նոտոր գրերով նշանակված է, ըսել ուղեչով անշուշտ, թե կամարթինեն փոխառնված է... Կրնամ միայն ընդունել, թե Տրտունջին այս տողը փոխ առնված ըլլա» («Լույս» հանդես, Կ. Պոլիս, 1908, թիվ 21, էջ 727): «Այս խոսքը,— ասում է Մ. Ճանաշյանը,— իրենը չէ, կը կրկնե հոռետես խորհողի մը բացատրությունը՝ մտքի անբնական ու վրդովված մեկ պահուն...» («Տաղեր, նամակներ, հատվածներ», 1959, էջ 55, ծ.): «Մի ժամանակ կարծվում էր, թե այդ մուսյլ տողը բանաստեղծի սեփական խոսքերը շին և թե նրանք ներմուծված են որևէ սրբագրողի կողմից» — գրել է Ս. Հակոբյանը և «նման արտահայտություններ» գտնելով Դուրյանի նամակների մեջ ևս մերժել այդ կարծիքը («Պետրոս Դուրյան», Վիեննա, էջ 90): Իսկ Վ. Թերզիրաշյանը խախուտ է համարում այլ հեղինակից մեջբերված լինելու ենթադրությունը. «Բանաստեղծը պարզապես ցանկացել է ընդգծել և շեշտել իր այդ տխուր եզրակացությունը, ժամանակա-

կից աշխարհը համարելով «աստուծո ծաղրը», ուստի և այդ դառն միտքը գրել է շեղատառ» («Պետրոս Դուրյան», 1959, էջ 167):

Սրանք թեական կաշծիքներ են և կարոտ են ապացուցման: Իրականում «Տրտունչք»-ի վերջին տողը հղացված է կամարթինի մի բանաստեղծության ներշնչանքով: Այս տողը գրելու շարժառիթը եղել է կամարթինի «Վերջին բան կամ տրտում է անձն իմ մինչև ի մահ» („Novissima verba. ou mon ânie est triste jusquâ la mort“) բանաստեղծությունը: Հեղինակն այստեղ դիմում է կյանքին և ասում.

Դու ճանապարհ ես պատիր որ դարձ ի մահ անդ գործէ,
Գետ, որ յաւազն ուստի ել խորասուզեալ կորիցէ,
Դու հենզնութիւն մի կի՛ն՝ ի վնասել անդ ճարտար,
Որ ըզբօսնու ի ստեղծուլ զի եղծիցէ վայրապար.
Եւ որ իմեր անդ պատրանս խաղ իմն առնէ վայրապար.
Կամ թէ յաււտ ո՛չ արդեօք սանդուխք իցնս դու հրաբուն,
Ոյր բոցակեզն աստիճանք յոտն անդ կըռուին վերելակ,
Եւ յոտ դիմել սակայն հա՛րկ է մահացուաց բովանդակ:

(«Դաշնակք կամարթինեայ, թարգմանեաց ի շափս հայկականս Խորէն Վ. Գալֆայեան, Փարիզ, 1859, էջ 347. ընդգծումը մերն է— Ա. Շ.): Ահա նաև մեջ բերված հատվածի բառացի թարգմանությունը, որ քննադրից կատարել է Լ. Մարտիրոսյանը.

Դու միայն մի կեղծ արահետ ես, որ տանում է դեպի մահ,
Մի գետ, որ կորչում է այն ավազում, որտեղից դուրս է գալիս,
Մաղրն ես դու մի էի, որ ճարտար է վնասելու,
Որ աննպատակ հաճույք է զգում թե ստեղծելու և թե ստեղծածը
ոչնչացնելու

Եվ որի համար մեզ խաբելը մի աստվածային խաղ է:
Բայց արդյոք դու մի կրակե սանդուղք չե՞ս,
Որի այրող աստիճանը կապում է բարձրացող ոտքը,
Բայց որին ամեն մահկանացու պարտավոր է դիմել:

Կյանքին ուղղված լամարթինյան տարտամ կշտամբանքը «Տրտունչք»-ում վերածվել է Աստծուն հասցեագրված ցակառ. բողոքի:

Տարբեր կարծիքներ են արտահայտվել «Տրտունչք»-ի գրության թվականի մասին: Ուսումնասիրողների մեծ մասը կարծում է, թե գրված է մահվան անկողնում, մերձիմաս: Բայց ա՛հա էդ. Գոլանճյանը պնդում է. «Տրտունչքը»-ը գոնե իր մահեն տարի մը առաջ գրված է, եթե ոչ ավելի առաջ... («Լույս» 1908, Կ. Պոլիս, թիվ 18, էջ 607, ծ.): Ս. Սարգսյանը թեև այդ բանաստեղծությունը համարում է «Զգայացունց մտքերի վայրկենական պոռթկում», սակայն ավելացնում է, որ դա «ամբողջությամբ վերջացրած վաղուց գրված, ավարտված է եղել հեղինակի հոգու «մատյանում» («Պետրոս Գուրյան», Երևան, 1959, էջ 114): Ավելի որոշակի է գրել Վ. Թերզիբաշյանը: Նա, ինչպես և Ս. Սարգսյանը, հենվելով Գուրյանի 1871-ի հուլիսին և հոկտեմբերին գրած նամակների լուսանձին արտահայտությունների վրա, հայտնում է այն կարծիքը, թե «Տրտունչք»-ը գրված է նույն թվականի (1871-ի— Ա. Շ.) գարնանը կամ ամառվա սկզբին» («Պետրոս Գուրյան», Երևան, 1959, էջ 168): Կա մի փաստ, որը ցույց է տալիս, թե «Տրտունչք»-ի գաղափարը բանաստեղծը հղացել է վաղուց, Վարդան Լուսինյանի մահվան օրերին: Բ. էքսերճյանը ապացուցելու համար, թե Գուրյանը «չերմեռանդ» հավատացյալ էր և «Տրտունչք»-ը գրել է «հիվանդագին ու վերջին օրերուն մեջ», «զգայականությունը» խանգարված ժամանակ («Ընդարձակ կենսագրություն...», էջ 108—109), գրողի՝ Տ. Աղամյանին ուղղված 1871-ի հուլիսի 5-ի նամակից հապավել է հետևյալ շափազանց կարևոր հատվածը. «Դու ինձ հիշեցուցեր էիր, որ իր հողակույտին վրա փունջ մը ծաղիկ սփռեմ. ե՛ս դժոխք մը անեծք Աստուծո անվանը վրա թափեցի, ավելի աղեկ չըրի՞, ծաղիկը կը թոռմի, սակայն անեծքս Աստուծո կողը խրեցա՛վ, (այս մասին մանրամասն տե՛ս հիշյալ նամակի ծանոթագրությունը): Ընդգծված տողը գրեթե բառացիորեն տեղ է գտել «Տրտունչք»-ում.

Թող անեծք մ'ըլլամ քու կողը խրիմ,

Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»:

Դժվար է ստույգ ասել, թե ո՞ր ամսին է գրված «Տրտունչք»-ը, բայց մի բան անվերապահորեն պարզ է. բանաստեղծությունը չի ծնվել հոգեկան

խոռվքի պահին, մահվան անկողնում, այլ եղել է լիովին գիտակցված մի ընդվզում, գաղափարական որոշակի համոզմունքի արդյունք: Դա հաստատվում է և այն փաստով, որ Դուրյանն իր քերթվածի վրա աշխատել է. օրինակել է երկու անգամ, փոխել վերնագիրն ու առանձին տողերը:

26. ԶՂՋՈՒՄ

(Օր Մը Վերջը)

(էջ 63)

Տպագրվել է բուրբ հրատարակություններում, բացի 1908-ի ժողովածուից:

Դուրյանը «Զղջում»-ը գրել է անհանգ, իսկ Ֆելեկյանը շատ կերացնելով, որ այդպիսի բանաստեղծություն կարող է լինել, հանգավորել է: Բնագիրը վերականգնել է Բ. էքսերճյանը, սակայն չի նշել 6, 10, 13 և 16-րդ տողերի աղավաղումները:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

ՏԹ

- 2—8 Զուրտ մըրափ մը կ'առնեի,
Զույգ մը վարդից ելեէջ
Այտերուս վրա այրեի,
Վերա ճակտիս իմ մահու
Դալկություն մը [կը] պըլպլար,
Վերա հոգվույս սիրարկու,
Անկալ շունչ մորս որ կուլար...
10—13 Գթույն արտոսը տեսի՛...
Համբույրն յերեսս հանգած
Սուրբ հիշատակ մի վերջի...
Յոր մայրս անհո՛ւն ցավ մ'ունեի
16 Այս սև հեղեղն դուրս տրվի...

10 Մորս արտուրն տեսի՛...

Ս. Ֆելեկյանի ավերածությունների մասին Ա. Չոպանյանին պատկերագրում տալու համար Ե. Դուրյանը 1891-ի օգոստոսի 30-ի նամակում մեջ է բերել բնագիրը, որ լիովին համապատասխանում է էքսերճյանի հրատարակած տեքստին. «Ձեր գրական ճաշակին կ'թողում,— գրել է Ե. Դուրյանը,— կշռել սրբագրողին անհամ հավելածներն. ի՞նչ կը նշանակե «զույգ մը վարդերու ելևէջն այրել այտերու վրա»։ Ի՞նչ տափակ մտքի գործ է ուտել «մահու թռիչ մ'ունեի» բացատրությունն և գրել «վերա հոգվույս սիրարկու...» անիմաստ խոսքն. սիրարկա՛ւ, բառարանն դուրս բառ մը, որ նշանակություն չկրնար ընդունել» (ԲԾՀ, 1967, № 1, էջ 168)։

Միհրդատյանցը ևս մատնանշել է աղավաղումները (հն)։ Նրա նշումներում 12-րդ տողը բերված է Երուսաղեմի ժողովածուի տեքստով.

Մարգարիտներ սուտ ու կեղծ...

Սա տարբեր է թե՛ Ա. Չոպանյանի համար ընդօրինակած Ե. Դուրյանի տեքստից (տե՛ս ԲԾՀ, 1967, № 1, էջ 168) և թե՛ Բ. էքսերճյանի հրատարակածից, ուր ընդօրինակված բառն է լույծ։ Հնարավոր է, որ սրանցից մեկն ու մեկը լինի հեղինակային սրբագրություն։ Թողնում ենք Մ. Միհրդատյանցի և Ա. Գալաթյանի նշած բառը։ Ի դեպ, էդ. Դուրանյանը տարակուսել է նույն տողի կեղծ բառի վրա։ «Հոս,— գրել է նա,— փոխած են բառը։ Կեղծ արցունք չկա հոս, հետևապես չկա կեղծ մարգարիտ։ Կը թվի թե մարգարիտը նյութապես իմացած են» («Լույս», հանդես, Կ. Պոլիս, 1908, թիվ 18, էջ 605)։ Սակայն սա պարզ ենթադրություն է և չի հաստատվում ո՛չ Ե. Դուրյանի, ո՛չ Մ. Միհրդատյանցի և ո՛չ էլ Երուսաղեմի ժողովածուի տվյալներով։

Մ. Միհրդատյանցի նշումներից և Ա. Գալաթյանի բերած Ա տետրի ցանկից (Տ, էջ ԺԱ) պարզվում է նաև, որ Դուրյանը բանաստեղծությունը նախապես վերնագրել է «Վերոգրյալ Տաղեն Օր Մը Վերջը», ապա ջնջել է առաջին մասը, գրել «Զղշում» վերնագիրը, իսկ «Օր Մը Վերջը» թողել փակագծերում, որպես երկրորդ վերնագիր։

«Վերոգրյալ տաղը» «Տրտունչքն» է, թե՞ մեկ այլ գործ: Այս հարցին պատասխանելուց առաջ, լսենք մի կարծիք: Հովհաննես Ավագյանը արտահայտելով այն ճիշտ տեսակետը, թե Դուրյանի «Տրտունչք»-ը պետք չունի զղջումի», ի միջի այլոց նկատում է. «Մեր փույթը չէ, թե ե՞րբ գրեց Դուրյանը իր Ձղջումը, իրոք Տրտունչքը գրելեն օր մը վե՞րջ, ինչպես փակագծի մեջ կը գրվի առհասարակ, թե ոչ Տրտունչքն ամիսներ առաջ, ինչպես փաստեցին ուրիշներ» («Գրական դեմքեր», Նյու-Յորք, 1925, էջ 102): Մեզ հայտնի չէ, թե ինչ փաստեր են բերվել «Ձղջում»-ը «Տրտունչք»-ից առաջ գրվելու օգտին, բայց թվում է, թե դրանք չեն կարող հիմնավոր լինել: Մեր կարծիքով «վերոգրյալ տաղը» «Տրտունչք»-ն է: Դուրյանն իր տաղերը տպագրության պատրաստելիս, տետրերում օրինակելիս, ինչպես արդեն նկատել ենք, հաշվի է առել դրանց ներքին, իմաստային առնչակցությունը: Նախ զետեղել է, ասենք, հրիմյանի պատրիարք ընտրվելու կապակցությամբ հեղինակած ոտանավորը, ապա Սկյուտար թագամասն այցելելու առիթով գրածը, «Սիրելի»-ին հաջորդել է «Դրժել»-ը և այլն: Երկու տետրերում, դատելով Ս. Դուրյանի և Միհրդատյանցի արտագրած ցանկերից, «Ձղջում»-ը զետեղված է «Տրտունչք»-ից հետո, այնպես, որ «վերոգրյալ տաղը» «Տրտունչք»-ն է:

27. ԶՆՆ ՊԱՇՏԵՄ

(էջ 64)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում: ԳԱԹ-ում պահվում է բանաստիպության նախնական, մատիտով գրված հեղինակային օրինակը, որ Պ. Դուրյանը ժամանակին նվիրել է Հ. Ծանֆեսճյանին:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908-ի հրատարակությունից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

5—6 հս շը սիրեմ՝ երբ կուտի (ՏԹՆԴ)

Մ'աշիրը զիս բուրվառեն՝ (ՏԹՆԴ)

14 Երբ կուտի մը հեզանազ, (ՏԹՆԴ)

15 Վառն երկիսք մը երազ (ՏԹ, ՏԹՆԴ)

25 Իս կը պաշտեմ զ'իմ Պիստոս, (ՏԹ, Տ)

32—33 Զ' որս ութ օրն է նա գրծեր (ՏԹ)

Լուսինը ո՛չ ներա վարեն՝ (ՏԹ)

Լուսինը՝ ո՛չ ներա վարսն (ՏԹՆԻ)

37 Ես կը գողտողամ իր վըրա, (Տ)

25 և 32-րդ տողերի աղավաղումները մատնանշել են Ե. Դուրյանն ու Բ. էքսերճյանը: Վերջինի աննշումը գրողի եղբայրը 1891-ի օգոստոսի 30-ի նամակում հարկ է համարել նկատել. «Նա դերանունն գլխագիր պիտի լինի. նա (Աստված)» (ԲեՆ, 1967, № 1, էջ 168): 5—6, 14, 16 և 33-րդ տողերի աղավաղումները ցույց է տվել Ա. Գալաճյանը և դրանք հաստատվում են ԳԱԹ-ում պահվող քերթվածի տեքստով: Մ. Միհրդատյանցը 16-րդ տողի «Կ'վառն» բառի «Կ'» մասնիկը ընդգծել է սև թանաքով, որ նշանակում է թե Ֆելեկյանի աղավաղումն է (հն): Բայց ՏԹ-ում սպված է վառն, որ իսկապես աղավաղում է: Այդ նշումը Միհրդատյանցի վրիպակն է: Բ. էքսերճյանը բանաստեղծության ՏԹ-ի 33-րդ՝ «Լուսինը ո՛չ ներա վարեն» տողի ընդգծված բառը դարձել է վարսն, որ դարձյալ ճիշտ չէ: Երուսաղեմի ժողովածուի հրատարակիչը այդ մասին իրավացիորեն գրել է. «Ծանոթության մը մեջ «կը սրբագրեն» (էքսերճյանը— Ա. Շ.) Ֆելեկյանի «վարքն»-ը: Սակայն ինք ալ ընթերցման սխալի մեջ է. ապահովարար արդյունք՝ քառյակին սքանչելի իմաստը ըմբռնած շըլլալու» (Տ, էջ 109):

Բ. էքսերճյանը նշել է, որ բանաստեղծության ՏԹ-ի 25-րդ տողի «Պիստոս»-ը աղավաղում է և ուղղել է «Պ...»: Ա. Գալաճյանը մերժում է «Պ...»-ն և դարձյալ վերականգնում «Պիստոս»-ը: «...Ձեռագիրներու ուսումնասիրութենեն հրեան կու գա,— գրում է նա,— որ Դուրյան ի՛նք անձնապես Պիստոս գրած է...: Բնդդատելով ձեռագիր երկու տետրակները, կը տեսնվի որ առաջին, սևագրության տետրակին մեջ միայն «Պ...» դրված է, մինչև երկրորդին մեջ (որ ավելի ուշ ընդօրինակված է և սրբագրության մը՝ վերջնական ձև ստացած քերթվածները կը պարունակեն) «Պիստոս» լման ձևով կ'երևի. նույնինքն Դուրյանի ձեռագրով: Հետևաբար ուրիշներու կողմն կատարված կամայական հավելում մը չէ այդ անունը: Մյուս կողմն, պէ՛տք է ուշադրություն դարձնել, որ «Պիստոս» բառը յոթերորդ տան առաջին տողին իբր վերջին բառ, հանգաբանական կամ հնչական ո՛չ մեկ առավելություն կ'ըն-

ծայն բանաստեղծին՝ հաջորդ երեք տողերուն առնչութեամբ. ուրեմն այդ անունը հո՛ն, հայտնապես դրված է իրր բնական և զգացական մեկ ներքին ստիպման ու պատճառի արդյունք և թերևս կը ներկայացնէ իրապես այդ անունով սիրված էակ մը» (Տ, էջ Ժ, տե՛ս նաև էջ 109):

Ինչպես տեսնում ենք՝ տաղերի Ա տետրում «Պ...» է: Այդպես է նաև բանաստեղծութեան ԳԱԹ-ի ինքնագիր օրինակում և միայն Բ տետրում է, որ հանդիպում է «Պիստոս» լրիվ ձևով: Բայց արդյոք «Պիստոսի» հեղինակը Դուրյա՞նն է, ինչպես պնդում է Գալայճյանը: Այս հարցի պատասխանը անվերապահորեն բացասական է: Ի. Դուրյանը, որ ամենքից լավ գիտեր եղբոր ձեռագրերը, այդ մասին ահա ինչ է հայտնել Ա. Չոպանյանին. «Ձայդ անունն (Պիստոս— Ա. Շ.) քերթողն ինքը չէ նշանակած, միայն «Պ» սկզբնատառն գրած է յուր քերթվածոց հին ձեռագրին մեջ, և նորույն մեջ ալ՝ ուրիշի մը ձեռամբ հավելլալ է Պ-ի քով (իստոս)» (ԲԾԷ, 1967, № 1, էջ 168): Ավելիք մանրամասն է խոսում Մ. Միհրաբյանը: 1891-ի սեպտեմբերի 23-ի նամակում նա Չոպանյանին գրում է. «Պիստոս անունը վավերակա՞ն է. տեսա այդ բառը ձեռագրին մեջ. Դուրյանի գիրբը շեղ են բնավորութեամբ և «Պ» գիրը առանձին մնալու համար գրվածի ձև ունի և կատարելապես հայտնի է, որ «իստոս»-ը վերջին ավելցված է բնականեն տիպ գիր ունեցող մեկն մը, որպիսի է Ս. Ֆելեկյան, այս ալ կերևի իր սրբագրութուններեն» (ԲԾԷ, 1968, № 1, էջ 147):

Ուրեմն ո՛չ մի տարակույս, որ «Պիստոս»-ը Ս. Ֆելեկյանի աղավաղումն է և Ա. Գալայճյանը սխալ է ընթերցել այդ բառը:

Այնուհետև. ՏԹ-ում և ՏԹՆԴ-ում բանաստեղծութեան 37-րդ տողն է

Ես դողդողամ իր վերա

Ա. Գալայճյանը այդ տողը ներկայացնում է հետևյալ տեսքով.

Ես կը դողդողամ իր վերա

ըստ որում նա տողատակին ոչ մի նշում չի արել: Ընդգծված մասնիկը մեք կարծիքով վրիպակ է, քանի որ այն բացակայում է նաև ԳԱԹ-ի տեքստում:

ԳԱԹ-ում պահվող ինքնագիրը շունի գրութեան տարբերիվ և անստորագիր է: Դատելով այդ օրինակից, բանաստեղծութունը նախապես բաղկացած է եղև: Տ տնից, ըստ որում 6-րդ տունը գրել է հետո, ձախ կողմի լու-

ասանցքում և նշել, թե որտեղ պետք է գետեղվի, իսկ 9-րդ տունն ընդհանրապես բացակայում է: Դա ավելացված է հետագայում, երբ Դուրյանը մատրիտագիր տեքստը օրինակել է տետրերում: Տեքստային այլ տարբերություններ չկան: ԳԱԹ-ի ինքնագիրը ունի հեղինակային ծանոթագրություն:

Դուրյանագետները հաճախ են անդրադարձել գրողի սիրած էակի հարցին: Ե. Դուրյանը, հիմնվելով բանաստեղծի դասընկերներից Մարտիրոս (Մարտին) Պողիկյանի վկայության վրա, հայտնում է, թե նա ունեցել է լուկ «տղայական» տարփանք (ԲԾՀ, 1967, № 1, էջ 168), Բ. էքսերճյանը պնդում է, որ Դուրյանը ունեցել է իր սիրած էակը. «Միայն կույս մը,— գրում է նա,— համեստ ու անկեղծ կույս մը կար միայն, որ շէր դրժած նորա սիրույն, այլ ազնվականության հպարտությունը այդ երկու սրտերը կը բաժնե, մինչև որ մահն ալ կուգա և հավիտյան կը բաժնե երկուքն ալ աշխարհն»: Այդ անձանո՞ր գեղուհին Պ. կը կոչե ինքն Պետրոս, և առաջին Հրատարակիչք թիրևս ճանչնալով այդ անձանոթն, լրացուցիչ գրերն հավելելով ծանոթացուցած են մեզ «Պիստոս» անվամբ» («Ընդարձակ կենսագրություն...» էջ 54):

Այս անվան կապակցությամբ ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Ա. Չոպանյանը. «Ըստ Մ. Պողիկյանի Դուրյանի սերերը պղատոնական զգացումներ եղած են, անորոշ իղձեր... Ճանֆեսճյան, որ մինչև մահը ամեն օրվան ընկերն եղած է բանաստեղծին, ու՛ էլ աղջկան անուն չի հիշեր, որուն ան նախասիրություն ցուցուցած ըլլա, ու՛ էլ էակ չի գիտեր, որուն վրա գրած ըլլա սիրերգները: Նույնը կրսե նաև Տիգրան Աղամյան» («Դուրյանի կյանքը...», էջ 51): Այնուհետև բերելով մի քանի անվավեր ու հակասական պատմություններ, Չոպանյանը հանգում է այն ճիշտ հետևության, որ այդ հարցը մնում է չլուծված: Մ. Ճանաչյանը առաջ է քաշել մեկ այլ վարկած, ըստ որի Պ.-ն Վարդովյանի թատերախմբի հույն դերասանուհիներից մեկն է «Պիստիս անունով» («Տաղեր, նամակներ, հատվածներ», 1959, էջ 39): Վ. Թերզիբաշյանը շհամաձայնելով այս կարծիքին, իր հերթին պնդում է, թե Պ.-ն Վարդովյանի խմբում Պիստոս-Արաքսյա անվամբ հայ դերասանուհին է («Պետրոս Դուրյան...» Երևան, 1959, էջ 143): Սա ևս սպառիչ չի կարելի համարել, քանի որ եթե Դուրյանն ունեցած լիներ այդպիսի խաղընկերուհի, ապա ոչ մի կասկած, որ այդ մասին կհայտնեին թատերախմբի մյուս դերասանները (Պենլյան, Սիսակ և այլք), որոնց ևս դիմել է Ա. Չոպանյանը:

(էջ 66)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում: Բանաստեղծության մատի-
տագիր հեղինակային օրինակը, որ գրողը նվիրել է Հ. Ճանֆեսյանին, պահ-
վում է ԳԱԹ-ում:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908, 1922, 1945 (Վենե-
տիկ) և 1959-ի հրատարակություններից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

Կոկոն-ծաղիկ կուտին (ՏԹ, ՏԹՆԴ)

1 Լուսափըթիթ ւ'անաբատ (ՏԹ)

5 Ո՛հ, չէ նոցա պես ամբիծ (ՏԹՆԴ)

17 Ինչպես արդյոք կերտեց նա (ՏԹ)

25—26 Այլ որ շուրթըն հանդգնի (ՏԹՆԴ)

Հըպիլ հրաշից այդ լուսն (ՏԹՆԴ)

Առաջին տողի աղավաղումը ցույց է տվել նաև Մ. Միհրդատյանցի (ան),
իսկ Ե. Դուրյանը 17-րդ տողի մասին գրել է. «Ի՞նչպես արդյոք կերտեց նա»
խոսքին դերանունն զլխագիր պիտի լինի ըստ բնագրին» (ԲՆՀ, 1967, № 1,
էջ 168):

ԳԱԹ-ի ինքնագիրն անստորագիր է, չունի գրության տարեթիվ, և բա-
ցակալում է հեղինակի ծանոթագրությունը: Ինչպես Ա տետրակի տեքստը,
այդ օրինակը ևս խորագրված է «Կոկոն-ծաղիկունք կույսին»: Մատիտագիր
օրինակում 3-րդ տունը նախապես եղել է 2-րդ, իսկ երկրորդը՝ երրորդ,
ապա Դուրյանը հոմեոսական թվերով տեղափոխման նշաններ է արել: Այդ
օրինակը ավարտուն տեքստի համեմատությամբ ունի հետևյալ տարբերու-
թյունները.

17 Արդյոք ինչպես կերտեց նա

25 Բայց որ շուրթերն հանդգնի

Իսկ Մ. Միհրդատյանցը նշել է Ա տետրի հետևյալ հեղինակային սըր-բագրումները (հն)

Կոկոն-*[ծաղկունք]* ծաղիկի կույսին

28 (Որ) Թե նա դա՛ր մը կը ծրծե:

Բանաստեղծության վերնագրի կաւրակցութեամբ Հր. Աճառյանը հարկ է համարել բացատրել. «Կոկոն-ծաղիկ, ավելի հետո «լուսափթիթ և անարև գույգ մ'աշխարհներ» կամ «լուսապունդներ» ասելով Դուրյանը ակնարկում է կանացի ստիւքները» («Երկեր», էջ 53):

Հեղինակային ծանոթագրութունն առնված է ՏԹՆԴ-ից:

29. ՍԵՎ, ՍԵՎ

(էջ 66)

Օրինակված է ինքնագիր երկու տետրերում:

Տպագրվել է բոլոր հրատարակութուններում, բացառությամբ 1908 և 1945 (Հալեպ) ժողովածուներից:

Իրուսաղեմի հրատարակությունը ի հայտ է բերում հետևյալ ազավաղումները.

3 Վերջալուսի նրման ամպոց (ՏԹՆԴ)

12 Մեղմող կյանքից դառն անապատ: (ՏԹ)

16 Կյանքիս մըրուրն ևս թափեի: (ՏԹՆԴ)

30. ԱՌ ՄԱՅԻՍ

(էջ 71)

Օրինակված է ինքնագիր երկու տետրակներում:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908 և 1922-ի հրատարակություններից:

ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄ (ՄՄԿՆ)

7 Նա [գտրնվի] փողփողն վերև գլխու,—

31. ՄԱՆԻՇԱԿ

(էջ 72)

Օրինակված էր միայն ինքնագիր Բ տեսքում:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908, 1922 և 1945 (Հալկա) հրատարակություններից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ (Տ)

14 Վարդերն ամբիժ այտերուն: (ՏԹՆԴ)

Մ. Միհրդատյանցը հաստատում է, որ 24-րդ տողը պետք է լինի «վերն հառած աչքն ու հոգին», բայց ոչ «վերն առած», ինչպես ըստ երևույթին առաջարկել է Ա. Չոպանյանը (ՄՄան):

32. ԻՄ ՀԱՆԳԻՍՏԸ

(էջ 74)

Օրինակված է միայն ինքնագիր Բ տեսքում:

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908, 1922, 1945 (Վենետիկ) և 1959-ի հրատարակություններից: Մ. Չերազը 3-րդ տողի՝ «Թ՛ն ջուխտ մարգրիտ քափին իմ վրա» ընդգծված բառը առաջարկել է դարձնել քափեն (ՔԱ, էջ 69), որի համար որևէ հիմք չկա:

33. ՆՈՐ ՍԵՎ ՕՐԵՐ

(էջ 75)

Օրինակվել է միայն ինքնագիր Բ տեսքում:

Առաջին անգամ տպագրվել է հեղինակի կենդանության օրոք՝ Կ. Պոլսի «Մամուլ, արձագանք հասարակաց կարծյաց» հանդեսում (1871, 8 հոկտեմբեր, թիվ 169, էջ 99—100), որի մի օրինակը ևս պահվում է Պ. Գուրյանի

արխիվում (Տ, էջ ԺԱ)։ Զետեղվել է 1872, 1908, 1918, 1926, 1940, 1947, 1956 և Երուսաղեմի ժողովածուներում։

Ամսաթիվը վերականգնել ենք ըստ «Մամուլ...»-ի տեքստի։

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

- 1 Մինչ բնության՝ ընկա՛ն արյան արյան դարերը,
15 Հայուն համար չը փալփրլիբ աստղիկը,
34 Կամ մեկ փրփուրն հայրենյաց սուրբ կրակին,
52—53 Կարծես ծաղիկ կը կոխկոտեն—զ'այս կրզզան,
Եվ երբօր Հայ մը մորթեն,

Առաջին և 34-րդ տողերի աղավաղումների վրա Ա. Զոպանյանի ուշադրությունն է հրավիրել Ե. Դուրյանը 1891 օգոստոսի 30-ի նամակում (ԲՅՆ, 1967, № 1, էջ 168), մյուսները թույլ է տալիս պարզել «Մամուլ...»-ի տեքստն ու Երուսաղեմի հրատարակությունը։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մամուլ»

- 6 Աշխարհ՝ ոսկեց ու նոճերու։
8 Ոսկեւոտին՝ արմատներն այն վրիժուց
20 Արտասովթոր դեմքին թափած հույլ վարսը՝
35 Որ սառույցի զերթ ստիններ՝
46 Կամ խումբ մը կույր խըլուրդ՝ փառքի ըստրուկ սոսկ։
48 Որ հարվածի այդ կոշտ Քրդեն։

Սերօր (Մռվրե) — վեցթևանի հրեշտակ։

Զայս պսեհանջենք... Սուլթանեն — Թուրքիայի սուլթանն էր Աբդյուլ Ազիզ Առաջինը (1830—76), իշխել է 1861—1876 թթ.։

34. ԻՄ ՅԱՎԸ

(էջ 78)

Օրինակված է ինքնագիր Բ տետրում։

Տպագրվել է բոլոր հրատարակություններում, բացի 1908 և 1945 (Հալեպ) ժողովածուներից։

1893-ի ժողովածուում գրաքննությունը արգելել էր 22-րդ տողը («Հայ-
րենիք մը ունիմ թըշվառ»):

ԱՂԱՎԱՂՈՒՄ

15 նշել հողե վերմակին տակ, (ՏԹ)

Բ. էքսերճյանը ՏԹՆԴ-ի վրիպակների ցանկում (էջ 259) 14-րդ տողը «ուղ-
ղել է».

Չ'անդորրած գլուխս մրկավար՝

ընդգծված բաւը նոր վրիպակ է:

35. նվեՐ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՌ Պ. Հ. ՃԱՆՖԵՍՏՅԱՆ

Հո՛ւջ

(էջ 80)

Օրինակված է ինքնագիր Բ տետրում: ԳԱԹ-ում պահվում է բանաս-
տեղծության՝ սև թանաքով գրված նախնական օրինակը, որ Դուրյանը նվի-
րել է ընկերոջը: Ստորագրված է «Պ. Դուրյան»:

Երուսաղեմի հրատարակությունը պարզում է հետևյալ աղավաղումները.

1 Սա կապույտ մայր-օվկեանին (ՏԹՆԴ)

4 Եզրեն՝ վարդից մեջ աճյունի՝ (ՏԹՆԴ)

31 Ամրան գիշեր մը երբ շտնես (ՏԹՆԴ)

35 Երբ շրջազգեստ մը շրջե, (ՏԹ)

Առաջին տողի մասին Ա. Գալստյանը գրում է. «էքսերճյան կը սրբա-
գրե և «կապույտ»-ի կը վերածե, ծանոթության մը մեջ ավելցնելով որ Ֆե-
լեկյանի հրատարակության մեջ «խաղաղ» է, սակայն ըստ բնագրին պետք
է «կապույտ» ըլլար: Բ. Տեօրակին մեջ՝ նախապես «կապույտ» եղած է, զոր
Դուրյան շնչած (ավրած) և «խաղաղ» ըրած է: «կապույտ»-ին հետքերը
կարելի է նշմարել տակավին: Կրնա ըլլալ որ էքսերճյան ներկա Բ. տետ-
րակեն տարբեր՝ երրորդ մը ունեցած ըլլա ձեռքի տակ» (Տ, էջ 133): Պետք
է ասիլ, որ ԳԱԹ-ի ինքնագրում ևս «կապույտ» է: Կարելի էր կարծել, որ
էքսերճյանը օգտվիլ է հենց այս օրինակից, բայց այդպիսի ենթադրությունը
բացառվում է. նախ էքսերճյանը խոստովանում է, որ ինքը չի կարողացել

օգտվիլ է. Ճանֆեսսիայանի մոտ եղած նյութերից, և ապա, ինչպես կտեսնենք, ՏՔՆԴ-ի և ԳԱԹ-ի տեքստերում անհամապատասխանություններ կան: Բնորոշ է, որ Մ. Միհրդատյանցը որևէ աղավաղում ցույց չի տվել: Մնում է ենթադրել, որ էքսերճյանը հեղինակային սրբագրումը շփոթել է Ֆելեկյանի աղավաղման հետ: ԳԱԹ-ի տեքստը ևս հաստատում է, որ իսկապես 4-րդ ու 31-րդ տողերը ՏՔՆԴ-ում աղավաղված են:

Բ. էքսերճյանը 28-րդ տողը վրիպակների ցանկում «ուղղել» է.

Դարձած ատեն տրվի 'ի սիրո,

որ աղավաղում է: Մ. Չերազն իր հերթին կասկածել է 8-րդ տողի՝ «Ուրց շուքը սիրեհինք միշտ» ընդգծված բառի վրա և առաջարկել է որո ձևը (ՔԱ, էջ 49): Եղած նյութերը սակայն «ճշտման» օգտին չեն խոսում:

Բ տետրում գրությունն ամիսն ու օրը չի նշված, սակայն այն կա ՏՔՆԴ-ում և ԳԱԹ-ի ինքնագրում: ԳԱԹ-ի տեքստը նախնականն է և երկրորդ վերնագիրն է ոչ թե «Հուլի», այլ «Հիշե զ'իս»: Ավարտուն տեքստի համեմատությամբ նախնական օրինակն ունի հետևյալ տարբերությունները.

6 Ո՛հ, դու իմ սերը հիշե:

8—9 Ուրց շուքը սիրեհինք միշտ

Նստիլ, խոսիլ, ի շուրք դողդոջ՝

Ա. Դալայանի ականարկից երևում է, որ Բ տետրակում եղել է հեղինակային սրբագրություն.

1 Սա [կապույտ] խաղաղ Մայր — Օվկեանին,

Նախնական տեքստի հեղինակային սրբագրություններն են.

12 Դու իմ [խոսքերը] մամուլից հիշե:

16 [Դալար տեսնես ուր] Ուր կը գտնես մորը շոր մացար:

36. Ի ԳԵՐԵՋՄԱՆՆ

ԱՄԵՆԱՍԻՐԵԼՎՈ ՎԱՐԴԱՆ ԱՌԹՅՅԱՆԻ

ՀԵՇԵՇՄՈՐԻՆՔ

(էջ 83)

Օրինակվել է ինքնագիր Բ տետրում: Վերջին վեց տողը, որ կազմում է տետրակի 55-րդ էջը, պակասում է (Տ, էջ 139):

Տպագրվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908, 1945 (Հալեպի) և 1952-ի հրատարակություններից:

Բանաստեղծութիւնն ավարտված է եղել 1871-ի հոկտեմբերին, քանի որ նույն ամսվա 14-ի նամակում Դուրյանը Տ. Ալամյանին հաղորդում է, որ ուղարկում է «Վարդանի գերեզմանին ուղղյալ» իր տաղերգութիւնը:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

Ի ԳԵՐԵԶՄԱՆ ամենասիրելի Վարդան Լուսֆյանի (ՏԹՆԴ)

17 Այն հյուսկեներըն երկընքին (ՏԹՆԴ)

31 Քեզ արբեցուց այդ ըմպելիք (ՏԹ)

36 Բեռեցուց յիս հիշատակդ: (ՏԹՆԴ)

39 Ա՛հ, այս աշխարհս միշտ տաղտո՛ւկ է... (ՏԹ, ՏԹՆԴ)

36-րդ տողի մասին էքսերճյանը գրել է. «Ոտանավորի մը մեջ տպագրական սխալով մը, արբեցուց և սև կաթ, անհամաձայն կնկատվեր. բայց երբ նկատենք թե Դուրյան հափեցուց գրած էր, այն ատեն պիտի ըսենք. թե սխալած չէր Դուրյան» («Ընդարձակ կենսագրութիւն...», էջ 94):

1893-ի ժողովածուի մեջ գրաքննութիւնը կրճատել էր 44-րդ տողի «ազատութիւնք» բառը:

Բանաստեղծութիւնը, ամենայն հավանականությամբ, Դուրյանը վերամշակել է: Այդ եզրակացութեանն է բերում Ա. Գալայճյանի հաղորդումը: Նա Վ. Լուսֆյանի դամբանականի սևագիր ինքնագրի «առաջին էջին վերի ձախ» անկյունում գտել է «հետևյալ երկու (4 և 3) տուները» (Ն, էջ 7):

Նոճիներու սև շուքն ինկած,
Բավ տքնեցանք ու հծծեցինք.
Եվ մեր ողբոց բավ արձագանք
Տըվին Մասյաց հսկա լերինք:
Նոճիներու սև շուքն ինկած
Ոսկրներով՝ մոխրով ծանոթ
Հիշատակն հին սեցած քարեր

Առաջին տունը «հեղինակին կողմն ջնջված է», որ հիմնավոր է դարձնում հրատարակողի ենթադրութիւնը, թե երկու տները «թերևս իրարու տարբերակ» են: Իսկ այդ տողերը, իրենց հերթին, հավանաբար տարբերակն են «Հեծեծմունք»-ի 9—12 տողերի.

Ո՛հ, կը հիշե՞ս, Չամլըճայի
Սարը նստած լո՛ւռ մըխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սև հովանոցք վշտահարի:

Ըսքամպոլի կապույտ գոտին— Վոսփորի նեղուցն է:

37. ԻՄ ՄԱՀԸ

(էջ 86)

Ե. Դուրյանի և Մ. Միհրդատյանցի ցանկերից երևում է, որ այս բանաստեղծությունը եղել է Բ տետրում: Ինքնագիրը չի պահպանվել:

Զետեղվել է բոլոր ժողովածուներում, բացի 1908-ի հրատարակությունից:

Տպագրվում է ըստ ՏԹՆԴ-ի:

ՏԵՔՍՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏԹ

7 Ո՛հ, նըշուլե ցուրտ նառագայրֆ,

Վ. Թերզիբաշյանը ենթադրում է, որ «Վարդ և Շուշան»-ի 1869-ի փետրվարի 22-ի թատերազգում տպագրված Դուրյանի «Հիշատակ» տաղը «Իմ մահը» բանաստեղծությունն է, որի վերնագիրը փոխել էին՝ բովանդակությունից ելնելով: Նշանակում է՝ այդ բանաստեղծությունը գրված է եղել դեռևս 1869 թ., մինչդեռ բոլոր ժողովածուներում թվագրված է 1871» («Պետրոս Դուրյան», 1959, էջ 16): Գրականագետը նման ենթադրության համար, անշուշտ, հիմք է ընդունել «Իմ մահը» քերթվածի «Եվ հիշատակս ալ թառամի,» տողը: Բայց չէ՞ որ դա կարող է պատահական նմանություն լինել, որից դժվար է անվերապահ եզրակացության հանգել:

Ի դեպ, «Հիշատակ» բանաստեղծության մասին: Բ. էքսերճյանը մամուլի միջոցով դիմել է Վերգինե Գարագաշյանին, որ արտասանել է «Հիշատակ»-ը՝ խնդրելով իրեն հանձնել այդ բանաստեղծությունը, ըստ որում նա կարծում էր, որ թատերազգը տպվել է «70 կամ 71ի ատեն» («Արևելք», 1892, թիվ 2523): Հայտնի չէ, նա հասե՞լ է արդյունքի, թե ոչ: Բայց իս-

կապե՞ս թատերազդի վրա ոտանավոր է տպված: Ահա թատերազդի այն հատվածը, որ վերաբերում է այդ բանաստեղծությունը («Մասիս», 1869, 22 փետրվար, «Մամուլ», 1869, թիվ 3, էջ 24):

Հիշատակ

Տաղերգուրյան պ. Պ. Դուրյանի

Արտասանյալ օր. Վ. Գարագաշյանի

Թերևս սա սովորական ծանուցում է և ամբողջ թատերազդի տեքստը չէ: Բայց այդ ազդի վրա ևս բանաստեղծություն չի տպագրվել: Դա կարելի է եղրակացնել հետևյալ փաստից: Ե. Դուրյանը ունեթել է հիշյալ թատերազդը: Այդ մասին հայտնում է Մ. Միհրդատյանցը 1891-ի սեպտեմբերի 23-ի նամակում. «Անտիպ ոտանավորներ շունի (Դուրյանը), միայն թատերական ազդի մը մեջ, զոր պահած էր և հետո տեսա, գրված էր, թե 1869 փետրվար 22 շաբաթ գիշեր, օր. Վ. Գարագաշյանի կողմի պիտի արտասանվի պ. Պետրոս Դուրյանի մեկ տաղերգությունը Հիշատակ անուն»: Ուրեմն բուն թատերազդում ևս բանաստեղծության տեքստ չի եղել և «Հիշատակ»-ը Մ. Միհրդատյանցին անծանոթ է եղել: Դրանում վերջնականապես համոզում է նույն նամակի հաջորդ նախադասությունը. «Հավանորեն այս այն անտիպ ասանավորն է, զոր օր. Ալիս խոստացած էր քեզ յուղարկել» (ԲՆՀ, 1968, № 1, էջ 147): Այդ բանաստեղծությունը ցարդ մնում է անծանոթ, իսկ օր. Ալիսի (Սիպիլ) մոտ, ինչպես կտեսնենք, եղել է այլ բանաստեղծություն («Պիտի մեռնի՛մ ես»): Դատելով Ա. Գալայճյանի հաղորդումից, այդ թատերազդը ևս Պ. Դուրյանի արխիվում չի պահպանվել:

38. Ի՞նչ կ'ընեն

(էջ 88)

Ըստ Ե. Դուրյանի և Մ. Միհրդատյանցի ընդօրինակած ցանկերի, այս բանաստեղծությունը մտել է Բ տետրու: Ինքնագիրը չի պահպանվել:

Ձեռնեզվիլ է բոլոր ժողովածուներում, բացի 1908-ի հրատարակությունից: Տպագրվում է 1872-ի հրատարակությունից:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏԹՆԴ

12 «Ո՛հ, հատակն են իմ փրփուրներ»:

Ե. Գուրյանը Ա. Չոպանյանին գրած նամակում այս բանաստեղծության գրության հանգամանքների մասին պատմում է հետևյալը. Արմեն Լուսինյանը լսելով Գուրյանի համբավը, նրան պատկերացրել է կրակոտ մի պատանի, սակայն ծանոթանալով «կը տեսնե՞ս զ՛Գուրյան՝ պատանի մտախոհ՝ և մեղամաղձոտ, դալկահար և լուռ, յուր զարմանքն շկրնալով բռնել՝ կը մոտենա և կը հարցնե. «Ի՞նչ կայնե՞ր կը խորհիս Գեթսեմանիի մարդուն պես»: Ինչպես դուք, նույնպես և բոլոր ընթերցողք զինքն «կրակոտ» երևակայած են, բայց քերթողն արդեն կը գանգատի:

Ինձի կ'ըսեն— կրակոտ չես,
և կարծեմ Լուսինյանի տեսութենեն վերջ գրած է «Ի՞նչ կըսեն» քերթվածն,
որ յուր գրվածոց վերջինն եղած է» (ԲՆՇ, 1967, № 1, էջ 169): Ե. Գուրյանի հաղորդած այս տեղեկությունն իր գրքում օգտագործեց Ա. Չոպանյանը («Գուրյանի կյանքը...», էջ 45):

39. Ա. («ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԻ ԿԸ ՍՈՂԱՐ ԲԱՐԴԻԼ ԽԱՎ»)

(էջ 89)

Ինքնագիրը պահվում է Իրուսաղեմում, առանձին թղթի վրա:

Տպագրվիլ է բոլոր ժողովածուներում, բացի 1908, 1922, 1945 (Հալեպ) և 1952-ի հրատարակություններից:

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ

1—2 Երեկոյան բալն կը սողար բարդիլ խավ, (ՏԹՆԴ)

Այն լուսազարդ անդունդն հյուսել լուռ ու սյավ, (ՏԹՆԴ)

7—10 Անդրադարձող՝ գիշերվան լույսն անդրանիկ, (ՏԹՆԴ)

- 22—23 Ձոր գրկեցին շուտ վոսփորյան խոնջ ալիք: (ՏԹ, ՏԹՆԴ)
 Մարը մտնող արփվույն մարեր հուակ շառայլ (ՏԹ, ՏԹՆԴ)
 Սառնանամուտ բլրոց վըրա քայլ առ քայլ, (ՏԹ, ՏԹՆԴ)
 22—23 Երբոր հովիկըն [իր] այտեն գույն գեղանի (ՏԹ, ՏԹՆԴ)
 Եվ իր անբիծ լանջեն առած քիչ մը հոտ՝ (ՏԹՆԴ)
 25—26 Ի՛ ահա փրթեն ծաղիկներ բյուր առավել. (ՏԹ. ՏԹՆԴ)
 Անոր համար ի՛նչ է ծաղիկը ծաղկել (ՏԹ, ՏԹՆԴ)
 29 Լուսինն արգեն կը փողարկեր՝ պճներ զինք (ՏԹ, ՏԹՆԴ)
 32 Անոր նման տժգույն ըլլալ ու դյութել: (ՏԹՆԴ)
 49—50 Ալ լույսն աղոտ և կարծես թե ավելի (ՏԹՆԴ)
 Երկնքի լուրջ խորը սուգած կը փալփիլի (ՏԹ, ՏԹՆԴ)
 52 Հրգեհնի պես բոցավառեր զհորիզոն: (ՏԹ, ՏԹՆԴ)
 64 Ուր դայլալիկ թռչնոց՝ խորշուն սաղարթի (ՏԹ)
 Ուր դայլայլիկ թռչնոց՝ խոշուն սաղարթի. (ՏԹՆԴ)
 66 Ձոր տերևոց վըրա՛ սըփոռ մերկ աշուն, (ՏԹ, ՏԹՆԴ)
 68 Ես տերևոց ետև դողամ անոնց նման՝ (ՏԹ, ՏԹՆԴ)

Բ. էքսերճյանը որևէ աղավաղում ցույց չի տվել: ՏԹՆԴ-ում 2, 7 և 49-րդ տողերի «Աստեղազարդ» և «աստղն» բառերը փոխարինվել են «լուսազարդ» և «լույսն» բառերով: Գրաքննչական նկատառումներով «աստղ» բառի և դրանից կազմված բառաբարդումների գործածությունը... համիդյան Թուրքիայում արգելված էր, քանի որ ընթերցողը դրա տակ կարող էր հասկանալ «սուլթանական պալատը»՝ «Երլտըզը», որ հայերեն թարգմանվում է «աստղը»: Նույն պատճառով 30-րդ տողի «թրթուհիք» բառը տպվել էր «ուհիք»:

Միհրդատյանցը նշել է 8, 10, 26, 50, 52, 66 և 68-րդ տողերի աղավաղումները (չն և ան): Բոլորը ցույց է տվել Ա. Գալայճյանը: Մ. Չերազը առաջին և երկրորդ տողերի «բարդիլ» ու «հյուսիլ» բայաձևերը սխալ է համարել՝ առաջարկելով բարդել, հյուսել ձևերը (ՔԱ, էջ 75): Եղած նյութերը վկայում են, որ այդպիսի ուղղումները ճիշտ չեն:

Դուրյանի «Իրկեր»-ում (1947) և «Տաղեր»-ում (1954) բանաստեղծության 2-րդ և 7-րդ տողերը տպված են ըստ ՏԹՆԴ-ի, 49-րդը՝ ՏԹ-ի:

Բանաստեղծությունը, ինչպես Դուրյանն է նշել, մնացել է անավարտ

Հիվանդության պատճառով և ըստ էության վերջին գործն է։ Այն պետք է գառնար հեղինակի ամենածավալուն քերթվածը և բաղկացած լիներ մի քանի մասերից։ Բանաստեղծությունը մտնելու էր ինքնագիր երկրորդ տետրում, բայց հեղինակը չի հասցրել օրինակել։ Քերթվածը նախապես բաժանումներ չի ունեցել։ Այդ մասին Մ. Միհրդատյանցը Չոպանյանին հայտնում է 1892-ի նոյեմբերի 8/20-ի նամակում. «Յուր (Դուրյանի— Ա. Շ.) Ա. վերնագրով քերթվածը կերևա որ մեծկակ կտոր մը պիտի ըլլա եղեր, որովհետև այն թուղթերը, որոնց վրա գրված է, կը թվին ըլլալ տետրակի մը առաջին երեք թուղթերը. առաջին թուղթը կողքն է եղեր, վրան գրված է միշտ նույն պարզությամբ Պ. Դուրյան, 1871, երկրորդ թուղթին ճակատը գրած է Ա. և սկսած է ոտանավորը, զոր տարած է մինչև երրորդ թուղթին առաջին երեսին կեսը, ուր գրված է փակագծի մեջ (Հիվանդությանս պատճառով ընդհատված)» («ԲՅԸ, 1968, № 1, էջ 153)։

ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ (ՄՄԿՆ)

- 34 Ուր գեթ [մարած] ցամփած. է կանթեղին առկայծ յուղ,
40 [Աստղեց թող սարն ու] Սառն իր աստեղց րո՛ղ, դրդյակն ալ շահերու,
43 Յույց տալ [անոր] կ'ուզե քեզ Աստուծո զերթ պատկեր,
47 Երբ կը [կրբե] ծածկե քողքն հիմենյան ոսկեթել,
53 Եվ դուք՝ [նաև սերեր] կրա՛կք սիրո, մարիք շուտ և դուք,
71 Երբ [պըլպուլն] ծիծառնուկն ինձ հետ հեծե աղեկեզ,

Ա Ն Թ Վ Ա Կ Ի Ր Տ Ա Ղ Ե Ր

1. ՀԱՅՈՒՂԻՆ

(էջ 92)

Կ. Պոլսի պատրիարքարանի դիվանի քարտուղար Գևորգ Բամպուքճյանը մեզ է տրամադրել Քորոս Ազատյանի արխիվում պահվող Հմայակ ավ. քահանա էքսերճյանի 30-ական թվականներին «Ազդարար» թերթում տպագրած «Պետրոս Դուրյանի ձեռագիրը» հոդվածը։ Այստեղ էքսերճյանը հայտնում

է, որ «Հայուհին» բանաստեղծութեան ինքնագիրը ստացել է Տիգրան Աղամ-
յանից 1893-ին և «վերջին պահուն» հասցրել է հրատարակել «Ընդարձակ
կենսագրութեան...» սակավաթիվ օրինակներում միայն: Ինքնագրի հետագա
նակատագրի մասին նա ոչինչ չի ասում: Հավանաբար Տ. Աղամյանն այն
նանձնել է Ե. Դուրյանին, քանի որ ինչպես երևում է Հ. Օշականի մի ակ-
նարկից, ժամանակին այն գտնվել է Երուսաղեմում: Վերջինս գրում է.
«Դուրյանին ձեռագրին մեջ սրբագրումներ չգտա, քերթվածին լայնքով: Սի-
ւեցի քեր և Հայուհին ենթարկված են փոփոխման: Երկուքն ալ շին հասած
վերջնական կաղապարի» («Համապատկեր արևմտահայ գրականութեան»,
Երկրորդ հ., Երուսաղեմ, 1953, էջ 363, ծ.): Սակայն Ա. Գալայճյանի հրա-
տարակութունից հետևում է, որ ինքնագիրը այժմ չկա:

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է Տիգրան Արփիարյանի
«Մեռած գրագետներ» հոդվածում («Մասիս» հանդես, Կ. Պոլիս, 1892,
օգոստոս 29, թիվ 3966, էջ 178), ապա արտատպվել «Արձագանք»-ում
(Թիֆլիս, 1892, սեպտեմբերի 18, № 108): «Հայուհին» խորագրով զետեղ-
վել է 1893, 1900, 1904, 1918, 1926, 1932, 1936, 1940, 1947, 1956, 1963
և Երուսաղեմի ժողովածուներում:

Բանաստեղծությունը չի մտել հեղինակի օրինակած տետրերում:

Ա. Չոպանյանն այդ բանաստեղծությունը համարել է «կատարելապես
չնչին բան» և գտել, որ էքսերճյանը այն պետք է զետեղեր ծանոթագրու-
թյունների մեջ («Հայրենիք», 1892, թիվ 46):

Տ. Արփիարյանը հենվելով բանաստեղծության բովանդակութեան վրա՝
պատմում է գրութեան հետ կապված հանգամանքները. «...Շոգենավին մեջ,
ափ յափո գրած է այս ոտանավորը, անծանոթ զեղուհվո մը հանդեպ, որուն
տեսքը մագնիսացուցած էր զինքը: Երկչոտ երիտասարդն... կուզե սրտին
թիւրովը խոսիլ անոր հետ, թուղթ ու գրիչ կը հանե գրպանեն և կսկսի
քերթել: ...Դեռ ոտանավորը չավարտած, շոգենավը նավամատույց հասած
էր, ու մինչ ինք՝ զլիսահակ վերջին հանգերը կը փնտոեր, անծանոթ զեղու-
հին՝ տգեղներու բազմութեան մեջ աներևոյթ եղած ու դուրս ելած էր ար-
դեն» («Մասիս», 1892, թիվ 3966, էջ 178): Այս պատմությունը շարադրեց
նաև Բարսեղ էքսերճյանը՝ դարձյալ բխեցնելով բանաստեղծությունից («Ըն-
դարձակ կենսագրութուն...», էջ 54—55):

Ե՛վ Արփիարյանը, և՛ էքսերճյանը, և՛ մյուս ուսումնասիրողները վեր-

նադրի մասին ոչինչ չեն ասում: Բայց ահա տարիներ անց էդուարդ Գոլան-
ճյանը տարակուսել է. «Ստույգ է այն զրույցը,— դրել է նա,— թե այս
խիստ ծանոթ ոտանավորին խորագիրը (խոսքը «Հայուհին» բանաստեղծու-
թյան մասին է— Ա. Շ.) բանաստեղծին անկախաբար, փոխված է: Ակնարկ-
ված կինը հայուհի մը չէ՛» («Լույս», հանդես, Կ. Պոլիս, 1908, թիվ 18,
էջ 605, ծ.):

Հայտնի չէ, թե այսպիսի պնդման համար Գոլանճյանն ինչ հիմք է ունե-
ցել, բայց մի կողմնակի վկայություն, կարծես, հաստատում է նրա կար-
ծիքը: Ա. Զոպանյանը հայտնում է, թե գրողը դպրոցական տարիներին «Գար-
նանային կենացս մեջ» բանաստեղծությունից բացի գրել է «աննշան» մի
գրվածք և ավելացնում է. «Քրեմլին է տիտղոսը, բայց քերթվածը հեռա-
վոր բաղդատություն մը անգամ չի վերցնել Դուրյանի նույն տիտղոսով
հրաշակերտին հետ»: Նա հարկ է համարել մեջքերել հետևյալ «սովորակա-
նեն քիչ մը բարձր» տունը միայն.

Ո՛հ, կարծես թե նե երկնային

Զրվարթուն մ'էր երկնի վրա՝

Լույս սփռելու, սեր բուրելու,

Հուր ցայտելու էր իջած» («Դուրյանի կյանքը», էջ 25):

Դժվար չէ նկատել, որ սա «Հայուհին» բանաստեղծության հինգերորդ
տունն է (տող 17—20): Առաջին և երկրորդ տները նույնն են, իսկ մյուսա-
ներն ընդգծված տարբերություններ ունեն:

Արդյոք բանաստեղծության վերնագիրը «Քրթուհին» չէ՞: Այսպիսի են-
թադրությունը համոզիչ կարող է թվալ, եթե հիշենք, որ անցյալ դարի
90-ական թվականներին Քուրթիայում մոլեգնող պանիսլամիզմի պայմաննե-
րում անթույլատրելի էր համարվում քրիստոնյայի կողմից մուսուլմանուհուն
դրվատելը: Զէ՞ որ այդ պատճառով էր, որ «Քրթուհին» տաղի խորագիրը
1893-ի ժողովածուի մեջ փոխարինվեց աստղանիշներով, իսկ «Ա» («Երե-
կոյան բալն կը սողար բարդիլ խավ») անավարտ քերթվածի «նուրբ ամ-
պիկով, ուակից ուսան քրեմլինի» տողում ընդգծված բառից թողնվեց մի-
այն «...ուհիք» վերջավորությունը: Սակայն այդպիսի ենթադրության հետ,
որքան էլ առաջին պահ ընդունելի թվա, չի կարելի անվերապահորեն հա-
մաձայնել: Վերահիշյալ տարբերությունները ցույց են տալիս, որ Դուրյանը

վերամշակել է իր բանաստեղծություննր: Բացառված չէ, որ բանաստեղծը հետագայում անդրադառնալով «Քրթուհին» խորագրով իր աշակերտական տարիների փորձին, փոխել է նաև նրա վերնադիրը: Այդպիսի կարծիքը հիմնավոր կդառնա, եթե հիշենք, որ Դուրյանի ձեռագրերին ծանոթ Հակոբ Օշականը ևս հաստատել է, թե «Սիրեցի բեզ» և «Հայուհին» բանաստեղծությունները «ենթարկված են փոփոխման և չեն հասած վերջնական կաղապարի», իսկ Հ. էքսերճյանի վերը նշված հոդվածում խորագիրը նույնն է՝ «Հայուհին»:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մասիս»

- 14 Բարձրահասակ ու գեղադեմ
23 Իմ քերթեումն վրա միշտ՝
30 Ոչ զո՛ք տեսի մեջ նավին.

2. («ԱՀԱ ՍՐԱՆԱՅ ՕՐՆ ԵՐՋԱՆԻԿ»)

(էջ 94)

Հայտնի չէ՝ ինքնագիրը պահպանվե՞լ է, թե ոչ:

Առաջին անգամ տպագրվել է 1893-ի ժողովածուում, ապա զետեղվել 1900, 1904, 1918, 1926, 1947, 1956-ի և Նրուսաղեմի ժողովածուներում: «Նրկեր»-ում (1947) տպագրված է աշխարհաբար ուղղագրությամբ:

Զի մտել Դուրյանի օրինակած տետրերում:

Ա. Զուպանյանը նախապես կասկածի տակ է առել այս բանաստեղծության՝ Պ. Դուրյանի հեղինակությունը լինելու հարցը: 1893-ի ժողովածուի գրախոսականում նա գրել է. «Այնչափ ծթած, այնչափ հին, այնչափ ուռուցիկ, վարդապետական և այնչափ խրթին գրաբար է, որ չկրնար Դուրյանինն ըլլալ, և եթե նույնիսկ անորն ըլլա պատահամբ, պետք չէր զայն դնել գործերուն մեջ այն անձինն, որ առաջինն զուտ աշխարհաբար ոտանավորներ գրեց» («Հայրենիք», 1892, թիվ 246): Հետագայում Զուպանյանը ըստ էության ընդունում էր, որ ինչպես այս, այնպես էլ «Հայուհին» բանաստեղծությունը Դուրյանի դպրոցական առաջին փորձերից են և կարծում էր, թե

որպես այդպիսիք, այնուամենայնիվ, չպիտի տեղ գտնենին 1893-ի ժողովածուում («Դուրյանի կյանքը...», էջ 167):

Տ Ա Ր Ք Ե Ր Ա Կ Ն Ե Ր

1. ԿԸ ՍԻՐԵՄ ՁՔԵԶ .

(էջ 99)

Ինքնագրի ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ:

«Իցի՛վ թե» բանաստեղծության տարբերակն է:

Ինչպես այս, այնպես էլ մյուս տարբերակները Դուրյանը չի օրինակել իր տետրերում:

Առաջին անգամ հրատարակել է Հրանդը (Մելքոն Կյուրճյան)՝ «Դուրյանի մեկ ոտանավորը իր ձեռագրեն» հոդվածում («Հայրենիք» լրագիր, Կ. Պոլիս, 1891, 5 օգոստոս, թիվ 19): Զետեղվել է 1893, 1900, 1904, 1918, 1926, 1940, 1947, 1952, և 1956-ի ժողովածուներում:

Հավանաբար գրված է 1867-ին:

Հրանդը հայտնում է, որ ինքնագիրը «գիպվածով» է ընկել իր ձեռքը, որից և ընդօրինակել է: Մատնանշելով, որ «Իցի՛վ թե» առղի տարբերակն է, նա ավելացնում է. «Թեթև նայվածք մը կրնա մատնել, որ առաջին անգամ գրվածն է այս և ուղղված խարտոյշ մագերով, սևաչփի անժանոթի մը. ջինջ հստակություն կա և մեղմություն կապուտ անմեղություն մը խառնված»:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

«Հայրենիք»

13 Այն ի՛նչ քաղցր է, եթե ըլլամ ես զևիյուու:

2. («ԱՇՆԱՆ ՏԸԺԳՈՒՅՆ ԳԻՇԵՐ ՄԸՆ ԷՐ ՁՄՐԱՀՈՒՊ»)

(էջ 101)

Ինքնագրի ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ:

«Պևտք է մեռնի՛լ» բանաստեղծության տարբերակն է:

Առաջին անգամ տպագրվել է Տիգրան Արփիարյանի «Դուրյանի ձեռագիրը» հոդվածում («Արևելք», 1892, 18 հուլիս, թիվ 2544), ապա արտատպվել «Արձագանք»-ում (1892, օգոստոսի 5/17, № 90)։ Զետեղվել է 1893, 1900, 1904, 1918, 1926, 1940 և 1947-ի ժողովածուներում։

ՏԵՔՍՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք»

6 Փաղիուն աստղեր կը լողային հատակը,

36 Ո՛հ, կյանք պետք է տալ՝ սիրտ տրվի թե կուսի մ՝

Ա. Արփիարյանն այսպես է նկարագրում բանաստեղծությունից ինքնագիրը. «1869 օգոստոս 16...

Այս հեռավոր թվականը կը կարգամ դեղնորակ մաշած թուղթի մը վրա, որ 23 տարի դպրոցի մը անկյունը կամ ծրարի մը խորը մնալիս ետք, օրին մեկը երևան կելլե՝ հանկարծ ու խմբագրատունն կը բերվի՝ հրատարակվելու համար։ Քառակուսի փոքրիկ թերթ մը, որուն երկու կողմը դողդոջ ձեռքով գրված է մին այն հիվանդաբույր քերթվածներն, որք վաղամեծ քերթողին կյանքը կը պատկերեն։ Ու ներքևը, համեստ կերպով ստորագծված «Պետրոս Դուրյան»։

Երկյուղածությամբ կը բանամ ծալքը, որ խաշաձև ճեղքվածք մը կը գոյացունեն՝ իբր քառորդ դարու մը կնճիռը։ Մեկանն ալ գունատած է այլևս, բայց զիրը կը մնա միշտ, ընթեռնելի, մանրիկ սիրուն զիր մը, տենդոտ գրչե մը ելած։ Ո՛չ վերնագիր կա, ո՛չ ձոն մը, զեթ սկզբնատառերով, որ կարելի ըլլա հետք մը գտնել, կամ իմանալ, թե որո՞ւ ուղղյալ է»։

Հետագա շարադրանքից պարզվում է, որ ձեռագիրը գտնվել է Դուրյանի հեռավոր ազգականուհու՝ կրթված, լեզվիմաց, ուսումնասիր Եվգինե (Եվգինիա) տուտուի թղթերում։ Տ. Արփիարյանն անում է այն ենթադրությունը, թե Եվգինե տուտուն սրբագրել է Դուրյանի տողերը. «Այն փափկիկ, թրթռուն քերթվածներն, ո՛վ գիտե, ինչե՞ր կորուսին արդյոք այս հապավումներուն, այս բարեփոխումներուն տակ»։ Այնուհետև հետգրության մեջ նշելով, որ 1872-ի ժողովածուում տպված տեքստը «լավագույնն է ձեռագրին, որ նվազ խնամյալ կերևի», հոդվածագիրը դարձյալ գրում է. «Եվ ո՛վ գիտե,

թե այս սրբազրուիթյանց մեջ Եվգինիա տուտուին մատը շիկա...» («Արևելք», 1892, թիվ 2544):

Եվգինե սուտուի հասցեին ասված մեղադրանքը չի վրիպում Ե. Դուրյանի ուշադրութունից, և նա Ա. Զոպանյանին գրած 1891-ի օգոստոսի 2-ի նամակում հարկ է համարում նկատել. «Եվգինեի (տուտուի) մատը վերջերս խնդիր մը եղած էր Արևելքի մեջ: Ես կրնամ վստահեցնել Ձեզ, թե այդ կինն, որ սիրող էր գրականության և մասնավորապես մեր Պետրոսին, ոչ մեկ մատ չէ շարժած բնավ քերթողին թղթոց վրա և շարժելու կարողութունն ալ (ուսումնապես) տարակուսական կ'մնա: Միայն գիտեմ, թե թախանձանոք կ'խնդրեր նա Դուրյանի գրվածներն կարդալու համար: Նույն բանն անձիս փորձով ալ գիտեմ: Եղբորս մահվանն մեկ երկու տարի վերջ՝ ես ալ դպրոցական լինելով քերթվածներ կ'գրեի, Եվգինիա տուտու կ'առներ իմ տետրակս, կ'տաներ, կ'կարդար և հետո կ'բերեր առանց ոեևէ դիտողութուն մընելու... Ուստի ավելորդ հարց մ' է Եվգինիա տուտուի վերաբերությամբ ենթադրական սրբազրուիթյան մը հարցը (ԳԱԹ, ԱԶՖ, № 1738/1):

Այս տողերին մնում է ավելացնել և այն, որ Դուրյանը առանձնապես մեծ համարում չի ունեցել այդ կնոջ մասին: Երբ բանաստեղծը, լսելով Եվգինեի համբավը, Հովհաննես Ծանֆեսեյանի հետ այցելել է նրան, վերադառնալիս ընկերոջն ասել է. «Այս է եղեր Եվգինե տուտուն, բան մը չէ» («Ընդարձակ կենսագրութուն...», էջ 59):

3. ՄՆԱՍ ԲԱՐՅԱՎ

(էջ 103)

Մեր ձեռքի տակ եղած Հ. էքսերճյանի «Պետրոս Դուրյանի ձեռագիրը» հոդվածից (տե՛ս «Հայուհին» բանաստեղծության ծանոթագրութունը) պարզվում է, որ «Մնաս բարյավ»-ի ինքնագիրը գտնվել է Ե. Դուրյանի մոտ: Հետագա որոնումների ընթացքում էքսերճյանը «Ընդարձակ կենսագրության...» Զարդարյան գրատանը եղած մի օրինակի մեջ հայտնաբերել է «երկու կամ երեք բառ պատռած» մեկ այլ ինքնագիր: «Ով գիտե, ո՞ր անժանոթ ձեռքը դրած էր հոն և ինչպե՞ս ձեռք ձգած էր զայն,— գրում է նա,— ...Դիրը Պետրոսինն էր, կը ճանչնայի զայն»: Այս հոդվածի հետ նա

տւյազրել է նաև «Մնաս բարյավ»-ի լուսանկարչական պատճենը: Տեքստային որևէ տարբերություն չկա:

Նր/ու ինքնագրերի ճակատագիրն էլ անհայտ է:

«Սիրեցի քեզ» բանաստեղծության տարբերակն է:

Առաջին անգամ հրատարակվել է 1892-ին «Արևելք» թերթում (13 հունիս, թիվ 2516), ապա արտատպվել է «Արձագանք»-ում (1892, հուլիսի 3/15, № 77, էջ 1):

Ինքնագրի լուսանկարչական վերարտադրությունը զետեղվել է Բ. էքսերճյանի «Ընդարձակ կենսագրություն...»-ում, որպես Հավելված:

Տպագրվել է 1893-ի և հետագա բոլոր ժողովածուներում, բացի 1908 և 1945-ի հրատարակություններից:

Հավանաբար գրված է 1869-ին:

ՏԵՔՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՐԵՎԷԼՔ»

30 Երբ ցողի՞ն իմ աչքերը,

35 Մնաս բարյավ... պաշտելիս.

Դատելով առաջին ինքնագրի վերարտադրությունից, Դուրյանը կատարել է 8-րդ և 7-րդ տողերի տեղափոխություն և սրբագրել մի տող.

32 Աստղերուն մեջ կը [խոսիս] ժպիտս:

Այս տարբերակի կապակցությամբ տե՛ս նաև «Սիրեցի քեզ» տաղի ծանոթագրությունը:

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Զեռնարկելով Պ. Դուրյանի Երկերի հրատարակությանը, Բ. էքսերճյանը մտադիր էր ժողովածուում ընդգրկել նաև նրա հրապարակախոսական ժողովածուները: «Դուրյանի գործերը» հայտարարության մեջ նա ծանուցում էր. «Առայժմ հրատարակելի գործքն կը պարունակե 22—23 ֆորմա, զոր ավելի ստվարացնիլ ջանալով, սկսած ենք մեր հետազոտությունը շարունակել և տեղեկացած եմք, թե Պետրոս ունի տակավին՝

69, 70, 71 տարիներուն «Օրագիր» թերթին մեջ Նուրայր, Արմենակ կամ Պետրոս Դուրյան անուններով գրվածներ» («Արևելք», 1892, 23 հունիս, թիվ 2523): Ի՛նչ հիմք ունեն էքսերճյանը, երբ խոսում էր Դուրյանի կեղծանունների մասին: Դրա աղբյուրը գրողի 1871-ի <ղեկտեմբերի 10-ի> նամակի հապավված հաստվածն է, որին կանդրադառնանք իր տեղում: Իսկ առայժմ նկատենք, որ էքսերճյանի հայտնած տեղեկությունը արժանահավատ է, քանի որ կեղծանուններով հոդվածներ տպագրելու փաստը հիշյալ նամակում վկայում է ինքը՝ Դուրյանը: Չմոռանանք նաև, որ 90-ական թվականներին ողջ էր Ա. Լուսինյանը, որին շատ լավ հայտնի էին Դուրյանի կեղծանունները և որի օգնությանը նույնպես դիմել էր էքսերճյանը: Սակայն հարկ է նկատել, որ գրողը ո՛չ 1869-ին, ո՛չ էլ 1870-ին «Արմենակ» և «Նորայր» կեղծանուններով հոդվածներ չի հրատարակել, ինչպես կարծում էր իր կենսագիրը: Ավելին, նա 1870-ի «Օրագիր»-ում առհասարակ որևէ հոդված չի տպագրել: Մյուս կողմից 1871-ի «Օրագիր»-ում «Արմենակ» ստորագրությամբ բոլոր հոդվածները չէ, որ պատկանում են Պ. Դուրյանի գրչին: «Արմենակ և» կամ «Արմենակ» ստորագրությամբ «Օրագիր» թերթում տպագրված են քաղաքական բնույթի մի քանի նյութեր («Պատմություն», «Տեսություն հին ազգաց տիեզերական պատմության վրա», «Հակիրճ բացատրություն քրմաց մեկ քանի գործերուն»), որոնց հեղինակը Դուրյանը չէ: «Արմենակ» և «Նորայր» կեղծանուններից նա օգտվել է բացառապես 1871-ի հուլիսին՝ Կ. Փանոսյանի դեմ ունեցած վեճերի ժամանակ:

էքսերճյանը ոչ մի հոդված չհրատարակեց, սակայն այդպիսիք ունեցել է իր ձեռքի տակ, քանի որ «Ընդարձակ կենսագրություն...»-ում նա ուղղակի ասում է, որ իր աշխատության համար աղբյուր են ծառայել նաև Դուրյանի հոդվածները (էջ 13), որոնցից և այլևայլ առիթներով քանիցս մեջբերումներ է կատարում: Նա ընդօրինակել է Դուրյանի հոդվածները մի առանձին տետրում, որ, ինչպես արդեն ասել ենք, անցել է Վ. Ս. Մովակին: Այդ տետրում Խ. Ամիրյանի վկայությամբ եղել են գրողի «հրապարակազրական տեսություններին ոմանք, որոնք հրատարակված են «Օրագիր»-ի մեջ» («Լուսաղբյուր», 1953, թիվ 14, էջ 53): «Կարդացած եմ վերը հիշված տետրակին մեջ իր հրապարակազրական հոդվածներին 9 ընդօրինակություն» — գրում է Խ. Ամիրյանը և ապա համառոտակի շարադրում դրանց բովանդակությունը: «Անոնց մեջ,— շարունակում է նա,— ան (Դուրյանը — Ա. Շ.) կը խոսի

Սամաթիո մեջ նորակազմ լսարանի մը մասին, դարձյալ թատրոնի մասին. ազգ. վարժարանի առնչությամբ, Սամաթիո մեջ դպրոցաշինության առթիվ, համեղբայրության մասին և այլն և այլն: Այդ գրութիւններն հասկանալի կըլլա, որ Դուրյան ունեցած է նաև լրագրական վեճեր և զինքը հարվածող հետադիմական ուժերու հանդեպ եղած է խիզախ և ցուցադրած ներողամտության լայն ոգի» (նույն տեղում, էջ 55):

Ընթերցողը կտեսնի, որ և. Ամիրյանի թվարկած բոլոր հարցերն էլ արժարժված են ներկա հատորում զետեղված հողվածներում: Հետևաբար, կարելի է պնդել, որ Դուրյանի հրապարակախոսական ժառանգութիւնը ևս ներկայացվում է ամբողջությամբ:

Կրողի հողվածների ճակատագիրը ցարդ մնացել է անհայտ. դրանք երբևէ չեն հրատարակվել, և Դուրյան-հրապարակախոսի գործունեութիւնը ռառամնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել:

Ոչ մի հողվածի ինքնագիր չի պահպանվել:

1. ԽՈՍԱՄԱՆ

(էջ 107)

Առաջին անգամ տպագրվել է Կ. Պոլսի «Օրագիր ծիւն Ավարայրով» թերթում (1869, նոյեմբեր 26, թիվ 67): Ստորագրութիւնը՝ «Դուրյան»: Երկրորդ անգամ մեր հակիրճ առաջաբանով և ծանոթագրութիւններով հրատարակվել է «Կրական թերթ»-ում (1965, դեկտեմբերի 17, № 51):

Տպագրվում է ըստ առաջին հրատարակության:

1) Այս օրերս Սամաթիա...— Խոսքը խոսարանների մասին է: Կ. Պոլսի Սամաթիա թաղում խոսարանը բացվել է 1869-ի նոյեմբերի 15-ին:

2) ...աղբիւնց վաճառան մը կանգնեց անձնվեր և ազգասէր անձի մը ջանով...— Խոսքը Սամաթիայի Ազապյան գիշերօթիկ աղջկանց վարժարանի մասին է, որ բացվեց 1869-ի հունվարի 6-ին: Վարժարանի տնօրենն էր Կարապետ Փանոսյանը:

3) Ամեն. ս. Պատրիարքի...— Կ. Պոլսի պատրիարքն էր Մկրտիչ Խրիմյանը:

4) ...«Օրթա օյիւնի»— «Օրթա օյնու» (թրք. խաղամեջ)— թուրքական թատերական հանպատրաստի փողոցային ներկայացումներ:

5) Քասաբանը լեպետ ինկավ, բայց նորին հոգի կանու... — Ակնարկը վերաբերում է «Արևելյան թատրոնի» փակմանը (1867), իսկ «հոգի կանու» արտահայտությունը՝ առանձին թատերախմբերին և հատկապես Ն. Վարդուկյանի «Քատրոն օսմանի»-ին, որ գործել էր սկսել 1868-ից:

6) Ավագաղբյուրի մերկ գավակաց նկարագիրը... — «Մանգումեի էֆֆյար» թերթը այսպես է նկարագրել այդ գյուղի վիճակը. «...Նրբ այս գյուղին մոտեցանք, քառասունի շափ տղաքներ մերկ և բուսիկ ճանապարհի վրա շարված կային, որ տեսողաց աղիքը կը գալարեր» («Օրագիր...», 1869, նոյեմբեր 3, թիվ 48): Ավագաղբյուրի մանուկներին օգնելու հարցը քննարկման առարկա է դարձել Մամաթիայի խոսարանի անդրանիկ նիստում: Բանախոսել են Կարապետ Մինասյանը և Կարապետ Փանոսյանը:

7) Գաղղիո կայսրուհիվայն և Ավստրիո կայսեր եկած առեն ներկայացման խնդիր մը հուլիցինք և այն խնդրույն մեջ չը հաջողելովնիս... — Ֆրանսիայի Սոսենի կայսրուհին Կ. Պոլիս էր ժամանել 1869-ի հոկտեմբերի 1-ին, իսկ Ավստրիայի կայսր Ֆրանց Յոզեֆը՝ հոկտեմբերի 16-ին: «Մանգումեի էֆֆյար» և այլ թերթեր, պատրիարքից և պաշտոնատար հայ անձնավորություններից պահանջել են օգտագործել առիթը, ներկայանալ ֆրանսիական կայսրուհուն ու ավստրիական կայսրը՝ հայերին մտահոգող խնդիրների վրա ուշադրություն հրավիրելու համար: Այդ խնդիրը չի հաջողվել, քանի որ, ինչպես գրում է «Մասիս» օրաթերթը, «տանուտերը՝ Բ. Գուռը, որուն միայն կը վերաբերի ներկայացնելու իրավունքը, ոչ պաշտոնապես, ոչ ուղղակի և ոչ անուղղակի հրավեր մը չէր ըրած» (1869, հոկտեմբեր 30, թիվ 446):

8) ...մյուս ազգային քաղերուն նախանձուտ նայվածքը կը հրավիրեմ... — Շուտով համանման խոսարաններ հիմնվեցին նաև Սկյուտար, Ենիգաբու և այլ թաղերում, ինչպես նաև դավառներում:

2. ԹԱՏՐՈՆ

(էջ 113)

Առաջին անգամ «Պ.» ստորագրությամբ տպագրվել է «Օրագիր ծիլն Ավարայրվո» թերթում (1869, դեկտեմբեր 27, թիվ 93), երկրորդ անգամ

առաջարանով ու ծանոթագրություններով հրատարակել ենք մենք («Սովետական արվեստ» հանդես, Երևան, 1966, № 12, էջ 49—51):

Ի՞նչ հիմքեր կան այս հոգվածը Պ. Դուրյանի հեղինակությունը համարելու:

Նայւ. Հոգվածի ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ այն ըստ էության նպատակ ունի քաջալերել «Քատրոն օսմանին»-ի գործունեությունը: Հեղինակը հասարակությունը հրավեր է կարդում նյութապես և բարոյապես օժանդակել թատրոնի վարչությանը, օգնել, որպեսզի նրա տնօրենն այլևս ստիպված չլինի «օտար ներկայացումներ տալ», այլ պահի ազգային թատրոնը: Հոգվածագիրը չի անվանում տնօրենին, բայց ակներև է, որ նրա իշատակած «անձը», թատրոնի վերականգնմանը «բոլոր սրտե ուխտած» մեկը Հակոբ Վարդովյանն է՝ «Քատրոն օսմանին»-ի եռանդուն ղեկավարը: Ինչո՞ւ հեղինակը չի տալիս Վարդովյանի անունը: Հավանաբար այն պատճառով, որ կապված է եղել Վարդովյանի թատերախմբի հետ: Նա խուսափել է իր բուն ստորագրությունը դնել հոգվածի տակ՝ մտածելով, որ «Քատրոն օսմանին»-ի հրապարակային պաշտպանությունը կարող էր վերագրվել նրա տնօրենի հետ ունեցած անձնական մտերմության:

Այդպես կարող էր վարվել Պետրոս Դուրյանը:

Ճշմարիտ է, որ նա և Վարդովյանը, ինչպես ցույց է տալիս գրողի 1870-ի դեկտեմբերի 21-ի նամակը (տե՛ս սույն հրատարակությունը), ընդհարվել են: Բայց դա վերաբերում է 1870 թվականի վերջերին, իսկ մինչև այդ նրանց հարաբերությունները եղել են մտերմական: Դուրյանը դպրոցական տարիներից Վարդովյանի հանձնարարությամբ ֆրանսական թատերագություններ էր թարգմանում: 1869 թվականից նա «Քատրոն օսմանին»-ում բնագործ է տալիս իր հեղինակածներից, իսկ որոշ ժամանակ անց որպես ղեկավար մտնում է Վարդովյանի թատերախումբը: Իր հերթին Վարդովյանը ոչ միայն բնագործ է «Վարդ և Շուշան»-ը, «Արտաշես աշխարհակալ»-ը, «Անկումն Արշակունի հարստության»-ը, ստանձնում որոշ դերեր (Արտաշես), այլև այդ ներկայացումների աղագրերում դրվատում Դուրյանի «վառվռուն գրիչն» ու «հանճարը»: Ուստի բնական է, որ Դուրյանը կարող էր հանդես գալ «Քատրոն օսմանին»-ի պաշտպանությամբ:

Երկուրդ. 1869—71 թվականներին Դուրյանը աշխատակցել է «Օրագիր...» թերթին, ըստ որում (հիշենք էքսերձյանի պնդումը) հոգվածներ է

տպագրել ոչ միայն իր իսկական ստորագրությամբ, այլև կեղծանուններով: Ինչո՞ւ ուրեմն նա չէր կարող օգտագործել «Պ.» ստորագրությունը, մանավանդ, որ որոշ ժամանակ եղել է հիշյալ թերթի օգնական խմբագիրը և ստորագրությունների ընտրության մեջ լիովին ազատ էր:

Իրենց. «Քատրոն»-ից մոտ մեկ ամիս առաջ լույս տեսած «խոսարան» հոդվածը վկայում է, որ Դուրյանին խորապես մտահոգել է հայ թատրոնի վիճակը: Նա խոսարանի հետ միասին թատրոնը նույնպես համարում էր բարոյական դաստիարակության և ժողովրդին լուսավորելու միջոց, ընդգծում թատրոնի «քաղաքակրթական ու բարոյական» նշանակությունը, դատապարտում թատրոնի հակառակորդներին, որոնք «ծուռ» են նայում հայկական թատրոնին, բայց դառնում են օտար «խայտառակ ներկայացմանց» հանդիսատեսը, նշում նյութական միջոցների պակասության հարցը: Դժվար չէ նկատել, որ բոլոր այդ խնդիրները արծարծվում են նաև «Քատրոն» հոդվածում: Ավելին. «Քատրոն»-ի հեղինակը իր հերթին անդրադառնում է խոսարանի հարցին՝ նշավակելով նրա թշնամիներին: Պատահակա՞ն են արդյոք այս զուգադիպությունները: Կարծում ենք, ո՛չ:

Զուրենց. Դուրյանի վերջին թատրերգությունը, ինչպես հայտնի է «Քատրոն կամ թշվառներ» դրաման է: Այս գործում հեղինակն առաջադրեց ժամանակակից թեմատիկայի պահանջը և հուշակեց թատրոնները ժողովրդի «հեղափոխություն հարդարող հրարույսներն են» սկզբունքը: Սա նորություն էր ոչ միայն Դուրյանի, այլև հայ գրականության համար: Բայց այս դրաման ուշագրավ է նաև հետաքրքրող խնդրի առումով: «Քատրոն» հոդվածում մենք գտնում ենք մի միտք, որ ծանոթ է «Քատրոն կամ թշվառներ» դրամայից: Դա վերաբերում է թատրոնի հասարակական կարևորությանը: Դրամայի շորթորդ արարվածում՝ Բ, հանդիսատեսն ասում է. «...Շատերը զրոսնելու համար քառուճ կուզան և ոչ թե ներկայացված խաղին ողվույն թափանցելու...»: Նույն դատողությանը գրեթե բառացի հանդիպում ենք «Քատրոն» հոդվածում. «...Քատրոնը ոչ թե բարոյական և օգտակար հաստատություն մը, այլ իբրև զրոսատեղի կը նկատենեմ...»:

Վերոբերյալ փաստերից մենք ժամանակին հանգել էինք այն հետևության, որ «Քատրոն» հոդվածի «հավանական հեղինակ» պետք է համարել Պետրոս Դուրյանին («Սովետական արվեստ», 1956, № 12, էջ 50): Հետագա պրպտումների ընթացքում մեզ հայտնի դարձավ մի լրացուցիչ վկայություն,

որ ցրում է ամեն մի տարակույս և վերջնականապես ասպցուցում, թի «Քատրոն»-ն իսկուպես պատկանում է Պ. Դուրյանին, իսկ «Պ.»-ն վերջինիս ստորագրությունն է:

և. Ամիրջանը հայտնում է, որ էքսերճյանի ընդօրինակած տետրում ինքը կարդացել է Պ. Դուրյանի այս հոդվածը: Նա գրում է. «1869 դեկտմ. 27-ի «Օրագիր»-ի մեջ Դուրյան կը բնորոշե թատրոնին և դերասանին դերը զանգվածներու դաստիարակության նկատմամբ և կըսե.

«Քատրոնը հայելի մ'է, որուն մեջ մարդս կրնա յուր նշմարիտ պատկերը տեսնել և սրով յուր նշմարած անհանք տեսները անհետացնել և մաքրել: Իսկ դերասաններն ալ մեկ մեկ դաստիարակներ են, որ ամեն աստիճանի մարդոց նշմարիտ պատկերը կու տան բարության և լավության հետեւանները ներկայացնելով, մարդու բարոյական զգացմանցք փափագողը պետք է բատերասեր ըլլա, կամ այն, որ բատերասեր է, ուրեմն բարոյականության ծավալման փափագող է» («Լուսադրբուր», 1953, հոկտեմբեր, թիվ 14, էջ 53. ընդգծումները մերն են— Ա. Շ.):

Մեջբերված հատվածը, տեքստային աննշան տարբերություններով, որոնք արդյունք են ընդօրինակման, առնված է «Քատրոն» հոդվածից:

Տպագրվում է ըստ առաջին հրատարակության:

1) ...խոսարանի հաստատությունն ալ... իր ծնունդը առած օրեն իր բըշնամիներն ու հակառակորդներն ունեցալ...— Խոսարանների նկատմամբ թշնամական դիրք էին գրավել մի շարք պարբերականներ և առաջին հերթին Կ. Պոլսի «Միածան» թերթն ու նրա թղթակից Քաթուլը:

2) ...միեակ Հայկական և Անձնվեր ընկերությունները դեռ հաստատ կեցած են...— Հայկական ընկերությունը հիմնվել է 1862-ի մարտին, Սամաթիայում, հետապնդում էր բարեգործական նպատակներ, օգնել է հրդեհից տուժած թաղերին, Ավագադրբուրի մանուկների կրթության գործին և այլն: Անձնվեր ընկերությունը 1860-ից գործում էր Ղալաթիա թաղում, նպատակն էր պանդուխտ հայերին գրել-կարդալ սովորեցնել: Ընկերությունը Կ. Պոլսի զանազան թաղերում բացել էր կիրակնօրյա վարժարաններ, իր բաժանմունքներն ուներ նաև գավառներում:

3) ...ԱրեւիկէՅԱՆ անուն քատրոն մը ունեին... Բայց հանկարծական արկած մը զանի իր... ընթացքեն դադրեցուց— Արեւիկայան թատրոնը հիմնվել է

է 1861-ին և որոշ ընդմիջումներով գործել մինչև 1867-ը: «Հանկարծական արկած» արտահայտությունը ակնարկում է դերասան Ստեփան էքշյանի ցուցադրական ելույթը թատրոնի ղեկավարության դեմ:

4) ...Երբեմն երբեմն այլևայլ անուններով քատերական խումբեր և վարչություններ տեսնվեցան... — Արևելյան թատրոնի փակումից հետո, ըստ բանասեր Գ. Ստեփանյանի, գործում էին «Հայ դերասանական ընկերություն», «Ասիական ընկերություն» և «Նորակազմ ընկերություն» թատերախմբերը («Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության», հ. առաջին, Երևան, 1962, էջ 310):

5) ԱԼԳԱԶԱԼԻ՛՛ փոխվելու դժբախտությանը արժանացավ... ԱԼԳԱԶԱԼԻ՛ (արարերեն՝ պալատ) — Արևելյան թատրոնի անվանումներից մեկը: Հակոբ Պարոնյանը գրել է. «Նախ Արևելյան քատրոն, ետքը Քատրոն ձիերու, քիչ մը հտքը Գաղիական քատրոն, քանի մը տարի ետքը Ալֆազար կոչվելով տասը տարվա մեջ շորս անուն փոխեց Գեր. հորեն Գալֆայանի պես» («Երկերի ժողովածու տասը հատորով», հ. երկրորդ, Երևան, 1964, էջ 99):

6) Մեկը, մեկը կար միայն... — Այստեղ և հետագայում խոսքը Հակոբ Վարդովյանի մասին է:

7) ...գրեթե կես-Հայ քատրոն մը ունինք այսօր Օսմանիե անվամբ... — «Քատրոն օսմանիե»-ն գործել սկսեց 1868-ի վերջերին Կեստիկ Փաշա թաղում, Հ. Վարդովյանի տնօրինությամբ:

3. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(էջ 119)

Առաջին անգամ տպագրվել է «Օրագիր Կ. Պոլսո» թերթում (1871, 24 մայիս, թիվ 451), ստորագրությունը՝ «Պ. Դուրյան»: Երկրորդ անգամ հրատարակել ենք մենք «Հայրենիքի ձայն» թերթում (1969, № 19):

Տպագրվում է ըստ Վիեննայից ստացված ընդօրինակության:

1) ...այն մառած հրաբուխը¹⁾ — Նկատի ունի քրիստոնեական կրոնը:

2) ...այն կարմիր բլուրը, ուր լուսեղեն դիակ մը վառեցավ²⁾... «Կարմիր բլուրը» Գողգոթան է, «լուսեղեն դիակը»՝ խաչված Հիսուսը:

3) «Սիրեցեք գ'միմյանս» — Տե՛ս համանուն խորագրով Դուրյանի բանաստեղծության ծանոթագրությունը:

4) ...ՕՐԱԳԻՐԸ նորափետուր տեսա— «Օրագիր»-ը սկսեց հրատարակվել որպես հայատառ տաճկերեն թերթ, որտեղ սկզբնապես հայերեն նյութերին քիչ տեղ էր հատկացվում: «Օրագիր»-ը 1871-ի մայիսից «կերպարանափոխվեց»՝ դառնալով ամբողջովին հայկական թերթ՝ հայատառ տաճկերենը վերապահելով միայն առանձին ծանուցումներին: Դուրյանը ակնարկում է այս հանգամանքը:

5) «ՄԱՍԻՍ» — Թերթ, հրատարակվել է Կ. Պոլսում, 1852-ից, Կարապետ Ութուճյանի խմբագրությամբ: Տարբեր ժամանակներում լույս է տեսել նաև որպես հանդես:

6) «ՄԱՆՁՈՒՄԵ» — Լրիվ անվանումը «Մանզումեի էֆթյար», հայատառ տաճկերեն թերթ, հրատարակվել է Կ. Պոլսում, 1866-ի փետրվարից, Կ. Փանոսյանի խմբագրությամբ:

7) «ՕՐԱԳԻՐ» — Օրսթերթ, հրատարակվել է Կ. Պոլսում, 1868-ից Մարկոս Աղաբեկյանի խմբագրությամբ, 1869-ից խմբագիրն էր Օզսեն Խոճասարյանը: Նախապես կոչվում էր «Օրագիր ծիլն Ավարայրվո», ապա՝ «Օրագիր Կ. Պոլսո»:

8) Մայիս 24ը — Արևմտահայերի «Ազգային սահմանադրությունը» պատրիարքարանի կողմից ընդունվելու օրը:

9) ...կայսերաշնորհ Սահմանադրության մը... — Սուլթան Աբդուլ Ազիզ Ա.-ն վավերացրեց «Ազգային սահմանադրությունը» 1863-ի մարտի 17-ին:

4. ՊԱՌԱԿՏՈՒՄ ՄԸ

(էջ 125)

Առաջին անգամ տպագրվել է «Օրագիր Կ. Պոլսո» թերթում (1871, 27 մայիս, թիվ 459), ստորագրությունը՝ «Պ. Դ.»։ Պ. Դուրյանը վերջին նամակում ակնարկել է նաև այս ելույթը: «ՊԱՌԱԿՏՈՒՄԻ... վրեժն անշուշտ պիտի մոռնա» (Կ. Փանոսյանը — Ա. Շ.):

Տպագրվում է ըստ Վիեննայից ստացված ընդօրինակության:

Հոդվածի գրության շարժառիթը հետևյալն է: Սահմանադրության տարիդարձին նվիրված տոնախմբությունները, որոնց մասնակցում էին նաև Կ. Պոլսի վարժարանների սաներն ու սանուհիները, կատարվում էին Պեյզոզ

թաղում: 1870-ին Ազապյան վարժարանի աշակերտուհիները նույնպես հավաքվել են Պեյզոլում և պատրաստվել են նախաձաշելու Սակայն «հետաքրքիր անձանց խումբ մը անոնց համար պատրաստված ցանկեն» ներս է մտել, և վարժարանի տնօրեն Կարապետ Փանոսյանը ցանկացել է սանուհիներին ուրիշ, հարմար տեղ փոխադրել և այդպիսին շտնելով՝ «հարկադրեցավ նորեն շոգենավը տանիլ» («Մասիս», 1870, 27 մայիս, թիվ 976): Այս «անհաճո դեպք»-ը պատճառ է դառնում, որպեսզի հաջորդ տարի Կ. Փանոսյանը սանուհիներին շտանի Պեյզոզ: Այդ որոշումը Դուրյանը գնահատել է «ազգային ներդաշնակության» դիրքերից և գրել իր վրդովված հոդվածը:

1) Ազգասեր մը ազգային ներդաշնակութենէն թել մը կը կոտրէ— «Ազգասերը» Կ. Փանոսյանն է, ակնարկը վերաբերում է նրա առանձնանալու որոշմանը:

2) Ազապյան բուրաստան, Ազապյան— խոսքը Ազապյան գիշերօթիկ աղջկանց վարժարանի մասին է:

3) ...անցյալ տարվան Սահմանադրութեան հանդիսին— 1870-ին Սահմանադրութեան հանդեսը նշվել է մայիսի 24-ին:

4) ազգն իրավունք չունէ՞ր իր Բուրյանը կամ ապագա մայրերը տեսնելու վազել, որոնք կ'ուշանային...— Դուրյանի այս խոսքերից երևում է, որ ըստ էութեան որևէ անկարգութիւն չի եղել: Իսկապէս, 1870-ի հանդեսին Ազապյան վարժարանի աշակերտուհիներն ուշացումով են եկել «իրենց համար բռնված շոգենավը փոքր ըլլալուն պատճառով», ինչը, բնականաբար, հարազատներին «սրտատանջութեան» մեջ է գցել («Մասիս», 1870, թիվ 976):

5) ...աշակերտուհիները Պեյզոզի ծովափը բերող շոգենավին անիվը կոտրէր...— Ազապյան վարժարանի սանուհիները Սամաթիայից Պեյզոզ էին գալիս շոգենավով:

6) Ազապյան սանուհի կը հավանին այս որոշման: Չեն բողոքէր այսպիսի ցավալի պառակտման մը դեմ— Ազապյան վարժարանի աշակերտուհիներից մեկը՝ Ազապի վարդանյանը, արձագանքել է այս կոշիւն: Նա չի ենթարկվել Կ. Փանոսյանի վճռին՝ անշատով է ընկերուհիներից, մեկնել Պեյզոզ և Սահմանադրութեան հանդեսում արտասանել մի ճառ (Ա. Վարդանյանի մասին տե՛ս Դուրյանի հաջորդ հոդվածները):

7) ...կ'ուզեն օտար հանդիսավայրի մը մեջ հիշատակել ազգին Սահմանադրութեան խՈՐԹ հանդեսը— Ազապյան վարժարանի աշակերտուհիները

1871-ի մայիսի 30-ին Սահմանադրության հանդեսը տոնել են առանձին, «Թ Սարքյար Բարսեղյան Մեծ. Ստեփան աղայի գեղեցիկ և ծովահայաց պարտեզին մեջ» («Մասիս», 1871, 1 հունիս, թիվ 1095):

5. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(էջ 127)

Առաջին անգամ տպագրվել է «Օրագիր Կ. Պոլսո» թերթում (1871, 18 հունիս, թիվ 477), ստորագրությունը՝ «Պ. Դուրյան»:

Բ. էքսերճյանը «Ղեդարձակ կենսագրություն...»-ում հիշատակում է, որ Դուրյանը «1871 հունիս 30 օրագիր թերթին մեջ» տպագրել է մի նամակ և բերում է մի հատված (էջ 41): Համեմատությունը ցույց է տալիս, որ այդ հատվածը «Բանասիրական»-ի երկրորդ («Գանձանակ մը») մասից է: Հետագայում նա այդ հոդվածի առաջին, երկրորդ և երրորդ մասերը հապավումներով և խմբագրությամբ հրատարակեց «Մասիս» հանդեսում (1900, 1 ապրիլ, թիվ 14, էջ 216—217)՝ ներկայացնելով իրրև «անտիպ ձեռագիր»: Նույն տեսքով էլ, որպես «բարեգործական հանդեսի մը առթիվ գրված», «բարեկամի մը ուղղված նամակ», տպագրվել է «Ճաշակ նոր գրականության» ժողովածուում (Կ. Պոլիս, 1904, Ա հ., էջ 334—337): Այդ նամակը զետեղվել է նաև վեներտիկյան ժողովածուներում, իսկ Վ. Քերզիբաշյանը, առնելով 1945-ի ժողովածուից՝ արտատպել է «Գրական թերթ»-ում (1957, փետրվարի 7, № 5): Վեներտիկյան ժողովածուների կազմող Մ. Ճանաշյանը նույնպես հրապարակել է իրրև նամակ՝ հայտնելով, որ «Բաց նամակի ձևով» տպագրվել է «Օրագիր...»-ում և ուղղված է Ա. Լուսինյանին: 1904-ի հրատարակությունը աննշան տարբերություններով համապատասխանում է վեներտիկյան ժողովածուների տեքստին:

Հոդվածի անխաթար տեքստը հրապարակել ենք մենք («Հայրենիքի ձայն», 1970, № 13):

Տպագրվում է ըստ «Օրագիր...»-ի (ընդօրինակությունն ստացել ենք Վիեննայից):

«Մասիս»

1 շանթերու: 2 շինել: 4 զոր: 5 ի զուր: 6 (բացակայում է): 7 սարսևք: 8 [երկինքի] աստղի: 9 ցոլքերուն: 12 հանճարի [մը]: 13 (բացակայում է): 15—16 (բացակայում են): 17 սարսուի: 18—23 (բացակայում են): 25 տակ: 26 (բացակայում է): 27 հրեշտակներ [են ասոնք]: 30—38 (բացակայում են): 39 այն [բարեգործական]: 40 (Այս բառով սկսվող նախադասությունը բացակայում է): 41 լույսերն: 42 խրտչիլ: 43 (Այս բառով սկսվող նախադասությունը բացակայում է): 44 (Նախադասությունն ավարտվում է): 45 (բացակայում է): 46 (Նախադասությունն ավարտվում է): 47—51 (բացակայում են): 52 (Նախադասությունն ավարտվում է): 53 կուրծս: 54 ցընցեց: 55 այն: 56—57 (բացակայում են): 58 լուսնու: 59 աշակերտը: 60—62 (բացակայում են): 63 լույսը: 64 (Նախադասությունն ավարտվում է): 65—70 (բացակայում են): 71 տարիե: 72—73 (բացակայում են): 74 ի վեր: 75—78 (բացակայում են): 79 այդ: 80 (բացակայում է): 81 շարժելու: 83 (Նախադասությունն ավարտվում է): 84 միշտ: 85 վարժարանները: 86 (բացակայում է): 88 անոնց: 89 (բացակայում է): 90 (այս ամբողջ հատվածը բացակայում է): 91—93 (բացակայում են): 94 հանդես: 95 կազմակերպող: 96 մարմինին: 97 (բացակայում է): 99—100 (բացակայում են): 101 շրկել: 102 հանդեսեն: 103 — ա՛հ: 104 (բացակայում է): 107 թըշվառներու: 108 որբերուն: 109 անունը: 110 (Հատվածը չի տպվել):

Բոլոր այս տարբերությունները տեղ են գտել նաև «Ճաշակ նոր գրականության» ժողովածուում: Իայց «Ճաշակ»-ի տեքստում կան հետևյալ մի քանի տարբերությունները ևս:

3 ինչ-որ: 7 երկնից: 8 ցոլքերուն պես: 10 ցավերու: 11 շրթունքներուն: 14 խոսակցությունները: 24 խոկումներու: 28—29 ուր: 58 լուսինի: 82 գաղափարները: 87 քրտինքը: 98 աշակերտուհիներուն: 105 որբերուն: 106 շտեսա:

Հոդվածի առաջին հատվածը պատասխան է Ա. Լուսինյանի «Ողջույն»-ին: Ե. Դուրյանը 1891-ի օգոստոսի 30-ի նամակում գրում է. «Դուրյանի մահեն առաջ կ'հիշեմ, որ Արմեն Լուսինյան 1871-ի Սահմանադրության հանդեսին

առթիվ բան մը գրած է «Պետրոս Դուրյան» վերնագրով, կարծեմ «Մասիս» մեջ» (ԲՆՀ, 1967, № 1, էջ 166): «Մասիս»-ում Ա. Լուսինյանը Դուրյանի մասին ոչինչ չի գրել:

Դուրյանի առաջին «Բանասիրական»-ի առիթով Ա. Լուսինյանը հունիսի սկզբին «Օրագիր»-ում (թիվ 466) հրատարակում է իր «Բանասիրական»-ը, որի առաջին մասը («Ողջույն մ'առ պ. Պ. Դուրյան») մեզ հետաքրքրող նյութն է: Այդ «Ողջույն»-ը ըստ էության գնահատանքի առաջին խոսքն է Դուրյանի մասին և ներկայացնում է որոշակի հետաքրքրություն: Ուստի հրատարակում ենք Լուսինյանի «Բանասիրական»-ի Դուրյանին վերաբերող հատվածը (տալիս ենք ըստ Վիեննայից ստացած ընդօրինակության):

«Ողջույն, Պ. Դուրյան:

...Օրագրի նորոգումը կ'անձկայի շնորհավորել ու շնորհակալել, իրր նորա ընթերցող և Հայ-խմբագրական զարգացման անձկայրյաց երիտասարդներեն մինն. դուք այս քաղցր պարտքը հառաջ քան զիս լցիք Ձեր ճարտար և բեղմնավոր բացատրությամբ: Նոր փետուր մ'ալ դուք հավելիք Սրագրից, պատուեցիք նորա խիտ և խժուտ Քաղաքականը— պատմված եզու-նագործությունքն ըսել կ'ուզեմ— և կնճռոտ ազգային ճյուղակներն. և բանասիրականի՝ մտաց այդ գեղագրության, թատեր առաջին վարագույրը լացիք, անդրանի՛կ ու պերճաիտ'ս դերասան. հանդուգն ու նորաբույր գրիչ-որո ծափահարն ըլլալ կուզամ դարդիս՝ ճեզն ու քոֆիչը բեսըմիսդներու շոր բաժին թողլով:

...Սրբ Ձեր բանասիրականը ներկուռ վերածեցի, ուր նոր ու հզոր գաղափարք զմիմյամբք կ'եկեչէին, ուր ճառն, նյութն, իր կորովի բացատրություններեն կը սարսռեր, հանդուգն բացատրությունք, որ ճարտասանն մը շնչոյալ և բանաստեղծն մը դաշնակավորյալ էին. դիպակացին արժանյաց բարձրությունը և մտածմանց վեհությունը խոստովանող ներքին ցնցմամբ մ'ըսի. «Ահա զոռ որոտ մը, կողերը լի նոր ու բարկ շանթերով» և այն բուպենն բնագղ համակրանք արբշիո՛ զԱջդ սեղմել տենչացի:

Օրեր անցան. Մայիս 24ի վեհափառ հանդեսը շքեղափայլ դաշտն իջավ. հոն, երբ սահմանադրական տարուբեր ամբոխն հոն կ'եռար ու կը զեռար անշուք բաղմոցի մը վրա. մեկը մատնանիշեց ինձ. երիտասարդ մ'էր նա, արժվեուունգն ու ազագուն. լուիկ ու մնջիկ աչքերն զմայլմամբ լճացած՝ համառ ձգմամբ միշտ կ'ըղձային նկատել դեպի բարձրը, ուր հզոր շնչոտք

վճարողներն ու գողտրիկ ավաշներ կը ճըլվլային. շէր խոսեր նա, ինք իր վրա ծանրացած, ինքն իր մեջ ամփոփված կը հիանար լոկ կարծես: «Ահ, դա մեկամաղձոտ մ'է» — ըսի. Կեդրոնյան Պարտիզի Մարդուն բաժակը ցդիրտ քամողի մը հանգույն համր «միայլ» ու լուռ «բուրել» ուխտած էր առանց «բոց» ու «փթիթ» արտափայլելու. ո՛հ, այդ մաշում է, բայց ո՛վ գիտեր, թե այդ կարծեցյալ Աշունն իր մեջ մշտափթիթ Գարուն մը կը կրե. այդ սմբած հովիկն օվկեան մը կը կոհակե: Դուք էիք այն մեկամաղձոտ երիտասարդն Ազնի՛վ Դուրյան, երբ զկնի իրերածանո, խայտակն այն պատանին... Մ.<ոտեն> ճանչցա զՁեզ: Այո՛, պիտի խոսինք...

Ա. Լուսինյան

1) Այն նշանավոր օրը պիտի ճիշտակեմ, յո՞րում իրարու ձեռք բռնվեցինք, այն օրը... — Ակնարկում է իր և Ա. Լուսինյանի ծանոթությունը, որ տեղի է ունեցել 1871-ի մայիսի 30-ին, սահմանադրության հանդեսում:

2) ...այն հանդեսեն... — Խոսքը սահմանադրության տոնակատարության մասին է:

3) Հորիզոնին վրա վ ա ռ դ ե ռ ու հ ր դ ե ն մը կը ծավալեր — «Վարդերու հրդեհ» Դուրյանը հիշեցնում է իր «Սիրեցի քեզ» տաղի առաջին տան պատկերը.

Շաղի, շողի ժամք էին.

Վարդից հրդեհ կար յ'երկին:

4) Բյուզանդյանի կապույտ գոտին... — «Գրական պատկեր մը՝ ըսված Վոսփորի համար, գործածած է նաև Հեծեծմունքի մեջ» (Ժ. Մ. Ծանաշյան, «Տաղեր, նամակներ, հատվածներ», Վենետիկ, 1959, էջ 89):

5) ...Ա ն ձ ն վ ե ռ ը կ ե ռ ու թ յ ա ն... — Այս ընկերության մասին տե՛ս «Թատրոն» հոդվածի համապատասխան ծանոթագրությունը:

6) ...հանդեսներուն և ազգային ուրիշ համախմբությանց մեջ իր գանձանակովը կերեի — Գ. Զոպանյանը հանդանակություններ է կատարել ազգատ աշակերտներին գրենական պիտույքներ հայթայթելու նպատակով:

7) Հ ա յ Ր Ե Ն ա ս ի ր ա ց խ ու մը կ ու զ ե մ հ ո ս ճ ի շ ա տ ա կ ե ի, որ այս տարի Սեան[անադրության] հանդիսին առթիվ իր սրբազան ձգտմանը մեջ... — Ակ-

նարկը վերարերում է 1871-ի սկզբին Պեշիկթաշ թաղում հիմնված «Հայրենասիրաց ընկերությունը», որ նպատակ էր դրել Կիլիկիայում բացել հայկական վարժարան: «Ընկերությունը շոգենավ մը վարձած էր, թե Սահմանադրության տարեդարձը տոնելու և թե «Հայրենայաց անձնվեր ընկերության» նյութական նպաստ մ'ապահովելու համար» (Եփրեմ Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 170):

8) ...Հայկական ընկերություն...— Այս ընկերության մասին տե՛ս «Թատրոն» հոդվածի համապատասխան ծանոթագրությունը:

9) ...Հիսարի դպրոցի ազատիկ աշակերտունյաց— Խոսքը Կ. Պոլսի Ռումելի Հիսար թաղի Սանդիստյան վարժարանի մասին է:

10) ...Ս. Փրկչյան վարժարանի աշակերտներ...— Խոսքը Կ. Պոլսի Ետի Գուլե թաղի Գազըլը Զեմե արվարձանում 1832-ին հիմնարկված և 1834-ին բացված Ս. Փրկչյան ազգային հիվանդանոցին առնթեր ժառանգավորաց վարժարանի մասին է, որ գործել է սկսել 1858-ից:

11) ...Վերոհիշյալ ատենախոսուհին...— Աղավնի Վարդանյանի մասին տե՛ս Պ. Դուրյանի մյուս հոդվածները և 1871-ի սեպտեմբերի 9-ի նամակը:

6. ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԱՌ ՍԱՄԱԹԻԱՑԻՍ

(էջ 134)

Առաջին անգամ հրատարակվել է «Օրագիր Կ. Պոլսո» թերթում (1871, 19 և 20 հուլիս, թիվ 502—503), ստորագրությունը՝ «Արմենակ»: Այս ստորագրության մասին Դուրյանը հիշատակում է Ա. Լուսինյանին գրած 1871-ի <ղեկտեմբեր 10> նամակում:

Տպագրվում է ըստ Վիեննայից ստացված ընդօրինակության:

«Մանզումեի էֆջար» թերթի խմբագիր Կ. Փանոսյանը և «Օրագիր» թերթի խմբագիր Օ. Խոճասարյանը, երկու երբևմնի համախոհներ, տակավին 1869-ից մի շարք հարցերի շուրջը տարակարծություններ ունեցան: Հետագայում գրանք խորացան, ընդլայնվեցին վիճելի խնդիրների շրջանակները, իսկ 1871-ին մթնոլորտը շիկացավ, և ծայր առան փոխադարձ վիրավորանքներն ու հայհոյանքները: Երկու խմբագիրների վեճը մամուլի էջերից

փոխադրվեց պատրիարքարան, նույնիսկ հասավ Բ. Դուռ և դատաստանական ատյան: Փանոսյանն ու Խոճասարյանը ունեին իրենց համակիրներն ու հակակիրները: Թեև «Մանզումե»-ն հավատացած էր, որ «Օրագիր»-ը ի թիվս այլոց հավաքագրել էր նաև «Արմենականների ու Դուռյանների» («Մանզումե», 1871, օգոստոս 10, նյումերո 1667), բայց ընթերցողը կհամոզվի, որ Դուռյանը իր այդ հոդվածներում ևս առաջնորդվել է ռոմանտիկորեն ըմբռնված ազգի միանություն շահերով միայն:

1) ...շինությունց գործույն հա պ ա ղ ու մ ք— Սամաթիայում գործույն էին Ս. Սահակյան արական և Նունյան իգական վարժարանները, որոնք հըրդեհհի ճարակ էին դարձել: Ս. Սահակյան վարժարանի համար կառուցվել էր փայտյա, հարմարություններից զուրկ մի շենք, իսկ Նունյանը ընդհանրապես շենք չի ունեցել: Վարժարանների համար նոր շենքեր կառուցելու նպատակով 1867-ից միջոցներ են հանգանակվել: 1871-ից «շինության գործը» զլխավորում էր Օ. Խոճասարյանը, որ ընտրվել էր թաղական խորհրդի ատենապետ: Իսկ Կ. Փանոսյանը Ազապյան վարժարանի գոյության պայմաններում ավելորդ էր համարում Նունյանը:

2) ...շինությանց գործույն պաշտոնեից...— Սամաթիայի թաղական խորհրդից բացի դպրոցների շինության գործով զբաղվում էր նաև տեղի Հայկական ընկերությունը:

3) ...Ս. Աշխատի ստորագիրն Հայ լրագրաց մեջ փայլածին պես...— Օ. Խոճասարյանը «Օ.» ստորագրությամբ հոդվածներ է տպագրել «Մանզումե», «Միածան», «Օրագիր» թերթերում:

Սպարդուկան ոճ— Զուսպ, խիստ ոճ:

Եսական խոսպան գրիչ մը— Ակնարկը վերաբերում է «Միսակ»-ին (Միմոն Գաբամաճյան), որ «Մասիս»-ում տպագրված իր նամակում (1871, 10 հուլիս, թիվ 1111) Պրուսայի առաջնորդ Բարդուղիմեոս վարդապետի շարաշահումների առթիվ քննադատել է «Օրագիր»-ին՝ գրելով, որ թերթը այդ խնդիրը «այնչափ քաշեց ու քաշկոտեց, որ վերջապես մեր խնդուքն ու կարեկցությունը յուր վրա հրավիրեց», որ նա ընդունակ է միայն «քաշկոտել և քաշկոտութարանությանց վրա բան մը ձևել» («Օրագիր»-ը գտնում էր, որ հիշյալ վարդապետի ապօրինությունների հարցը պետք է քննել տեղում. իսկ «Մասիս»-ը՝ Պատրիարքարանում: «Երկրագունդ» հանդեսում «Օրագիր»-ի հասցեին Դուռյանի ակնարկությունը մեզ չի հանդիպել:

4) ...հասարակությունը Օ. ստորագրության համար Մանգումե կը կարգար— իրենասարյանը մինչև «Օրագիր»-ի խմբագրությունն ստանձնելը գրում էր «Մանգումե»-ում: Հ. Պարոնյանը ևս վկայում է, որ «Մանգումե»-ում հրատարակված խոնասարյանի հողվածները «ամենն ալ աղեկ ընդունելություն գտան ժողովուրդեն» («Երկերի ժողովածու տասը հատորով», հ. երկրորդ, Երևան, 1964, էջ 249):

5) ...շատ անգամ Մանգումե գրելու տեղ կը «հայհոյե»— Հ. Պարոնյանը ևս քանիցս նշել է, որ Փանոսյանն ունի «անդուն բերան», որ նրա գրած հողվածներում «ճշմարտութենն ավելի հայհոյություն և այլն, և այլն, և այլն և այլն կա» («Երկերի ժողովածու տասը հատորով», հ. երկրորդ, էջ 88, 91), կամ «Թե որ ամեն մեկ հայհոյության մեկ ոսկի տուղանք որոշվեր՝ «Մանգումեն ամեն օր հարյուր ոսկի պիտի վճարեր» (հ. վեցերորդ, Երևան, 1968, էջ 57):

6) «տյալյունյալով» (թրթ.)— երկվեցյակով, տասներկու հատով (դյուժինով):

7) Կարմիր հոշակավոր Հանրապետականն— խոսքը Գամբետայի մասին է:

8) ...Կամպեքթա, օր մը դիկտատուր Պուրտի...— Երբ սկսվեց ֆրանս-պրուսական պատերազմը (1870, սեպտեմբերի 2) Գամբետան նշանակվեց Ֆրանսիայի ներքին գործերի մինիստր և ստացավ բռնապետական իշխանություն: Հետագայում, Փարիզի գրավումից հետո, կառավարությունը փոխադրվեց Բորդո:

9) ...ոտիերը գետնին զարնելով բանակներ պիտի հարուցանեն...— Ակնարկը վերաբերում է հետևյալ փաստին: Երբ գերմանացիները պաշարեցին Փարիզը, Գամբետան օդապարիկով հեռացավ քաղաքից, գնաց Տուր և մի ամսում ստեղծեց բանակ՝ կազմակերպելով երկրի պաշտպանության գործը:

10) ...պարագաներն ու դեպիերը Կամպեքթաի աննշան հանճարն ակաճահարեցին— Բորդոյում գումարված Ֆրանսիայի Ազգային ժողովը ձայների մեծամասնությամբ 1871-ի մարտի 1-ին որոշեց ընդունել Գերմանիայի առաջարկած հաշտության ծանր պայմանները: Գամբետան, որ պատերազմի կողմնակից էր, ի նշան բողոքի, վայր դրեց դեպուտատական իրավունքները և հեռացավ Ֆրանսիայից:

11) ...Փանոսյան կ'ելեն ու զՕրագիրն յուր ընտրող հասարակու-

բյան աչիւն կասկածելի կը ցուցնեն— «Մանգումե»-ն Օ. Խոճասարյանին և «Օրագիր» թերթին մեղադրել է թաղական ընտրութիւններէ արդունքները կեղծելու մեջ:

12) ...Նունյան վարժարանի շինութիւնը— Այս վարժարանը հիմնվել է 1831-ին, իր անունն ստացել է սրբուհի Նունե կույսի պատվին, լրիվ անվանումն է «Սուրբ Նունյան վարժարան աղջկանց»: Հրկիզումից հետո կառուցվել է 1872-ին Գասպար Կյումյուճէյանի ծախսով և, ի հիշատակ սրա վախճանված կնոջ, կոչվել «Նունյան-Վարդուհայան վարժարան» (տե՛ս «Ննգադարյան հիշատակարան 1461—1935 Սամաթիո ս. Գեորգ եկեղեցւո, պատրաստված Պետրոս Կարապետյանե», Իսթանպուլ, 1935, էջ 93 և 138):

13) ...Կ Ե Ր Պ Ի Լ Ո Ս Ի Ա Ր Գ Ո Ւ Ն Բ— Հին հավատալիթի համաձայն, կոկորդիլոսը գոհին կուլ տալուց առաջ արտասովում էր: Օգտագործվում է կեղծ վշտակցութիւն իմաստով:

14) ...գԱգապյանը— Այս վարժարանի մասին տե՛ս «Խոսարան» հոդվածի ծանոթագրութիւններում:

15) ...դուբ եսական «միապետութիւնը» տապալող առաջին քաղեցին եղաւ... դսրոցներ «ընկերութիւնը» հառաջ տանել սուրվեցուցի՛ք— Որպես աշխատավորական թաղ, Սամաթիայում արհեստավորութիւնը միջամտում և տնօրինում էր ներքին գործերը: Հակոբ Պարոնյանը նույնպես ակնարկել է այս հանգամանքը. «Մասնավոր սեր ունին թաղին վարժարաններուն համար: ... Հոս ազնվապետութիւն չկա» («Երկերի ժողովածու տասը հատորով», հ. երրորդ, Երևան, 1964, էջ 203):

16) ...Միապետ մ'ունիք...— «Միապետը» Կ. Փանոսյանն է:

17) ...հրդեհը Սամաթիո տուները քանդեց— Սամաթիայի սոսկալի հրդեհը տեղի է ունեցել 1866-ին:

18) «վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթազողութիւն»— Քրիստոսի պատվիրանը, մեջբերումը բառացի չէ: Բուն միտքն է. «Ոչ է մարթ չգալ գայթազութիւն, բայց վայ այնմիկ է՝ յոյր ձեռն գայցէ» (Ղուկ. Ժէ, 1):

19) Նարդոդոնոսուրա ծառ— Արտահայտութիւն հիմքում ընկած է Աստվածաշնչի զրույցներից մեկը: Բարելոնի թագավոր Նարդոդոնոսորը երազում տեսնում է մի մեծ ծառ, որ զորանալով բարձրանում հասնում է երկնքին: Ծառի ոստերի վրա և շուրջը ապաստան էին դառել (որջացել էին)

թռչուններն ու գազաչանները: Երկնքից իջնում է մի սուրբ և հրամայում՝ կտրել ծառը, բրպեսզի գազաչաններն ու թռչունները փախչեն: Դանիել մարգարեն այդ երազը մեկնում է այսպես. ծառը նարոզողոնոսորի փառքն է, իսկ թռչուններն ու գազաչանները նրա գործած մեղքերը (Դան., Գ):

20) ...«տապաբեկ առ արմին դրէ՛ք»— Հովհաննես Մկրտչի քարոզից է, բերված է ազատ շարագրանքը: Ըիշտն է. «Ձի աւասիկ տապար առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի եւ 'ի հուր արկանի» (Մատ. Գ. 10, հմմտ. Ղուկ. Գ. 9):

21) «Յավնան ի ծով»— Դարձյալ օգտագործված է Աստվածաշնչի գրույցը: Հովնան կամ Հունան մարգարեն, խուսափելով Քրիստոսի մի պատվիրանը կատարելուց, նավ է նստում և փախչում Քարսիս: Նրան պատժելու նպատակով աստված ճանապարհին ծովը փոթորկում է: Տազնապած նավագնացները վիճակ են գցում և զտնում մեղավորին: Հովնանը խոստովանում է իր մեղքը և առաջարկում իրեն նետել ծովը: Այդպես էլ վարվում են և ալեկոծված ծովը խաղաղվում է (Յովնան, Ա):

22) Հայկական ընկերություն— Այս ընկերության մասին տե՛ս «Քատրոն» հոդվածի ժանոթագրություններում:

23) Հայկականին հայհոյել— «Մանգոման»-ն ծխտում էր Հայկական ընկերության դերը, մեղադրում անգործության և շարաշահումների մեջ, նրա միակ «ծառայությունը» համարում էր գինետներ բացելն ու հարեցողություն տարածելը:

24) ...զանց բաժանել կ'ուզեն, որպեսզի տիբեց— Օգտագործված է մակեդոնական թագավոր Փիլիպոսին (մ. թ. ա. 359—336) վերագրվող «Բաժանիր և տիրիր» ասույթը:

25) ...զՀայկականն իր անձնվեր ու հայրենասեր գործներով... լավ կրնան շնամբ— Հայկական ընկերության իրականացրած միջոցառումներից են Զրոսարան հիմնելը (1862), հրդեհից տուժածներին օգնություն կազմակերպելը (1866), Ավազաղբյուր գյուղի մանուկների կրթությանը նպաստելը (1870), Խոսարան բացելը (1869) և այլն:

26) ...ինչ ձեռնարկեց կիսկատար քողուց— Ակնարկը վերաբերում է Ազգային հիվանդանոցի շինությանը, որ հանձնարարվել էր Կ. Փանոսյանին և անավարտ մնաց:

27) ...«եղեգն շարժուն ի հողմոյ յանապատի»— Քրիստոսի խոսքերն

են. «Քի՞նչ ելէք տեսանել յանապատին, եղե՞զն շարժուն 'ի հողմոյ» (Մատ. ժԱ, 7, Ղուկ. է, 24):

28) Ազգայանը ձերը շէ... անոր Փանոս.[յան] ի աղա, պեյ, է ֆեեւ-
տի, փաշա ֆեյֆը կը խառնվի— Հ. Պարոնյանը ևս երգիծել է Կ.
Փանոսյանի կամայականութիւնը: Նա գրում է.

«Ինչո՞ւ համար Ազգայան վարժարանը երեք տարի է քննութիւն չտար:
— Որովհետև աղա, փաշա, քեյֆին քյահյան (վերակացու— Ա. Շ.) չըլ-
լար» («Երկերի ժողովածու, տասը հատորով», հ. երրորդ, Երևան, 1968,
էջ 66):

29) Օրինո՞ղ Վարդանյանք— Խոսքը Ազգայան վարժարանի ազատախոհ
աշակերտուհի Աղավնու և նրա քրոջ՝ Եվփիմեի մասին է: Ա. Վարդանյանը
1871-ի Սահմանադրութեան հանդեսի տոնակատարութեան ժամանակ զնա-
ցել էր Պեյզոզ և արտասանել հայրենասիրական ճառ (տե՛ս «Պատակտում
մը» հոդվածը): Փանոսյանը քույրերին ծանուցել էր նրանց հեռացման մա-
սին՝ առանց որևէ պատճառաբանութեան: Ա. Վարդանյանը հրապարակային
բացատրութիւն էր պահանջել («Մանգումե», 1871, հուլիս 23, նյումբերո
1649): Վարժարանից վտարելու առիթ է եղել ինչպես Ա. Վարդանյանի ելույ-
թը, այնպէս էլ նրա եղբոր՝ Բարթիկ Վարդանյանի հրապարակային
քննադատական դիտողութիւնները Կ. Փանոսյանի հասցեին: Հ. Պարոնյանը
ևս դատապարտել է Կ. Փանոսյանի կամայական քայլը և համակրանքով վե-
րաբերվել Ա. Վարդանյանին, թեև շի նշել վերջինիս անունը: Նա գրել է.

«Թե որ բոլոր տնօրենները Մանգումեին պես իրենց հետ վիճարանողի՛
քույրը կամ ազգականը դպրոցեն արտաքսեին՝ բոլոր աղջիկները իրինց
եղբարցը ազատութեանը կը զո՞վեն:

Թե որ բոլոր սանուհիք Ազգայան վարժարանի սանուհյաց մեկուն պես՝
ճշմարտութիւն մը խոսելուն համար դպրոցեն արտաքսվեն՝ աղջիկներն
մեյմեկ գերիներ պիտի ըլլային» (հ. վեցերորդ, էջ 58):

30) ...Մխիթար վարդապետի խնդիրն— Մխիթարը Մշո վանքի վարդա-
պետներից էր, ժողովրդի կեղծքիչ: Կեղծիքներ կատարելու և զրպարտելու
համար պատրիարք Մ. Խրիմյանը նրան հեռացրել է Մուշից և աքսորել Տիգ-
րանակերտ: Բայց վարդապետը շի ենթարկվել այդ վճռին և պատրիարքիս
ամբաստանել է Բ. Դոան առաջ: «Մանգումե»-ն պաշտպանել է Մխիթարին՝

պնդելով, որ նա իրավունք ունի բողոքել պատրիարքի դեմ: «Օրագիր»-ը պնդել է հակառակը: Ի վերջո, 1870-ին Մխիթարն աքսորվել է Երուսաղեմ:

31) Պեյ Էֆենտի փաշա վե աղա Բեյֆին (Թրք.)— Այս բառերը, որոնք հաճախ է օգտագործում Դուրյանը, Կ. Փանոսյանինն են: Սա քննադատական ամեն մի դիտողության պատասխանում էր, որ ինքը առաջնորդվում է իր «բեյական, էֆենտիական, փաշայական և աղայական» կամքով («բեյֆ»-ով): Մասնավորապես, բացահայտորեն ակնարկելով Դուրյանի «Պատակտում մը» հոդվածը, «Մանզումե»-ի խմբագիրը գրում էր, որ ոչ մեկը չի կարող խանգարել սահմանադրության հանդեսը այլ տեղ նշելու վճռին, որ նա հաշվետու է միայն իր «աղայական, փաշայական և էֆենտիական կամքին» («Մանզումե» 1871, 26 մայիս, նյումբերո 1594): Դուրյանը Կ. Փանոսյանի կամքին հակադրում է հասարակության «թանկ (ազիզ), էհալի (ժողովրդական), սուլթանական, փադիշահական և կայսերական կամքը»:

32) «Մաֆասարանություն» — «Մաքաս» թուրքերեն նշանակում է «մրկ-բարտ»: «Մաքասարանությունը»-ը, հավանաբար, Կ. Փանոսյանի նախասիրած բառերից է, որ Դուրյանն օգտագործում է «խեղաթյուրում» «նենզում» իմաստով:

33) ...գուցե օր մը Ազապյան վարժարանը... Սամաթիայեն գաղթի— Փանոսյանի կամայականությունները հարուցել են հասարակության զայրույթը, ծնուկները իրենց դատերին հանել են վարժարանից, որ մնալով առանց նյութական օժանդակության, ի վերջո, փակվել է 1873-ի ապրիլի 2-ին:

34) Ես ավելի Փանոսյանի, քան Օ.[զսեն] էֆենտիի, ես ավելի Ազապյանի, քան Նուրյանի բարեկամ եմ— Դուրյանը այլևայլ առիթներով դրվատանքով է արտահայտվել Փանոսյանի և Ազապյանի վարժարանի մասին (տե՛ս «Եռոսարան», «Պատակտում մը» հոդվածները):

7. ԴՐԺՈՒՄ

(էջ 146)

Առաջին անգամ հրատարակվել է «Օրագիր Կ. Պոլսո» թերթում (1871, 21 հուլիս, թիվ 504), ստորագրությունը՝ «Նորայր»: Ստորագրության մասին

հիշում է Դուրյանը Ա. Լուսինյանին գրած նամակում (1871, <դեկտեմբեր 10>):

Տպագրվում է ըստ Վիեննայից ստացված ընդօրինակության:

1) ...կ'արտափսխե... առանց պատճառի կամ առանց դպրոցական կա-
նոնաց դեմ զեղծում մ'ըրած ըլլալին հաստատվելու— Տե՛ս «Երկու խոսք
առ սամաթիացիս» հոդվածի ծանոթագրությունները:

2) ...պ. Փանոսյանի հիւս սարկավագներեն մեկը կ'ըսեւր— Ակնարկը
վերաբերում է Ռեթեոս Պերպերյանին, որ այցելելով Ազապյան վարժարան՝
«Մանզումե»-ում տպագրված մի նամակում (1871, հուլիս 12, նյումբրո
1638) գո՛ւ է մնացել դաստիարակության գրվածքից և գրել. «Ստուգիվ,
Ազապյան վարժարանը մեծ ապագայի մը օրրան է»: Դուրյանի կշտամբանքը
բացատրվում է այն բանով, որ այդ օրերին հասարակությունը շատ էր վըր-
դովված Կ. Փանոսյանի կամայականություններից (տե՛ս նախորդ հոդվածի
ծանոթագրությունները):

3) ...դուր օր ի փառս Ազապյանի... ցարդ սուրբ քրտունք քափեցիք—
Ա. Վարդանյանը մինչև դպրոցից հեռացվելը ի նպաստ Ազապյան վարժա-
րանի հանգանակություններ է կազմակերպել: Այսպես, նա սահմանադրու-
թյան հանդեսի օրն արտասանած իր ճառը առանձին տպագրությամբ բա-
ժանել է ներկաներին՝ փոխարենը հօգուտ Սամաթիայի վարժարանների
(Ազապյան, Ս. Սահակյան և Նունյան) խնդրելով մեկ արծաթ մեծհիտիե,
ապա այդ ճառից 100-ական օրինակ ուղարկել թերթերի խմբագրություննե-
րին՝ վաճառելու (տե՛ս «Մասիս», 1871, 10 հունիս, թիվ 1099): Ա. Վար-
դանյանը հետագայում ևս նույն նպատակով հրապարակային ելույթներ է
ունեցել:

8. ՈՎ ՈՐ ՈՒԶԱԾԸ Կ'ԸՍԵ, ԶՈՒԶԱԾՆ ԱԼ ԿԸ ԼՍԵ

(էջ 148)

Առաջին անգամ հրատարակվել է «Օրագիր Կ. Պոլսո» թերթում (1871,
23 հուլիս, թիվ 506), ստորագրությունը՝ «Արմենակ»:

Տպագրվում է ըստ Վիեննայից ստացված ընդօրինակության:

1) Ա ե լ ի տողեր կարդացի երեկվան Մ ա ն գ ու մ ե ի մեջ— «Ման-
զումե»-ում Կ. Փանոսյանը 1871-ի հուլիսի 22-ին (նյումբրո 1648) համա-

ռոտակի անդրադարձավ «Արմենակ»-ի և «Նորայր»-ի հոգվածներին: Նա դրանք որակեց «տխմար» («պուտալաճա») ու «պատասխանի անարժան» և կարծում էր, թե այս ստորագրությունների տակ թաքցված է Նուպար-Շահ-նազարյան վարժարանի աշակերտներից մեկը: «Նթե այս կետը լրիվ ճշտվի,— հեզնում էր Փանոսյանը,— ապա վերոհիշյալ դպրոցի համար քիչ պատիվ չէ...» (այս և մյուս թարգմանությունները կատարել է թրքագետ Խ Ամիրյանը):

2) Հայր Արսեն— Խոսքը Արսեն Բագրատունու մասին է:

3) ...հոխա— Մանրություն չափ, Թուրքիայում հավասար էր 400 գրամի:

4) ...մյուրեպեպ (թրք.)— թանաք:

5) ...Շ.[աճնագարյան] Վարժ.[արանի]— Լրիվ անվանումն է՝ Առաքել-Նուպար-Շահնազարյան երկրորդական վարժարան. բացվել է 1866-ին Խաս-գյուղ թաղում, գոյատևել է մինչև 1875—76 թթ.:

6) ...«ազ շերեֆ տեյիլ տիր» (թրք.)— «Քիչ պատիվ չէ»:

7) «Մախասարան և բուտուզարան»— «Նենգող (խեղաթյուրող) և կատաղարար»:

8) ...«հելպեք շազ շերեֆ տիր յա»— Այս և մյուս թուրքերեն արտահայտությունները Կ. Փանոսյանինն են: Դուրյանը դրանք ուղղել է ընդդիմախոսի դեմ: Նշանակում է՝ «Իհարկե մի մեծ պատիվ է»:

9) «Հուր ր ր ա»— ուռա՛:

10) Ես գնեզ կ շ ի ո ք ի գ ս ր կ ի ձ ե ր տ ա ր ա ն հասարակության ցուցնելու համար և ոչ թե ի ձեռք պատասխանելու համար— «Կշիռքի գարկի», «տարան» բառերով ակնարկված է «Երկու խոսք առ Սամաթիացիս» հոդվածը: «Ոչ թե ի ձեռք պատասխանելու» արտահայտությամբ Դուրյանը ըստ էության մատնում է, որ «Արմենակ»-ն ու «Նորայր»-ը ինքն էլ Կ. Փանոսյանը «պատասխանել» էր «Պատակտում մը» հոդվածին (տե՛ս «Երկու խոսք...» հոդվածի ծանոթագրությունները):

11) Աս կ ե գ ա տ ու ր ի շ Ս տ ա մ պ ո լ շ ի կ ա— Թուրքական ծանոթ առածի («Բուրդան բաշթա Իսթամբուլ յոք») հայերեն թարգմանությունն է: Գործածված է «այլ ելթ չկա, չափդ ճանաչիր» իմաստով:

(էջ 150)

Առաջին անգամ տպագրվել է «Օրագիր Կ. Պոլսո» թերթում (1871, 26 հուլիս, թիվ 508), ստորագրությունը՝ «Արմենակ»: Հրատարակվել է որպես նամակ, բայց նկատի առնելով նրա առնչությունը Դուրյանի «վիճաբանական» հոդվածների հետ, զետեղում ենք «Հրատարակախոսություն» բաժնում:

Տպագրվում է ըստ Վիեննայից ստացված ընդօրինակության:

Նամակի գրության առիթը «Մանգումեն»-ում տպագրած Կ. Փանոսյանի «Արմենակ» խորագրով պատասխանն է «Ով որ ուզածը կ'ըսես, շուգածն ալ կը լսես» հոդվածին (1871, հուլիս 24, նյումբերո 1651): Փանոսյանը հավատացնում էր, որ ըստ իր ստացած տեղեկությունների «Արմենակ»-ը իրոք որ Շահնազարյան վարժարանի «աշակերտներից է» և այնտեղից «վնդվել է»: «Պ. Արմենակ,— գրում էր նա,— զու վատ ես, որովհետև մեզնից չվախենալով հանդերձ և «Օրագիր»-ի քո էֆենտիին մանկավիճակություն անելու պատիվն ու երջանկությունը ունենալով, առանց իսկական անունդ հայտնելու՝ թաքնվում ես կեղծանվան տակ»:

1) ...«վիճ մեծ կա ընդ իմ և ընդ քո»— Առնված է Աստվածաշնչից. «Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ վիճ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ» (Դուկ. ԺԶ, 26):

2) ...«ալորդընըզ մալյումաթ» (Թրթ.)— «Ըստ ձեր ունեցած տեղեկությունների»:

3) ...ես իմ լեզու՝ գավառիս մեջ, Հայաստանի մեջ ուսած եմ— Այս խոսքերով Դուրյանը նպատակ ուներ քողարկվել, բայց հետագայում Կ. Փանոսյանը կառչեց դրանցից՝ հիդիմակին մեղադրելով փոքրոգության մեջ:

4) ...Յ ա ն լ ը շ մ ա լ յ ու մ ա թ ո վ (Թրթ.)— «Սխալ տեղեկություններով»:

5) ...փ ա թ ա վ ա թ ս ը զ (Թրթ.)— անլուրջ, անխորհուրդ:

6) ...պ ա յ ա ղ ի (Թրթ.)— տափակ, անհամ:

7) Այս և Ա և այս է Յ— Աստվածաշնչի «Ես եմ Այր և ես եմ Քէ» արտահայտության (Յայտ. Ա. 8) մի տարբերակն է, նշանակում է «սկիզբը և վերջը», «առաջինն ու վերջինը»: Համոզվելով, որ սկզբունքային վեճը Կ. Փանոսյանը փոխադրել է անձնական հոդի վրա, Դուրյանը այլևս ոչինչ չի

տպագրում: Բայց «Մանգումե»-ի խմբագիրը չի հանդարտվում: Նա «Օրագրին հերոսները» հոդվածաշարի («Մանգումե» 1871, հուլիս 31, նյութեր 1658) «Օրագրին Արմենակը» հոդվածում դարձյալ «Արմենակ»-ին համարում է «վախկոտ», «խելքը թոցրած», «ստախոս», «վատ և տխմար գրիչ»:

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

1867-ին Սկյուտարի ճեմարանի հայերենի ուսուցիչ Միհրան Գուրյանը իր սաներից մեկին՝ Բ. էքսերճյանի աշակերտակից Արմենակ Աստվածատրբյանին, որպես ընթերցանութի նյութ, ընդօրինակել է տալիս Պետրոս Գուրյանի նամակները («Արևելք», 1893, թիվ 2789): Թեև էքսերճյանը և իր ընկերները մտադրվում են Գուրյանի այլ գործերի հետ հրատարակել նաև նամակները, բայց այդ գործը հաջողությամբ չի պսակվում:

Գուրյանի նամակներից մեկը առաջին անգամ տպագրվում է «Հնարանիք» հանդեսում՝ 1884-ին: Հինգ տարի անց Հրանդը (Մելքոն Գյուրճյան) իր «Զատկական օրագիր»-ում տեղեկացնում է, որ ինքը նիկոմեդիայում ծանոթացել է գրողի նամակներին: «Մտերմական նամակներ են, ամենքն ալ գրված վաղամեռիկ բանաստեղծին նախընթաց տարվո վերջին քառորդին մեջ...» — գրում է նա: Հրանդը կատարում է մի քանի մեջբերում և ցանկություն հայտնում, որ «Գուրյանի բոլոր անտիպ մնացած նամակները, մեկ հատորի մեջ բովանդակված, մամլո տակ դրվեին» («Արևելք», 1889, 29 ապրիլ, թիվ 1595):

Շուտով «Արևելք»-ի 1889 և 1890-ի համարներում երևում են Գուրյանի ութ նամակները: «Գտնված նամակները, — ծանոթացնում է թերթը, — բուն ձեռագիրները չեն, այլ ձեմարանի նախկին աշակերտի մը (խոսքը Բ. էքսերճյանի մասին է — Ա. Շ.) ձեռամբ ընդօրինակված և չերմեռանդ խնամով պահված ի նիկոմեդիա» («Արևելք», 1889, 13 մայիս, թիվ 1607):

Ա. Զոպանյանը նույնպես հետաքրքրվել է Գուրյանի նամակներով: Ի պատասխան նրա հարցման, Ե. Գուրյանը 1891-ի օգոստոսի 30-ի նամակում հայտնում է. «Գուրյանի անտիպ գործերն իմ քով կը գտնվին նամակներն, որոնց մի քանին հրատարակեց «Արևելք»-ի մեջ իմ տաղանդավոր բարեկամս և դասընկերս Մելքոն էֆ. Կյուրճյան (կը խոստանամ ի պատեհ առթի անոնց մեկ օրինականությունն ղրկիլ Ձեզ) (ԲՅԸ, 1967, № 1, էջ

167); Իրոք, Ե. Դուրյանը կատարում է իր խոստումը և Մ. Օրմանյանի միջոցով Չոպանյանին ուղարկում մի տետր, որի մեջ տեղ են գտել, հավանաբար, իր աշակերտներից մեկի ձեռքով արված ութ նամակի ընդօրինակություն (այդ տետրը տե՛ս ԳԱՔ, ԱԶՑ, չհամարակալված նյութեր): Մ. Միհրդատյանցը 1891-ի սեպտեմբերի 23-ի նամակում Ա. Չոպանյանին ասում է, որ Արմաշում եղածները «Հրանդին հրատարակածներն են» (ԲՆՀ, 1968, № 1, էջ 147): Բայց Հրանդը տպագրել էր ութ նամակ, որոնցից միայն հինգն էին ընդօրինակված Չոպանյանին տրամադրված տետրում: Այս իմաստով ավելի ստույգ է Միհրդատյանցի հաղորդած մեկ այլ տեղեկությունը. «Իր (Պ. Դուրյանի— Ա. Շ.) նամակները, Հրանդին հրատարակածներն ղատ 2—3 հատ ևս կան» (նույն տեղում, էջ 143):

Հարկավ, Ե. Դուրյանն ունեցել է ուրիշ նամակներ ևս: Իր ուղարկած տետրի վերջում նա ուղղակի ասում է. «Միայն կը պակսի նամակ մը գրյալ առ Լուսինյան» (ԳԱՔ, ԱԶՑ, չհամարակալված նյութեր): Դրանից բացի տետրակում ընդօրինակված չէ նաև Նարպեյին գրած նամակը, որը Չոպանյանի համար օրինակել է Մ. Միհրդատյանցը 1891-ի սեպտեմբերի 23-ի նամակի վերջում, բայց որը հրատարակել էր Հրանդը: Ս. Սիմոնյանը թվարկելով Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքում գտնվող Պ. Դուրյանի ինքնագրերը՝ նշել է. «Նամակներ ոչ ավելի, քան տպագրվածները» («Միլիոն», 1959, թիվ 32: Խոսքը 1893-ի ժողովածուի մասին է, որ ամփոփում է 13 նամակ): Բայց Ս. Սիմոնյանի տեղեկությունը ճիշտ չէ: Ա. Գալայճյանը Երուսաղեմի պատրիարքարանում գտել և հրատարակել է միայն ինը նամակի ինքնագիր (Տ, էջ Ը—Թ և Ն, էջ 6): Համեմատությունը ցույց է տալիս, որ սրանք նույն նամակներն են, որոնց ընդօրինակությունը Ե. Դուրյանը և Մ. Միհրդատյանցը հանձնել են Ա. Չոպանյանին: Գալով Ա. Լուսինյանին ուղղած այն նամակին, որի մասին հիշում է Ե. Դուրյանը, ապա դրա ինքնագիրը, ինչպես ստորև կը տեսնենք, չի ունեցել Ե. Դուրյանը:

Հիմքեր կան պնդելու, որ Պ. Դուրյանի տպագրված բոլոր նամակները ինքնագրերը եղել են: Բանն այն է, որ Ե. Դուրյանի ունեցած ինքնագրերը օրինակել է Պ. Դուրյանն ինքը: Ա. Գալայճյանի հաղորդումից իմանում ենք, որ Երուսաղեմի արխիվում կա մի տետր՝ հետևյալ վերնագրով. «Նամականիք Պետրոս Դուրյանի. 1871», որտեղ «բանաստեղծի ձեռագրով» օրինակված է հինգ նամակ, իսկ նամակի մը ընդօրինակությունը սկսած է, սակայն չէ

շարունակած, միայն կրցած է գրել. «Զ. նամակ. Առ Պ. Ա. Լուսինյան», (անշուշտ սա այն պակաս նամակն է, որ հիշում է Ծ. Դուրյանը), մյուսները «առանձին թուղթերու վրա են» (Տ, էջ Ը և Ն, էջ 6): Որ իսկապես Պ. Դուրյանն է օրինակել 1871-ին գրած իր նամակները, ցույց է տալիս նաև հետևյալ փաստը: Ա. Լուսինյանին ուղղած վերջին նամակը թե՛ ընդօրինակությունների տեսքում և թե՛ ինքնագրում անթվակիր է, ըստ որում Ծ. Դուրյանը հարկ է համարել նշել. «Այս նամակի օրինակության մեջ թվականն մոռցված է»: Ոչ մի կասկած, որ մոռացողը Պ. Դուրյանն է: Այսպիսով պարզ է դառնում, որ Ծ. Դուրյանը 1891-ին ունեցել է ինը ինքնագիր նամակ և որ դրանք օրինակված են իր իսկ եղբոր կողմից:

Մյուս նամակների ինքնագրերը (Իհարկե, նաև Պ. Դուրյանի օրինակածներին) անտարակույս գտնվել են հասցեատերերի մոտ: Այդ եզրակացության է բերում Ծ. Դուրյանի մի դիտողությունը: Նա Ա. Չոպանյանին խոստովանում է, որ Հ. Ճանֆեսճյանին գրած եղբոր նամակը ինքը երեխա ժամանակ աղավաղել է և ավելացնում է. «Դուք բնագիրն վերստին առեք և նայեցեք» (ԲԾՀ, 1967, № 1, էջ 171): Իսկ «բնագիրը» եղել է Հ. Ճանֆեսճյանի մոտ: Գրողի հարազատները ձեռք են բերել պակասող ինչպես այդ, այնպես էլ մյուս նամակների ընդօրինակությունները: Միայն Մ. Միհրզախյանը 1891-ի սեպտեմբերի 18-ի և 23-ի նամակներում վկայում է, որ Դուրյանների Սկյուտարի բնակարանում պահվում են Ա. Լուսինյանին ուղղված 2—3 նամակի ընդօրինակություններ (ԲԾՀ, 1968, № 1, էջ 143 և 147): Իսկ Բ. էքսերճյանի հրատարակություններում հանդիպող տեքստային մի շարք տարբերությունները և գրության թվականներին վերաբերող հակասությունները բացատրվում են նաև նրանով, որ նա ծանոթ էր ոչ միայն Ծ. Դուրյանի մոտ եղած ինքնագրերին ու ընդօրինակություններին, այլև Տ. Աղամյանի, Հ. Ճանֆեսճյանի, Ա. Լուսինյանի և մյուսների պահած ինքնագրերին:

Տարբեր ժամանակներում Բ. էքսերճյանը տպագրեց 15 նամակ (որոնցից մեկը «Բանասիրական» հոդվածի համառոտումն է), բայց Պ. Դուրյանի նամականին ավելի հարուստ է եղել:

Ահա մի քանի վկայություններ:

Բ. էքսերճյանը «Դուրյանի գործերը» ծանուցման մեջ հայտնում էր, որ Մկրտիչ Մեզպուրյանի մոտ կա գրողի «երկու նամակ» («Արևելք», 1892, թիվ 4²³):

Տիգրան Արփիարյանը «Դուրյանի ձեռագիրը» հողվածում պատմում է, որ բանաստեղծը Եվգինե տուտուի մոտ հանդիպելով մի գեղեցիկ օրհորդի, «համակրանոք կողջունվի օրհորդին կողմե, բայց վարանոտ, գրեթե երկշտ խոսակցություն մը կունենա, պատրանք չազդեր, բայց իր անվան հմայքին չի հավասարիր: Այս հանդիպումին քանի մը շաբաթ ետք Եվգինեա տուտուն այցելության կերթա օրհորդին, ու գրպանեն կը հանե իրեն ուղղյալ մտերմական նամակ մը, որուն մեջ բանաստեղծին գրիչը իր գերագույն բարձրության կը հասներ: Դուրյան, հիվանդ պռոկած, անկողնույն մեջեն գրած էր զայն, իր սքանչացումը ու համակիր տպավորությունը հայտնելու համար անոր՝ նկատմամբ, որուն առջև լեզուն կարկամած էր»: Այնուհետև հողվածագիրը հայտնում է, որ թեև ինքը որոնել է այդ «գեղեցկագույն էջը», բայց արդյունքի չի հասել. «Եվգինեա տուտուն նորեն գրպանեցելով, տարած էր զայն» («Արևելք», 1892, թիվ 2544):

Ա. Չոպանյանին գրած 1891-ի օգոստոսի 30-ի նամակում Ե. Դուրյանը ենթադրում է, որ Պետրոս Դուրյանը և Վարդան Լուսինյանը միմյանց նամակ չեն գրել «վասնզի միշտ իրարմե անբաժան էին», իսկ Սարգիս Ֆինճաճյանը հայտնել է. «Պ. Լուսինյան, որ միտնելե առաջ Եգիպտոս գնաց կարծեմ, ունեցավ թղթակցություններ Պ. Դուրյանե. այս կետ կրնաք լուսաբանել Սկյուտար Լուսինյան ընտանիքե» (ԲՆՀ, 1967, № 1, էջ 169, № 2, էջ 154): Ինչպես երևում է՝ Ա. Չոպանյանն այս հակասական տեղեկությունները ստուգել է և որոշակի պնդել. «Ամեն թղթատարով երկու բարեկամները կգրեին իրարու... Դժբախտություն մըն է, որ այդ բոլոր նամակները հրդեհի մեջ կորած են» («Դուրյանի կյանքը...» էջ 60): Ըստ երևույթին, հենվելով գրողի եզրուր բանավոր տեղեկության վրա, Ա. Չոպանյանը նաև հաղորդում է. «Եղիշև վարդապետ Դուրյան կհիշե նամակ մը, որուն մեջ Պետրոս իրենց տան դրացի քանի մը աղջիկներու վրա սիրուն զվարճարանություններ ըրած է: Տիգրան Աղամյան ալ ունի Դուրյանի մեկ նամակը, որ մեջտեղեն երկուքի ծալլելով, կեսը ուրիշ իմաստ կուտա, խեղկատակ ու ծիծաղաշարժ իմաստ մը» (նույն տեղում, էջ 42): Հիշենք նաև, որ Վ. Ս. Մովսեփյան անցած Բ. էքսերճյանի ընդօրինակությունների տետրում Խ. Ամիրյանը հանդիպել է մի «անտիպ նամակի», որ «մեծ շահեկանություն չի ներկայացնիր» («Լուսաղբյուր», 1953, թիվ 14, էջ 55): Ի դեպ, Խ. Ամիրյանը մեզ հայտնեց, որ հիշյալ տետրում ճղել է երեք շրատարակված նամակ: Հնարավոր է, որ դրանցից 2-ը 1893-ի

ժողովածուից հետո լույս տեսածներն են, (որոնց անձանոթ է և. Ամիրյանը), բայց մեկը մնում է անտիպ:

Այս ա մեներ ցույց է տալիս, որ Դուրյանի նամականիւ կարող էր իրոք բավականաչափ հարուստ լինել: Բայց դրանց ճակատագիրը, ցավոք, անհայտ է:

Մի քանի խոսք մինչև այժմ տպագրված նամակների մասին:

Բ. էքսերճյանը հրատարակելով այդ նամակները, տվել է հետևյալ ծանոթությունը. «Սույն նամակներն որ ուղղված են հորեն Ս. Արքեպիսկոպոս Նար-Պեյի, Մատթեոս Ս. Արքեպիսկոպոս Իզմիրյանի, Հովհ. էֆ. Ճանֆեւճյանի, Տիգրան էֆ. Աղամյանի, մեծ մասամբ շաշակերտությանս ի Ճեմարան վարժարանի ընդօրինակած և պահած էի խնամոք, զորս կորսնցնելու երկյուղես տվի ի հրատարակություն «Արևելք» լրագրի 1869 մայիս 13 ավուր և 1892 տարվո թերթից մեջ» (ՏԹՆԴ, էջ 222):

Դուրյանի նամակներից, այն տեսքով, ինչպես տպագրվել են «Արևելք»-ում կամ 1893-ի ժողովածուում, անհնար է հասկանալ, թե ո՞ւմ են ուղղված: Այս հանգամանքը նկատել է նաև Սիմեոն Հակոբյանը. «Տարարատար նամակների վերնագիրները պակաս են և ստույգ չէ, թե այդ նամակները որո՞նց են գրված» («Պետրոս Դուրյան, նրա կյանքն ու երկերը. Վիեննա, 1922, էջ 84): Սակայն կռահել այսուամենայնիվ կարելի է: Դրան օգնում են և էքսերճյանի «Ընդարձակ կենսագրություն...»-ը և Ա. Զոպանյանի ուսումնասիրությունը, որոնց մեջ տարբեր առիթներով մեջբերումներ են կատարված Դուրյանի նամակներից՝ նշելով հասցե ստիրոջը: Հենց այսպես էլ վարվել է Մ. Ճանաչյանը և մեծ մասամբ կարուացել է պարզել, թե ովքեր են հասցեատերերը:

Կա ավելի էական թերություն: Էփեսոսյանի տպագրած տեքստերը հարգատուրեն շեն վերաբողոքում ենդինակային բնագրերը:

Այդպիսի պնդումը հաստատող ի՞նչ փաստեր կան:

«Արևելք»-ում հրատարակված և ապա 1893-ի ժողովածուում զետեղված նամակների համեմատությունները ցույց են տալիս, որ գրեթե միշտ էլ առկա են տեքստային տարբերություններ: Ավելին. «Ընդարձակ կենսագրություն...»-ում կատարված մեջբերումները ևս լեզվաոճական տեսակետից շեն համապատասխանում իր իսկ էքսերճյանի հրատարակած տեքստերին: Բերենք բազմաթիվ օրինակներից մեկը.

«Արևելք» (1889, թիվ 1607):

«...Ա՛լ դուրս ելնելու կարողություն չմնաց վրաս, սանդուղեն վար իջնելու համար հարկ է որ հեճարանին կրքեիմ... Եթե քու գալուստդ գարնան մնաց, շատ կը սոսկամ, որ ո՛չ մտերմական ժպիտդ, և հետևաբար ո՛չ ալ գարնան փթթումը պիտի տեսնիմ»:

ՏԹՆԴ (էջ 247):

«...Ա՛լ դուրս ելնելու համար կարողություն չի մնաց վրաս, սանդուղեն վար իջնելու համար պետք է որ հեճարանին կրքեիմ...»

Եթե քու գալուստդ գարնան մնաց, շատ կը սոսկամ, որ ոչ մտերմական ժպիտդ, ոչ ալ հետևաբար գարնան փթթումը պիտի տեսնեմ»:

«Ընդարձակ կենսագրություն...» (էջ 102—103):

«...Ալ դուրս ելնելու կարողություն չմնաց վրաս, սանդուղեն վար իջնելու համար հեճարանին կը կրքեիմ... Եթե քու գալուստդ գարնան մնաց, շատ կը սոսկամ, որ ո՛չ մնաց և ո՛չ ալ հետևաբար գարնան փթթումը պիտի տեսնեմ»:

Ի լրումն այս ամենքի ասենք, որ «Արևելք»-ում հիշյալ նամակի գրություն թիվ է նշված 1871-ի նոյեմբերի 30, իսկ ՏԹՆԴ-ում՝ նոյեմբերի 23:

Հնարավոր է, որ սրանք հետևանք լինեն մասամբ անուշադրության (ի դեպ, տաղերից կատարված քաղվածքներում ևս այդպիսի անհամապատասխանություններ նկատելի են), մասամբ էլ տարբեր ինքնագրերի բաղդատություն (դրա մասին խոսվեց վերը): Բայց կան նաև միտումնավոր աղավաղումներ, որոնց պատճառը էքսերճյանի սահմանափակ աշխարհայացքն է և ամենից առաջ կղերամիտ ըմբռնումները:

Ինչպես արդեն ասել ենք, ԳԱԹ-ում կան Պ. Գուրյանի Երուսաղեմի արխիվում գտնվող բոլոր ինը ֆամակների ընդօրինակությունները: Ինքնագրերի համեմատությամբ դրանք ունեն մի քանի աննշան տարբերություններ միայն, որոնք, անշուշտ, արդյունք են այն բանի, որ Ս. Գուրյանը իր իսկ խոստովանությամբ չի հասցրել տետրը «ամբողջ սրբագրել»: Բայց սկզբունքորեն այդ ընդօրինակությունները հարազատորեն են վերարտադրում ինքնագրերը: Հենց դրանց վրա հենվելով էլ մենք ժամանակին վերականգնել ենք Գուրյանի մի քանի նամակների հապաված հատվածներն ու արտահայտությունները (տե՛ս «Պատմարանասիրական հանդես», 1967, № 4, էջ 213—218): Հիշյալ ինը նամակները տպագրվում են ըստ Երուսաղեմի ժողովածուի, իսկ մյուս-

ները, ինքնագրերի բացակայության պատճառով, հրատարակվում են ըստ էքսերճյանի տեքստերի՝ բոլոր էական տարբերությունների նշումով:

1. <ԱՌ ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԷՏ ԻԶՄԻՐԼԵԱՆ>

(էջ 155)

Ինքնագրի ճակատագիրն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է 1893-ի ժողովածուում, ապա զետեղվել է 1918, 1940, 1947, 1952 և 1956-ի հրատարակություններում:

Բ. էքսերճյանը խոստովանում է, որ «Սույն նամակն տպագրել կարենալու համար՝ ի՛նչ ի՛նչ փոփոխություններ ըրած եմ առ հարկի» (ՏԹՆՒ, էջ 224): Կարելի է ենթադրել, որ Դուրյանը հիշատակել է հայոց պատմական անձնավորություններին կամ խոսել հայրենիքի ճակատագրի մասին (ինչպես Խրիմյանին ձո՛ւված բանաստեղծություններում), մի բան, որ անթույլատրելի էր 90-ական թվականների թուրքիայում:

Նամակի զրույթյան շարժառիթի մասին կա երկու կարծիք: Ե. Դուրյանը Ա. Չոպանյանին ուղղած նամակում ի միջի այլոց նկատել է. «...Գիտեմ, որ (Պ. Դուրյանը— Ա. Շ.) գրաբար նամակ մը գրած է Գեր-^[ապատիվ] Իզմիրլյան՝ նորա սարկավագության ժամանակ» (ԲՅՀ, 1967, № 1, էջ 170): Իսկ էքսերճյանը հայտնում է. «Մատթեոս Եպիսկոպոս Իզմիրլյան 1867 հունիս 29-ին վարդապետ կը ձեռնադրվի Օրթագյուղի Ս. Աստվածածնի եկեղեցվո մեջ վիճն. Հով. Եպիսկոպոս Կապոդոխյան Սրբազանեն, և Պետրոս շնորհավորական գրաբար նամակ մը կը գրե հեհհե Օրթագեղ վագելե, և ձեռնադրության շնտեսելե հետո, որ հրատարակված է Տաղերուն Բ. տպագրության մեջ» («Ընդարձակ կենսագրություն...», էջ 87):

Ե. Դուրյանի տեղեկությունը բացահայտորեն ճիշտ չէ, քանի որ Իզմիրլյանը սարկավագ է ձեռնադրվել 1864-ին, իսկ էքսերճյանի վկայությունը հակասական է ու սխալ: Եթե 1867-ին Իզմիրլյանը արդեն եպիսկոպոս էր, ապա ի՛նչ հարկ կար 1869-ին ձեռնադրել վարդապետ: Իրականում Սիմոն սարկավագ Իզմիրլյանը վարդապետ է ձեռնադրվել և ընդունել Մատթեոս անունը 1869-ի հունիսի 29-ին, իսկ եպիսկոպոս է դարձել 1876-ին (տե՛ս Սիմոն Գարամաճյան, «Ամենապատիվ Տ. Տ. Մատթեոս Ս. Արքեպիսկոպոս

Իզմիրլյան, բարձրաշնորհ: Տ. Նդիշե Ս. եպիսկոպոս Դուրյան», Կ. Պոլիս, 1909, էջ 6, 8, 10): Բայց ինչու է Պ. Դուրյանը Իզմիրլյանին շնորհավորել նրա վարդապետ դառնալուց ավելի քան երկու ամիս հետո: Մեր կարծիքով այդ շնորհավորական նամակը գրված է Իզմիրլյանի «Գաղազանի իշխանություն» առնելու առիթով, ինչը, ըստ կենսագրի, կատարվել է 1869-ի «Վարագա Խաչի բարեկենդանի կյուրակեին», Օրթագյուղի նույն եկեղեցում (նույն տեղում, էջ 8): Դա հաստատվում է նաև այն բանով, որ 1869-ին այդ տոնը նշվել է սեպտեմբերի 21-ին («Օրացույց և գուշակություն օդոց 1869 թվին Քրիստոսի և Հայոց ՌՅԺԸ=1318», հորինյալ ի տեր Երեմիա քահանայի, Կ. Պոլիս): Այս թիվը ավելի մոտ է Դուրյանի նամակի ամսաթվին, քան էքսերճյանի նշածը:

1) Սիրտ իմ քրքոայր ընդ առաջին տեսութիւն Ձեռ...— Ըստ Բ. էքսերճյանի Պ. Դուրյանը Իզմիրլյանին հանդիպել է երեք անգամ: Առաջին հանդիպումը տեղի է ունեցել Օրթագյուղում, Եվգինե տուտուի տանը («Ընդարձակ կենսագրություն...», էջ 87):

2) ...բաղդն... հալածեաց զիս յափունս հեռաւորս...— «Այսինքն յՅուկյուտար և Կետիկ Փաշա, զի Դուրյան Պոլսեն դուրս ելած չէ», (Ժ. Բ. էքսերճյանի, ՏԹՆԴ, էջ 222):

3) ...Ոչ լուայ յառաջագոյն զկառաւորումն ձեռնադրութեան— Ակնարկը, անշուշտ, վերաբերում է Իզմիրլյանի վարդապետ ձեռնադրվելու արարողությունը:

4) ...ի լուր դասափոխութեան աստիճանիդ— Խոսքը Իզմիրլյանի գաղազանակրի իրավունք ստանալու մասին է:

2. <ԱՌ Պ. Տ. ԱԴԱՄՅԱՆ>

(էջ 157)

Ինքնագրի ճակատագիրն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է «Մասիս» հանդեսում (1893, 17 ապրիլ, թիվ 3987, էջ 227—228), երկրորդ անգամ էական սխալներով զետեղել է իր գրքում Վ. Թերզիբաշյանը («Պետրոս Դուրյան», Երևան, 1959, էջ 56—58): Նամակը ծանոթ է եղել էքսերճյանին և Զոպանյանին, որոնք դրանից

քաղվածքներ են կատարել: էքսերճյանը իր աշխատության մեջ բերելով մի ընդարձակ հատված, նամակի տարեթիվը համարել է 1871-ը և ավելացրել. «Հնդցը. Որպիկ Պեյի տունը թողած միջոցին կը գրե այս նամակը» («Ընդարձակ կենսագրություն...», էջ 70): Չոպանյանը նույնպես հաստատում է, որ նամակը 1871-ի դեկտեմբերին է գրված («Դուրյանի կյանքը...» էջ 37): Բայց Դուրյանը չէր կարող այդ ժամանակ գրած լինել իր նամակը, քանի որ Վարդան Լուսինյանի մասին խոսում է որպես կենդանի մարդու (Լուսինյանը մահացել է 1871-ի մայիսին):

«Մասիս»-ը նամակի առթիվ որևէ ծանուցում չի տվել, չի նշել, թե ումն է ուղղված: Բայց ամսաթիվը ճիշտ է. «1870 դեկտմ. 21»: Վ. Թերզիբաշյանը «Վարդան-Մարտիկ-Պետրոս» արտահայտությունից հետևցնում է. «Նամակի հասցեատեղը պետք է լինի Վարդան Լուսինյանը կամ Մարտին Պողիկյանը... Սակայն հավանաբար նամակը գրված է Մարտինին, որովհետև այդ ժամանակ Վարդանը Ադիպոսից արդեն վերադարձել էր, իսկ Մարտինը նոր էր մեկնել Պոլսի մոտակա վայրերից մեկը, իհարկե շոգենավով, դրա համար էլ Դուրյանը գրում է, որ այնքան է տխրել, որ նույնիսկ մոռացել է իր սիրելի ընկերոջը «բարով նստիս» մաղթելու» («Պետրոս Դուրյան», էջ 58): Իրականում նամակը գրված է Տ. Աղամյանին: Այդ մասին ակնարկում է Բ. էքսերճյանը («Ընդարձակ կենսագրություն...», էջ 70), իսկ ավելի որոշակի ասում է Չոպանյանը («Դուրյանի կյանքը...», էջ 37):

Մ. Ծանաշյանը, շիմանալով «Մասիս»-ում նամակի տպագրված լինելու փաստը, համադրել է էքսերճյանի և Չոպանյանի վկայակոչած հատվածները և նկատել մի շարք տարբերություններ, որոնք «խորհիլ կու տան, թե էքսերճյան հապաված կամ փոխած ըլլա այն մասերը, որ նպաստավոր շեն Վարդովյանի համար. ան (էքսերճյանը— Ա. Շ.) համակրությամբ կը շարժի արդեն Վարդովյանի հանդեպ իր գործին ուրիշ ինչ-ինչ կետերու մեջ» («Տաղեր, նամակներ, հատվածներ», Վենետիկ, 1959, էջ 65, ծ.): Սա ճիշտ դիտողություն է, և մենք հիմք ընդունելով «Մասիս»-ի տեքստը, դա լրացրել ենք Ա. Չոպանյանի մեջբերած հատվածով: «Մասիս»-ում գրության տարեթիվը գրված է նամակի վերևում, մենք միօրինակությունը պահպանած լինելու նպատակով զետեղել ենք վերջում:

«Մասիս»

1 աշխատելու 2 քեզ ծանոթ անձի մը: 4 [այդ անձին] ինձի:

«Դուրյանի կյանքը...»

3 թոթովելու: 5 անհիշաչարությամբ:

1) Երկու տեսակ օթ ու զպիւր կը խաղաս... նաև հոփ կամ թոփ...— Օթուզ պիւր (բրժ.՝ երեսունմեկ) Բարսեղ էքսերճյանի վկայությամբ Դուրյանը զվարճության ժամերին սիրել է «օթուզ պիւր, հոք և ուրիշ թղթի խաղեր, ինչպես նաև թավու (նարդի— Ա. Շ.), պիլիոտո (բիլյարդ— Ա. Շ.) Աթա-Պեյի կազինոյին մեջ Տիգրան Աղամյանի և այլ բարեկամաց հետ ի Պազլար Պաշի» («Ընդարձակ կենսագրություն...», էջ 49):

2) ...Չյունի վրա ֆալոզ կամ բոչոզ ձյունե գունտեր...— Ակնարկված են կանացի ստինքները:

3) ...ասուցմն արտադրյալն է քատերախաղ— *Խոսքը*՝ «Թատրոն կամ թշվառներ»-ին է վերաբերում, որ Դուրյանը սկսել է 1870-ի դեկտեմբերի 18-ին և ավարտել 1871-ի հունվարի 3-ին (ԲՆԸ, 1967, № 1, էջ 170 և 1968, № 1, էջ 143):

4) ...հիմակվան գործատերերը կով կուզեն գործածելու և աշխատացնելու...— Ակնարկը վերաբերում է Որդիկ բեյին, որի մոտ նա նարպեյի և Սոփոն Պեգիրճյանի միջնորդությամբ անցել էր աշխատանքի: Դուրյանը բեյի որդու՝ Սիրուն Քեմահճյանի քերականության ուսուցիչն էր և միաժամանակ ֆրանսերեն մեքենագիտական գրքեր էր թարգմանում: Այս աշխատանքները նա կատարել է ութ ամիս, որից հետո ստիպված է եղել հեռանալ՝ խոստացված աշխատավարձը կրճատելու պատճառով (ամսական 2,5 ոսկի՝ 3-ի փոխարեն):

5) ...մինչև անգամ խոնարհեցա դերասան ու քյուն ընելու...— Դուրյանը 1870-ին կարիքից դրդված մտել է Օսմանիե թատրոնը, կատարել մեծ մասամբ երկրորդական դերեր: «Պ. Սիսակ և պ. Պենկյան ծանոթ դերասանները, որոնք մոտեն ճանչցած են Դուրյանը, կըսեն, թե դերասանու-

թյան համար պետք եղած բոլոր ձիրքերը շունքեր, բայց խնամքով կտորվեր իր դերը և եռանդով կխաղար: Միայն անգամ մը, Ճեյն Կրեյ թատրերգության մեջ, էդուարդ Զ-ի դերը կառնե, որ հիվանդ արքայի մը դերն է, և սքանչելի կերպով կխաղա զայն: Հանդիւստեսները կհուզվին և Դուրյան, որ քանի մը անգամ ի տես կկոչվի, մեծ հաջողութիւն մը կունենա» («Դուրյանի կյանքը...», էջ 36): Հավանաբար հենց այս դերի մասին է պատմում նաև Բ. էքսերճյանը, ավելացնելով նաև, որ երբ Պետրոս Աղամյանը հետագայում խաղաց այդ դերը «շկրնար հավասարիլ Պետրոսի, և մանավանդ շատ վար կը մնա անկե, ըստ վկայության, Վարդովյան էֆենտիի» («Ընդարձակ կենսագրութիւն...», էջ 74):

6) ...Վարդովյանի (ճին արկածներէ մնացած ատելության կրակովը բորբոքած) — Այս առթիվ Ա. Զոպանյանը գրում է. «Դպրոցը եղած ատեն Պետրոս շարաճճի գաղափար մը կհղանա, այն է Վարդովյանի ծաղրանկարը գծել և անոր ճամփուն երկայնքը, փողոցը պատերուն վրա փակցնել... Պետրոս, որ Իկարելու բավական հարմարութիւն ուներ, երեք-չորս թուղթի վրա Վարդովյանի ծաղրանկարը կշինէ իր շպարարի հագուստներով, խոշոր դեղդիր մը ձեռքը: (Վարդովյան դերասանութենէ առաջ շպարար — սրվաճի եղած է), հետո՝ գիշերանց, քանի մը ընկերներու հետ լապտեր մը ձեռքն առած, կտանի ատոնք փակցնել պատերուն վրա այն փողոցներուն, որոնցմէ Վարդովյան ամենին հաճախ կանցնէր» («Դուրյանի կյանքը...», էջ 37—38):

7) ...Նախատիւններուն շկրնալով հանդուրժել — Վարդովյանը հաճախ է վիրավորել Դուրյանին, դերասան-դերասանուհիների ներկայութեամբ անվանել «տիրացու» (Պետրոսը երեխա ժամանակ երգել է եկեղեցական երգչախմբում), կրճատել աշխատավարձը:

8) ...աղտոտ անկողինս քաւորունէն տուն փոխադրեցի — Դուրյանը դերասան եղած ժամանակ գիշերել է թատրոնում: Նա դերասանութիւն է արել մեկ ամիս:

9) ...նիմա սյդ անցր հոս պատմելը անպատեհ է... — Ա. Զոպանյանը և Բ. էքսերճյանը հիշատակում են այդ պատմութիւնը (վերջինս ասում է, որ տեղի է ունեցել Կետիկ փաշայի թատրոնում, բայց չի տալիս Վարդովյանի անունը): Երբ մի օր Դուրյանը պահանջել է իր աշխատավարձը. Վարդովյանը ոչ միայն հրաժարվել է տալ, այլև վիրավորել է նրան: Զայրացած Դուրյանը նետել է. «Դուն իրավ... Սրապիտն Հեքիմյանին ըսածն ես եղեր»:

Իսկ Հեթիմյանը տարիներ առաջ Վարդովյանին ասել էր. «Դուն համալի դեր միայն կրնաս կատարել»: «Դուրյանի այս խոսքին վրա,— գրում է Զուպանյանը,— Վարդովյան կատաղած, կապտակե Դուրյանը, որ կսկսի լալ» («Դուրյանի կյանքը...», էջ 36—37):

10) ...շատ կրկնեցիր, որ գործ գտնեմ— Դուրյանին շահչողվեց որևէ աշխատանք գտնել, շուտով նա վերջնականապես ընկնում է անկողին:

11) ...երբամ վարը բիշ մը տաճնալու— «Դուրյան կերթար տաքնալու վարձակալ Աբրահամ աղային սենյակն ուր կրակ կար» (ծ. «Մասիս», ի, էջ 228):

12) ...Վարդան—Մարտիկ—Պետրոս—նույնություն— խոսքը վերաբերում է Վարդան Լուսինյանին, Մարտիկ Պողիկյանին և Պետրոս Դուրյանին:

13) ...Տեսնենք ի՞նչ համախմբություն մը զայն պիտի լուծեն— «Իր մահը կակնարկեն» (ծ. «Մասիս», էջ 228):

3. <ԱՌ Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԵՅ>

(էջ 160)

Ինքնագիրը պահպանվում է Երուսաղեմի պատրիարքարանում: ԳԱԹ-ում կա հրկու ընդօրինակություն: մեկը՝ Մ. Միհրդատյանցի ձեռքով (ԱԶՖ, № 4551), մյուսը՝ հավանաբար կատարել է Հ. Ծանֆեսճյանը:

Առաջին անգամ տպագրվել է «Ընտանիք» կիսամսյա հանդեսում (1884, 1 մարտ, թիվ 12, էջ 189—190): Նամակին կցված էր խմբագրական այս ծանուցումը.

«Հետևյալը վաղամեռիկ Հայ բանաստեղծին, Պ. Դուրյանի անտիպ գործերն է, զոր ուղղած է Գերապատիվ Հոր մը, անկե պաշտպանություն խընդրելու համար:

Կը հրատարակենք զայս հիշյալ բանաստեղծին գրվածոց մասին որևէ ճաշակ մը տալու համար առ գրասեր տիկնայս և օրիորդս»:

Երկրորդ անգամ տպագրվեց «Արևելք»-ում (1889, թիվ 1607)՝ նշելով հասցեատիրոջը և հիշատակելով «տարիներ առաջ» «Ընտանիք»-ում տպագրված լինելու փաստը: Մտել է 1893 և հետագա այն ժողովածուներում, որտեղ զետեղվել են Դուրյանի նամակները:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ընտանիք»

2 կանգուն: 7 համաստեղութենեն: 8 ինկոզ: 13 տիրոզ: 16 վերջալուսի:
17 առանձինն: 18 արձագանք: 19 որդին:

ՏԹՆԴ

1 պատրաստ: 2 կանգուն: 3 վերջալուսի: 4 (բացակայում է): 5 փայտա-
կույտը: 6 մ'է: 7 համաստեղութենեն: 8 ինկոզ: 9 քառասյին: 10 (բացա-
կայում է): 11 դողւմ: 12 (բացակայում է): 14 (բացակայում է): 15
քառսն: 16 վերջալուսի: 18 արձագանք: 20 հայր:

«Արևելք»

3 վերջալուսի: 4 (բացակայում է): 7 համաստեղութենեն: 8 ինկոզ: 9 քառ-
սյին: 10 (բացակայում է): 15 քառսն: 16 վերջալուսի: 17 առանձին:
18 արձագանք: 20 հայր:

Ընդօրինակություն (ՄՄ)

8 ինկոզ: 16 վերջալուսին: 17 առանձինն:

1) ...մարդկային ճեղհփոխական ճրարութիւն բոլորտիքը... Ես կ'ու-
զեմ այն ճեղհփոխական ճրարութենէ— 1893-ի հրատարակութունում «Տե-
ղափոխական» բառը բաց է թողնվել գրաքննական նկատառումներով, մինչ-
դեռ «Ընտանիք»-ի և «Արևելք»-ի տեքստերում պահպանվել է: Դրա պատ-
ճառն այն է, որ (ինչպես հաստատում է Ա. Արփիարյանը) մինչև 1888 թվա-
կանը հայ մամուլը գրաքննության չի ենթարկվել, խստութունները տարած-
վել են միայն գրքերի վրա («Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրա-
կանության», Գաճիրե, 1943/44, էջ 76):

2) ...նշանավոր առթիվ մը, համակրական տեսակցության մը պատիվը
իճն տալն զատ, երչանկություն մ'ալ ներշնչած է...— «Ձոն առ Հայրիկն
հրիմյան...» («Ի Պատրիարքական Ընտրություն Ամեն. Հայրիկի») բանաս-
տեղծությունը գրավել էր Նարպեյի ուշադրությունը: Նարպեյը Դուրյանին
հրավիրել էր իր տուն, խոստացել աշխատանք գտնել ու հրատարակել տա-
ղերը:

3) ...անհա առիթը իճն կը ներկայի— Ակնարկը վերաբերում է Դուրյանի
տաղերը տպագրելու Նարպեյի 1869-ին տված խոստմանը: Դուրյանը այս
նամակը գրելուց հետո մի քանի անդամ եղել է Նարպեյի մոտ, բայց վեր-

շինս շի կատարել իր խոսքը: 'Իրա պատճառը նարպեյի անկարողութունը չէ, ինչպես կարծում է Բ. էքսերճյանը: Ե. Դուրյանը Մ. Միհրդատյանցին հայտնել է բուն շարժառիթը. «Ետրեն սրբազան,— գրում է Միհրդատյանցը Ա. Զոպանյանին 1891-ի սեպտեմբերի 18-ի նամակում,— առարկել է, թե այդ գրությունները (Դուրյանի բանաստեղծությունները— Ա. Շ.) սիրահարական են ըլլալուն չը կրնար անոնց տպագրության նպաստել, որպեսզի վերջը զինքը չը քարկոծեն» (ԲՆՀ, 1968, № 1, 144):

4) ...Ձեռ վսեմ քեռիքն շուրջը կը դեգերի... — Խ. Նարպեյը նույնպէս բանաստեղծություններ էր գրում: Մինչև այդ նա հրատարակել էր Համարթիի «Դաշնակներ»-ի թարգմանությունը (Փարիզ, 1859), «Քնար պանդրխտին» ժողովածուն (1868), իսկ պարբերական մամուլում տպագրում էր հայրենասիրական քերթվածներ:

4. ԱՌ Պ. Տ. ԱԴԱՄՅԱՆ

(էջ 162)

Ինքնագիրը պահվում է Երուսաղեմի պատրիարքարանում, ԳԱԹ-ում կա ընդօրինակությունը:

Առաջին անգամ տպագրվել է 1893-ի ժողովածուում, ապա զետեղվել է բոլոր այն իրատարակություններում, որտեղ տպվել են Դուրյանի նամակները:

էքսերճյանը նամակի գրության տարեթիվ է նշել «1869 դեկտ. 20»:

Ընդօրինակությունը լիովին համապատասխանում է ինքնագրին, միայն գրության տարեթիվն ու ամսաթիվը զետեղված են սկզբում:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԹՆԴ

1 անձկավորության: 2 շունի: 3 սաղմնառի: 4 մեջը: 5 նորա: 6 երբեմն [իր]: 7 ցեղին [մեջ]: 8 (բացակայում է): 9 հառաջ: 10 հեղափոխելու: 11—12 (բացակայում են):

1) Տախի'ր այն վառաբուրնի քոլ... բեհ Եժգե'ն ալ ըլլա— «Կակնարկ

իր աղքատութիւնը, զի շատ անգամ կրակն իսկ շէր ունենար և տան վարձակալին կրակեն կը տաքնար» (ժ. Բ. էքսերճյանի, ՏԹՆԴ, էջ 225)։

2) ...որուն վրա երեցածը լոկ բնության մեկ ժամանակական ներգործութիւնն է— Թորքախտի առաջին նշանները Վարդան Լուսինյանի մեջ երևացին 1870-ին։

3) ...ինչպէս Երեմն Տ... եղբայրն ալ ունեցած է— «Վարդանա եղբայրն, Տաճատ Լուսինյանն է Տ... որ այժմ քաջառողջ է» (ժ. Բ. էքսերճյանի, ՏԹՆԴ, էջ 225)։

4) Այլ փու վերադարձը ե՞րբ պիտի ըլլա— Այս և մյուս նամակներում Դուրյանը հաճախ է ակնարկում ընկերոջ վերադարձը։ Մեզ չ'աջողվեց պարզել, թե ո՞ր գաւառում էր գտնվում Տ. Ազամյանը։

5. ԱՒ Պ. Տ. ԱԴԱՄՅԱՆ

(էջ 164)

Ինքնագիրը պահվում է Երուսաղեմի պատրիարքարանում, իսկ ընդօրինակութիւնը՝ ԳԱԹ-ում։

Առաջին անգամ տպագրվել է «Արեւելքում»-ում (1899, թիվ 1607), ապա զետեղվել է 1893-ի և հետագա բոլոր այն ժողովածուներում, որտեղ հրատարակվել են Դուրյանի նամակները։

Մ. Ճանաչյանը կարծում է, թե «Այս նամակը ուղղված է թերևս Հովհ. Ճանֆեսյանի» («Տաղեր, Էամակներ, հատվածներ», Վենետիկ, 1959, էջ 70)։ Առաջին պարբերութիւն մի հատվածը էքսերճյանը, ելնելով իր կրոնական ըմբռնումներից, չի տպագրել։ Այդ հատվածը ըստ ընդօրինակութիւն առաջինը վերականգնել ենք մենք («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 217)։ Ի դեպ՝ այդ հատվածը բերված է նաև Հրանդի, «Զատկական օրագիր»-ում («Արեւելք», 1889, 29 ապրիլ, թիվ 1595)։

Ընդօրինակութիւնը ամբողջովին համապատասխանում է ինքնագրին, միայն գրութիւն տարեթիվն ու ամսաթիվը զետեղված են սկզբում։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք», ՏԹՆԴ

1 Թողոր: 3 (Այստեղից մինչև պարբերության վերջը բացակայում է):
7 կսկիծի [մը]: 8 է: 9 օրերու: 10 զԶեզ: 11 Տոք: 12 ընկեր: 13 բարեկա-
մությանդ: 14 կսկիծի [մեջ]: 15 հետու: 16 ո՛հ,:

ՏԹՆԴ

2 այս: 6 աշխարհու:

«Արևելք»

4—5 պահեմք: 17 (բացակայում է):

1) ...իբ հողակույտին վրա— Այստեղ և հետագայում խոսքը վարդան
լուծֆյանի մասին է:

2) ...նամակը գրած օրերս գեշ վիճակի մեջ էի— Տե՛ս 1871-ի հուլիսի
6-ի նամակի ծանոթագրությունները:

3) Առ այժմ Տ.<ոֆ>ուր Քյաթիպյան դեռ կը խնամե— Քյաթիպյանն
իմանալով Դուրյանի բանաստեղծ լինելը, այլևս նրանից գումար չի ընդու-
նել և հանձնարարել է Սկյուտարում բնակվող բժիշկներ Մանուկ Աղասյանին
ու իտալացի Գալիլային ձրիաբար բուժել և մշտական հսկողության տակ
պահել: Վերջիններս մինչև գրողի կյանքի վերջին օրերը այդպես էլ վարվել
են (ԲԾԷ, 1968, № 1, էջ 154, «Ընդարձակ կենսագրություն...», էջ 99—100,
«Դուրյանի կյանքը...», էջ 72):

6. ԱՌ Պ. Տ. ԱԴԱՄՅԱՆ

(էջ 165)

Ինքնագիրը պահվում է Երուսաղեմի պատրիարքարանում, իսկ ընդօրի-
նակությունը՝ ԳԱԹ-ում:

Առաջին անգամ տպագրվել է «Արևելք»-ում (1889, թիվ 1607), ապա գետեղվել է 1893-ի և հետագա բոլոր այն ժողովածուներում, որտեղ հրատարակված են Դուրյանի նամակները:

Ինքնագրում, ընդօրինակությունում և տպագիր տեքստերում նամակի պրուժյան թվականն է «1871 Հուլիս 6»: 1871-ի հուլիսի 5-ի նամակը նույնպես ուղղված է Տ. Ադամյանին: Բայց այս նամակի «Ժամանակն մ'ի վեր է որ քեզ նամակ մի գրեցի» արտահայտությունը ցույց է տալիս, որ Դուրյանը ընկերոջը նամակ գրել է որոշ ժամանակ առաջ (եթե մեկ օր առաջ, հուլիսի 5-ին գրած լիներ, չէր առի «Ժամանակն մ'ի վեր»): Հավանաբար նամակներից մեկի ամսաթիվը սխալ է: Մեր կարծիքով այս նամակը գրվել է ավելի վաղ, քան հուլիսի 5-ինը: Նախորդ, հուլիսի 5-ի նամակում Դուրյանն ասում է. «Իմ վիճակս կը հարցնես, բավական բարվոքած եմ, նամակը գրած օրերս գեշ վիճակի մեջ էի...»: Ի՞նչ նամակի մասին է խոսքը: Անշուշտ ա՛յս, քանի որ հենց այստեղ է, որ մոռալ գույներով է ներկայացնում իր վիճակը. «Արդ կը դողդոջեմ, բերանես արյուն կը հոսի, կը հյուծիմ»:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք», ՏԹՆԴ

1 մը: 2 ավելի: 3 այն: 4 (բացակայում է): 5 հավատար: 8 կրցի [պահել]: 10 համար: 11 ահա: 12 (բացակայում է): 13 մարեցավ: 14 (բացակայում է): 16 (բացակայում է): 18 իրենց [սրտին]: 22 մը:

«Արևելք»

6 յուր: 9 յուր: 15 իմ:

ՏԹՆԴ

17 մնաս: 19 (բացակայում է): 20 ձգելու:

Ընդօրինակություն

7 Ո՛հ, 21 (Նախադասությունն ավարտվում է):

1) Ժամանակն մ'ի վեր է, որ քեզ նամակ մի գրեցի— Հավանաբար խոսքը 1871-ի փետրվարի 5-ի նամակի մասին է:

2) ...անելի է նա սգալի հիշատակի մը արտոստով— Ակնարկը վերաբերում է Վ. Լուսթջանին:

3) ...Մայիս 21-ի սև գիշերն— Վ. Լուսթջանի մահվան գիշերը:

4) Փրտտեցան նորա ոսկեբլր հիմա...— Խոսքը այստեղ և հետո դարձյալ Վ. Լուսթջանի մասին է:

5) ...ի՛ր տխուր դամբանականը— Վ. Լուսթջանի դամբանականը տե՛ս սույն հատորում:

6) ...Տեղ մը ըսած եմ...— 1871-ի փետրվարի 5-ի նամակում Դուրյանը գրել էր. «...Ո՛ր կը մնա մեր ճակատագիրը, այն ճակատագիրը, որ զմեզ միացուց՝ մանկության մեջ՝ այն ընկերական վառարանին շուրջը որ դպրոց կ'ըսվի»:

7) ...ձմեռը քեզ կը գրեի թե կը մսիմ— Տե՛ս 1870-ի դեկտեմբերի 21-ի նամակը:

8) ...եղբայրդ քանի մի օր է տեսած և հարցուցած չ'եմ—Մեզ անհայտ է, թե ո՞վ էր Տ. Աղամյանի եղբայրը:

7. ԱՌ ՄԵԾ. <ԱՊԱՏԻՎ> Ա. ԷՖ. <ԵՆՏԻ> ԼՈՒՍԻՆՅԱՆ

(էջ 168)

Ինքնագիրը պահվում է Երուսաղեմի պատրիարքարանում, իսկ ընդօրինակությունը՝ ԳԱԹ-ում:

Առաջին անգամ տպագրվել է «Արևելք»-ում (1889, թիվ 1607), ապա զետեղվել 1893-ի և հետագա բոլոր այն ժողովածուներում, որտեղ հրատարակվել են 'Դուրյանի նամակները:

Ա. Զոպանյանի արխիվում պահվող նամակի ընդօրինակության վրա, հավանաբար Ծ. Դուրյանի ձեռքով, գրված է «Առ Առաքել Լուսինյան»:

ՏԵՔՍՍԱՑԻՆ ՏՄՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք», ՏԹՆԻ

1 մուծ: 2 կուրծքիս: 3 երկնքի: 5 [այսինքն] իմ: 7 (բացակայում է): 8 երկընքի: 9 աստղերը: 14 [Սկյուտար]:

6 վսեմություն:

«Արևելք»

4 Տղան: 11 հասկցածս:

Ընդօրինակություն

10 (բացակայում է): 12—13 (բացակայում են):

1) Իրավամբ զնե հռչակել կուզեի...— *Խոսքը Աղավնի Վարդանյանի մասին է, որի պաշտպանությամբ Դուրյանը հանդես էր եկել իր հողվածներում: Վերջին արտահայտությամբ նկատի ունի Ա. Վարդանյանի 1871-ի օգոստոսի 8-ին Սկյուտարի ս. Խաչ եկեղեցու արական վարժարանի պարգևարաշխության հանդեսում արտասանած ըմբոստ ճառը:*

2) Օվսաննա մը հեծկլտալ— Օվսաննա կամ Ովսաննա (երբայեք են՝ «ազատիր», «օգնիր»): ցնժության բացականչություն, որով հին հրեաները դիմավորել են Քրիստոսին: Ընդհանրապես և այստեղ օգտագործված է որպես օրհնության, գոհունակության բացականչություն:

3) ...մշտնջենավոր վերբս— Ակնարկում է իր հիվանդությունը:

4) «նոնյաց տղա», «ղաջնակաց բուն» և «մտեմաց դավանար» բառերը, որոնք Դուրյանին են վերաբերում, հավանաբար Ա. Լուսինյանի արտահայտություններն են:

5) ...բանաստեղծի մը խօսմանց սլաք— Ակնարկը վերաբերում է Ա. Լուսինյանին, որ նույնպես բանաստեղծություններ էր գրում:

6) ..եղբայրս նամակը ուշ ձեռքս հասցուց— *Խոսքը Միհրան կամ Ագրիպպաս Դուրյանների մասին է:*

8. <ԱՌ Պ. Ը. ՃԱՆՑԵՍՃՅԱՆ>

(էջ 169)

Ինքնագրի ճակատագիրն անհայտ է, հավանաբար անցել է Մ. Փափաղյանին:

Առաջին անգամ տպագրվել է «Արևելք»-ում (1889, թիվ 1607), ապա գետեղվել 1893, 1918, 1945, 1947, 1952, 1956 և 1959-ի ժողովածուներում:

1. Էքսերճյանի և Ա. Զոպանյանի բերած քաղվածքները («Ընդարձակ կենսագրություն...», էջ 88, «Դուրյանի կյանքը», էջ 63) հաստատում են, որ նամակն իրոք ուղղված է Հ. Ծանֆեսճյանին:

Նամակի «Կուզես կմախքով լի...» բառերով սկսվող և «ակնարկներով պիտի գոհանամ» բառերով վերջացող հատվածը հրատարակված է «Արևելք»-ում, իսկ դրա փոխարեն 1893-ի ժողովածուում տպագրված է. «Ես կոպտուսյամբ շատ անգամ քեզ կը հանդիմանեմ՝ մահվան սև մտածումը սնուցանող ախտավորի մը նման, հուսամ որ այդ կծու խոսքերը շրտունքես ինկած առեն՝ նույնժամայն ներողության արժանացած են բոլորն ալ» (ՏԹՆԴ, էջ 237):

Ինչո՞վ բացատրել այս տարբերությունը: Դրա անուղղակի պատասխանը գտնում ենք Ե. Դուրյանի Ա. Զոպանյանին գրած 1892-ի դեկտեմբերի 25-ի նամակում. «Ծանֆեսճյանի ուղղյալ նամակին վերջին տողերուն մեջ,— գրում է նա,— պարտ կը համարիմ հիշեցնել Ձեզ, թե իմ գրչովս բաներ խառնած եմ, երբ տղա էի և առաջին անգամ այդ նամակը կարդացի, և հետո այնպես օրինակված է: Բայց Դուք բնագիրն վերստին առեք և նայեցեք» (ԲԵՂ, 1967, № 1, էջ 171):

Ա. Զոպանյանի արխիվում նամակի ընդօրինակությունը չկա: Սակայն պարզ է, որ հիշյալ հատվածներից մեկը Պետրոս Դուրյանինն է, իսկ մյուսը՝ Եղիշե (Մհերան) Դուրյանինը: «Արևելք»-ի հատվածը ոճական և իմաստային տեսակետից մերվում է ամբողջ տեքստին, իսկ ժողովածուինը հնչում է խորթ, անհամեմատ շոր է, անհասկանալի է մնում, թե ի՞նչ կոպտության մասին է խոսքը կամ ինչո՞ւ է ներույություն խնդրում:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՅԼ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք»

1 հարցնելուս: 2 [դա] դալկահար: 3 առընթերկաց լինելով: 4 (բացակայում է): 5 հավասար: 6 (բացակայում է):

1) ...կենաց դառն ներդաշնակությունը շներեց զալ տեսնել անգամ մը եղբայրդ...— Հովհ. Ծանֆեսճյանն ապրում էր 4. Պոլսի Գում Գարու (Քում Քարու) թաղում:

2) Նոյան տապանը— Նավ, որով (ըստ Աստվածաշնչի) շրհեղեղից աղատվեց Նոյ նահապետը՝ կնոջ, հրեք որդիների ու անասունների հետ:



(էջ 171)

Ինքնագիրը պահվում է Ծրուաղեմի պատրիարքարանում, ընդօրինակությունը՝ ԳԱԹ-ում:

Առաջին անգամ խմբագրական հակիրճ ծանուցումով տպագրվել է «Արևելք»-ում (1892, 21 մարտ, թիվ 2448, էջ 5), ապա զետեղվել է 1893-ի և հետագա բոլոր այն ժողովածուներում, որտեղ հրատարակվել են Դուրյանի նամակները:

Ընդօրինակության վրա, հավանաբար Ե. Դուրյանի ձեռքով, ավելացված է. «Առ Առաքել Լուսինյան»:

«Արևելք»-ում նամակի ամսաթիվն է «սեպտեմբեր 1»: Ինքնագրում «Ներա հետ ի՞նչ ունեցաք մինչև հիմա, կ'աղաչեմ տեղեկությո՞ւն», նախադասության «վրայնն մեկանով գիժ քաշված և շնչված է» (Ն, էջ 25):

ՏԵՔՍՍԱՅԻՆ ԱՅԼ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք» ՏԹՆԴ

5 ծանրացած: 6 են: 7 քեզ: 9 անդունդն: 18 տեսնեմ: 21 չախչախյախ: 24 դոնեն: 28 եղբայրդ:

«Արևելք»

12 [մը] գողով: 14—15 մարեցեք: 19 կրնաք: 20 (բացակայում է): 22 հեղաշրջեն: 25 ըլլալու: 26—27 (Նախադասությունները բացակա են): 29 ? [Սկյուտար]:

ՏԹՆԴ

1 սիրո: 8 այսպես: 10 հսկող: 11 խոսքերու: 12 մը ըլլալով: 13 որչափ: 16 վերադառնաք: 17 [ալ] այն: 25 ըլլալով: 29 [Սկյուտար]:

Ընդօրինակություն

2 մը [որ]: 3 վրա: 4 կը բեկբեկին [և]: 23 Երկրագունտ: 26 (Նախադասությունը չի օրինակված):

1) ...«ճուշը» «սեռ»ի փոյրն է— Հավանաբար Ա. Լուսինյանի կամ Դուրյանի իմացած այլ բանաստեղծի խոսքերն են:

2) Ձեզ հիշեցուցած եմ արդեն, որ ես «վսեմ»ին առջև կը պապանձիմ— 1871-ի օգոստոսի 13-ի նամակում 'Իուրյանը ասում էր, որ ինքը «վսեմությանց առջև հրբեմն կ'ապշի»:

3) ...Ն Ե Կ Բ Կ Գ Ո Ւ Ե Մ Ե Բ Ի ԵՆձ տալ խոստացած եմ— Խոսքը վերաբերում է «Երկրագունտ» հանդեսին, որ հրատարակվում էր Նուպար-Շահնազարյան վարժարանի սաների, այդ թվում և Ա. Լուսինյանի ջանքերով, Կ. Պոլսի Խասգյուղ թաղում: 1870-ի հունվարից մինչև դեկտեմբերը եղել է «շարաթական հանդես», 1871-ի հունվարին դադարել է, վերսկսել է հրատարակվել 1871-ի մայիսի 10-ից, այս անգամ որպես «տասնօրյա հանդես»:

4) Ն Ե Բ Կ Գ Ո Ւ Ե Գ Կ Բ — Ակնարկը վերաբերում է Աղավների Վարդանյանին, որի հետ Արմեն Լուսինյանը ծանոթացել է 1871-ի սամանադրության հանդեսում և հաստատել մտերմական հարաբերություններ: Հետագայում Ա. Լուսինյանն ու Ա. Վարդանյանը դարձան ամուսիններ:

10. <ԱՌ Պ. Ա. ԼՈՒՍԻՆՅԱՆ>

(էջ 173)

Ինքնագրի ճակատագիրն անհայտ է:

Առաջին անգամ մասնակի հապավումով տպագրվել է Հրանդի «Վառարանիս քով» քրոնիկում («Արևելք», 1890, 20 հունվար, թիվ 1806), ամբողջությամբ զետեղվել է 1893, 1918, 1945, 1947, 1952, 1956 և 1959-ի ժողովածուներում:

ՏԵՔՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<Արևելք>

1 [Սիրելի] եղբայր: 2 (բացակայում է): 3 կուզեք սև: 4 փողփողումներով: 5 առնում: 6 կսկիծներու: 7 կարծես: 8 (բացակայում է): 9 (բացակայում է): 10 սառուցե: 11 ա՛հ: 12 (բացակայում է): 13 կյանքիս: 14 (բացակայում են): 15 սառուցե: 16 ետին: 17—18 (բացակայում են): 19 (Այստեղից սկսած մինչև հաջորդ պարբերության վերջին՝ «վսեմ է ինձ համար լոկ դողդոջել» նախադասությունը «Արևելք»-ում չի տպագրվել): 20 ունենամ: 21 (բացակայում է): 22 թվի: 23 քիչ [մը]: 24 վիճակս [նորեն]:

1) ...նսնյաց դաշկահար ուղեգիրը— *Խոսքը իր՝ Դուրյանի մասին է։ Հավանաբար Ա. Լուսինյանի արտահայտությունն է (տե՛ս 1871-ի օգոստոսի 13-ի նամակը)։*

2) ...խոսքին տուչն շե՛ք քափեր Ձեր մարգարիտներն— Արտահայտությունն անված է ավետարանից. «Մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզաց» (Մատ., է, 6)։

3) Կուզեի ներա պաշտպան հանդիսանալ, կուզեի այդ Քեր-Հսկա Արամը նզմել— Այս սոսթիվ Բ. էքսերճյանը հայտնում է. «Ազապյան սաներն օր. Ա. Վարդանյան ճառ մը (այդ ճառը տպագրվել է «Օրագիր» թերթում— Ա. Շ.) խոսած է Սկյուտարու ս. Խաչ Վարժարանի պարգևաբաշխության առթիվ 1871-ին, զոր քննադատած է Արամ 1871 սեպտ. 21 և 1142 թիվ Մասիսին մեջ։ Դուրյան պիտակ անվամբ Արամը կակնարկե»։ (ՏԹՆԴ, էջ 241)։ Դուրյանը շէյր կարող Արամի այս ելույթը նկատի ունենալ, քանի որ նա իր նամակը գրել է սեպտեմբերի 9-ին։ Իրականում Դուրյանի զայրույթի պատճառը Արամի «Մասիս» լրագրի 1871-ի սեպտեմբերի 4-ի թիվ 1135-ում հրատարակված նախորդ թղթակցությունն է։ Արամն այստեղ Ա. Վարդանյանի ելույթի առթիվ վրդովվում է, որ «մեր քնքույշ օրիորդները» հանդեսներում շնորհակալական պարզ խոսքեր ասելու փոխարեն, հուզում են «ընկերական կամ քաղաքական խնդիրներ», արտասանում «ազատություն, հեղափոխություն, հուր, սուր, փայլակ, կայծակ» բառերը։

4) Եվ արդեն այսչափ...— «Այս բառերն անընթեռնելի են» (Ժ. Բ. էքսերճյանի, ՏԹՆԴ, էջ 241)։

5) ...զու՛մ ալ գրե՛մ... կուզեմ գրիչ լ գ ո ղ գ զնե՛լ... մի քանի տող գրելու— Դատելով Արամի երկրորդ նամակից («Մասիս», 1871, սեպտեմբեր 21, թիվ 1142) «Օրագիր...» թերթը 1871-ի սեպտեմբերի 11-ի համարում տպաչրել է «Աժտեր-Խան» և «Տորգ» ստորագրություններով երկու հոդված, որոնք Արամի առաջին նամակի («Մասիս», 4 սեպտեմբեր) պատասխանն են։ Վ. Քերզիրաշյանը կարծում է, որ Աժտեր-Խանը Ա. Լուսինյանն է («Պետրոս Դուրյան», Երևան, 1959, էջ 115)։ Աժտեր-Խանը Լուսինյանը չէ, այլ նրա մտերիմ ընկերներից մեկը։ Այդ երևում է հետևյալ փաստերից։ Արամը ընդարձակ մեջբերումներ է կատարում «Օրագիր...»-ից։ Դրանցից մեկից իմանում ենք, որ Աժտեր-Խանը ոչ միայն կարդացել, այլև

«իրրև թաղեցի հանդիսական ունկնդիր մը» լսել է Ա. Վարդանյանի ատենախոսությունը: Ուրեմն Աժտեր-Խանը սկյուտարցի էր, քանի որ հանդեսը կատարվել է Սկյուտարում: Մինչդեռ Ս. Լուսինյանը Խասազուղ թաղից էր: Ավելի կարևոր է երկրորդ մեջբերումը. «Արամ,— կարդում ենք այդտեղ,— այդ բեր-նակայն, ինչպես գրում է բաբելյամիս մեկը, որո երկաթի ապտակն ալ ուտելու թող նախապատրաստվի այդ գանձն Արամը, մեր գրական ասպարիզին հակոտնյան է» («Մասիս», 1871, 2 սեպտեմբեր, թիվ 1142): Ընդգծված բառերից «Թեր-հակայն» և «Գանձն» արտահայտությունները Պ. Գուրյանինն են, իսկ «բարեկամը» Ա. Լուսինյանն է, որ հանձնարարել է կամ խնդրել «Աժտեր-Խան»-ին (կամ «Տորգ»-ին, քանի որ Արամը հակված է կարծելու, որ դրանք միևնույն անձնավորությունն են) պատասխանելու Արամին՝ միաժամանակ հայտնելով «մեկ»-ի՝ Պ. Գուրյանի կարծիքը: Իսկ որ Գուրյանը ինքն էլ է ցանկացել «հռչակել» Ա. Վարդանյանին, վկայում է Ա. Լուսինյանին գրած 1871-ի օգոստոսի 13-ի նամակը:

6) ...բերաբնություն մեջ ե ե ե ա...— «Այս մեկ քանի տողերն ալ անընթեռելի են...»— (Ժ. Բ. էքսերճյանի, ՏԹՆԴ, էջ 241):

7) Չորեքշաբթի օր...— Սեպտեմբերի 8-ը:

11. <ԱՌ Պ. Ա. ԼՈՒՍԻՆՅԱՆ>

(էջ 176)

Ինքնագրի ճակատագիրն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է «Արևելքում» (1889, թիվ 1607), ապա զետեղվել է 1893, 1918, 1945, 1947, 1952, 1956 և 1959-ի ժողովածուներում:

Բ. էքսերճյանը ծանոթագրությամբ հաստատել է, որ նամակն իրոք ուղղված է Ա. Լուսինյանին (ՏԹՆԴ, էջ 244):

ՏԵՔՍՏՍՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<Արևելք>

1 տարվան: 4 հրճում: 6 [արդյոք] պիտի: 7 անցունել: 8 ես [ալ]:

ՏԹՆԴ

2 ուղարկել: 3 [համար]: 5 անիվներուդ:

1) ...ևս միայն նոցա (թատերախաղերի— Ա. Շ.) ծրագիրներն ունիմ— Սա ցույց է տալիս, որ Դուրյանը իր թատրերգութիւնները, թեպետ դրանք բնամարդի են, դեռևս ավարտված գործ չի համարել:

2) Վարդ և Շուշան կամ Հովիվի Մտայաց— Դուրյանի անդրանիկ թատրերգութիւնը:

3) ... Ա Ր Մ ա ղ Ե ս ի ն և Ա ն կ ու մ Ե Ա Ր շ ա կ ու Ե յ ա ց ի ն տ Ե ռ Ե ռ...— Խոսքը Դուրյանի «Արտաշես Աշխարհակալ» և «Անկումն Արշակունի հարստութեան» ողբերգութիւնների մասին է: Նախադասութեան այս մասը 1893-ի ժողովածուից դուրս է մնացել գրաքննական նկատառումներով: Հայոց պատմական անձնավորութիւնների անունների հիշատակումը այն ժամանակվա թուրքիայում արգելված էր:

4) ...Վարդովյանը տեսնելով՝ քիչ մը միջոցի ճամբար ուզեմ— Դուրյանի թատրերգութիւնները գտնվել են ոչ միայն Հ. Վարդովյանի, այլ թատերական հուշարար Տ. Դալեմճյանի մոտ:

5) ...ի՞նչ պիտի ընենք զանոնք— Թերևս Ա. Լուսինյանը ուզեցել է ժանոթանալ Դուրյանի թատերախաղերին՝ տպագրելու մտադրութեամբ:

6) Դուք բան մը ինձ կիմացնեք— Հավանաբար Ա. Լուսինյանը ակնարկել է իր առաջիկա ամուսնութիւնը Ա. Վարդանյանի հետ:

7) ...ուր նոքա գլուխ գլխի պիտի տան...— Խոսքը դարձյալ Ա. Լուսինյանի և Ա. Վարդանյանի մասին է:

8) ...մտեցո՛ւր այդ օրն...— Այսինքն «շնորհալի հանգեսի» հարսնեյաց օրը:

9) ...Սկյուտաբը մի՛ մտնար— Ա. Լուսինյանն ապրում էր Խասգյուղ թաղում:

12. <ԱՌ «ՕՐԱԳԻՐ»>

(էջ 178)

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ հրատարակվել է «Օրագիր» թերթում (1871, 1 հոկտեմբեր, թիվ 563), երկրորդ անգամ հրատարակել ենք մենք («Սովետական արվեստ», 1969, № 12, էջ 43—44): Նամակի վերջում զետեղված է հետևյալ խմբագրական դիտողութիւնը. «Վերոհիշյալ նամակին պատմութիւնը ցավ

կ'ազգե մեզ, երբ 'ր մտածենք, թե ազգային թատերական ասպարեզին մեջ պաշտոն ունեցող անձինք փոխանակ թատերական հրահանգիչ արհեստին զարգացման օգնող ազգային գրագետներն քաջալերելու, անիրավութեամբ կը վշտացնեն զանոնք, որով թե գրագետք ուղղակի և նյութապես վնասեն. և թե անշուշտ դերասանական պաշտոն ունեցող այնպիսի անձինք անուղղակի և նյութապես ու բարոյապես կը վնասեն»:

Տպագրվում է ըստ Վիեննայից ստացված ընդօրինակության:

1) Վերոնիշյալ քատերխաղները... ներկայացվեցան— Այդ բեմադրութիւնների մասին տե՛ս հիշյալ թատերագութիւնների ծանոթագրութիւնները ներկա հրատարակության երկրորդ հատորում:

2) ...Տ ի գրան Բ. անուն... քատերխաղ մ'ալ ունիմ— Այս ստեղծագործության մասին տե՛ս ներկա ժողովածուի երկրորդ հատորի հավելվածը:

3) ... անձինք ու տեսարաններեն կը տեսնվին Պ. Ռ. Սետեֆեյանի հեղինակած Հ ի ս ե ա մ յ ս յ պ ա տ եր ա զ մ ե ա յ ո ճ ը ն դ ե ո ո վ մ ա յ ե-
ց ի ս անուն խաղին մեջ— Իսկապես այս թատերախաղը բեմադրվել է: «Մասիս» լրագրում (1871, հունվար 16, թիվ 1042) հանդիպում ենք հետևյալ ծանուցմանը.

Ք Ա Տ Բ Ո Ն Օ Ս Մ Ա Ն Ի Ե

ԿԵՏԻԿ ՓԱՇԱ

1871 հունվար 16 շաբաթ գիշեր ժամ ճիշտ 3

Վարչութիւն Հ. Վարլովյանի

Մեծահանդես ազգային ներկայացումն

ՀԻՍՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԵՎ

ՄԵԾԱՄԵԾ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆՔ ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԿԱՄ

ՄԱՀ ՄԵԾԻՆ ՄԻՀՐԴԱՍԱ

Երգախառն թատերագութիւնն ի մի հառաջաբանն ի հինգ արարս և յերկուս պատկերս

Հեղինակություն

Պ. Ռամանոս Սետեֆեյանի

Երաժշտություն ընդ առաջնորդությամբ Պ. Չեռվարիի

ԱԶԳՒ.— Վերոհիշյալ թատրերգության նյութը ինչպես հայտնի է արգո հասարակության, Արշակունի թագավորաց ժամանակին մեկ նկարագիրն է, այնպիսի ժամանակ մը, յորում Հայը յուր ստեպ ստեպ հաղթանակներովը այնչափ փայլեցավ աշխարհի առջև, որ թագավորք սկսան ինքզինքն աստվածոց կարգը դասել: Տիգրան և Միհրդատ՝ այս երկու աստվածացյալ անձինքը՝ գրեթե անրնդհատ հոովմայեցվոց դեմ պատերազմելով ծերացան. այս Պարթևական և Հռովմեական պատերազմը հիստուն տարիեն ավելի տևեց»:

4) ...Առանց... արժեզինքը ամբողջապես ինձ վճարելու... պատասխանատու կը հրատարակեմ զինքը Դատաստանական բարձրագույն ատյանի առջև— Հայտնի է, թե Դուրյանն իսկապես ստացե՞լ է իր հասանելիքը կամ դիմե՞լ է ատյանին:

13. ԱՌ Պ. Տ. ԱԳԱՄՅԱՆ

(էջ 179)

Ինքնագիրը պահվում է Երուսաղեմի պատրիարքարանում, իսկ ընդօրինակությունը՝ ԳԱԹ-ում:

Առաջին անգամ տպագրվել է «Արևելք»-ում (1889, թիվ 1607), ապա զետեղվել 1893, 1918, 1940, 1947, 1952, 1956 և 1968-ի ժողովածուներում:

Ինքնագիր և ընդօրինակված տեքստերը նույնն են: «Արևելք»-ում և ՏԹՆԴ-ում գրության ամսաթիվն է «Հոկտ. 11», որ վրիպակ է:

ՏԵՔՍՍԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք», ՏԹՆԴ

1 Ա՜հ, 7 աշխարհատեղծութենեն: 8 հառաջ: 9 քառսային: 12 աչերս:

«Արևելք»

4 Գերագույն: 5 (բացակայում է): 10 աղիտարեր: 23 (Ամբողջ պարբերությունը չի տպագրված):

2 հոգիս: 3 երկին: 6 ձանձրույթին: 10 աղետարբեր: 11 իսկ: 13 մահվան: 14—21 (բացուկ սյուն են): 22 տաղերգությունը [թեզ]: 24 խոսքդ: 25 սարսրոն: 26 (բուցակայում է): 27 [Քուկդ] Պ. Դուրյան:

1) Ես լսած եմ անգամ մը, քե աշխարհ Աստուծո...— Տ. Աղամյանին ուղղած 1871-ի հուլիսի 5-ի նամակում Դուրյանը գրել է. «Աշխարհ կամ Աստուծո ձանձրույթի մեկ հառաչն ըլլալու է (քառսը բնակած ատեն), կամ դժոխոց մեկ անհամ կատակը»:

2) ...ինչպես որ ես Վարդանի...— Խոսքը Վարդան Լուսինյանի մասին է:

3) Երբ լսեցի, որ գառնան ճոս տիսի գաս...— Ընկերոջ գալստյան լուրը հավանաբար Դուրյանին էր հաղորդել Տ. Աղամյանի եղբայրը, որից նա տեղեկություններ էր ստանում: Տ. Աղամյանը Պոլիս է հասել Պ. Դուրյանի թաղման երեկոյան (ԲԵՂ, 1967, № 1, էջ 171):

4) Վարդանի գերեզմանին ուղղյալ սա ներփակյալ տաղերգությունը— Խոսքը «Ի գերեզմանն ամենասիրելի՞ Վարդան Լուսինյանի. Հեծեծեծներ» բանաստեղծության մասին է:

14. ԱՌ Պ. Տ. ԱԴԱՄՅԱՆ

(էջ 181)

Ինքնագիրը պահվում է Երուսաղեմի պատրիարքարանում, իսկ ընդօրինակությունը՝ ԳԱԹ-ում:

Առաջին անգամ տպագրվել է «Արևելք»-ում (1889, թիվ 1607), ապա զետեղվել 1893-ի և հետագա բոլոր այն ժողովածուներում, ուր հրատարակվել են Դուրյանի նամակները:

«Արևելք»-ում ամսաթիվն է «Նոյեմ. 30»:

ՏԵՔՍՍԱՅԻՆ ԱՅԼ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք», ՏԹՆԴ

3 բույլեր: 5 եղավ: 6 թեպետ: 9 պատենամբերի: 10 մնաց: 12 չեմ ուզեր որ»:

1 [Սիրելի] եղբայր: 2 սիրելի: 4 պետք: 7 գաղափարս: 11 (բացակայում է): 14 [(Գթա, ո՛վ Աստված)] Պ. Դուրյան:

Ընդօրինակություն

3 բուլլեր: 8 վարդերուս: 13 գերեզմանին:

1) ...ես արդեն ըսած եմ քե բնավ մանվանե վախ շ'ունիմ... Դուրյանն այդ միտքը արտահայտել է 1871-ի հոկտեմբերի 14-ի նամակում, իսկ ավելի որոշ՝ Լ. Ճանֆեսսյանին գրած 1871-ի սեպտեմբերի 5-ի նամակում:

2) Եթե քու գալուստդ գարնան մնա— Տես նախորդ նամակի ծանոթագրությունը:

3) ...կուզեի իբրև հավերժական հիշատակ երկտող տաղ մը գրել քեզ— Դուրյանի ցանկությունը մնացել է անկատար:

15. <ԱՌ Պ. Ա. ԼՈՒՍԻՆՅԱՆ>

(էջ 183)

— Ինքնագիրը պահվում է Երուսաղեմի պատրիարքարանում, իսկ ընդօրինակությունը՝ ԳԱԹ-ում:

Ի. Էքսերճյանը, որպես «Տրտունչք»-ի հետ «գաղափարաց մերձեցում» ունեցող վավերաթուղթի, «Արևելք»-ում (1892, 11 մարտ, թիվ 2439) տպագրեց այս նամակը՝ առանց «Կարապն իր վերջի շունչին իր էն ներդաշնակավոր ճիշը կարտասանե» բառերով սկսվող և «Ա՛յս է կյանքը» նախադասությամբ ավարտվող հատվածի: Այս հապավված մասը, որպես «անտիպ նամակ», էքսերճյանը հրատարակեց ավելի ուշ («Արևելք», 1892, 4 ապրիլ, թիվ 2459): Նամակի այս հատվածը արտաստվեց «Արձագանք»-ում (1892, № 46):

Դժվար է ասել. թե ինչո՞ւ էր էքսերճյանը միևնույն նամակը բաժանել երկու մասի, բայց որ դա իրոք մի ամբողջական վավերաթուղթ է, հաստատում են ինքնագիրը, ընդօրինակությունը և 1893-ի ժողովածուի տեքստերը: Ընդօրինակության վերջում Ե. Դուրյանը նկատել է. «Այս նամակի օրինականության մեջ թվականն մոռցված է» (ԳԱԹ ԱԶՖ, շհամարակալված նյութ):

թեր)։ «Արևելք»-ում տպագրված հատվածները ևս անթվակիր են։ Բայց ՏԹՆԴ-ում նշված է. «1871 Դեկտ. 10»։ Ամենայն հավանականությամբ Բ. էքսերճյանը թվականը վերականգնել է՝ հենվելով Ա. Լուսինյանի մոտ եղած ինքնագրի վրա։

Նամակը գետեղվել է բոլոր այն ժողովածուներում, որտեղ հրատարակվել հեն Դուրյանի նամակները։

«Ընդարձակ կենսագրություն...»-ում էքսերճյանի կատարած մեջբերումը (էջ 104), ինչպես նաև ընդօրինակության վրա (հավանաբար Ե. Դուրյանի ձեռքով) արված նշումը ցույց են տալիս, որ նամակն իրոք ուղղված է Ա. Լուսինյանին։

Նամակի «Նուպարա և Փանոսյանի» բառերով սկսվող և «պիտի մոռնա» բառերով ավարտվող հատվածը, որ ընդօրինակությունից վերցնելով առաջին անգամ վերականգնել ենք մենք (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 218), էքսերճյանը հապավել է՝ տալով հետևյալ բացատրությունը. «Քանի մը տողով ականարկելի հետո այն ատենվան լրագրական վեճերուն», ուր ինճն ալ դեռ մը անեցած էր, և որք անձնականություններ վիրավորելու շարհ հառաջ դացած են, կը հարե» (ՏԹՆԴ, էջ 252. «Արևելք»-ում այս ծանոթության ընդգծված բառերը շկան)։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՅԼ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արևելք», ՏԹՆԴ

2 այս։ 5 հավատացի։ 8 (բացակայում է)։ 11 վերջին։ 12 ցրված։ 13 ուղեղս։ 14 վրա։ 15 շունչին [հետ]։ 16 իրեն։ 17 աշխարհես։ 18 ավետեցին։ 19 Յուսկյուտարու։ 20 տեղեր։ 21 հկավ։ 22 խոսքեր։ 28 ադամանդներն։ 29 ապշեցու։ 31 (բացակայում է)։ 34 ըլլալ։ 35 (բացակայում է)։ 36 ամհնամեծ։ 39 նշանավի։ 40 (բացակայում է)։ 41 հուսահատորեն։ 42 (բացակայում է)։ 43 թե։ 44 կփափաքիմ [որ]։ 45 նախախնամությունը։ 46 (բացակայում է)։ 57 սրտահույզ։ 58 մոռցվին։ 65 (բացակայում է)։ 66 թղթերու։ 69 ցրված։ 75 ուժ։ 78 իմ։ 79 ինձ։ 80 (բացակայում է)։ 81 Ո՛հ։ 82 Ձիզ։ 83 (բացակայում է)։ 84 [Բարեկամդ և] եղբայրդ։

«Արևելք»

3 երկինքին: 30 ներդաշնակությունը: 33 (բացակայում է): 50 տեսնեմ: 68 Զարդարյանի [կամ Գավաֆյանի]: 72 սա: 73 մուսայն: 74 (բացակայում է):

ՏԹՆԴ

1 Ա՛, 4 մինչև [որ]: 6 ապրիմ: 7 շպիտի: 9—10 (բացակայում են): 25 մե-լամադձիկ: 26 (բացակայում է): 27 վարդն: 32 դաշնակավոր: 37 զգերնզ-մանն: 38 [և] կը սիրվիք: 47—56 (բացակայում են): 59 անդին: 60 աշխարհես: 67 (բացակայում է): 68 Զարդարյանի [և Գավաֆյանի]: 70 գտնեն: 71 (Պարբերությունն ավարտվում է): 76 դալկացում: 77 (բացակայում է):

Ընդօրինակություն

23—24 (բացակայում են): 61—64 (բացակայում են): 80 եղև:

1) ...ես ալ կ'ըսեմ. / «Երիտասարդ ըլլալ և երգել/Մեր լինիլ և աղո-րել» / — Զակերտներում առնված խոսքերը, հավանաբար, լամարթինինն են. Այդ խոսքերը, ըստ Միհրդատյանցի, հիշել է Ե. Դուրյանը և նկատել, որ դրանք «լամարթին գրած է եղեր իր Commentairner-ներու մեջ...» (ԲԵՂ, 1968, № 1, էջ 143):

2) ...Ձեր սիրո նշանավոր Հանդեսը— Այս և հետագա մյուս արտահայտությունները («զույգ մը նոր երջանիկ») վերաբերում են Ա. Լուսինյանի և Ա. Վարդանյանի առաջիկա լամուսնությանը:

3) Նուպուս և Փանոսյանի Սանուց ապագա ուխտն իր առաջին շունչն ու նանանը ի Ձենչ ընդունի պիտի— Ա. Լուսինյանը Նուպար Շահնազարյան վարժարանի սան էր, իսկ Ա. Վարդանյանը սովորել է Փանոսյանի հիմնած Ազապյան իգական վարժարանում:

4) Շահնազարս շափ պարտիս սիրել զՓանոսյան— Կարապետ Շահնազարյանը 1000 ոսկի էր կտակել վարժարան հիմնելու համար, որին հետագայում Նուպար փաշան ավելացրեց 3000 ոսկի և հնարավոր եղավ բացել Շահնազարյանի երկրորդական վարժարանը: Իսկ Կ. Փանոսյանը Սամաթիայում հիմնել էր Ազապյան աղջկանց վարժարանը:

5) Հոգ շէ, նա զիս ալ նախատեց— Խոսքը իր հոգվածների առթիվ Կ. Փանոսյանի տպագրած պատասխանների մասին է:

6) Պ ա ո ա կ ո ո ս մ ի— Նկատի ունի իր «Պառակտում մը» հոդվածը:

7) ...ն ու ր ա յ ր ի և Ա ր մ Ե ն ա կ ի վ ր Ե ծ ն...— Ա կ ն ար կ ր վ Ե ր ար Ե ր ու մ է ա յ ր կ Ե ղ ծ ան ու ն ն Ե ր ու վ հ ր ա պ ար ա կ ա ծ հ ող վ ա ծ ն Ե ր ի ն :

8) Մ Ե կ Բ ան ի պ ա տ ա ո թ յ ի ք Ե ր ու վ ր ա ա ր ց ու ն Բ ու տ ա ղ Ե ր գ ր Ե ր Ե մ — Խ ո ս ք ր Դ ու ր յ ա ն ի տ ա ղ Ե ր ի մ ա ս ի ն է, որ ու ն ք ն ա պ ա տ ր ա ս տ Ե կ է ր տ պ ա գ ր ու Բ յ ա ն :

9) Ա ր գ յ ու Բ Զ ար դ ար յ ա ն ի հ Ե տ յ ո ս Ե ց ա ր վ Ե ր ջ ի հ և ղ ի ն ա կ ա ծ գ ու ծ ու յ ս տ պ ա գ ր ու ր յ ա ն հ ա մ ա ր — Գ. Զ ար դ ար յ ա ն ր 1870-ին ր ա ց է ր ար Ե կ տ պ ար ա ն, կ ա Վ մ ա տ ու ն : « Վ Ե ր ջ ի հ Ե ղ ի ն ա կ ա ծ » գ ու ծ Ե ր « Բ ա տ ր ո ն կ ա մ Բ ջ Վ ա ո ն Ե ր » Բ ա տ Ե ր ա Բ ա ղ ն է : Բ. է ք ս Ե ր ճ յ ա ն ր կ ց Ե կ է ր ն ա և Հ ո վ ս Ե կ ի Գ ա վ ա Ֆ յ ա ն ի ա ն ու ն ր, որ ի ն ք ն ար ր ու մ և ը ն դ օ ր ի ն ա կ ու Բ յ յ ու ն ու մ շ կ ա : Դ ր ա պ ա տ ճ ա ու ր ր ա ց ա տ ր և կ է Ա. Գ ա լ ա յ ճ յ ա ն ր. « է ք ս Ե ր ճ յ ա ն ի գ ր ք ի հ ր ա տ ար ա կ ի շ ն է ր Գ ա վ ա Ֆ յ ա ն (ա պ ա Պ. Պ ա լ ի ն ց) գ ր ա տ ու ն ր » (ն, է ջ 6) :

10) Մ ա ն վ ա ն ս պ ա ն ղ մ ' Ե ն. կ ' Ե ր ք ա մ ա ո ա ջ ի կ տ ր ջ ի մ. — Ս ր ա ն ք, ի ն շ պ Ե ս Ե շ Ե կ է Ա. Գ ա լ ա յ ճ յ ա ն ր, վ ր ի պ ա կ ն Ե ր Ե ն, պ Ե տ ք է լ ի ն ի « ս պ ա ն ղ մ ' Ե մ » և « կ տ ր ի շ ի ն » : Մ Ե ն ք շ Ե ն ք ու ղ ղ ու մ, որ ո վ հ Ե տ և գ ր ա ն ք, ի ն շ պ Ե ս և մ յ ու ս « գ ար տ ու ղ ու Բ յ յ ու ն Ե ր ր Ե », Դ ու ր յ ա ն ի հ ող Ե վ ի ճ ա կ ի ար տ ա հ ա յ տ ու Բ յ յ ու ն Ե ր ն Ե ն : Ի դ Ե կ, Մ. Բ Ե ո լ յ ա ն ր « կ տ ր ի շ ի » ր ա ո ի ա ո թ ի վ ն կ ա տ Ե կ է. « Ա յ ս ր ա ու ր գ ր ա շ ար ա կ ա ն վ ր Ե կ ու վ մ ր ա ղ ա վ ա ղ վ ա ծ է, կ Ե ն Բ ա ղ ր Ե ն ք : Բ ա ղ մ ա թ ի վ հ ր ա տ ար ա կ ու Բ յ յ ու ն Ե ր ու մ Ե ք ն ու յ ն ձ և ո վ կ Ե ր Ե կ ի : Հ ն ար ա վ ու ր ու Բ յ յ ու ն շ ու ն Ե ց ա ն ք ճ շ տ Ե կ ու « Ա ր ար ջ ի » պ ի տ ի ր լ լ ա (« Դ ար մ ր գ ր ա կ ա ն ու Բ յ յ ու ն, (1850—1950), Գ ա հ ի ր Ե, 1955, է ջ 184) :

11) ...ղ ա գ ա ղ ի ո վ ր ա Ե ր կ ա յ յ ո ս ու Բ — Ա. Հ ո ս ի ն յ ա ն ր ն ու յ ն պ Ե ս դ ա մ ք ա ն ա կ ա ն է ար տ ա ս ա ն Ե կ Դ ու ր յ ա ն ի մ ա հ վ ա ն ա ո թ ի վ :

12) ...ն Ե ր ա ի մ հ ա ր գ ա ն ա ց հ ու ս կ ո ղ ղ ու յ ն Ե — Խ ո ս ք ր Ա. Վ ար դ ա ն յ ա ն ի մ ա ս ի ն է :

Գ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն

(է ջ 191)

Ի ն ք ն ա գ ր ի ս և կ ա գ ր ու Բ յ յ ու ն ր պ ա հ վ ու մ է Ե ր ո ս ա ղ Ե մ ի պ ա տ ր ի ար ք ք ար ա ն ու մ, ի ս կ ը ն դ օ ր ի ն ա կ ու Բ յ յ ու ն ր (ա ո ս ա ն ձ ի ն Բ ղ Բ ի վ ր ա)՝ Գ Ա Բ-ի Ա. Զ ո պ ա ն յ ա ն ի ֆ ո ն ղ ու մ :

Առաջին անգամ տպագրվել է 1893-ի ժողովածուում, ապա զետեղվել 1918, 1940, 1945, 1947, 1956, 1959 և 1968-ի հրատարակություններում:

Ա. Զոպանյանը դամբանականի գրույթյան հանգամանքների մասին պատմում է. «Դուրյան, որ Լուսֆյանի թաղման օրը որոշած էր դամբանական մը կարդալ անոր զերեզմանին վրա, նույն օրն իսկ սրճարան մը կմտնե, թուղթ գրիչ կուզե և քանի մը վայրկյանն կգրե...» («Դուրյանի կյանքը...», էջ 201): Իսկ Բ. Էքսերճյանը ասում է, որ Դուրյանը դամբանականը «գրելու ու կարդալու արիտթյունը շունենար ի սկզբան, հետո զիջանելով այլոց խնդրվածին, մատիտով ի գիր կառնու ճամբուն վրա ափ յափո...» («Ընդարձակ կինսագրություն...», էջ 83): Կենսագիրը հայտնում է նաև, որ դամբանականը գտնվել է Ղովհ. Ծանֆեսճյանի մոտ, իսկ մի օրինակը հանձնել է Վարդան Լուսֆյանի եղբորը՝ Տաճատին: Ա. Զոպանյանի մոտ եղած ընդօրինակությունը, հավանաբար, կատարված է Ծանֆեսճյանի օրինակից:

ՏԹՆԴ-ում խորագրված է. «Դամբանական ի մահ Վարդան Լուսֆյանի», նշված է գրույթյան թվականը («1871 Մայիս 21, Սկյուտար»): Ինքնագիրն անվերնագիր է և անթվակիր: Ընդօրինակությունը ևս թվական չունի, իսկ «Դամբանական Վ. Լուսֆյանի» խորագիրն առնված է փակագծերում, որ ցույց է տալիս, թե օրինակողինն է:

Տպագիր տեքստում գրաքննական և այլ նկատառումներով էքսերճյանը կատարել է խմբագրումներ:

Տպագրվում է ըստ Երուսաղեմի հրատարակության (Ն):

Ընդօրինակության մեջ առաջին նախադասության «հատաշանքներ» բառից հետո կան «և պատկանելի քահանայից աղոթքը» բառերը, որոնք չենված են: Վ. Լուսֆյանը հաղորդություն չէր ընդունել, այնպես որ հագիվ թե քահանաները մասնակցեին նրա հուղարկավորությանն ու աղոթեին:

ՏԵՔՍՏԱՑԻՆ ԱՅՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԹՆԴ

1 Սլուակից: 2 կեցեք: 3 տխուր: 5 սիրելի: 6 գործեմք: 7 կուլամք: 8 վշտալից: 9 անդունդի [մը]: 10 բով մ'է: 11 կենացը: 12 [միշտ] երկնից: 13 մը ունիմք: 14 բարեշրջում: 15 [և] երբ: 16 գրիչը: 17 քրտամբ: 18 կտակն:

19 [իր] հիշատակը: 20 (բացակայում է): 21 բռին: 23 թե: 24 մարդոցմե: 25 սա: 26 չի: 27 ալ: 28 սա: 29—30 (բացակայում են):

Ընդօրինակություն

4 կենդանացնել: 5 սիրելի: 15 [և] երբ: 16 զենքը: 22 [մեր] սիրելվույն:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

<Կենսագրություն>

(էջ 195)

Առաջին անգամ տպագրվել է «Օրագիր ծիւն Ավարսյրվո» թերթի 1869-ի հոկտեմբերի 6-ի թիվ 24-ում՝ «Ձոն Առ Հայրիկն Խրիմյան Ազգասեր Նորընտիր պատ.[րիարքն] Կ. Պոլսո» («Ի Պատրիարքական Ընտրություն Ամեն. Հայրիկին») բանաստեղծության վրիպակների առթիվ Պ. Դուրյանի հրատարակած նամակից հետո: Երկրորդ անգամ մեր առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվել է «Դրական թերթ»-ում (1968, № 9):

Տպագրվում է ըստ «Օրագիր...»-ի տեքստի (մ):

էքսերճյանը նկատում է, որ «խմբագրական ձևով» այս կենսագրական ծանոթությունը, ըստ Ե. Դուրյանի, «հավանականաբար» գրել է Պետրոս Դուրյանը («Ընդարձակ կենսագրություն...», էջ 61): Այնուհետև «նույն ծանոթությունից» բերելով մի հատված, նա որոշակիորեն պնդում է. «Այս խոսքերն աներկրայապես Դուրյանին են, զոր կրկնած է քանիցս յուր նամակներուն մեջ ալ» (նույն տեղում, էջ 64):

Ա. Զոպանյանը իր ուսումնասիրությունում թեև այդ կենսագրական ծանոթության մասին որևէ ակնարկ չի անում, սակայն նրա աշխատության մեջ նույնպես գտնում ենք էքսերճյանի մեջբերած տողերը, որոնք նա անվերապահորեն վերագրում է Պ. Դուրյանին («Դուրյանի կյանքը...», էջ 33):

Արդյոք այս կենսագրության հեղինակը Պ. Դուրյանն է:

Իսկապես, ծանոթության եզրափակիչ մասում արտահայտված մտքերին մենք հանդիպում ենք Խորեն Նարպեյիսի՝ Դուրյանի գրած 1871-ի հունվարի 22-ի նամակում, իսկ «աղքատ ծնողացը բնո ըլլալուն» արտահայտությունը

դրեթե՛ք, բառացի առկա է Տիգրան Ադամյանին ուղղված 1871-ի փետրվարի 5-ի նամակում («Առայժմ այնչափ չ'եմ ցավիր իմ վիճակիս և հուսահատ ապագայիս վրա որչափ առաջ. ալ ոչինչ փուլթս չէ, միմիայն ընտանյացս բնւ շըլլալ...»): Եթե Դուրյանն էր այդ կենսագրութեան հեղինակը, ապա պատշաճ չէր լինի առաջին դեմքով շարագրել, քանի որ նրա նպատակը, ինչպես տեսնում է ընթերցողը, գրողին «հրապարակի ծառայութեան մտքընելն» էր՝ աշխատանք գտնելու: Բավարա՞ր են այս ամենը, ինչպես և Եղիշե Դուրյանի վկայութիւնը այդ կենսագրութիւնը բանաստեղծի հեղինակութիւնը համարելու, դժվար է ասել: Անկախ այն բանից, թե ո՞վ է գրել այդ ծանոթութիւնը (Դուրյանը կամ խմբագրութեան աշխատողներից որևէ մեկը), դրա արժեքը կարևոր է, քանի որ Դուրյանի առաջին կենսագրութիւնն է:

1) ...16—18 տարեկան երիտասարդ մ'է— Ա. Չոպանյանը Պ. Դուրյանի ծննդյան թվականն է համարում 1851-ը, իսկ Բ. էքսերճյանը և ուսումնասիրողների մեծ մասը՝ 1852-ը: Իրավացի է Չոպանյանը: Պ. Դուրյանի ծննդյան 100-ամյակի առթիվ Ստամբուլում կազմված հանձնախումբը ստուգելով Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցու տոմարները, պարզել է, որ գրողը «ծնած է 1851 մայիս 20ին և մկրտված մայիսի 25-ին» (Տե՛ս «Ճառագայթ» շաբաթաթիրթի, Իսթանպուլ, 1951, թիվ 210, էջ 4, ինչպես նաև «Դուրյանի կյանքը...» աշխատության ծանոթագրութիւնը, էջ 231: Մկրտութեան վկայականի պատճենը նույնպես պահվում է ԳԱԹ-ում):

2) ...Եճի մանալլեի վարժարան— Ենի մահալլեի վարժարանը առավել հայտնի է Սկյուտարի ճեմարան անվամբ, որ հիմնվել է 1838-ին Կարապետ Պալյանի և Հովհաննես ամիրանների ջանքերով:

3) ...3—4 տուրի առաջ վարժարանն էլած...— Բանաստեղծի ծնողները կարիքից դրդված իրենց որդուն Սկյուտարի ճեմարանից հանել են 1866-ին և աշխատանքի տեղավորել մի ղեղազործի մոտ: Սակայն Պ. Դուրյանը շուտով հաճախել է վարժարան, որ ավարտել է 1867-ին («Դուրյանի կյանքը...», էջ 31):

4) ...սարաֆի մը Բով— Սարաֆը (սևղանավորը) Մարտիկ աղան էր («Դուրյանի կյանքը...», էջ 31):

5) ...մտտես ուրիշ մ'ալ կը հեղինակե— Խոսքը հավանաբար «Ասպատակութիւնք Պարսկաց ի Հայս կամ Ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց» թատրերգութեան մասին է:

6) ...առաջինը միայն ներկայացված է անցյալ տարի Կետիկ Բաշայի քատրոնը...— Մինչև այժմ հայտնի էր, որ «Վարդ և Շուշան»-ը առաջին անգամ բեմադրվել է 1869-ի փետրվարի 22-ին: «Կետիկ Բաշայի թատրոնը» Ն. Վարդուլյանի տնօրինությամբ գործող «Թատրոն օսմանիս»-ն է, որ գործել է սկսել 1868-ից:

7) Հայրը— Պ. Դուրյանի հայրը Աբրահամ Զրմպայանն էր:

8) Եղբայրը— Պ. Դուրյանի եղբայրն էր Հարություն Դուրյանը:

9) Մ ա ն գ ու մ ե ... Մ ե ն մ ու ա — Կ. Պոլսի հայատառ տաճկացու բերթեր: («Մանգումեի էֆքյար»-ի մասին տե՛ս «Բանասիրական» հոդվածը ծանոթագրություններում): «Մեճմուայր հավատիս»-ի խմբագիրն էր Ն. Վարդանյանը, լույս է տեսել 1852-ից:

10) ...հրապարակի ծառայության մտցնելու կարող ազգայինք— Խորեն Գալֆայանի և Սոփոն Պեզիրճյանի միջնորդությամբ Պ. Դուրյանը դառնում է Որդիկ բեյի որդու՝ Սիրուն Քեմահճյանի քերականության ուսուցիչը, միաժամանակ կատարելով մեքենագիտական թարգմանություններ:

< Պատահիկներ >

Այլևայլ առիթներով ասվել է, որ Դուրյանի ժառանգության մի զգալի մասը ինչ-ինչ պատճառներով չի տպագրվել: Ներկա հրատարակության մեջ փորձ է արվում ներկայացնել Դուրյանի տաղերից պահպանված պատահիկները, որոնք օգտագործել են ուսումնասիրողները:

1. ՊԻՏԻ ՄԵՌՆԻՄ ԵՍ

(էջ 197)

«Շինեմք մեր գերեզմանատունը կամ գերեզմանք» գրքույկում (Կ. Պոլիս, 1885) Բ. էքսերճյանը գրել է. «Երջանկահիշատակ Պ. Դուրյանի անտիպ գործոց մեջ կա «Պիտի մեռնիմ ես» վերնագրով խիստ սրտահույզ մի տաղ» (էջ 12, ժ.): Երկրորդ անգամ էքսերճյանը այդ բանաստեղծության մասին իրոտում է «Ընդարձակ կենսագրություն...»-ում, բերելով միայն վեց տող (էջ 100—101): Ըստ կենսագրի՝ «Տիկին Զապել Տոնելյան (Սիպիլը— Ա. Շ.)

ունեցած է այդ երգը»։ «Այդ երգին միայն մեկ քանի տողերը կրցած են ձեռք բերել, զոր լսած են իր ընկերներեն Սիմոն էֆենտիե»,— ավելացնում է նա։ Ա. Չոպանյանը ևս հաստատում է, որ ինքը Չ. Տոնելյանի մոտ գտել է այդ երգի մեկ մասը և բերում է հիշյալ 6 տողը միայն («Դուրյանի կյանքը...», էջ 72)։

Ա. Չոպանյանի արխիվում ինչ-որ մեկի ձեռագրով մաքրագրված են տողերը, որոնք լիովին համապատասխանում են նրա գրքում տպագրած ստին։

Բ. էքսերճյանի գրքում առաջին երկտողը Ա. Չոպանյանի հրատարակած երկրորդ երկտողին է համապատասխանում։ Հենվել ենք Չոպանյանի տեքստի վրա, քանի որ էքսերճյանը հիշողությամբ է գրել։

2. * * *

Առաջին անգամ տպագրվել է Բ. էքսերճյանի «Ընդարձակ կենսագրություն...»-ում (էջ 101), ապա Ա. Չոպանյանի ուսումնասիրությունում («Դուրյանի կյանքը...», էջ 71)։

Բ. էքսերճյանը վկայում է. «...Հովհ. Ճանֆեճյան կըսե, թե ուրիշ երգ մ'ալ («Պիտի մեռնիմ ես»-ից բացի— Ա. Շ.) ուներ նա (Դուրյանը— Ա. Շ.), որուն տխուր եղանակ մը հարմարցուցած էր և կերպեր 1871-ին ամեն անգամ, որ զիս կամ ուրիշ բարեկամ մը կը տեսնեի։ Այդ երգին երկու տողն միայն կը հիշե (Ճանֆեճյանը— Ա. Շ.)» («Ընդարձակ կենսագրություն...», էջ 101)։ Նույնն է գրում նաև Ա. Չոպանյանը։

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ավագադրյուր— գյուղ Մուշից երկու և կես ժամվա հեռավորության վրա, ենթարկվել է թուրքերի և քրդերի հարստահարություններին:

Ավարայր— Գյուղ Արտազ գավառում, Մակուից հարավ, որտեղ 451 թ. մայիսի 26-ին հայոց զորքերը Վարդան Մամիկոնյանի ղեկավարությամբ հերոսամարտի բռնվեցին պարսիկների հետ:

Արտազ— Վասպուրականի հին գավառներից:

Կեքսեմանի— Գյուղ Երուսաղեմի մոտակայքում, որտեղ ըստ ավանդության Հուդան մատնեց Հիսուսին:

Գողգոթա— Բլուր Երուսաղեմի մոտակայքում, որի վրա ի կատար էին ածվում հին Հրեաստանի մահապատիժները: Ըստ ավանդության Քրիստոսը նույնպես խաչվել է Գողգոթայի վրա:

Գուգլունեուֆ— Կ. Պոլսի թաղերից, հյուսիսից սահմանակից էր Սկյուտարին, ենթ մաեալե (Նոր թաղ)— Կ. Պոլսի Սկյուտար արվարձանի երեք թաղերից մեկը, Գ. Գուրյանի ծննդավայրը:

Կետիկ Բաշա (Կետիկ Փաշա)— Կ. Պոլսի թաղերից:

Մոտա (Մոտա Պուռնու)— Կ. Պոլսի Գատը գյուղ թաղի գլխավոր փողոցը, ծովահայաց զրոսարան:

Մուշ— Հայոց դավառ՝ համանուն քաղաքով, Արևելյան Տավրոս և Բյուրակն լեռնաշղթաների միջև:

Չամլըճա— Կ. Պոլսի Սկյուտար արվարձանի ամենաբարձր բլուրը, գեղեցկանիստ զրոսարան:

Պաղլար-պաշի— Զրոսավայր Կ. Պոլսի Սկյուտար թաղում:

Պեյ Գուգ (Պեյքոգ)— Կ. Պոլսի թաղերից, որտեղ հայերը նշում էին Սահմանադրության հանդեսները:

Պորտո (Բորդո)— Քաղաք Ֆրանսիայի հարավ-արևմուտքում, խոշոր նավահանգիստ:

Սամաթիա— Կ. Պոլսի աշխատավորական թաղամասը:

Սթամպոլ— Կ. Պոլսի եվրոպական արվարձաններից, ընկած է Վոսփորի երկու ափերին:

Սկյուտաբ— Կ. Պոլսի ասիական արվարձանը, ուներ երեք թաղ՝ Սելամիե (Սելամսրզ), Ծնի մահալե (Նոր թաղ) և Իճատիե:

Վոտիլիան— Հոռմի պապի աթոռանիստը:

Վոսիոր— Սև և Մարմարա ծովերը կապող նեղուց:

Տիգրիս— Գետ, սկսվում է Հայկական Տավրոսից և միանում Եփրատին:

Տղմուս— Գետ Արտազ գավառում, որ անում է Ավարայրի դաշտավայրով:

Փրբագյուղ— (Միջագյուղ)— Կ. Պոլսի թաղերից՝ Վոսփորի եվրոպական ափին:

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

- Աղամյան Տիգրան** (? —1908)— Պ. Դուրյանի աշակերտական ընկերության տաղանդավոր թուրքական գավառական թերթերի խմբագիր ու թարգմանիչ, ավելի ուշ «Ճերիտեի հավաստի» հայատառ թուրքերեն թերթի խմբագիր:
- Արտաշես Աշխարհակալ (Առաջին)**— Հայ նշանավոր թագավոր (մ. թ. ա. 189—160), հայկական հողերի վերամիավորողն ու Արտաշեսյան հարստության հիմնադիրը:
- Բաղդատունի Արսեն** (1790—1866)— Հայ կլասիցիզմի խոշորագույն ներկայացուցիչ, բանաստեղծ, ողբերգակ և թարգմանիչ:
- Գալեմեյան Տիգրան** (? —1920)— հուշարար և թատերագույն:
- Գալաֆյան Խորեն** (1831/32—1892)— Հայտնի էր Նարայեյ և այլ կեղծանուններով: Հոգևորական գործիչ, եղի է Փարիզի Հայկազյան վարժարանի ուսուցիչ, Թեոդոսիայի Խալիբյան դպրոցի դաստիարակ, 1864-ից հաստատվել է Կ. Պոլսում, դարձել Բերայի քարոզիչ և նույն թաղի դպրոցների վերատեսուչ, 1876-ին ընտրվել է կրոնական ժողովի ատենապետ, 1867-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1873-ին՝ արքեպիսկոպոս:
- Դուրյան Հարություն** (1848—1873)— Պ. Դուրյանի ավագ եղբայրը և աշակերտակիցը, թրքագետ: Որպես թարգմանիչ աշխատել է «Մանգոմեի Լֆթյար» և «Մեհմուդյալ ախպար» հայատառ տաճկերեն թերթերի խմբագրություններում:
- Զարդարյան Դեռզ** (1834—1888)— Տպագրիչ ու տպարանատեր, 1870-ին բացել է տպարան և կազմատուն:
- Իզմիրլյան Մաթթոս** (1845—1910)— Ուսուցիչ, ապա սարկավագ (1864), վարդապետ, ծայրագույն վարդապետ, Սկյուտաքի քարոզիչ (1873),

Եպիսկոպոս (1876), պատրիարքական փոխանորդ (1879), Եզիպտոսի վիճակի առաջնորդ (1894), Կ. Պոլսի պատրիարք (1894): 1896-ին արտրվեց Կ. Պոլսից, վերադարձավ 1908-ին և ընտրվեց նախ Կ. Պոլսի պատրիարք, ապա Ամենայն Հայոց կաթողիկոս:

Լամարքին Ալֆոնս (1791—1869)— Ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ, պատմաբան ու քաղաքական գործիչ:

Լույսփյան Վարդան Թադևոսի (1851—1871)— Պ. Դուրյանի մտերիմ ընկերը, արքունի բժշկական դպրոցի ուսանող, բանաստեղծ, թատերագույն և թարգմանիչ:

Լուսինյան Արմեն (Առաքել) — Առաքել Նուպար Շահնազարյան երկրորդական վարժարանի սան, բանաստեղծ, հրապարակախոս և թարգմանիչ, Դուրյանի մտերիմներից, որի հետ ծանոթացել է 1871-ի մայիսին:

Խոնասարյան Օդեսն (1838—1878)— Օրենսգետ, հրապարակախոս և խումբագիր:

Խորմյուն Մկրտիչ (1820—1907)— Նախ ուսուցիչ, ապա վարդապետ, եպիսկոպոս, 1869—73 թթ. եղել է Կ. Պոլսի պատրիարք, Բեռլինի վեհաժողովի (1878) պատվիրակ, Վանի առաջնորդ, 1892-ից Ամենայն Հայոց կաթողիկոս: Ունի գեղարվեստական գործեր: Վայելել է լայն ժողովրդականություն, որի համար և ստացել է «Հայրիկ» անվանումը:

Կամպեքքա (Փամբետա) Լեոն Միշել (1838—1882)— Ֆրանսիայի պետական ու քաղաքական նշանավոր գործիչ, ներքին գործերի մինիստր (1870—71), դեպուտատների պալատի նախագահ (1879—81), պրեմիեր մինիստր և արտաքին գործերի մինիստր (1881—82):

Հարություն — Տե՛ս Դուրյան Հարություն:

Հյուկո Վիկթոր Մարի (1802—1885)— Ֆրանսիացի հանճարեղ գրող, ակադեմիայի անդամ:

Հուդա — Քրիստոսի 12 առաքյալներից (աշակերտներից) մեկը, ուսուցչին մատնեց 30 արծաթի համար:

Ղևոնդ — Երեց, որ 449 թ. գլխավորեց շինականներին՝ Անգղ գյուղում կոտորելու պարսիկ մոգերին, Վարդանանց պատերազմի հերոս:

Ճանֆեսեյան Հովհաննես — Պ. Դուրյանի ազգականն ու մտերիմ ընկերը, եղել է Սկյուտարի (Ենի-մահալե) Աղքատասիրաց ընկերության անդամ:

ներից մեկը, հետագայում զբաղվել է աստրական գործունեությամբ։
Մահացել է մեր դարի 20-ական թվականներին։

Նաւաբէյ — Տե՛ս Գալֆայան Խորեն։

Շահնազար (յան) Կարապետ (? — 1865) — Վարդապետ, որի մահից հետո Առաքել Նուպար փաշան նրա կտակած 1000 ոսկի գումարին ավելացնելով ևս 3000 ոսկի՝ 1866-ին Խասգյուղ թաղամասում հիմնեց Առաքել Նուպար-Շահնազարյան եկրորդական վարժարանը։ Այս վարժարանը իր գոյութունը պահպանել է մինչև 1875 կամ 1876 թ., իսկ 1869—71 թթ. ունեցել է նաև տպարան։

Չոպան (յան) Փետրզ — Մի շարք բարեգործական ու մշակութային ընկերությունների անդամ, կազմակերպել է հանգանակություններ՝ աշակերտներին գրքերով ու գրենական պիտույքներով բավարարելու համար։

Պող (լ) իկյան Մարտիկ (ն) — Պ. Դուրյանի աշակերտական ընկերը, հետագայում նախ ուսուցիչ, ապա ժխախտտի ֆրանսիական մաքսային ընկերության Սերաստիայի բաժանմունքի տնօրեն։

Սետեֆեյան Ռոմանոս (1837—1905) — Դերասան, հուշարար ու թատերբազմի վասակ Սյունի — Հայ մարզպան, վճռական պահին դավաճանեց հայերին, և 451 թ. ազգային-ազատագրական պատերազմի ժամանակ անցավ պարսիկների կողմը։

Վարդանյան Աղավնի (? — 1930) — Կ. Պոլսի Ազապյան վարժարանի ազատախոհ աշակերտուհի, ավելի ուշ ամուսնացել է Արմեն Լուսինյանի հետ, դարձել հնչակյան գործիչ, հայտնի էր Մայր Արաքսի անունով։

Վարդան Մամիկոնյան — Հայոց սպարապետ, 451 թվականի ազատագրական պատերազմի ղեկավարը։

Վարդովյան Հսկոբ (1835—1898) — Դերասան, ուսուցիչ, «Քատրոն օսմանիկ»-ի ղեկավարը։

Փանույան Կարապետ (1826—1905) — Հրապարակախոս, մանկավարժ, մի շարք հայատառ թուրքերեն թերթերի խմբագիր։

Քյաթիպյան Հովնանենս (? — 1882) — Իժիշկ և հասարակական գործիչ, ուսանել է Փարիզում, 1862-ից վերադարձել է Կ. Պոլիս, սպանվել է թուրքական վարձկանների կողմից։

Ալի— 1. Ալիք, կոհակ 2. սպի-
տակած մազեր
Ակնախտիդ— աչքը խտտացնող,
շլացնող
Աղբերք— աղբյուրներ
Աղբեկ— ալեխառն
Աղիոք— աղիքներով, լարերով
Անդեն— իսկույն, անմիջապես
Անդուրած— խաղաղեցրած, հան-
ցրտացրած
Անդախին— հենց սկզբից
Անդր քան— ավելի քան, ի վեր
Անդրանկություն— առաջնություն
Անդրիանդի— արձան, անդրի
Անհուն եմ— հնար չունեմ
Անձկանոք, անձկավ— կարոտով,
տենչանքով, փափազով
Անձնահորդոր— ինքնակամ
Անշուշտ եմ— չեմ կասկածում,
տարակույս չունեմ
Անուր— նուրբ
Անպարտ— անմեղ
Անտի— այն
Ապաքեն— արդարև, անշուշտ,
ո՞չ ապաքեն— չէ՞ որ
Առընթարակցել— ներկա գտնվել
Առթել— առիթ դառնալ, պատճա-
ռել

Առ (ե) լի— լեցուն
Աստ— այստեղ, յաստիս— այս
աշխարհում
Աստանուր— ահա այստեղ
Աստղալույց— աստղավառ
Արատել— արատավորել
Արի՛ք— վեր կացեք, եկե՛ք
Արտալած— հալածված
Արտասվաբուրմ— արցունքով
թրջված
Արտասուր— արցունք
Բարե— զարմանքի կամ սրան-
շացման բացականչություն
Բազմաստեղեյան— ճյուղավոր-
ված
Բալ— մառախուղ, մեզ
Բարդ (բարդել, բարդիլ) — դեզ,
դիզել, կուտակել
Բարձել— վերցնել
Բնդորել— խառնել
Բրցել (փրցել) — պոկել
Փահոս (ային) — քառս (ային)
Փաղջ— եղկամեղկ, տաք ու սառի
միջև
Փանել— զզվել, գարշել, նողկալ
Փանշուս— զոշուս
Փել— ոլորված, պրկված
Փեղ— գեղեցկություն

Գիրգ— փափուկ, նուրբ, քնքուշ
Գմբեքարդ— գմբեթի նման, գրմ-
բեթաձև
Գոգ— 1. ծոց, գիրկ, 2. գուցե
Գոգած— կորացած
Գոլ— լինել
Գրզլյակ— ցնցոտի, քրթրված հա-
գուստ
Գուլ— բուխ, ոչ սուր
Դալարիֆ— կանաչ խոտ
Դմնիկ— փուշ
Դուլզե— քիշ, փոթր ինչ
Երկընկեց— երկնքից ընկած, իջած
Զգոն— հեզորեն, խոհեմաբար
Զեղուլ— լիթը լցվել, գլխեկցնել,
թափվել, դիզվել
Զլարել— շարանալ
Զվարթուն— հրեշտակ
Էն— ամենից
Է՛ր— ինչո՞ւ
Ընդնշմարել— հազիվ նշմարել
Ընկուզամեծ— ընկղմվելու, խո-
րասուզվելու մոտ
Է՛— թե, եթե
Էալանալ— ուշաթափվել, նվազել,
բալկացում— ուշաթափում
Թալկանար— դալկահար, գունաու-
ր ինչ— (ի քնդթ, քնդել) — թըն-
դյուն, թունդ ելած, թնդացնել
Թոթվել— թափ տալ, թոթափել
Թոշուն (ած.) — թոշոդ
Թրթոակ— թրթոացող, դողացող
Փահահոտ— գարշահոտ

Փպիրն— լիրբ, անամթ, ժպրնիլ—
համարձակվել, հանդգնել
Իցի՛վ րե— երանլի՛ թե, ո՛ւր էր
թե
Լեուլ— լցնել
Լուայ— լսեցի
Լուծանել— խզել, ցրել
Լույծ— ծորուն
«Լուսարան» — լույսի ընդունա-
րան, աչք
Լուսինյակ— սոխակ
Խայտալ— ցնծալ
Խարշափել— խշրտալ, սոսափել,
խշխշալ
Խլրտել— հուզվել, շարժվել
Խնծիդ— ցնծություն, ուրախու-
թյուն, յսնծալ— ցնծալ, ուրա-
խանալ
Խըրտուֆ— մեղմ ձայն
Խոկ (աւմ) խոկուլ— խոհ, մտա-
ծություն, խորհել
Խոնջ (լալ) — հոգւած
Խուշ— փուշ, սրածայր փայտ, ար-
գելք
Խորդ— կոկ, լավ
Խորշյուն— խշրտոց
Խուսլս— ուրախ
Խուտիլ— ցնցվել
Խուսել— խուսափել, խույս տալ,
հեռանալ
Մյուրիլ— հյուծվել, մաշվել
Մուլֆ— ծոպեր, փնջածև թելեր
Մոր— աղտոտ

Կագ— լուսավորութեան գազե
հրազ
Կաղամար— թանաքաման
Կայրել— ցնծութունից ոստոսեել
Կայլակ— կաթիլ
Կանուխ (կեկ)— վաղ, վաղուց
Կառալի— գլուխ
Կարգալ— կոշիկ, ձայնել, հրավի-
րել
Կարի— շատ ավելի
Կեդրոնականութուն— կենտրոնա-
ցում
Կեցե՛ք— սպասեցե՛ք
Կրոտիլ— տկարանալ, ուժասպառ
լինել
Կիր (կրից)— կիրք, կրքերի
Կլլել— կուլ տալ
Կյա՛ց— ապրի՛
Կնճիռ— դամ, խարդավանք
Կրանիտ— գրանիտ
Կրեա— կրիա
Համայր— երկարատև, երկար
ժամանակ
Համբուն— համակ, ամբողջովին,
ի սպառ
Համր— դանդաղ
Հայել— նայել
Հայեցի— հայկական
Հայեցված— հայացք, նայվածք
Հայկազն— Հայկի ցեղից
Հայկաբան— հայաբնակ
Հանգուլն— նման, իբրև
Հաջաղ— երեսի քող, հաջաղը վա-

ռն— ազնիվ զարդարուն կտո-
րով քող
Հավելուլ— ավելացնել, հավելուն—
ավելացրած
Հափրեցնել— հագնելուց ձանձ-
րացնել
Հեզ— թշվառ, խեղճ, տառապյալ,
հիփօփ— հեզերով, հիփիս— հե-
զիս, թշվառիս
Հեծել— հառաչել
Հեկեկ— հեկեկանք, հեկեկոց
Հեղել— թափել, հեղուլ— թափի
Հեղձել— խեղդել
Հենուլ— հենվել, հենուլ— հենվի
Հեշտ, հեշտիկ— հեշտալի, ախոր-
ժելի, դուրեկան, հաճելի
Հեշտին— հեշտութեամբ, դուրի-
նութեամբ
Հեշտյավ— հեշտանքով
Հեռ— նախանձ, հակառակութուն
Հետ— հետք
Հիմեյան— հարսնական
Հծծել— շնչալ, փսփսալ
Հնչակ— զանգ, զանգակ
Հողել— կապել, շաղկապել
Հունկե— այնտեղից
Հոպուպփ— խոպուպիկներ, զանգուր
մազեր
Հովանոցակ— փոքր հովանոց,
ճյուղերից հյուսած ծածկ՝ արևից
պաշտպանվելու համար
Հովել— հով փշել, զովացնել
Հրատ— կրակե, հրաբորբոք

Հրատարակել — հռչակել, հայտա-
րարել
Հույլ — 1. խումբ (աստղերի) 2.
փունջ (մազերի)
Հուշ ածել — մտարեբերել, հիշել
Հուսկ — վերջին, ամենավերջին
Զմբահուսկ — ձմռանը մոտ, ձմեռ-
նամուտ
Զլուեարքուրմի — ձյան գույնի, ճեր-
մակ
Զործ — հագուստ
Ճարակել — տարածել, սփռել, ծա-
վալել
Ճետ (f) — սերունդ (ներ), զա-
վակ (ներ)
Մակաբերել — եզրակացնել, հե-
տևեցնել
Ման բնել — ման գալ, զրոսնել
Մառ — մշուշ
Մատամբ — մատեներով
Մարմանդ — դալարիք, հովասուն
տեղ
Մելան — թանաք
Մերովսանն — մեր կարողացածի
չափ
Մնչել — մեղմ հեծել
Մոլար — մոլորված
Մորշ (գ.) — կանաչ ճյուղ, մորշ
(ած.) — դալար
Մոտել — մոտենալ
Յամայր — տե՛ս Համայր
Յայնժամ — այն ժամանակ
Յայտ — հայտնի կերպով

Յանգեստ — անգիտության. 1ր
Յապայն — ապագայում
Յալէժ — հավերժ
Յէդակարծ — հանկարծակի, ան-
սպասելի
Յօղել — տե՛ս հողել
Նազիլ — սիգալ, պշրել
Նախախայր — առաջին պտուղ
Նե — նա (իզական սեռի համար)
Ներկայել — ներկայացնել
Նժդեն — պանդուխտ
Նկատում — նկատառում
Նշանակ — նշան
Նշույլ — շող, լույսի ճառագայթ,
Նշուկել — նշույլներ արձակել
Նոթի — անոթի, քաղցած
Շաղփաղփուրյուն — շաղակրա-
տանք, կատակարանություն
Շառայլ — ճառագայթ, շող
Շեչ — մարած
Շրշել — շրշուն հանել (շրջա-
զգեստի)
Ոյր — որի
Ոսկերտութի — ոսկորներ
Որջանալ — պտտուլարվել, ապաս-
տան դտնել
Չվառ — թշվառ
Պարածածկել — պահել, թաքցնել
Պարտիլ — պարտավորվել
Պլլել, պլլվիլ — փաթաթվել, փու-
թաթել
Ջամբել — անել, մատակարարել

Ս'—սա. այս
Սաղմենի— հղանալ
Սառ (ն) — սառույց, սառուտ—
սառած, սառցի
Սառնանամուտ— սառած
Սաստ— հրաման, արգելում
Սարավանդ— ցցվածք, դուրս ցրց-
ված մաս
Սարսել— թնդացնել, ցնցել, տա-
պալել
Սեպել— համարել
Սեաղետ— սև տեսնող, սևացնող
Սեաթորմի— սև գույնի
Սիրաբախ— սիրուց բարախող
Սիրակար— սեր կաթող
Սիրահող— սիրով կապված, սըր-
տակից
Սիրասուզ-- սիրով սուզ մտած
Սյավ— սև
Սոնեալ— ստվարանալ, ուռչել
Սրանայ— սլանում է
Ի'— և, ու (շաղկապ)
Վայ— ցավ ու վշտի ճիշ, աղաղակ.
վայել— վայ հանել
Վայրիկ— վայրկյան, պահ
Վանկ— 1. հնչյուն, 2. երգ
Վառ— ալնիվ, զարդարուն քող
Վառդատարփիկ— վարդ տեսչա-
ցող, վարդ ըղձացող
Վետ— մանր ալիք, կոհակ, վետ ի
վետ— ծուփ-ծուփ
Վերավառիլ— նորից վառվել

Վրայոբ.— մասին, վրա (կապ)
Տարադաս— տարբեր կարգի,
տարբեր բնույթի
Տարողնած— ցրված
Տարփ— գոտու վրայի զարդա-
րանք
Յածուն, ցածուն— ցածր, ցածրիկ
Յայգնգիշեր— մինչև լուսարաց
Յողաբոս— ցող հոսող
Յցնել— ցույց տալ
Ուն (ուլան)— վիզ, պարանոց
(վզի, պարանոցի)
Ուղխ— հոսող ջուր, առու, գետ
Ուշ պիտի ըլլամ— պիտի հիշվեմ
Ուշկեկ— մի փոքր ուշ
Փաղփուն— փայլփլող, պսպղուն
Փրիբ (f) — ծաղիկներ, ծաղկունք
Փոխան— փոխարեն
Փրբած— պոկված, բաժանված
Փուլր— շտապով, ոչինչ փուլթս
է— հոգս չէ, պետքս չէ
Քակել— արձակել
Քանիոն— որքա՞ն, որչա՞փ
Քենե— քեզնից
Գերց— բույրերի
Քիրա (frտունեֆ) — քրտինք
Օձտում— անշատում, պառակտում
Օն— հապա
Օվասիս— օվազիս, դալարիք ա-
նապասում
Օրեն— օրենք

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ի ն ս տ ի տ ու տ ի կ ո ղ մ ի ց 5

Տ Ա Ղ Ե Ր

<1864>

1	(«Գարնանային կենացս մեջ»)	.	.	.	11
	1867				
2	Իցի՛վ Թև	.	.	.	13
	1868				
3	Վիշտք Հայուն				15
	1869				
4	Իղձք Առ Հայաստան	.	.	.	18
5	Սիրեցե՛ր Զ՝միմյանս	.	.	.	21
6	Պետք է Մեռնի՛լ	.	.	.	23
7	Ի Պատրիարքական Ընտրություն Ամեն. Հայրիկին	.	.	.	25
8	Ի Դիմավորություն Ամեն. Հայրիկին	.	.	.	28
9	Հայրիկն Հայոց	.	.	.	30
10	Երգ Մարտին Վարդանանց	.	.	.	32
11	Սիրեցի քեզ	.	.	.	33

1870

12	Կույսն Լբյալ	.	.	.	36
13	Նվագ է Տարեդարձի Ազգային Սահմանադրության	.	.	.	38

14 ՆԻ	40
15 Առ Կույսն	41
16 Նայվածք Մը	42
17 Հծծյունք	44
18 Ձոնիկք	46
19 Մանուկն Առ հաշ	47
20 Սիրելի	48
21 Դրժելի	50
22 Լճակ	52
23 Թրքունհին	55
24 Ներա Հետ	57
25 Տրտունչք	60
26 Ձղջում (Օր Մը Վերջը)	63
27 Ձ'նե Պաշտեմ	64
28 Կոկոն-Մաղիկք Կույսին	66
29 Ու՛, Սև՛	68
30 Առ Մայիս	71
31 Մանիշակ	72
32 Իմ Հանգիստը	74
33 Նոր Սև Օրեր <i>հասարակական հարցեր</i>	75
34 Իմ ցավը	78
35 Նվեր Հիշատակի Առ Պ. Հ. Ծանֆեսյան. Հո՛ւշք	ո՞
36 Ի գերեզմանն Ամենասիրելի Վարդան Լուսինյանի. Հեծեծմո՛ւնք	83
37 Իմ Մա՛ւր	86
38 Ի՛նչ Կ'ըսեն	88
39 Ա. («Երեկոյան բալն կը սողար բարդիլ խավ»)	39

Ա Ն Թ Վ Ա Կ Ի Ր Տ Ա Ղ Ե Ր

1) Հայունհին	92
2 («Ահա սրանայ օրն երջանիկ»)	94

Տ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ն Ե Ր

1	Կր Սիրևմ Զքեզ	99
2	(«Աշնան տրժգույն գիշեր մըն էր ձմրահուպ»)	101
3	Մնաս Բարյալ	103

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Խ Ո Ս Ո Ի Ք Ց Ո Ի Ն

1869

1	Խոսարան	107
2	Թատրոն	113

1871

3	Բանասիրական	119
4	Պառակսում մը	125
5	Բանասիրական	127
6	Երկու խոսք առ Սամաթիացիս	134
7	Դրժում	146
8	Ով որ ուզածը կ'ըսե, շուգածն ալ կը լսե	148
9	<Առ «Օրագիր»>	150

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

1869

1	<Առ Մատթեոս վարդապէտ Իզմիրլեան>	155
---	---	-----

1870

2	<Առ Պ. Տ. Ադամյան>	157
---	------------------------------	-----

1871

3 <Առ Տ. Խորեն եպիսկոպոս Նարայեյ>	160
4 Առ Պ. Տ. Աղամյան	162
5 Առ Պ. Տ. Աղամյան	164
6 Առ Պ. Տ. Աղամյան	165
7 Առ Մեծ. <ապատիվ> Ա. էֆ. <ենտի> Լուսինյան	163
8 <Առ Պ. Հ. Ճանֆեսեյան>	169
9 Առ Մեծ. <ապատիվ> Ա. էֆ. <ենտի> Լուսինյան	171
10 <Առ Պ. Ա. Լուսինյան>	173
11 <Առ Պ. Ա. Լուսինյան>	175
12 <Առ «Օրագիր»>	178
13 Առ Պ. Տ. Աղամյան	179
14 Առ Պ. Տ. Աղամյան	181
15 <Առ Պ. Ա. Լուսինյան>	183

<Դ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն>

<1871>

<Դամբանական>	191
--------------	-----

Հ Ա Վ Ի Լ Վ Ա Մ

<Կենսագրություն>	195
<Պատասխաններ>	197
Մանոթագրություններ	199
Տեղանունների բառարան	354
Անձնանունների բառարան	356
Բառարան	359

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ
ПЕТРОС ДУРЯН

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հ ա տ ո ռ 1

**Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Հրատարակչական խմբագիր

Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ

Նկարչական ձևավորումը Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ

Տեխնիկական խմբագիր

Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՖ 05273

Գատվեր 41

Տպաքանակ 20000

**ԽՀԽ 1297, Հրատ. 3345: Համձնված է արտադրության 11/IX 1970 թ.:
Ստորագրված է տպագրության 23/VI 1971 թ., տպագր. 23,0 մա-
մուլ + 3 Գերդիր, Բրատ. 12,83 մամուլ, պայման. 16,1 մամուլ, թուղթ**

№ 1, 70 × 1081/32: Գինը 1 ո. 03 կ.:

**Հայկական ՍՍՀ ԳԱ Բրատարակչության տպարան, Երևան,
Բարեկամության 24**